

ԹՈՒՐՔ ՓՐԿԻՉՆԵՐ

Գրող և հետազոտող՝ Բուրչին Գերչեք
Հետազոտության վերահսկողությունը՝ Թաներ Աքչամ
Օսմանյան արխիվներից տառադարձությունը՝ Օմեր Թուրքոլու

Զեկույց այն թուրքերի մասին, ովքեր օգնության ձեռք մեկնեցին հայերին 1915թ

Չկանոնակարգված ասպարեզ, որ դեռ պետք է բացահայտվի

Ռաուլ Վալենբերգի միջազգային հիմնադրամը և Քլարկի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրության Սթրասլեր կենտրոնի Գալուստեան/Մուզար ամբիոնը պրոֆեսոր Թաներ Աքչամի վերահսկողության ներքո միացյալ ուժերով նախաձեռնել են մեծ հետազոտություն:

Այս մանրագնին հետազոտական նախագիծը նպատակ ունի պարզել այն թուրքերին և քրդերին, ովքեր օգնության ձեռք են մեկնել Հայոց ցեղասպանության զոհերին: ՌՎՄՀ հիմնական առաքելությունն է բացահայտել փրկության և համերաշխության մասին չպատմված պատմությունները: Մուսուլման փրկիչների հարցը, ովքեր ամեն ջանք գործադրել են 20-րդ դարի սկզբում հայերին փրկելու համար, չկանոնակարգված ասպարեզ է, որ դեռ պետք է բացահայտվի:

Մեզ համար մեծ պատիվ է մեր ուժերը միավորել աշխարհահռչակ թուրք պատմաբան և սոցիոլոգ Թաներ Աքչամի հետ, ով ջանք չի խնայել՝ փորձելով իրար համապատասխանեցնել հայերի և թուրքերի պատմաձևերը, ինչպես նաև Քլարկի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության Սթրասլեր կենտրոնի նրա ամբիոնի հետ:

Սա յուրատեսակ փորձ է գտնելու և մեծարելու այն բազմաթիվ թուրքերին և քրդերին, ովքեր օգնության ձեռք են մեկնել իրենց հայ հարևաններին մարդկության ամենամութ ժամանակաշրջաններից մեկում: Վալենբերգի հիմնադրամը նույնը անում է Հոլոքոստի հետ կապված: Չարիքի վրա կենտրոնանալու փոխարեն մեր ՀԿ-ն ձգտում է ընդգծել այն կանանց և տղամարդկանց համերաշխության ոգին, ովքեր հաճախ վտանգի են ենթարկել իրենց սեփական կյանքը՝ մյուսներին փրկելու համար: Սա մեր պարտքն է այդ փրկիչների առջև և ամենից առաջ մեր պարտավորությունը երիտասարդ սերնդի առջև, որը պետք է տեղյակ լինի այս օրինակների մասին:

Այս առնչությամբ իրականացված հետազոտությունը մանրակրկիտ ձևով և ջանասիրաբար իրականացվել է մուսուլմանական (թուրքական և քրդական) նահանգներում, որտեղ պատմությունների մեծ մասը սերնդե սերունդ են փոխանցվել բանավոր կերպով:

Ինչպես խոստացել էինք, ուսումնասիրությունը հիմա արդեն հրատարակված և ներկայացված է հանրության դատին, որպեսզի մասնագետները և հասարակ ընթերցողները կարողանան ծանոթանալ դրան և իրենց կարծիքը հայտնել:

Բարության ճանաչումը մեր առաքելության հիմնասյուններից է, և մենք վստահ ենք, որ այս մանրագնին ուսումնասիրությունը մեզ թույլ կտա նոր անուններ ավելացնել փրկիչների ցանկում:

Էդուարդո Էռնեսկյան

Նախագահ

Բարուխ Թենեմբաում

Հիմնադիր

Ռաուլ Վալենբերգի անվան միջազգային հիմնադրամ

<http://www.raoulwallenberg.net>

Բովանդակություն

I Փնտրելով 1915թ առաքինիներին	3
Ինչպիսի՞ ուղղություն ենք մենք վերցրել	5
1915թ Առաքինի և Բարեխիղճ մարդկանց մեծարում. Ովքե՞ր և ինչպե՞ս	8
II Կոնիայի նահանգ	11
Հալեպի և Կոնիայի նահանգապետ Ջելալ. “Եթե աշխարհի մեր բոլոր թշնամիները համախմբվեին և ամիսներով խորհեին, նրանք ավելի մեծ չարիք չէին պատկերացնի”:	11
Արդուլհալիմ Չելեբի. “Մեր միաբանության նպատակն է ծառայել մարդկությանը”	18
III Դիարբեքիրի նահանգ	21
Դիարբեքիրի փոխնահանգապետ Համիդ բեյ. “Ես չեմ ուզում ներգրավված լինել այս անօրինական գործողության մեջ”	22
Սպանվեցին իրենց Առաքինի վերաբերմունքի համար	24
Լիչեի շրջանի կայմական Հուսեյն Նեսիմի՝ “Խղճի հարց”	25
Ալի Սաբիդ Էս Սուվեյդի, Բեշիրի կայմականի տեղակալ	28
Մարդինի փոխգավառապետ Հիլմի բեյ. “ Ես այնքան անխիղճ չեմ, որպեսզի մասնակցեմ ջարդերին” ..	28
Դերիկ՝ “Ցավոք սրտի մենք կարողացանք փրկել միայն նրանցից քչերին...”	31
Դերիկի կայմական Ռեշիդ բեյ. Խառը պատմություն	33
Միդյաս. “Ինչպե՞ս կարող էինք մենք դրժել քրիստոնյաներին տված խոստումը”	34
Ալի Բատտե՝ “Պետությունը այդպես էլ չմոռացավ մեր վերաբերմունքի մասին”	35
Միդյասի մյուս Առաքինի կերպարները	37
Վեհբի էֆենդի Սավուրից. “Քրիստոնիաների նկատմամբ անարդարացի գտնվելը մեղք է:”	39
V. Կաստամոնու նահանգ	41
Հակասական կերպար. Կաստամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշա	41
Կաստամոնուի ժանդարմերիայի հրամանատար Իզզեթ բեյ. “Դուք պատասխանատվություն կկրեք ձեր գործողությունների համար ապագայում”	43
Կաստամոնուի մուսուլմաններ. “Մեր կրոնում նման բան չկա”	45
V. Միվասի նահանգ	46
Էմիր փաշա. “Ես պետք է նվազագույնը օգնեմ դիմադրողներին”	46
Միվաս նահանգի մյուս Առաքինի կերպարները	50
Մերզիֆոնի երկու թուրքերը	50
Մեսուդիյեի հայտնիները	50
Կադիր Չավուշը Օդեկ գյուղից	50
Զարայից Ալի էֆենդիի	51
VI. Էրզրումի նահանգ	52
Բայազետի փոխգավառապետ Բադ էֆենդի	53

Գումեկի գյուղացիները և Իսմայիլ աղայի կինը.....	53
Երզնկայի Երկան գյուղի բնակիչները.....	54
Էրզրումի մյուս Առաքինի կերպարները.....	55
VII. Անկարայի նահանգ.....	56
Անկարայի նահանգապետ Մազհար բեյ. “Ես նահանգապետ եմ, այլ ոչ թե բանդիտ ”	56
Անկարա նահանգի մյուս Առաքինի մարդիկ	59
Մեհմեդ Ռադի բեյ. Մշտական ընդդիմադիր	59
Հաջի Օմեր Էֆենդի Կեսկինից. “Տեղի ունեցած իրադարձությունները այնքան սարսափելի էին....”	60
Յոզգաթի փոխնահանգապետ Ջեմալ բեյ. “Ես չեմ կարող խղճիս դեմ գործել”	61
Թալասի կառավարիչ Ֆաիք բեյ	62
VIII. Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգ.....	63
Սեյիդ Ալի և Դերսիմի ցեղերի մյուս առաջնորդները. “Ով փախչի Դերսիմ կփրկվի”	63
Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգի մյուս Առաքինի մարդիկ.....	67
Քարաչանից Մուստաֆա աղա.....	67
Հուլեկոյի աղաները	68
Աշվան գյուղի դիմացի ավիլ.....	68
Քեսրիկից Մեհմեդ աղան և մյուս անձինք	68
IX. Քյութահիայի փոխնահանգապետություն.....	69
Ֆաիք Ալի բեյ` Քյութահիայի փոխնահանգապետ	69
Գերմիյանզադե Ալի բեյը և Խոջազադե Ռաշիհ Էֆենդի.....	70
X. Մյուս քաղաքների Առաքինիները	72
Իզմիրի նահանգ.....	72
Տրապիզոնի նահանգ	72
Ադանայի նահանգ.....	72
Հալեպի նահանգ.....	73
Սիրիայի նահանգ.....	74
Բիթլիսի նահանգ.....	74
Վանի նահանգ	75
Հավելված. Հայոց ցեղասպանության ժամանակ Առաքինի կառավարիչների, ցեղերի առաջնորդների, հոգևոր առաջնորդների, հայտնիների և սովորական մարդկանց ցանկը	77

I Փնտրելով 1915թ առաքինիներին

Արմինե Գուլեսերյան- Ուզում եմ քեզ մի շատ պարզ հարց տալ: Հուսով եմ ինձ այնքան անկեղծ կպատասխանես, որքան ես եմ պատասխանել:

Արմինե Գուլեսերյանը ոտքի է կանգնում և ցույց տալիս իր աթոռը:

Արմինե Գուլեսերյան- Նստիր այստեղ, լա՛վ:

Էրդողան Թուրքիլմազ- Ինչու :

Արմինե Գուլեսերյան- Որպեսզի ավելի հեշտ կարողանաս քեզ իմ կաշվի մեջ զգալ:

Էրդողան Թուրքիլմազ- Ահա այստեղ եմ, քո տեղում:

Արմինե Գուլեսերյան – Հիմա նայիր ինձ:

Էրդողան Թուրքիլմազ- Ես նստել եմ քո աթոռին, քո տեղում: Հարցրու ինչ ուզում ես:

Արմինե Գուլեսերյան- Կուզենայի՞ր հայ լինել 1915թ:

Լռությամբ՝

Ինչպես և Միշել Բերեստիի հերոսներից Էրդողան Թուրքիլմազի համար, ով ժխտում է հայերի ցեղասպանությունը, Թուրքիայում ապրող շատ մարդկանց համար “*Կուզենայի՞ր հայ լինել 1915թ*” հարցը անսպասելի, անհանգստացնող հարց է: Ամեն դեպքում, չնայած նրանք մերժում են փաստերը, նրանք գիտեն, կամ գոնե զգում են, որ այդ հարցի պատասխանը “ոչ” է:

Չնայած 2015թ հայ լինելու համեմատ դա այնքան էլ վտանգավոր չէր, սակայն առարկելը այն տեղահանություններին և ցեղասպանությանը, որին այն ժամանակ ենթարկվում էին հայերը, նույնպես շատ վտանգավոր էր: Խոսել խղճից այն ժամանակ, երբ մարդիկ արտաքսվում էին իրենց տներից որպես “դավաճաններ” կամ “թշնամու դավադրակիցներ”, կնշանակեր անտեսել “ազգային իդեալները” և “հայրենիքի խաղաղությունը”: Նման կարգի վերաբերմունքը նշանակում էր պաշտոնագուրկ լինել կամ ազատվել քաղաքացիական ծառայողի պաշտոնից և որոշ հանգամանքներում նշանակում էր ենթարկվել մահվան վտանգի: Պայմանները առավել վտանգավոր էին այն քաղաքացիների համար, ովքեր սովորաբար իրենց և իրենց ընտանիքները պաշտպանելու համար օժանդակություն չունեին: Մահմուդ Քամիլ փաշայի հրամանը կախված էր նրանց գլխին դամոկլյան սրի նման. որոշ դեպքերում անգամ պետական վերահսկողության կարիք չկար ի կատար ածելու համար “*մահապատժի ենթարկել և այրել ցանկացած մուսուլմանի տունը, ով պաշտպանում է հայերին*”² հրամանը: Հասարակության այն քաղաքացիական հատվածը, ովքեր մասնակցել են ցեղասպանությանը, հատկապես տոհմերի կամ մեծ ընտանիքների առաջնորդները անգամ չէին տատանվի նման անհնազանդության համար անձամբ պատիժ իրագործելու մեջ:

Չնայած այս վախի մթնոլորտին, հայերի ջարդը օրինականացնելու ջանքերին և կյանքին սպառնացող լուրջ վտանգներին, 1915թ բոլոր քաղաքներում, այդ թվում՝ այն շրջաններում, որտեղ տեղի են ունեցել ամենադաժան ջարդերը, կային պետական գործիչներ, հոգևոր սպասավորներ, ցեղերի առաջնորդներ, գյուղապետեր և հասարակ քաղաքացիներ, ովքեր անտեսեցին հրամանները և փորձեցին փրկել հայերին մահվան ճիրաններից:

Հարյուրավոր մարդիկ, ում անունները այսօր մոռացվել են, ում պատմությունները չգիտեն անգամ իրենց ընտանիքները, որոնցից մի քանիսը անգամ գերեզման չունեն, ովքեր ջնջվել են այն հաստատությունների և քաղաքների հիշողությունից, որոնցում իրենք ծառայել կամ ապրել են, բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեցին 1915թ՝ ելնելով տարբեր շարժառիթներից և մոտեցումներից:

Այդ մարդկանց պատմությունները վեր հանելը ավելին է քան նրանց հիշատակի առաջ ուշացած հարգանքի արտահայտման դռներ բացելը: Դա Թուրքիայի հանրությանը, որը դժվարանում է ընդունել, որ ներկայիս երկրի ղեկավարները մարդասպանություն են կատարել անցյալում և արդյունքում ձեռք բերել հարստություն, որ ինքը Հանրապետությունը կազմավորվել է այս հանցագործությունների

¹“La nuit où on a pissé par-dessus la frontière”, թատերական ներկայացում, Միշել Բերեստի, 2011թ

²Tehcir ve Taktik, Divan-ı Harbi Örfi Zabıtları, Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, էջ 64, Ստամբուլի Բիլգի համալսարանի հրատարակություններ, 2008թ, Ստամբուլ

ժխտման վրա, ցույց է տալիս հայերի ցեղասպանությանը վերաբերելու մեկ այլ ձև: Դա հնարավորություն է տալիս տալու հետևյալ հարցը՝ «*Եթե անգամ այն ժամանակ կային մարդիկ, ովքեր վտանգում էին իրենց կյանքը մերժելով այդ մարդասպանությունները, ինչու՞ ենք մենք մինչ հիմա մեզ նույնականացնում հանցագործների հետ և խուսափում պատանությունը պարզելուց*»: Հիշելով նրանց, ովքեր բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեցին մի երկրում, որտեղ նրանք, ովքեր պատասխանատու են ցեղասպանության համար, մինչև հիմա մեծարվում են որպես հերոսներ (նրանց անուններով անվանվում են փողոցներ, տարրական դպրոցներ, նրանց անուններով հիմնադրվում են հանձնաժողովներ) մեզ հնարավորություն է տալիս բացահայտելու «ստերի սարերի»³ այն բարձրությունը, որի վրա մենք նստած ենք:

Նրանք, ովքեր 1915թ բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեցին, ոչ միայն ներկայացնում են Թուրքիայի հանրության վերաբերմունքը հայոց ցեղասպանությանը՝ ցուցաբերելով դրական օրինակներ, այլ նաև օգնում են տալ այնպիսի հարցեր, թե ինչ պայմաններում են հասարակ մարդիկ վերածվում ռճրագործների, թե ինչպես է հնարավոր դիմադրել և միաժամանակ պահպանել մեր մարդկայնությունը ամենադժար իրավիճակներում: Նրանք, ովքեր չենթարկվեցին հրամաններին երբեմն ենթարկվելով մահվան վտանգին, հակառակ նրան ինչ միտքդ է գալիս առաջինը, հերոսներ կամ գեր-մարդկային էակներ չեն: Եթե այս իրադարձությունները որոշ մարդկանց համար անըդունելի են մարդասիրական առումով, մյուսների համար կրոնական համոզմունքները արգելում են նման վերաբերմունքը: Կային այլ մարդիկ, ովքեր դեմ էին հայերի նման ջարդերին կարծելով, որ դա տնտեսական, հասարակական և մշակութային աղետ է իրենց հայրենի քաղաքների կամ շրջանների համար, որտեղ իրենք ապրում են: Պատճառը, որով առաջնորդվում էին որոշ ցեղերի առաջնորդները և նրանց համայնքները կառավարությանը հակառակվելիս, թերևս այն էր, որ խնդրո առարկա հայերը «իրենց սեփական հայերին» էին, այլ կերպ ասած՝ իրենց տոհմի անդամները, կամ նրանք նվազագույնը ապրում էին իրենց հսկողության ներքո: Այս իրավիճակում գերիշխող նորմն էր պատվի զգացողությունը և հարգանքը, որ թույլ չէին տալիս իրենց որևէ մեկի հանձնել այն անձանց, ում իրենք տեսել էին, որ ապաստան են գտել իրենց մոտ: Որոշ մարդիկ փրկել են նրանց, ում ճանաչում էին, ովքեր ապրում էին իրենց անմիջական հարևանությամբ, իսկ որոշներն էլ իրենց դռները բացել էին այն մարդկանց առաջ, ում ընդհանրապես չէին ճանաչում, և դեմ առ դեմ բախվել կառավարության հետ: Ինչպիսին էլ որ լինեին նրանց շարժառիթները, չնայած նրանց մեջ կային արդարության և քաջության հիանալի զգացողությամբ մարդիկ, այդ մարդկանցից ոչ մեկը «գերհերոս» չէր: Նրանք մյուսների նկատմամբ որևէ ակնհայտ առավելություն չունեին իրենց էթնիկ ծագման, խղճի և գրասրտության կամ ապրումակցման զգացմունքների առումով: Նույն կերպ և ցեղասպանությանը մասնակցած և բանավոր հրամաններին փոքր կամ մեծ մասշտաբով ենթարկված ոչ բոլորն էին ռճրագործներ, պսիխոպաթներ և սադիստներ⁴: Փաստացի նրանք, ովքեր իրագործել են ցեղասպանությունը անգամ մոտիկից չէին առնչվում այն գաղափարախոսությանը, որից բխում էր այս որոշումը: Ուսումնասիրությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են մի շարք քաղաքացիական ծառայողներ, զինվորներ և ոստիկանական սպաներ ենթարկվում այդ հրամաններին, քանի որ նրանք այլ ելք չէին տեսնում քան իշխանությանը ենթարկվելը, միաժամանակ սակայն հոգեբանական ուղիներ փնտրելով իրենց արդարացնելու համար,

³ Ըստ կիպրոսցի գրող Սեվգյուլ Ուլուդաղի Թուրքիան հիմնված է «Ստերի սարերի» վրա երեք հարցերում՝ հայերի ցեղասպանությունը, քրդերի հարցը և Կիպրոսի խնդիրը: Չնայած նրան, որ այս հարցերում կառավարության վերաբերմունքը զգալիորեն փոխվել է այն ժամանակվանից, երբ մենք ունեցանք այս հարցազրույցը, որում նա դեռ 2004թ օգտագործում էր այս արտահայտությունը, «ստերի սարերը» դեռ իրենց տեղում են հանրության զգալի մասի համար:

⁴ Սթենլի Միլգրամը ուսումնասիրել է դաժան հրամաններ արձակող իշխանությանը ենթարկվելու մեխանիզմը՝ հասկանալու համար, թե ինչպես տեղի ունեցավ Հոլոքոստը: Իր փորձերի ժամանակ նա ցույց է տվել, որ հրամաններին ենթարկվողները անտարբեր չեն զոհերի տանջանքների նկատմամբ, փաստացի պարզվել է, որ ներկայացված օբյեկտների միայն 5 տոկոսն են ցուցաբերում սադիստական հակումներ: Իշխանություններին ենթարկվելը, Սթենլի Միլգրամ, 1974թ:

լույս են սփռում հայոց ցեղասպանությանը մասնակցողներին և դրան դիմադրողներին հասկանալու մեր ջանքերի վրա⁵:

Միզբամի փորձը, որը ակնառու կերպով ցուցադրում է, թե ինչքանով ենք մենք հակված իշխանությանը ենթարկվելու, լուսաբանում է, թե ինչ հանգամանքներում կարող են բացվել դիմադրության ուղիները: Հետապնդողի և զոհի միջև հեռավորությունը, իշխանությունը, որը պնդում է, թե ձգտում է դեպի “լավ նպատակը” (ինչպիսին է օրինակ՝ ազգի խաղաղությունը, գիտության առաջընթացը և այլն), համոզում “ամբողջական պատասխանատվություն ստանձնել”, դրա ընկալվող հեղինակությունը, արդյոք իշխանության ներկայացուցիչների միջև կա բախում կամ առկա են, թե բացակայում են հրամաններին չենթարկվող այլ անձինք, այս չափորոշիչները կարող են լինել որոշիչ գործոնների թվում անմարդկային գործողություններին տրվելիս կամ դրանց դիմադրելիս⁶: Պետք է գնահատել նրանց պատմությունը, ովքեր չեն ենթարկվել հրամաններին և ովքեր դիմադրել են դրանց հայոց ցեղասպանության ժամանակ նաև նման հեռանկարի լույսի ներքո: Իհարկե, որևէ կերպ հնարավոր չէ ազատել նրանց, ովքեր հանցագործություն են գործել մարդկության առաջ, պատասխանատվությունից կամ օրինականացնել նրանց գործողությունները: Ամեն դեպքում, մենք կարող ենք դասեր քաղել, որպեսզի անցյալում տեղի ունեցածի միջով նորից չանցնենք, եթե կարողանանք հասկանալ, թե ինչ հանգամանքներում են հասարակ մարդիկ վերածվում ոճրագործների և ինչ պայմաններում է հարթվում դեպի դիմադրություն տանող ճանապարհը:

Ինչպիսի՞ ուղղություն ենք մենք վերցրել

Թե հայոց ցեղասպանության զոհերը և թե նրանք, ովքեր փորձել են փրկել նրանց, չենթարկվելով հրամաններին, որոշ բացառությամբ, այսօր կենդանի չեն:⁷ Հայտնաբերել այն մարդկանց, ովքեր ներգրավված են եղել 100 տարի առաջ տեղի ունեցածում, ինչը համարվել է տաբու և որի մասին այդ պատճառով մինչև վերջերս չի խոսվել, շատ ժամանակ նման էր խոտի դեզում ասեղ փնտրելուն: Մենք սկսեցինք ուսումնասիրել այն աղբյուրները, որոնք մեզ հուշումներ կտային “ասեղների” գտնվելու վայրի մասին: Այս առումով, մեզ համար մեծ ուղեցույց էին ցեղասպանությունը վերապրածների ցուցմունքներին հղում կատարող հետաքննությունները: Դրանք օգտագործելով մենք փորձել ենք ձեռք բերել ցուցմունքների ամբողջական սղագրությունները: Փարիզի Նուբարյան գրադարանի ցուցմունքները և այն ցուցմունքները, որոնք հավաքել է Անտոնյանը, չնայած նրան, որ այդ ցուցմունքները տվողները այլևս ողջ չեն, թույլ տվեցին լսել այդ ցուցմունքները գրեթե ասես սկզբնական հավաստի աղբյուրից: Նմանապես հայերի կողմից հրապարակված հիշողությունները իրենց հայրենիքի և տեղահանության օրերի մասին այն վայրերում, որտեղ նրանք ապաստան գտան, ապահովել է այն անունների երևան գալը, որոնք մինչ այժմ հայտնի չէին: Մարսելի Արամի հանրության արխիվներում մենք կարողացանք ձեռք բերել հայերեն լեզվով հուշեր, որոնք այլ լեզուներով չէին թարգմանվել: Մեղադրանքները, դատավճիռների պատճենները, դատական արձանագրությունները և Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունների ցուցմունքների բաժինները մեծ քանակի տեղեկություն էին պարունակում այն մարդկանց մասին, ովքեր չէին ենթարկվել հրամաններին: Այս հարցում մենք ևս մեկ անգամ օգտվեցինք Նուբարյան գրադարանից, Վերածնունդ թերթից, որը ուշադիր հետևում էր դատավարություններին այդ ժամանակաշրջանում: Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում պաշտոններ զբաղեցնող բարձրաստիճան պաշտոնյաների հուշերը կամ բարձր խավերի մարդկանց հուշերը, ինչպես նաև տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցիչների ու առաքելությունների նամակագրությունը մեզ շատ մանրամասներ են հաղորդել: Ուրիշների կողմից վերապատված

⁵ Այս թեմայի ավելի մանրամասն վերլուծության համար տես՝ *Un si fragile vernis de l'humanité. Banalité du mal, banalité du bien*, Միշել Տերեսչենկո, Editions La Découverte, 2007թ, Փարիզ:

⁶ *Un si fragile vernis de l'humanité. Banalité du mal, banalité du bien*, Միշել Տերեսչենկո, մեջբերում 123-124-րդ էջերից

⁷ Գրող Քրիս Բոնջայանը գրում է, որ 98 տարեկան Ասիան, ում հետ ինքը հանդիպել է Չյունցյունում 2013թ այն քիչ մարդկանցից է, ովքեր վերապրել են ցեղասպանությունը: *La dernière des survivants du génocide arménien*, Քրիս Բոնջայան, The Armenian Mirror-Spectator, 22.06.2013 Դոկտոր Շապուհ Գեղիկը, ում հետ 2010թ Նիցցայում Ջանսու Չամլիբեկը Հուրիեթից անց է կացրել հարցազրույց, որում նա պատմում է, թե ինչպես է Կոնիայի նահանգապետ Ջելալ բեյը փրկել իրեն և իր ընտանիքին, ցավոք, մահացել է 2014թ ապրիլին:

ցուցմունքները, ընտանիքների պատմությունները և հրատարակությունները, որոնցում դրանք գետեղված են, նույնպես նշանակալից աղբյուր են եղել մեզ համար:

Որոշ մարդկանց պատմություններ մենք պարզել ենք այն վայրերում, որտեղ մենք գնացել էինք դաշտային աշխատանքների: Հատկապես քրդական հատվածներում մենք հնարավորություն ենք ունեցել լսել պաշտպանության շատ պատմությունների մասին, որոնք փոխանցվել են սերնդե սերունդ: Առանցքային հարցը հետևյալն էր՝ արդյո՞ք մենք կարող էինք որպես իրողություն ընդունել ամեն մի “Մեր ընտանիքը նույնպես պաշտպանել է հայերին” արտահայտությունը: Նրանք, ում մենք “Բարեխիղճ” ենք անվանում, արդյո՞ք նրանք են, ովքեր ոտքի են կանգնել ընդդեմ տեղահանությունների ու ջարդերի և փորձել են մահերը կանխել ուղղակիորեն կամ անուղղակիորեն, թե նրանք, ովքեր արտահայտել են իրենց ընդդիմադիր դիրքորոշումը: Այսպես կոչված շահույթ հետապնդող “պաշտպանությունները”, օգնությունը, որը առաջարկվում էր սեփական շահերից ելնելով, երբ ցեղասպանությունը վերապրած երեխաներին ու կանանց օգտագործում էին որպես աշխատուժ և նրանց բռնի ուժով մահմեդականացնում, արդեն իսկ բացառված են մեր սահմանումից:⁸

Չնայած առաջին հայացքից դրանք կարող են փրկության իրական պատմություններ թվալ, մենք խիստ ուսումնասիրության ենք ենթարկել բոլոր ցուցմունքները անկախ նրանից դրանք շարադրված են գրավոր, թե բանավոր, պատկանում են վերապրած հայերին, թե մուսուլմաններին, փորձել հավաստիանալ դրանցում՝ համեմատելով տարբեր գրավոր և բանավոր աղբյուրների հետ:

Մենք համեմատել ենք տեղահանությունների և ջարդերի համար պատասխանատու մարդկանց ցանկը, որը կազմվել է Հայոց պատրիարքության կողմից մինչ Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունները, այն անունների հետ, որոնք առկա են մեր ձեռքի տակ: Երբ հնարավոր է եղել, մենք ուսումնասիրել ենք որոշ մարդկանց վերաբերմունքը մինչ 1915թ և դրանից հետո, հատկապես հանրապետական ժամանակաշրջանում: Այս առնչությամբ մենք նկատել ենք, որ Կուսակցության անդամների դեմ հատկապես ցեղասպանության հարցով ընդդիմացող մարդկանց մեծ մասը չէին հարմարվում գերիշխող իշխանությունների հետ Դաշնակիցների դեմ քեմալական պայքարում և հանրապետական ժամանակաշրջանում: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ Կուսակցության անդամները համախմբված էին այս օղակների շուրջ: Որոշ մարդիկ միայն այս պատճառով հեռու մնացին Դաշնակիցների դեմ պայքարից, որը կազմակերպել էր Մուստաֆա Քեմալը, և արդյունքում մեղադրվեցին “դավաճանության” մեջ Հանրապետական ժամանակաշրջանում: Չնայած դրան, կային դեպքեր, երբ տեղի ունեցավ հակառակը: Եղան մարդիկ, ինչպես օրինակ՝ Կոնյայի նահանգապետ Ջելալ բեյը, ով հակառակվեց տեղահանություններին և ջարդերին, ովքեր արձագանքեցին երկրի օկուպացիայում գտնվելուն, կապ հաստատեցին Մուստաֆա Քեմալի հետ և միացան ազատագրման փորձերին: Չնայած դրան, որոշ մարդկանց դեպքում անգամ դա չէր կարող կանխել Կառավարության կողմից նրանց՝ որպես “անվստահելի” պիտակավորվելուն:

⁸ Մահմեդականացումը որպես պաշտպանության միջոց մեր կողմից ընդունվել է միայն այն դեպքերի համար, երբ երկու կողմերն էլ դա օգտագործել են որպես ժամանակավոր թաքնվելու ձև, երբ դա ուղղակի արտաքնապես այդպես էր թվում, երբ դա իրական կրոնափոխություն չէր և ոչ մի ճնշում չէր գործադրվում կրոնական պահանջները կատարելու հարցում: Նույն ձևով մենք նաև նրանց, ովքեր փոքր երեխա են փրկել ցեղասպանությունից կամ նրանց ովքեր մեծացրել են որբ երեխային որպես իրենց սեփական զավակ, դասում ենք այն մարդկանց շարքին, ովքեր Բարեխիղճ վերաբերմունք են ցույց տվել, եթե երեխային իրական ընտանիք վերադարձնելը կամ նրանց հետ հաղորդակցումը արգելված էր և եթե երեխային չէին վերաբերվում որպես ստրուկ կամ աշխատուժ: Ինչպես ընդգծում է Թաներ Աքչամը, ովքեր երեխաներին օգտագործել են հարստություն ձեռք բերելու համար այն կանոնակարգի ընդունումից հետո, որը թույլ էր տալիս հայ հարուստ ընտանիքների երեխաներին որդեգրելուց հետո ստանալ նրա ընտանիքի ունեցվածքը, հաշվի չեն առնվում սույն սահմանման մեջ: Հրանտ Դինքի ասոցիացիայի կազմակերպած Մահմեդականացված հայերի գիտաժողովում, որտեղ Աքչամը ներկայացրեց իր փաստաթուղթը Դիարբեքիրցի Գ. Տ-ի ասածները. “Հիմա ես հասկանում եմ ամեն ինչ: Երկար տարիներ ես փորձել եմ հասկանալ, թե ինչու են այն մարդիկ, ովքեր նախատում մեզ նման ձևով և չեն հավանում մեզ, նաև փրկում և որդեգրում: Ահա սա է պատճառը” ի թիվս շատ այլոց օրինակ են ծառայում և ցույց տալիս, որ այս “փրկությունների” իրական նպատակները խնամքով թաքցված են մարդկանց կողմից, իսկ արդյունքում ստացված հարվածները զգացվում են մինչ օրս:

Մենք փորձել ենք որքան հնարավոր է ստուգել ցուցմունքներում նշված անունները, պաշտոնները, տեղերը և ժամանակները Օսմանյան կայսրության արխիվների փաստաթղթերի հետ համեմատելով:⁹ Հատկապես երկրորդ աղբյուրներից ստացված պատմություններում մենք նկատել ենք, որ ժամանակները և մարդիկ կարող են շփոթված լինել երբեմն անգամ այն մարդկանց կողմից, ովքեր մասնակցել են իրադարձություններին, իսկ քաղծառայողների պաշտոնները պատշաճ կերպով հայտնի չեն: Օսմանյան արխիվներում մեր տեսած փաստաթղթերի մի մասը հաստատում են, որ փրկության որոշ պատմություններ իրականում այնպիսին չէին, ինչպես դրանք պատմում էին, օրինակ՝ նրանք, ովքեր հայերին փրկում էին ձեռնարկություններում նրանց աշխատանք առաջարկելով, դա իրենց սեփական նախաձեռնությամբ չէին անում այլ ըստ ստացած հրամանի:

Հավաստիանալու այս բոլոր ջանքերի արդյունքում մենք գտանք նրանց ընտանիքների հետքը՝ Բարեխիղճների վերաբերյալ ավելի շատ տեղեկություն, նկարներ և անձնական մանրամասներ գտնելու համար: Որոշ դեպքերում, երբ մենք գիտեինք միայն տվյալ անձի անունը կամ վայրի անունը, այն ինչ մենք փնտրում էինք նման էր գոյություն չունեցող մեկին փնտրելուն: Լրացուցիչ դժվարություն էր նաև այն հանգամանքը, որ Օսմանյան ժամանակաշրջանում ազգանուններ գոյություն չունեին, որ Թուրքիայի շատ բնակավայրերի անունները փոխվել են, որ միևնույն շրջանում կան մի շարք մարդիկ միևնույն անունով կամ նման պաշտոններով, կամ որոշ անունների սխալ արտասանությունը: Այս խնդիրը լուծելու համար մենք կարողացել ենք գտնել այն մարդկանց, ովքեր տեղի պատմության հետազոտություններ են արել այն շրջաններում, որտեղ այդ մարդիկ ապրում էին, կամ մարդկանց, ովքեր ելնելով իրենց տարիքից, իրենց մեծերից լսել են պատմություններ այդ ժամանակաշրջանի մասին: Մենք ուսումնասիրել ենք Ջումհուրիյեթ և Միլլիյեթ թերթերի արխիվների մահվան մասին հայտարարությունները, որպեսզի գտնենք որոշ մարդկանց ընտանիքների հետքը: Այս էջերում առկա ընտանեկան հարաբերությունների մասին տեղեկատվությունը օգտագործելով՝ հաճախ հանելուկների լուծման նման մենք փորձել ենք հայտնաբերել ընտանիքի այն անդամներին, ովքեր այսօր դեռ կենդանի են: Որոշ մարդկանց դեպքում մեր ջանքերը ապարդյուն էին, սակայն մեզ հաջողվել է ձեռք բերել շատ մարդկանց ընտանիքների տվյալները:

Բացառությամբ քրդական շրջանների, որտեղ 1915թ մասին հիշողությունները դեռ պահպանվել էին այնքան վառ, ասես դրանք երեկ պատահած լինեին, բարեխիղճ մարդկանց ընտանիքների անդամների մեծ մասը անտեղյակ էին իրենց նախնիների կյանքի այս կողմի մասին: Շատ մարդիկ, հատկապես պետական գործիչների թոռները իրենց ընտանիքի մեծերի 1915թ ցուցաբերած վերաբերմունքի մասին լսել են մեզանից: Բարեխիղճ մարդիկ այս թեմայով չէին կիսվել իրենց ընտանիքի անդամների հետ: Դժվար է այս հանգամանքը բացատրել միայն այդ ժամանակվա ավտորիտար ընտանեկան կառուցվածքով կամ քննարկվող մարդկանց համեստությամբ: Այնպիսի հասարակությունում, որտեղ հայերի ցեղասպանությունը համարվում էր տաբու, վերաբերմունքը նրանց նկատմամբ, ովքեր դեմ էին տեղահանություններին և ջարդերին, նույնպես տաբու էր: Ընտանեկան շրջանում այս հարցի շուրջ հյուսված առեղծվածը ամրապնդող մեկ այլ գործոն էր այն հանգամանքը, որ տեղահանություններին և ջարդերին հակառակվող մարդիկ կարող էին հայտնվել “Թուրքիայի անցանկալի 150 մարդկանց ցանկում”: Նրանց համար բավարար չէր դավաճան հայտարարվելը, նրանք նաև դարձել էին Հանրապետությունում անցանկալի մարդիկ: Հասկանալի է, որ այս մարդկանցից ոմանք, ովքեր կարողացան վերադառնալ Թուրքիա, այս դժվար ժամանակները ջնջել էին իրենց անձնական պատմություններից՝ փորձելով պաշտպանել նոր սերունդներին խտրականության առարկա դառնալուց: Ինչ վերաբերում է քրդական շրջաններին, ի տարբերություն արևմտյան շրջանների, մենք տեսնում ենք, որ թեմային վերաբերող անգամ ամենափոքր մանրուքները հիշվում են այնպես, ասես դրանք երեկ են պատահել, ոչ միայն ընտանիքների անդամների այլև հաճախ շրջանի ամբողջ հանրության կողմից: Ուստի, մեր ջանքերը գտնելու ընտանիքներ, որ ավելի հեշտ էին ընթանում այս շրջաններում, համապատասխանաբար չեն կարող արդյունավետ կերպով համեմատվել արևմտյան քաղաքների հետ,

⁹ՕԿԱ նշումը մատնանշում է փաստաթղթեր Թուրքիայի Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվներից (Başbakanlık Osmanlı Arşivleri)

որտեղ փաստացի հենց որ մենք արտասանում էինք “հայեր” բառը, դռները փակվում էին մեր դեմքներին: Մենք անգամ առնչվեցինք դեպքերի, երբ ընտանիքների անդամները հրաժարվեցին հանդիպել մեզ հետ:

Կապված այն հարցի հետ, թե ինչ անվանում պետք է տրվի այն մարդկանց, ովքեր չենթարկվեցին հրամաններին, հակառակվեցին տեղահանություններին ու ջարդերին հայկական ցեղասպանության ժամանակ, հետազոտողների մտքին եկած առաջին հասկացություններն էին “Rightous” (Առաքինի) անգլերենում և “Juste” ֆրանսերենում: Սակայն “Rightous” (Առաքինի) եզրույթը հղում է *“Ազգերի առաքինիներ”* պատվավոր կոչմանը, որը տրվում է այն մարդկանց, ովքեր մահից և համակենտրոնացման ճամբարներից փրկել են հրեաներին, և պահանջում է համապատասխանել շատ առանձնահատուկ չափորոշիչների: Այս կոչումը ներառում է այնպիսի պայմաններ, ինչպիսիք են հաշվի առնել միայն առաջին կարգի ցուցմունքները, հրեաներին փրկելիս կյանքը կամ ազատությունը վտանգելը և, ցավոք, դա այնպիսի մի հասկացություն չէ, որ կարող է կիրառվել այն բոլոր մարդկանց նկատմամբ, ովքեր 1915թ փորձել են փրկել հայերին և ում պատմությունները ուսումնասիրվել են այս հետազոտության մեջ: Եթե նրանցից ոմանք հայտնվեին Յադ Վաշեմի առաջ Հոլոքոստի համատեքստում, հնարավոր է նրանք համապատասխանեին *“Ազգերի առաքինիներ”* կոչմանը: Սակայն նույնը հնարավոր չէ ասել նրանց բոլորի համար: Ուստի, մեր ուսումնասիրությունում, ի լրումն “Առաքինի” հասկացության, մենք կօգտագործենք նաև “Բարեխիղճ” եզրույթը կամ կանվանենք “նրանք, ովքեր բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեցին”, որոնք այն եզրույթներն են, որ ավելի լայն տարածում են ստացել Թուրքիայում Հրանտ Դինքի հիմնադրամի նախաձեռնությունների շնորհիվ:

1915թ Առաքինի և Բարեխիղճ մարդկանց մեծարում. Ովքե՞ր և ինչպե՞ս

Հոլոքոստի հետ կապված Յադ Վաշեմի և Ռաուլ Կալենբերգի հիմնադրամները, ինչպես և մարդկության դեմ հանցագործությունների մյուս հիմնադրամները, ինչպիսին է Գարիվոն, մեծարում են բարեխիղճ մարդկանց և նպաստում հանրության շրջանում թեմայի մասին տեղեկացվածությանը: Վերջին տարիներին նշվել է, որ այն մարդիկ, ովքեր բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեցին 1915թ, կարող են որոշիչ դեր խաղալ Թուրքիայի հանրության համար հայոց ցեղասպանությունը ընդունելը հեշտացնելու հարցում: Այդ առումով սույն ուսումնասիրության մեջ, որը մենք խնդրել ենք պատրաստել, մենք ցանկացել ենք գտնել, թե վերոնշյալ մեծարումը ում կարող է ներառել և ինչ եղանակներով այն կարող է իրականացվել:

Այն որ, արդեն իրադարձություններից հարյուր տարի է անցել, թույլ չի տալիս գոհերին ոչ անմիջականորեն ցուցմունքներ տալ, ոչ էլ անձամբ շնորհակալություն հայտնել Բարեխիղճ մարդկանց: Այն մարդկանց ընտանիքները, ովքեր արժանի են համարվել *Ազգերի առաքինիներ* կոչմանը, հանդիսավոր ձևով պարգևատրվել են մեդալներով և վկայականներով, փրկիչների անունները ավելացվել են *“Առաքինիների այգու” “Պատվո պատին”*: Ի լրումն այս երախտագիտության Իսրայելի կողմից տարբեր նյութական պարգևներ են տրվել նրանց, ովքեր արժանացել են այդ կոչմանը և նրանց ընտանիքներին:

Հայերի ցեղասպանության դեպքում, եթե նախընտրելի է նմանատիպ մեծարման ձևը, քանի որ նրանցից ոչ ոք հիմա կենդանի չէ, բոլոր պարգևները, մեդալները և վկայականները պետք է տրվեն ընտանիքի այն անդամներին, ովքեր դեռ ողջ են: Հաշվի առնելով, որ 100 տարի է անցել այդ փաստերից հետո՝ մենք կարծում ենք, որ պետք է չափազանց բժախնդիր լինենք հայոց ցեղասպանության համատեքստում: Շատ դժվար կլինի ապացուցել, որ ցուցմունքներում նշված մարդիկ իսկապես Առաքինի են: Այս հարցում կան այլ դժվարություններ ևս:

Չնայած նրան, որ նրանք այլևս որպես տաբու չեն ընկալվում հանրության հսկայական զանգվածի համար “հայ” և “ցեղասպանություն” բառերը մինչ օրս այնքան էլ հեշտ արտաբերվող հասկացություններ չեն: Մերժողական գրույցները, որոնք հանրությունը ստիպված էր լինում մտապահել, տարածվել են անգամ այն մարդկանց թոռների վրա, ովքեր վտանգի էին ենթարկել իրենց կյանքը 1915թ ջարդերը կանխելու համար: Մենք չպետք է անտեսենք այն հանգամանքը, որ այս մարդիկ կարող են չցանկանալ

իրենց նախնիների անունից մրցանակ ընդունել: Անգամ այն դեպքերում, երբ նրանք դա ընդունեն, մենք պետք է հաշվի առնենք այն վտանգը, որ նրանք կարող են մերժողական մտքերով հանդես գալ և սույն նախաձեռնության ոգուն հակառակ վերաբերմունք ցուցաբերել:

Մեկ այլ խնդիր, որ կարող է առաջանալ ընտանիքներին մեծարելիս, բխում է փրկության պատմությունների բազմազանությունից: Շատ փրկության պատմություններ կան, երբ մի անձը դեմ է եղել ջարդերին, սակայն նրա որդին կամ ընտանիքի մեկ այլ անդամը այն անձանց շարքում են եղել, ովքեր իրականացրել են ջարդերը: Օրինակներ կան, երբ ջարդերին մասնակցող բարեկամները հարձակվել են կամ անգամ սպանել են նրանց, ովքեր օգնություն են առաջարկել հայերին:

Անգամ եթե մի կողմ դնենք նման դեպքերը, կա ևս մի կարևոր հարց, որը չպետք է անտեսվի. մենք մեր նախնիները չենք: Եթե մենք օգտվում ենք այն հարստությունից, որ մեր պապերը ձեռք են բերել անօրինական ճանապարհով, հավերժացնում ենք անարդարացի վերաբերմունքը կամ փորձում թաքցնել այն, ինչ նրանք արել են, դա մեզ պատասխանատու է դարձնում ներկայիս իրավիճակի համար: Նախկին սերունդների դրական և Առաքինի վերաբերմունքը չպետք է օգտագործվի մեր պատասխանատվությունը ծածկելու համար: Այս պատճառով անմիջապես Առաքինիների հետնորդներին մեծարելու փոխարեն (իհարկե հնարավոր է այդ մեծարումը կատարել հազվադեպ և կոնկրետ դեպքերում) հնարավոր է ավելի հասարակական մոտեցում որդեգրել:

Հնարավոր է մտածել 1915թ բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերած մարդկանց մեծարման այլ եղանակներ այնպիսի ձևերով, որոնք ավելի երկարատև են, ձևեր որոնք հասու են հանրության ավելի լայն զանգվածներին և նպաստում են ցեղասպանությանը առերեսվելուն: Լինելով երկարատև, ինչպես նաև այս ոլորտում ուսումնասիրությունները խրախուսող՝ գերադասելի այլընտրանք կարող է լինել հետազոտությունների համար կենսաթոշակները անվանել որոշ բարեխիղճ անձանց անուններով (հնարավոր է ամեն տարի այս կենսաթոշակները տրվեն տարբեր մարդկանց անուններով): Թուրքիայում բարեխիղճ անձանց անուններով հիշատակման վայրերի հիմնումը երկարատև նախաձեռնություն է, որը կհանգեցնի նրանց անունների մտապահմանը և հանրությանը կհիշեցնի 1915թ նրանց վերաբերմունքի մասին: Հիշատակության այս վայրերը (պատերի հուշատախտակներ նրանց անուններով, թանգարաններ, անտառներ, զբոսայգիներ կամ հուշարձաններ) կարող են տեղադրվել հատկապես այն վայրերում, որտեղ Բարեխիղճ մարդիկ ապրել կամ ծառայել են:

Հնարավոր է առաջարկել և իրականացնել նման նախագծեր ԺԴԿ-ի կողմից ղեկավարվող քաղաքապետարաններում, քանի որ նրանք չեն հերքում հայերի ցեղասպանությունը և տարբեր գործողություններ են ծավալել դրա հետ առերեսվելու ճանապարհին: Ավելին, Բարեխիղճ անձանց վերաբերյալ գիտաժողովների անցկացումը, համալսարաններում նրանց անուններով ամբիոնների հիմնումը, նրանց կյանքին վերաբերող ցանկացած գեղարվեստական գործունեության բոլոր տեսակների՝ այդ թվում ֆիլմերի և ցուցահանդեսների օժանդակումը, նրանց մեծարման երկարատև եղանակներից են: Նաև կարող են հիմնադրվել հիմնադրամներ, որոնք օժանդակում են Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված գործողություններին կամ նպատակ ունեն կարգավորելու թուրք-հայկական հարաբերությունները: Հրանտ Դինքի հիմնադրամի հետ համատեղ ջանքերով Հրանտ Դինքի անվան մրցանակաբաշխության արարողությունների ժամանակ, որոնք կազմակերպվում են ամեն տարի սեպտեմբերին Ստամբուլում, կարող է տրվել մրցանակ, որը կրում է Բարեխիղճ մարդկանցից մեկի (օրինակ Ջելալ բեյի) անունը, մրցանակը կարող է տրվել այն անձանց, ովքեր նպաստել են արդարության ձգտմանը կամ թուրք-հայկական հարաբերությունների լավացմանը:

Ավելի քան երկու հարյուր անունների թվում¹⁰, որոնք մենք ձեռք ենք բերել, մեծարման առաջնահերթությունը կարող է տրվել մի քանի օրինակելի մարդկանց նրանց դիրքորոշման ամրության,

¹⁰Սույն զեկույցում մենք հիշատակել ենք 80 Առաքինի մարդկանց պատմությունները, որոնց մասին մենք ավելի շատ տեղեկություն ենք կարողացել ձեռք բերել: 184 մարդկանցից բաղկացած ամբողջական ցանկը գետեղված է սույն զեկույցի հավելվածում:

այն վտանգների համար, որոնց ենթարկվել են, այն ինքնությունների առումով, որոնք իրենք ներկայացնում են, և իրենց մոտեցումների տեսանկյունից: Այս առնչությամբ հնարավոր է մեծարման տարբեր տեսակները, որոնց օրինակները նշված են վերևում, սկսել ստորև թվարկված մարդկանցից.

- Հալեպի և Կոնիայի նահանգապետ Ջելալ բեյ
- Լիչեի կայմական Հուսեյն Նեսիմի
- Մարդինի գավառապետ Հիլմի
- Կաստամոնուի ժանդարմների հրամանատար Իզզեթ
- Մեվլեվի շեյխ Աբդուլհալիմ Չելեբի
- Չերքեզ Էմիր փաշա Սիվասից
- Սեյիդ Ալի, ի դեմս Դերսիմի մարդկանց
- Ալիկե Բատտե և Ջահրուանի Հաջո Միդյատից
- Վեհբի էֆենդի Սավուրից
- Գերմիյանզադե և Խոջազադե ընտանիքները Քյութահիայից
- Երեք անանուն մուսուլմաններ, որոնց կախեցին Բայբուրթում
- Օրդուի, Սամսունի և Տրապիզոնի անանուն մուսուլմաններ

II Կոնիայի նահանգ

Հալեպի և Կոնիայի նահանգապետ Ջելալ. “Եթե աշխարհի մեր բոլոր թշնամիները համախմբվեին և ամիսներով խորհեին, նրանք ավելի մեծ չարիք չէին պատկերացնի”:

“Կոնիայում իմ վիճակը նման էր մի մարդու վիճակի, ով նստած է գետի ափին՝ բացարձակ ոչ մի միջոց չունենալով դրանից ինչ-որ մեկին փրկելու համար: Արյունը հոսում էր գետի երկայնքով, և հազարավոր անմեղ երեխաներ, աննախատելի ծեր մարդիկ, անօգնական կանայք և ուժեղ երիտասարդներ այս գետով հոսում էին ցած՝ դեպի մոռացություն: Ես փրկեցի բոլոր նրանց, ում կարող էի փրկել մերկ ձեռքերով: Ես փրկեցի, իսկ մնացածները ներքև իջան գետով, որպեսզի այլևս երբեք չվերադառնան”¹¹

Ահա թե ինչպես է Կոնիայի նահանգապետ Ջելալը, ով դարձել է հայոց ցեղասպանության ժամանակ հրամաններին չենթարկվող պաշտոնյաների հավաքական կերպարը, վերհիշում այն ժամանակները իր հուշերում, որոնք հրապարակվել են 1918թ Վաքիթ թերթում: Այս պատվածքը, որը լի է պատկերներով, կատարյալ կերպով արտացոլում է իրականությունը. “հոսանքը” այնքան ուժեղ էր, որ այն սրբում էր այն բոլոր մարդկանց, ովքեր փորձում էին կանգնել դրա առաջ և նրանց դարձնում անուժ: Այն մարդկանց քանակը, ում Ջելալին հաջողվեց “բռնել մերկ ձեռքերով”՝ նրանց փրկելով “այլևս երբեք չվերադառնալու համար” ներքև հոսելուց, զգալի է: Կոնիայի նահանգը, որտեղ արևմտյան քաղաքներից տարհանված մարդիկ էին հավաքվում մինչև Դեր Ջոր արտաքսվելը, որպես այդպիսին, արևելքում գտնվող Մալաթիայի հետ միասին հանդիսանում էր ցեղասպանության ամենախոշոր տարանցիկ կետերից մեկը: Իր պաշտոնավարման չորս ամիսների ընթացքում Ջելալը կարողացել է հազարավոր հայերի պահել և փրկել նրանց տարհանումից:¹²

Լինելով Ֆինանսների նախարարության պաշտոնյայի որդի՝ Ջելալը նաև Օսմանյան ընտանիքի անդամ էր, քանի որ նա Աբդուլհամիդի աղջիկներից մեկի թոռն էր: Թերևս այս կարգավիճակի շնորհիվ էր, որ Կառավարությունը նրան ուղղակի հեռացրեց իր պաշտոնից և նա ազատվեց սպանվելուց, ինչը 1915թ հրամաններին հակառակված մյուս պաշտոնյաների ճակատագիրը դարձավ:¹³

¹¹ *Ermeni Vakayî'i, Esbab ve Tesirâtı*, Ջելալ բեյ, Վաքիթ, 1918թ դեկտեմբերի 10,12,13: Այս հոդվածում օգտագործվել են ժամանակակից թուրքերենով երկու տարբերակներ՝ Արի Մեքեյանի կողմից 2010թ հուլիս 30-ին հրատարակված թարգմանությունը *Ակնու* շաբաթաթերթում և Ջելի Սարիհանի թարգմանությունը, որը հրատարակվել է 2014թ ապրիլի 24-ին *Ռադիկալ* թերթում:

¹² Բացի Վաքիթ թերթում իր տպագրած հուշերից, որտեղ նա նշում է այս քանակը, շատ պատմություններ կան, որոնք վկայում են Հալեպում և Կոնիայում Ջելալի կողմից մոտ 30-40 հազար հայերի փրկության մասին: Հալեպում Գերմանիայի և Ամերիկայի հյուպատոսների զեկույցները, վերապրածների ցուցմունքները, Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդների դատավարության արձանագրությունները տարբեր տեղեկություններ են պարունակում Ջելալի գործողությունների մասին. DE/PA-AA/RI4089-A35046, *Հալեպի հյուպատոս Ռոսլերի զեկույցը կանցլեր Բեթման-Շոլվեգին* 16.11.1915 և DE/PA-AA/BoKon/169-A53a/1915/3790, *Հալեպի հյուպատոս Ռոսլերի կողմից Կոնստանդնուպոլիսի դեսպանատանը*, 21.06.1915, *Հայոց ցեղասպանության մեջ վկայություն Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվներից*, Վոլֆգանգ Գուստ, Բերգհանի գրքեր, 2014, Միացյալ Թագավորություն, *Հայոց վայրագությունները*, Ջեյ. Բի Ջեքսոն, *նախկինում Հալեպի հյուպատոս*, 04.03.1918, *ԱՄՆ հայոց ցեղասպանությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերում*, Արա Սարաֆյան, 1994, Հայկական ակնարկ:

Երկու վերապրողների վկայությունները Ջելալի մասին. *Nous avons bu la même eau/Մենք խմել ենք միևնույն ջուրը*, Սերժ Ավետիքյան, *Les Films d'ici*, 2006թ

“Կոնիայում այդպիսի նահանգապետ կար՝ Ջելալ բեյը... Բոլոր հայերը շնորհակալ էին նրան”, -ասել է գրող Երվանդ Օտյանը, ով վկայություն է տվել Թոռլակյանի դատավարության ժամանակ՝ նշելով, որ ինքը անձամբ ճանաչում է Ջելալին: *Torlakyan Davası*, Մուրադ Չուլջու, էջեր 126-127, Քասթաշ, 1990թ, Ստամբուլ:

¹³ Չուսեյն Նեսիմին Լիչեի կայմակամը և Ալի Սաբիթը՝ Բեշիրիի Կայմակամը սպանվեցին տարհանման և ջարդերի հրամանին հակառակվելու համար: Հիլմին Մարդինի փոխգավառապետը խուսափեց սպանության փորձից: Բացի այս պաշտոնյաներից, շատ քաղաքացիական ծառայողներ նույնպես հարձակման ենթարկվեցին և սպանվեցին, քանի որ փորձում էին կանգնեցնել ջարդերը:

Ջելալը 1883-ին ավարտել է Մուլքիյեն, որը Ֆրանսիայի Կառավարման ազգային դպրոցի Օսմանյան համարժեքն է, և որի տնօրենը նա հետագայում դարձավ: Այնուհետև նա գյուղատնտեսություն է սովորել Գերմանիայում: Նա որպես ուսուցիչ աշխատել է տարբեր քաղաքներում և առաջնային պաշտոններ է զբաղեցրել Կրթության նախարարությունում: Մուլքիյեում տնօրենի պաշտոնից հետո նա նախ նշանակվեց Էրզրումի նահանգապետ և հետո Էդիրնեի և Իզմիրի նահանգապետ: 1911թ դեկտեմբերից մինչև 1912 հուլիս եղել է ներքին գործերի նախարար, իսկ 1913թ հունվարից հունիս ամիսներին՝ Գյուղատնտեսության նախարար:¹⁴

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Ջելալը Հալեպի նահանգապետն էր: Նրա ցուցաբերած վերաբերմունքը, երբ որոշ պաշտոնյաների կողմից իրականացված Ջեյթունի բնակչության հավաքագրմանը և հետապնդմանը հաջորդած լարվածությունն առաջացավ, տեղի տվեց Կառավարության հետ նրա հետագա անհամաձայնությանը: Ջելալը լսեց քաղաքի հայ հանրության մտահոգությունները և սկսեց ուղիներ փնտրել դրանք փարատելու համար: Երբ նա փորձեց ճգնաժամը լուծել՝ խոստանալով երիտասարդ հայերին, որ նրանք իրենց զինծառայությունը կանցնեն մոտակա նահանգներում, Մարաշում նշանակվեց նոր փոխարեֆեկտ: Ժամանելուն պես վերջինս ձերբակալեց Ջեյթունի հայ հայտնիներին: Ջելալը միջամտեց և օգնեց ազատել նրանց, ում ոչ մի մեղադրանք չէր առաջադրվել: Մակայն, սա նրա վերջին նախաձեռնությունը դարձավ Ջեյթունում, Մարաշի սանջակը առանձնացվեց Հալեպի նահանգից և հայտարարվեց ինքնավար «լիվա»¹⁵:

Դրանից հետո տարհանման հրամանները սկսեցին ուղարկել նահանգներին:

Վաքիթ թերթում տպագրված իր հուշերում Ջելալը ընդունում է, որ ինքը սկզբում կարծել է, որ այս հրամանները ժամանակավոր միջոցներ են, որոնք ձեռնարկվում են պատերազմի ժամանակաշրջանի պահանջների արդյունքում: «Ես ընդունում եմ, որ չէի հավատում, որ այս հրամանները, այս գործողությունները միտված են հայերի բնաջնջմանը: Ես երբեք չեմ պատկերացրել, որ որևէ կառավարություն կարող է նման կերպով իր վրա վերցնել իր սեփական քաղաքացիների բնաջնջումը՝ արդյունքում ավերելով իր մարդկային կապիտալը, որին պետք է վերաբերվել որպես երկրի ամենամեծ հարստությանը», - ասել է նա: Լինելով այս կարծիքին՝ նա անգամ խնդրել է «միջոցներ հատկացնել տներ կառուցելու և հայերին դրանցում տեղավորելու համար»:¹⁶ Մակայն Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռոպերի հետ ունեցած նամակագրությունը ցույց է տալիս, որ Ջելալը սկսել էր անհանգստանալ անգամ տեղահանություններից առաջ: 1915թ ապրիլի 12-ին Արտաքին գործերի բաժնի և Ստամբուլում Գերմանիայի դեսպանին ուղարկված նամակում Ռոպերը նշել է, որ Ջելալը իրեն տեղյակ է պահել, որ Օսմանյան կայսրությունում ալիքը հասնում է գազաթնակետին, որը հակված է բոլոր հայերին համարել կասկածելի կամ անգամ թշնամաբար տրամադրված: «Նա նման զարգացումները համարում է դժբախտություն իր հայրենիքի համար», - գրում է Ռոպերը և ավելացնում, - «Նա ինձ աղաչում էր Նորին գերագանցություն Կայսրության դեսպանին համոզել հակազդել այս միտմանը»:¹⁷

Ջելալից քիչ ժամանակ պահանջվեց հասկանալու համար, որ տեղահանությունների նպատակն է բնաջնջել հայերին: Նա իր մտահոգություններով և իր ստացած հրամանների բնույթի մասով կիսվել է Հալեպում ԱՄՆ և Իտալիայի հյուպատոսների հետ, որոնց հետ նա ամուր ընկերական

¹⁴ *Yeni Mülkiye Tarihi ve Mülkiyeliler*, Ալի Չանկայա, II հատոր, էջեր՝ 831-833, Մարս Մաթբասաի, 1969թ, Անկարա

¹⁵ Իչելի և Քյոթահիայի սանջակները նույնպես հայտարարվեցին ինքնավար «լիվաներ» նույն օրը, հետևաբար դժվար է հավաստիանալ, որ այս որոշումը նպատակ ուներ Մարաշը հանել Ջելալի վերահսկողությունից (ՕԿԱ, BOA, DH.İ.UM.EK.6/76,16/R/1333)

¹⁶ Օսմանյան արխիվներում Ջելալի կողմից իր հուշերում նշած այս խնդրանքի մասին հետք չկա: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ «*Անվտանգության գլխավոր խորհրդի կողմից Հալեպի նահանգ ուղարկված պատասխան հեռագիրը, որը վերաբերում էր հայերի ծախսերը հուզալու համար չնախատեսված ծախսերի ֆոնդից հատկացումներին*» (ՕԿԱ, DH.ŞFR. 52/335, 27/C/1333) ուղարկված էր ի պատասխան նման խնդրանքների:

¹⁷ DE/PA-AA/R14085-A-14801, Հալեպի հյուպատոս Ռոպերի կողմից Արտաքին գործերի նախարարությանը, 12.04.1915, *Հայոց ցեղասպանության մեջ՝ վկայություն Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվներից*, մեջբերում 166-րդ էջից

հարաբերությունների մեջ էր:¹⁸ Նա դիվանագետներին խնդրել է իրավիճակի լրջության մասին հաղորդել իրենց կառավարություններին և կանխել ջարդերը՝ օգտագործելով Բարձր դռան վրա իրենց ունեցած ազդեցությունը: Համաձայն Հալեպում Իտալիայի հյուպատոս Անտոնիո Գաուտիերիի հետ ունեցած իր գրույցի, որը վերջինս պատմել է Տիրան Պապիկյանին 1921թ, Ջելալը ցանկանում էր լուրջ ռիսկի գնալ՝ փորձելով կանխել սպանությունները: Ջելալը Գաուտիերիին ասել է, որ ինքը գաղտնի հրամաններ է ստացել հայ բնակչության ոչնչացման վերաբերյալ: Նա ասել է, որ սա դեմ է իր խղճին, սակայն ինքը որևէ հնարավորություն չունի որևէ գործողություն ձեռնարկել և կարող է միայն մեղմացնել հրամանների դաժանությունը: Նա կարծում էր, որ այս հանցագործությունը կանխելու միակ ճանապարհը Գերմանիայի և Ավստրիայի կառավարություններին ներգրավելն է: “ Հետևեք, որ այս փաստերի մասին իմանան Ստամբուլի Իտալական դեսպանատանը, որպեսզի նրանք կոչ անեն երկու կառավարություններին: Հակառակ դեպքում վստահ եղեք, որ ամբողջ հայ ազգը կանհետանա”, - հայտարարել է նա: Հյուպատոսը պատասխանել է, որ դա անհնար է գործող պետական վերահսկողության պայմաններում: Սակայն, Ջելալը պնդել է և պահանջել, որպեսզի նա ապահովի, որ նամակը հասնի Ստամբուլ վստահելի մարդկանց միջոցով: Գաուտիերին համաձայնել է, սակայն պարզվել է, որ այս ջանքերը ապարդյուն էին, քանի որ նամակը տեղ հասնելուց մի քանի օր հետո Իտալիան պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ:¹⁹

Այս հաղորդակցությունը թերևս տեղի է ունեցել 1915թ մայիսի 23-ի նախօրեին այն օրը, երբ Իտալիան պատերազմ սկսեց Դաշնակիցների դեմ: Այն օգնությունը, որի վրա հույս էր դրել Ջելալը, չտվեց ակնկալվող արդյունքները: Գերմանիան, որին Ջելալը այնքան էլ չէր վստահում, քանի որ այն Բարձր դռան վրա վատ ազդեցություն ուներ, շատ քիչ միջամտություններ ունեցավ չնայած Օսմանյան կայսրությունում իր հյուպատոսների բազմաթիվ ահազանգող զեկույցներին²⁰:

Մինչ այդ Միություն և առաջադիմության տեղի ակումբը փորձեց տարբեր ձևերով հեռացնել Ջելալին: Կուսակցության պատվիրակ Իհսան Ալի Էֆենդին Ջելալի դեմ հայց ներկայացրեց, որի մեղադրանքները հասնում էին ընդհուպ մինչև “հայրենիքի դավաճանության”: Վարչական տեսուչ Համիդը, ով Դիարբեքիի նահանգապետի պաշտոնից հետո էր նշանակվել այս պաշտոնում, ուղարկվեց Հալեպ՝ հարցը հետաքննելու համար: Համիդի կողմից իրականացված հետաքննությունը ցույց տվեց, որ բոլոր մեղադրանքները “անհիմն էին և կեղծ”:²¹ Ինչևէ, Ջելալին նահանգից կարճ ժամանակ հետո հեռացրեցին:

¹⁸ Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջեյ. Բի Ջեքսոնը հիշատակել է Ջելալի հետ իր մտերիմ և “եղբայրական” ընկերության մասին, և թե ինչպես են նրանք փորձել միասին փրկել հայերին տեղահանությունից, *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց ցեղասպանությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթեր*, մեջբերում 143-144-րդ էջերից

¹⁹ *Les Arméniens, 1917-1939: la quête d'un refuge*. Ռեյմոնդ Հ. Գևորգյան, Լևոն Նորդիզյան, Վահե Թաշչյան, էջեր 310-311, 2007թ Réunion des Musées nationaux, Փարիզ:

²⁰ Այս թեմայով ավելի շատ տեղեկության համար տես *Գերմանիայի պատասխանատվությունը հայոց ցեղասպանության հարցում. Գերմանիայի հանցակցության պատմական վկայության ուսումնասիրություն* Վահագն Տատրյան, Բլու Քրեյն Բուքս, 1996թ, Վոթերթաուն

²¹ *Bir Milli Mücadele Valisi ve Anıları: Kapancızade Hamit Bey*, Հալիթ Էքեն, էջ 479, Յեդիթեպե Յայինլարի, Ստամբուլ Չնայած նա ապացուցեց, որ Ջելալի դեմ մեղադրանքները անհիմն էին, Համիդի հուշերից կարելի է ենթադրել, որ Հալեպի նահանգապետը նրան դուր չէր գալիս: Ըստ Համիդի “Ջելալը շատ մեծ ուշադրություն է դարձնում իր վայելքներին” և “այդ ժամանակների համար պահանջված ջանասիրաբար աշխատող ու ինքնամոռաց ծառայող չէ”: Համիդը հերքում է նաև այն փաստը, որ Ջելալը “տեղափոխվել էր Կոնիա, որովհետև նա հավանություն չէր տալիս տեղահանություններին”: Նա ասում է, որ այդ հարցի վերաբերյալ որևէ մեղադրանք չկա և անգամ նշում է, որ այդ ժամանակ տեղահանությունները այդ շրջանում դեռ անհրաժեշտ չէին համարվում: Դժվար է Համիդի վերաբերմունքը Ջելալի նկատմամբ վերագրել սոսկ անձնական թշնամանքի: Համիդը ինքը Դիարբեքիի նահանգից ազատվել էր նմանատիպ պատճառներով: Նա հետաքննել է երկու կայմականների սպանությունը, ովքեր ընդդիմանում էին ջարդերին և Ստամբուլում Միության անդամների դատավարության ժամանակ ցուցմունք է տվել: Նրա լուրջությունը 1915թ իրադարձությունների վերաբերյալ իր սեփական վերաբերմունքի մասով, չնայած շատ աղբյուրներ փաստում են այդ մասին, վկայում է իր հուշերի լուրջ ինքնավերահսկման մասին: Հնարավոր է, որ Համիդը, ով որոշ ժամանակ տարաձայնություններ ուներ Մուստաֆա Բեմալի հետ և մեղադրվում էր

Քանի դեռ Ձեռնալի չալեպում էր, նա ոչ թե սուկ մեղմում էր հրամանների դաժանությունը, նա՝ հրաժարվեց անգամ արտաքսել Անտիոքի հայերին: Նա նաև փորձեց դասավորել, որ իր մոտ ընկերները՝ պառլամենտի անդամ Գրիգոր Չոհրաբը և Վարդգես Մերենգուլյանը, ում ուղարկում էին Դիարբեքիր գինվորական դատարանում դատավարության համար, մնան Չալեպում: Պարզ էր, որ այդ տեղափոխությունը ըստ էության մահվան դատավճիռ էր: Նա Չոհրաբին, ով տառապում է սրտի հիվանդությունով, տեղավորեց բժիշկ Ալթունյանի կլինիկայում:²² “Ես չէի կարող նրանց մահվան ուղարկել իմ սեփական ձեռքերով [...] Ես գրեցի Ստամբուլ՝ խնդրելով թույլ տալ, որ նրանք մնան Չալեպում: Ես որևէ պատասխան չստացա: Սակայն ես նրանց խոստացա, որ չեմ թողնի իրենց տանել, քանի դեռ ես Չալեպում եմ, և ես խոստումս կատարեցի: Վարդգեսը և Չոհրաբը տեղափոխվեցին իմ հեռանալու հաջորդ օրը”, -գրում է նա իր հուշերում: Ձեռնալի մեկնումից հետո Չոհրաբին և Վարդգեսին ուղարկեցին Ուրֆա: Այնուհետև նրանց ուղարկեցին Դիարբեքիր և սպանվեցին չերքեզ Ահմեդի կողմից անսպասելի հարձակման ժամանակ մինչև իրենց նպատակակետ հասնելը:

Չալեպից հեռացվելուց հետո Ձեռնալի նախ տեղափոխվեց Անկարայի պրեֆեկտուրա: Ձեռնալի և Անկարայի նահանգապետ Մազհարի միջև որոշվել էր “beçayis” անել (նույն դասի երկու կառավարական պաշտոնյաների փոխանակում փոխադարձ համաձայնությամբ):²³ Սակայն, պայմանավորվածությունը արագ մերժվեց: Հավանաբար, Ներքին գործերի նախարարության պատասխանատու անձինք վերջին պահին ոչ նպատակահարմար գտան փոխանակությունը Ձեռնալի և Մազհարի միջև, ով նույնպես ընդդիմանում էր տեղահանություններին և ջարդերին: Մազհարը անսպասելի որոշմամբ թոշակի անցավ, իսկ Ձեռնալի նշանակվեց Կոնիայի պրեֆեկտուրայում:²⁴ Մինչ այդ Ձեռնալի բազմաթիվ հեռագրեր է ուղարկում Բարձր դռանը, որոնցում նա քննադատում էր “հայերի նկատմամբ վերաբերմունքը”: Իր հուշերում նա ասում է, որ ինքը “գաղտնի և անձնական” նամակ է գրել Ներքին գործերի նախարար Թալեաթին, որոնք պարունակում էին հետևյալ բառերը. “Հայերի վերացման ուղղությամբ աշխատելը կլինի երկրի համար մի կորուստ, որը հնարավոր չի լինի դարբերով փոխհատուցել: Եթե աշխարհի մեր բոլոր թշնամիները համախմբվեին և ամիսներով խորհեին, նրանք ավելի մեծ չարիք չէին պատկերացնի:”²⁵ Նա ճամփորդեց Ստամբուլ այս տեսակետը անձամբ փոխանցելու համար, սակայն ոչ

անգլիացիների և հայերի հետ մտերիմ լինելու մեջ, իր ինքնակենսագրությունը գտել էր “ազգային գաղափարախոսությամբ”: Պետք է հիշել, որ 1926թ, երբ նա գրել է իր հուշերը, այն տարին է, երբ Թալեաթը և Ջեմալը վերականգնվեցին, իսկ նրանց ընտանիքներին պառլամենտի որոշմամբ տրվեցին ունեցվածք և հողեր: Ցեղասպանություն հրահրողների դեմ մեղադրանքները մի կողմ դրվեցին և տասնյակ մարդիկ մեղադրվեցին “դավաճանության” մեջ Իզմիրի սպանության դավադրության վերաբերյալ դատավարություններում:

²² *Zohrab ve Vartkes'in son günleri*, Ռոբերտոպտաս, Ակոս 16.07.2010

²³ ՕԿՄ, MV. 240/56, 03/B/1333

²⁴ Ի պատասխան Մազհարի հաղորդագրությանը ուղարկված հեռագրում Թալեաթը փորձում է նրան համոզել ընդունել Չալեպի նահանգապետի պաշտոնը: Հաղորդագրության բովանդակությունը թույլ է տալիս հասկանալ, որ Մազհարը Ներքին գործերի նախարարին հստակ ասել է, որ ինքը չի ցանկանում գնալ Չալեպ, եթե նահանգը նույնպես պետք է լինի ջարդերի բեմ: ՕԿՄ, DH. ŞFR, 54/94, 09/Ş/1333: Սակայն Թալեաթի Մազհարին համոզելու փորձերը ապարդյուն անցան և վերջինս թոշակի անցավ, “*հայերի տեղափոխման և բնակեցման*” թեմայով տարաձայնությունների պատճառով: ՕԿՄ, İ.MMP. 198/1333, 06/N/1333: Ձեռնալի՝ Անկարայում նշանակման չեղարկման և նրա Կոնիա տեղափոխման վերաբերյալ տես՝ İ.MMP. 197/1333, 18/Ş/1333:

²⁵ Օսմանյան արխիվներում բացակայում է այս “գաղտնի և անձնական” գրության, ինչպես և իր հուշերում Ձեռնալի հիշատակած մյուս գրությունների հետքը: Հնարավոր է, որ Ձեռնալի և Ներքին գործերի նախարարության միջև եղած թղթակցության որոշ մասը գտնվում է Աթասեի արխիվներում, որտեղ մուտք ունեն միայն Թուրքիայի Գլխավոր աշխատակազմի կողմից հավանություն ստացած սահմանափակ քանակով օգտվողներ: Արամ Արքունի կողմից հիշատակած հեռագրում և Գլխավոր աշխատակազմի հրատարակության մեջ նշվածը թույլ են տալիս ենթադրել նման հնարավորության մասին (*Ձեյթունը և հայոց ցեղասպանության սկիզբը*, Արամ Արքունի, *Ցեղասպանության հարցը, հայերը և թուրքերը Օսմանյան կայսրության մայրամուտին*, խմբագրված է Մունիի, Գոջեկի և Նախմարի կողմից, էջ 393, Օքսֆորդի համալսարանի մամուլ, 2011թ): Առանց ստորագրության այս հեռագիրը, որը գտնվում է Աթասեի արխիվում, Ձեյթունի իրադարձությունների առնչությամբ մատնանշում է, որ անհրաժեշտ է, որ պետությունը պատժի միայն մեղավորներին և խուսափի “*վիրավորական և նվաստացնող*” վերաբերմունք ցուցաբերել այն հայերի նկատմամբ, ում վերաբերյալ “*կասկածներ և երկմտություն չկա իրենց*”

որ չբարեհաճեց լսել: Նա պատասխանատու անձանց խնդրեց մեկ ուրիշին գտնել իրեն փոխարինելու համար, եթե “Կոնիայի հայերը նունպես պետք է արտաքսվեն”: Նրան վստահեցրեցին, որ այդպես չի լինի, սակայն նա այս սուտը բացահայտեց անգամ մինչև Կոնիա հասնելը: Ակշեհիրում, Իլգինում և Կոնիա քաղաքի կենտրոնում նա տեսավ, որ հազարավոր հայեր “սրտաճվիկ աղքատության ու զրկանքների մեջ” սպասում էին արտաքսման: Ջելալը անմիջապես Կոնիայի հայությանը ետ ուղարկեց և փորձեց աղքատությունից փրկել մյուս շրջաններից արտաքսվածներին նրանց օրապահիկ տալով:

Ամեն օր գնացքները հազարավոր հայերի տանում էին Կոնիա, մինչդեռ նրանց տեղափոխումը Դեր Ջոր արագացնելու հրամաններ էին գալիս: Սկզբում Ջելալը փորձում էր հետաձգել շարասյունների մեկնումը՝ պնդելով, որ այդքան մարդ բեռնելու համար պակասում են վագոններ: Ուստի, Ստամբուլի և Կոնիայի միջև այս վագոնների հարցով մեծ քանակով նամակներ փոխանակվեցին:²⁶ Սակայն, Ջելալը սուսկ պատրվակների ետևում չէր թաքնվում. նա հստակ նշել էր, որ ինքը “չի կարող մասնակցել այնպիսի նախաձեռնությունում, որոնք նա վնասակար է համարում երկրի համար”: Այդ ժամանակ նա սպառնալիքներ ստացավ Միություն և առաջադիմության Կենտրոնական հանձնաժողովից Կոնիայի պատգամավորի միջոցով: “Այս գործողությունը վավերացվել է կենտրոնական հանձնաժողովի կողմից երկար տատանումներից հետո և չի կարող փոխվել: Հայերի տեղափոխումը անհրաժեշտ է ազգային իդեալի համար, պետք է զոհաբերել անձնական կարծիքը: Եթե դուք ընդդիմանում եք այս տեսակետին [...] ապա Կոնիան կմնա առանց Ջեզ”, -ահա այսպես էին փորձում վախեցնել նրան: Ջելալը ընդդիմացավ “ազգային իդեալ” հիշատակմանը: “Ի՞նչ ազգային իդեալ: Այս սպանություններից մեծապես տուժում են թուրքեր և մուսուլմաններ, սակայն նրանք որևէ կերպ չեն կարող կանխել դրանք: Նման դաժանությունները ազգային իդեալ անվանելը ազգի համար մեծագույն վիրավորանք և զրպարտություն է”: Ջելալը շարունակեց դիմադրել ճնշումներին և կարողացավ, “օգտվելով յուրաքանչյուր հնարավորությունից”, մոտ 30,000 հայերի պահել Կոնիայում:

Չնայած հազարավոր մարդկանց մահվան ճիրաններից փրկելու իր ջանքերին տարբեր վկայություններից հայտնի է, որ Ջելալին չհաջողվեց ամբողջովին դադարեցնել տեղահանությունները: Ահա թե ինչպես է Կոնիայում ամերիկյան հիվանդանոցի բժիշկ դոկտոր Դոդդը ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին ուղված իր նամակում նկարագրում իրավիճակը. “Նահանգապետը լավ մարդ է, սակայն գրեթե անգոր: Իթիհաստի կոմիտեն և Սալոնիկի խումբն են կառավարում ամեն ինչ: Թվում է, թե իրական դեկավարը Ոստիկանապետն է:²⁷

Իշխանությունների համար պարզ դարձավ, որ Ջելալը տեղի չի տա սպառնալիքներին: 1915թ հոկտեմբերի 3-ին նրան հեռագրին իր պաշտոնից: Նրա մեկնումը նաև սկիզբն էր Կոնիայի հայերի աղետի: “Իմ մեկնելու նույն Երեկոյան Ստամբուլում ես լսեցի, թե ինչպես էին տեղահանությունների համար պատասխանատու երկու պաշտոնյաներ Կոնիայի հայերին ասում. “Ձեր հայրը մեկնեց, դուք նույնպես կմեկնեք”: Երբ Ստամբուլում էի, ես արեցի ամենը ինչ կարող էի, այս աղետը կանխելու համար: Ես կոչ արեցի բոլորին, սակայն՝ անպատասխան: Հակառակը, “ինձ մեղադրեցին իմ անձնական կարծիքը ազգի իդեալին չզոհաբերելու համար”- ասել է նա:²⁸

Երկրին հավատարմության մասով: Այս տողերը ինչպես և “*Ես արձակեցի պատվիրակին*” արտահայտությունը շատ նմանություններ ունեն նրա հետ ինչ Ջելալը գրել է իր հուշերում: Հնարավոր է, որ Ջելալի հիշատակած գրությունները, որոնց հետքը մենք չենք գտնում Օսմանյան արխիվներում, պահվում են Աթասեի արխիվներում: Խնդրո առարկա հեռագրի համար տես *Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, 1914-1918*, հատոր 1, էջեր 71-72, Գենեկլուրմայ Բաշկանլիդի, 2005թ, Անկարա:

²⁶ ՕԿԱ, DH. §FR.56/174, 17/Za/1333, ՕԿԱ, DH. §FR.55/186 ,13/L/1333, ՕԿԱ, DH. §FR.56/89, 11/Za/1333

²⁷ Դոկտոր Դոդդի նամակը Մորգենթաուին, 8 սեպտեմբեր 1915թ, *Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միացյալ Նահանգների պաշտոնական փաստաթղթեր* մեջբերում 254-րդ էջից: Դոդդի նամակի ամբողջական տեքստի համար տես դոկտոր Դ.-ի զեկույցը *Հայերի նկատմամբ վերաբերմունքը Օսմանյան կայսրությունում 1915-1916*, Ջեյմս Բրիս, Առնոլդ Ջեյ. Տոյբի, էջ 423, Թի Ֆիշեր Անվիլի ՄՊԸ, 1916թ, Լոնդոն:

²⁸ Ջելալի հեռանալուց անմիջապես հետո տեղի իշխանությունները Ներքին գործերի նախարարությանը զեկուցեցին, որ Կոնիայից երեք օրում 10,000 հայ է արտաքսվել, ՕԿԱ, DH. EUM.2.ՏՖ. 68/92,07/Z/1333:

Վիլֆրեդ Մ. Փոստը, ով աշխատում էր դոկտոր Դոդդի հետ Կոնիայի ամերիկյան հիվանդանոցում, նշել է, որ Ջելալի ետ կանչման օրը մի ոստիկան էր եկել իր դեղատուն և ուրախ բացականչել “Մենք հաղթեցինք” *Turquia Estado Genocida (1915-1923), Documentos*, Պասկուալ Մի Օհանյան, էջ 527: Մեկ այլ վկա ասել է, որ իր մեկնման օրը

Ջելալի և նրա ընտանիքի համար սկսվեցին ծանր օրեր: Նրան նոր պաշտոնի չնշանակեցին իր պաշտոնագրերումից հետո: Ընտանիքը տարիներով ստիպված էր հաղթահարել ֆինանսական դժվարություններ: 1918թ Ջելալը ցանկացավ Էսքիշեհիրում ժամանակակից ազարակի բիզնեսով զբաղվել, սակայն գերմանացի զործընկերոջ հետ արտասահմանից նրա ներմուծած մեքենաները առգրավվեցին Սարքավորումների գլխավոր վարչության կողմից:²⁹ Այնուհետև, նա ստեղծեց ապահովագրական ընկերություն, որը կոչվում էր Իթիհադ-ի Միլլի Օսմանլի, որը նոր սեփականատիրոջը անցնելուց հետո դարձավ Սարք Սիգորտա և այնուհետև՝ Աքսա Թուրքիա:³⁰

Պատերազմի ավարտից հետո նոր ժամանակաշրջան սկսվեց Ջելալի համար: Միության անդամները պատասխանատվության ենթարկվեցին երկիրը պատերազմի ժամանակ դեպի անդունդ տանելու համար և պահնաջվեցին “անմեղ” պաշտոնյաններ, ովքեր ներգրավված չէին մարդկության դեմ հանցագործությունների մեջ: 1919թ նոյեմբերին Ջելալը նշանակվեց Ադանայի նահանգապետ, որը այդ ժամանակ ֆրանսիական վեահսկողության տակ էր: Տարբեր աղբյուրներ վկայում են, որ այս նշանակումը ողջունվեց քաղաքի թուրք և հայ բնակչության կողմից: Հայկական թերթերը Ջելալին գովաբանող հոդվածներ տպագրեցին, որոնցում բազմաթիվ լուսանկարներ կային, իսկ թուրքերը գտնում էին, որ գտել են “բյուրոկրատիայում պաշտպանի”:³¹ Սակայն գնդապետ Էդուար Բրեմոնը՝ Կիլիկիայի գլխավոր կառավարիչը, դեմ էր այդ նշանակմանը՝ հիշատակելով Ջելալի “անժուժկալությունը”:³² Բրեմոնը անհանգստանալու պատճառ ուներ. Ջելալը պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո Ֆրանսիական օկուպացիայի դեմ դիրքորոշում ստանձնեց և կապվեց Մուստաֆա Քեմալի հետ՝ վերջինիս կողմից ընդդեմ Դաշնակիցների կազմակերպած պայքարին օժանդակելու համար:³³

Օսմանյան ահաբեկիչների օկուպացիային հակառակվելու հետ միասին, որով Ջելալը հաստատում էր իր հավատարմությունը “Ներկայացուցիչների խորհրդին”, որի նախագահն էր Մուստաֆա Քեմալը, Ջելալը միաժամանակ նաև անհանգստանում էր, որ հայերը կարող են թիրախում հայտնվել Դաշնակիցների դեմ պայքարում: Հավանաբար նա իր մտահոգությունները առաջ է քաշել իր գաղտնի գրությունում, որը ուղարկել էր Մուստաֆա Քեմալին և խնդրել էր, որ “Կիլիկիայի հայերի դեմ որևէ հարձակում չլինի”: Մենք այս տեղեկության մասին իմանում ենք 1920թ մարտի 11-ին Մուստաֆա Քեմալի կողմից ուղարկված հեռագրից, որտեղ նա նշում է, որ Ջելալը խնդրում է չհարձակվել հայերի վրա, որպեսզի առիթ չտանք “նրանց, ովքեր հակված են համագործակցել մեզ հետ”, օժանդակելու Ֆրանսիային:³⁴ Այս պահի դրությամբ հայտնի չէ արդյոք այս բառերը իսկապես պատկանում են հենց

Ջելալը արցունքն աչքերին է հեռացել տեղահանվածների վրաններից: Հայերի նկատմամբ վերաբերմունքը *Օսմանյան կայսրությունում 1915-1916*, մեջբերում 437-րդ էջից:

²⁹ ՕԿԱ, DH.İ.UM.EK.25/18,15/S/1335

³⁰ ՕԿԱ, MV.249/63,25/C/1336

³¹ Հայկական թերթերի հոդվածների վերաբերյալ տես *La Cilicie en 1919-1920*, Էդուարդ Բրեմոնը, էջ 336, *Revue des Etudes armeniennes*, 1921թ Փարիզ, իսկ Ադանայի թուրքերի կարծիքի վերաբերյալ տես *Çukurova Kurtuluş Savaşında Adana cephesi*, Կասիմ Էներ, էջ 21, Kultur Bakanligi, Yayinlari, 1996թ Անկարա

Ըստ Վահե Թասչյանի Ջելալի համբավը այն հայերի շրջանում, ովքեր չէին մոռացել 1915թ նրա արարքները և այն նոր մոտեցումը, որը Փարիզը որդեգրել էր քեմալիստականների նկատմամբ կարևոր դեր խաղացին Ֆրանսիայի կողմից Ջելալի նշանակմանը հավանություն տալու մեջ: *La France en Cilicie et en Haute-Mésopotamie. Aux confins de la Turquie, de la Syrie et de l'Irak (1919-1933)*, Վահե Թաշչյան, էջ 115, Կարթալայի հրատարակություններ, 2004թ Փարիզ: Ֆրանսիայի՝ մասին քեմալականների հետ հնարավոր համաձայնության ակնկալիքով ավելի ճկուն վերաբերմունքի մասով տես նույն աղբյուրը էջ 162

³² *La Cilicie en 1919-1920*, մեջբերում 336-րդ էջից, *La France en Cilicie et en Haute-Mésopotamie* մեջբերում 149-րդ էջից

³³ *Milli Mücadelede vilayetler ve valiler*, Քամիլ Էրդեհա, էջ 317, 1975թ, *La Cilicie en 1919-1920*, մեջբերում 343-353-րդ էջերից:

³⁴ Մուստաֆա Քեմալի կողմից *Միվասի Սելահատին հրամանատարին*, Ջեվդեթին Դիարբեքիր և Էվերեկում զինվորագրման տեսուչ Քեմալին 11.01.1336 ուղարկված գաղտնագրված հեռագիր, *Kurtuluş Savaşı ve sonrasında Niğde*, Ֆարուք Յիլմազ, էջ 63, 1998թ

Ջելալին, արդյոք նա դրանք գրել է Մուստաֆա Քեմալին համոզելու համար, թե Մուստաֆա Քեմալն է օգտագործել այս փաստարկը մյուսների համոզելու համար:

Մինչ Ադանայում նշանակվելը Ջելալը Ստամբուլում Միության անդամների դատավարության համար ստեղծված հարցաքննությունների հանձնաժողովին հայտարարություն է տվել: Նրա ցուցմունքներին կատարված հղումը կարելի է տեսնել առաջին լաման դատավճռում: Նա պատմում է հայկական հարցով կառավարության հետ ունեցած անհամաձայնության և Թալեաթին ու Նազիմին իրենց քաղաքականության հետևանքները հասկացնելու իր անհաջող փորձերի պատճառով իր պաշտոնազրկման մասին:³⁵ Նրա հայտարարության ամբողջական տեքստը, ինչպես և Միության անդամների դատավարությունների ամբողջական արձանագրության մնացած մասը, ցավոք, անհասանելի են Օսմանյան արխիվներում:

Ադանա պրեֆեկտը լինելուց հետո, Ջելալը 1921թ հուլիսից մինչև 1922 մարտը նշանակվել է Ստամբուլի քաղաքապետ: Նա մահացել է 1926թ փետրվարի 11-ին: Հազարավոր մարդիկ, հատկապես հայեր մասնակցեցին նրա թաղմանը, որը ըստ նրա ընտանիքի անդամների մի քանի ժամով կանգնեցրեց Ստամբուլի աշխատանքային առօրյան:³⁶ Ջելալը սիրում էր թռչուններ բուծել, թեժ քննարկումներ էր ունենում ընկերների հետ, նա սիրում էր լավ ժամանակ անցկացնել և գնալ լավ ուտելու ակոհոլի ուղեկցությամբ, նա ճանաչված էր որպես գերազանց խոսնակ և համոզիչ գրող, շատ կրթված էր, լիբերալ և բարձ բարոյական որակներ ուներ:³⁷ Այսինքն՝ նա հիշվում է ոչ միայն որպես պաշտոնյա, ով պահպանել էր իր խիղճը և պատիվը իր երկրի ամենամութ տարիներին: Նրա մոտ մեկդարյա հուշերը, որոնք տպագրվել են *Վաքիթ* թերթում կարող են լույս սփռել այսօրվա քննարկումների վրա: Ջելալի կողմից բարձրացված հարցերը ասես նա արդեն գիտեր մերժողական քաղաքականության ապագա փաստարկները, որոնք գերակշռելու են Թուրքիայում, ընդգծում են նրա բացառիկ կանխատեսումները և նրա առաքինիությունը:

[*Չնայած որոշ հայեր օգնել են թշնամուն*] կառավարության պարտավորությունն է ձեռքակալել և պատժել միայն մեղավորներին, և եթե դա հնարավոր չէ, շրջանի հայերին բնակեցնել այլ վայրերում, սակայն ոչ թշնաբար, հակառակը՝ բարեկամական վերաբերմունքով և ժամանակավորապես: Զինված հրոսակախմբի անդամը կարող է անել ցանկացած բան, որովհետև նա ավագակ է [...] Սակայն կառավարությունը դատական գործ է հարուցում միայն նրանց նկատմամբ, ովքեր հանցագործություններ են կատարել: Ցավոք, այդ ժամանակվա կառավարության առաջնորդները երբեք չկորցրեցին իրենց “Կուսակցական” ոգին և իրականացրեցին այս տարհանումները այնպես, ինչպես անգամ ամենահանդուգն և արնախում ավագակները չէին կարող պատկերացնել:

Այդ ժամանակվա կառավարությունը ասում էր, որ իրենք տեղահանությունները տարածել են Անկարայի, Կոնիայի և Էսքիշեհիրի վրա որպես կանխարգելիչ միջոց՝ պնդելով, որ ռուսները պատրաստվում էին հարձակվել Սաքարյա դաշտավայրի վրա, իսկ հայերը պատրաստվում էին օգնել իրենց: Այս ժամանակ [...] մենք ի վիճակի էինք որոշակի չափով վերահսկել Սև ծովը *Յավուզ և Միդիլի* զրահանավերով: Այս հանգամանքներում հնարավոր չէր, որ ռուսները ոտք դնեին Սաքարյա դաշտավայր: Հիմա ենթադրենք, որ նրանց հիպոթեզը ճիշտ էր, ապա ինչու՞ տեղահանվեցին Բուրսայի, Էդիրնեի և Թեքիրդաղի հայերը: Մի թե այս վայրերն էլ են պատկանում Սաքարյայի ավազանին: Ի՞նչ էին նրանք ուզում Հալեպի հայերից, որոնք իրենցից ներկայացնում էին վիլայեթի բնակչության քսան տոկոսից պակաս մասը: Անկախ նրանից դա սխալմունք էր, թե ոչ, եթե հայերի տեղափոխումը այլ վայր

³⁵ *Tehcir ve Taktik, Divan-ı Harbi Örfi Zabıtları*, Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, էջ 242 Istanbul Bilgi Üniversitesi Yayınları, 2008թ, Ստամբուլ

³⁶ Նրա թոռ Ֆիկրետ Ալի Սեյհանի կողմից կայքից դուրս չհրապարակված գրքից հատվածներ Mehmet *Celal Bey, Bir dönem bir insan*, Ֆիկրետ Ալի Սեյհան, <http://www.mehmetcelalbey.com/tr/icerik1.php>

³⁷ Ջելալի որակների վերաբերյալ տես *Les Arméniens, 1917-1939: la quête d'un refuge*, մեջբերում 309-րդ էջից, *Istanbul Şehreminleri* Օսման Նուրի Էրգին, էջ 460-490, Istanbul Büyükşehir Belediyesi Kültür İşleri daire başkanlığı, 1996թ, Ստամբուլ, *Mehmet Celal Bey, Bir dönem bir insan*, մեջբերում *Yeni Mülkiye Tarihi ve Mülkiyeliler*, մեջբերում 831-833-րդ էջերից:

անհրաժեշտ էր համարվում երկրի համար, արդյո՞ք անհրաժեշտ էր կիրառել այս միջոցները այս ձևով: Հայերի Դեր Ձոր տեղափոխման հրամանը արձակելիս արդյո՞ք կառավարությունը մտածել է, թե ինչպես պետք է այդ խեղճ մարդիկ փրկվեն առանց ուտելիքի և կացարանի քոչվոր արաբ ցեղերի մեջ: Եթե մտածել է, ես պետք է հարցնեմ. Ինչքա՞ն ուտելիք են նրանք ուղարկել այս շրջաններ: Քանի՞ տուն են նրանք կառուցել վտարանդիների բնակեցման համար: Ո՞րն էր դարերով նստակյաց կյանք վարող բնակչությանը Դեր Ձորի անապատներ տեղափոխելու նպատակը, որտեղ չկան ծառեր և որևէ տեսակի շինանյութ: Հնարավոր չէ հարցը հերքել կամ ուրիշ ձև տալ: Նպատակը բնաջնջումն էր, և նրանք բնաջնջվեցին: Հնարավոր չէ թաքցնել, որ որոշումը կայացվել էր Միություն և առաջադիմության Կենտրոնական հանձնաժողովի կողմից և այն, որ կառավարությունն, որը հանձնաժողովի մի մասն էր կազմում, իրականացրել է դա [...]

Եթե դա այդպես չէր, ապա կայմականները, ովքեր չէին ցանկանում մասնակցել սպանություններին, չէին սպանվի, իսկ նահանգապետերը և փոխպրեֆեկտները, ովքեր հակառակվեցին դրան, պաշտոնազուրկ չէին արվի, մինչդեռ կամակատարները խրախուսվում էին: Նաև արտաքսման հարցերը չէին վերահսկվի Միություն և առաջադիմության անդամների կողմից:

Ջելալի համար անգամ “մեկ թուրք կամ մուսուլման չկար, ով հաշտվում էր տեղահանությունների հետ և չէր դատապարտում սպանությունները”: Չնայած այս տպավորությանը, որը հեռու է իրականությունից, երբ նա ցեղասպանության միակ պատասխանատվությունը վերագրում է Միության անդամներին, դրանով անտեսելով բոլոր շրջաններում քաղաքացիների մասնակցությունը և նրանց անձնական հարստացումը այդ մասնակցության արդյունքում, այսօրվա բանակցողների հայտարարություններին Ջելալի տված պատասխանը շատ արժեքավոր վկայություն է:

Արդուլհալիմ Չելեբի. “Մեր միաբանության նպատակն է ծառայել մարդկությանը”

Ջելալ բեյը, ով փորձեց կանխել տեղահանությունները և ջարդերը Կոնիայում 1915, միայնակ չէր իր ջանքերում: Մեվլեվի միաբանության նախկին շեյխ Արդուլհալիմ Չելեբին նույնպես անհանգստացած էր տեղի ունեցող իրադարձություններից: Սակայն, նա հեռացվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից և որևէ պաշտոնական իշխանություն չուներ: Վելեդ Չելեբին, ով Միության անդամների հետ կիսում էր նույն հայացքները, նշանակվեց նրա պաշտոնում:³⁸ Մենք հասկանում ենք, որ այս հեռացումը պայմանավորված էր ոչ միայն հայացքների տարբերությամբ, այլ նրանով, որ Արդուլհալիմ Չելեբին կանխել էր մարտի 31-ի քրիստոնյաների դեմ միջադեպի ժամանակ կատարված փորձերի նման ջարդերը Կոնիայում:

1909թ ապրիլի 13-ին որպես խոջա ծախված երեք մարդիկ Կոնիայի մզկիթներում ելույթներ ունեցան՝ մարդկանց քրիստոնյաների դեմ հրահրելու համար: Քաղաքում մի քանի օր խուճապ տիրեց: Քանի որ Կոնիայի նահանգապետը չմիջամտեց իրադարձություններին, Կոնիայի հարյուրավոր հայեր ապաստան գտան քաղաքի Բրիտանական հյուպատոսարանում: Իրադարձությունների տարածումը կանխվեց Արդուլհալիմ Չելեբիի շնորհիվ, ով այդ ժամանակ Մեվլեվի միաբանության շեյխն էր: Չելեբին հանգստացնող խոսքով հանդես եկավ Կոնիայի մարդկանց առաջ՝ կոչ անելով նրանց չհարձակվել

³⁸ Թե ինչպես Վելեդ Չելեբին հանդես եկավ այնպես, ասես նա Միություն և առաջադիմություն կուսակցության անդամ էր տես՝ *Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ աշխատուժի Օսմանյան հավաքագրումը. Կամավորության և դիմադրության միջև*, Մեհմեդ Բեշիկչի, էջեր 189-190, Բրիլ, 2012թ, Լեյդեն: Վելեդ Չելեբիի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության հետ մոտ հարաբերությունների և նրա՝ Կոնիայի Մեվլեվիների հետ վատ հարաբերությունների մեջ լինելու մասին տես՝ Վելեդ Չելեբի Իզբուդակ, Մեսին Աքար, Թուրքալեզու հասարակության հրատարակությունները, էջ 39, 1999թ Անկարա: Հեղինակը այս տարածայնությունները վերագրում է Մեվլեվիների հետ ցորենը կիսելու խնդիրներին, սակայն անտեսում է, որ նրա Միության անդամ լինելու հանգամանքը դեր է խաղացել այս խնդիրներում:

իրենց քրիստոնյա եղբայրների վրա: Այս եղանակով Կոնիայում տեղի չունեցավ այնպիսի ջարդ, ինչպիսին եղավ Ադանայում:³⁹

Մարտի 31-ի իրադարձությունների արդյունքները, որոնք կարող են կազմակերպված թվալ Միության կառավարության դեմ, ավելի շատ նպաստավոր էին Միության անդամների համար: Այս իրադարձությունների ժամանակ Արդուլիսի Չելեբի վերաբերմունքը նախաբանն էր կառավարության հետ այն բախումների, որոնց միջով նա շուտով պետք է անցներ: Իրականում, Արդուլիսի Չելեբին օժանդակել էր Միությանը Արդուլիսի տապալման և սահմանադրական միապետության հայտարարման հարցում: Չնայած դրան, Չելեբիի բառերով ասած Միության անդամներին հաջորդած *“հիվանդ քաղաքական գործիչները”* կարճ ժամանակում պատնեշ դրեցին իր և կառավարության միջև: Ըստ 1919թ մարտին գրված նամակից մեր իմացածի Արդուլիսի Չելեբին փրկել է կառավարության կողմից մահվան դատապարտված մի քանի մարդկանց՝ սուլթան Ռեշադին բացատրելով նրանց անմեղությունը:⁴⁰ Նամակում նշված չէ, թե ովքեր էին այս մարդիկ, արդյոք նա պաշտպանում էր նրանց այնպես ինչպես և 1909թ ապրիլին: Չելեբիի այս միջամտությունները բարյացակամ չէին կարող ընդունվել կենտրոնական կառավարության կողմից:

1910թ մայիսի 24-ին Արդուլիսի Չելեբին հեռացվեց շեյխությունից և Վալեդ Չելեբին նշանակվեց նրա տեղը:⁴¹ Այս որոշումը շփոթմունք առաջացրեց Կոնիայում: Կոնիայի հայտնիները Ստամբուլը ողողեցին հեռագրերով՝ բողոքարկելով Արդուլիսի Չելեբիի պաշտոնանկության դեմ և հայտնեցին, որ չեն ընդունելու նրա հաջորդ Վալեդ Չելեբիին:⁴² Չնայած դրան նրանց ջանքերը ապարդյուն էին. նրանց ասվեց, որ նման ընդդիմությունը *“անօրինական”* է⁴³ և նրանց նախազգուշացում տրվեց:⁴⁴

1915թ Մեվլեվի միաբանությունը Վալեդ Չելեբիի կողմից դրվել էր կառավարության հայեցողության տակ: Մինչ այդ միաբանության պատմության մեջ չտեսնված եղանակով Վալեդ Չելեբի առաջնորդությամբ մեվլեվիները Կոնիայից և շատ ուրիշ քաղաքներից համախմբվեցին՝ ձևավորելով Մեվլեվիի գունդը և գնացին Դամասկոս՝ *“բանակի ոգին խթանելու”* համար: Արդուլիսի Չելեբին ավստսում է սրա համար իր գրությունում *“Դերվիշների մեր միաբանության իմաստը պատերազմին մասնակցելը և թրերը՝ ձեռքներին մարդկանց սպանելու գնալը չէ, այլ հակառակը՝ իմաստուն և հնազանդ կերպով ծառայելը՝ առանց ներգրավվելու որևէ տեսակի ռասիզմի մեջ (...) Վալեդ Էֆենդի (...) ամբողջ տիեզերքի առջև ցատկել է մեր միաբանության առանցքային արժեքների վրայով”*: Մինչ այդ տեղահանությունները արդեն սկսվել էին, Արդուլիսի Չելեբին հասկացավ, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը, որին նա անվանում է *“դաժան կազմակերպություն”*, անցել է *“քրիստոնիաներին ջնջելու”* քաղաքականությանը:⁴⁵

Այս ժամանակաշրջանում Արդուլիսի Չելեբիի վերաբերմունքի մասին մենք իմանում ենք Տրապիզոնի եպիսկոպոս Ժան Նասլյանի հուշերից, քանի որ վերջինս գրանցում էր այն հայերի տվյալները, ովքեր ողջ էին մնացել բոլոր քաղաքներում պատերազմից հետո: Չելեբին Կոնիայի մարդկանց խնդրում է պաշտպանել իրենց քաղաքի ընկերներին և ամեն գնով թույլ չտալ, որ արյուն հեղվի:⁴⁶ Չնայած նա չկարողացավ կանխել տեղահանությունները, նա փորձում էր Կոնիայի մարդկանց համոզել օգնել

³⁹ *Anadolu'da 31 Mart ve İttihat Terakki*, Այկուրթ Քանսու, Թոփուլումասալ Թարիհ, թիվ 124, էջ 78, Նիսան 2004թ, Ստամբուլ:

⁴⁰ Արդուլիսի Չելեբիին պատկանող նամակի սևագիր պատճեն, որը Ռուսուհի Բայկարան տվել էր Արդուլիսի Գուլպինարիին, *Veled Çelebi İzbudak*, մեջբերում 45-50 էջերից, 1999թ, Անկարա:

⁴¹ ՕԿԱ BEO 3770/282704, 14/C/1328

⁴² ՕԿԱ BEO 3770/282737, 19/C/1328

⁴³ ՕԿԱ DH.MUİ.108/10,18/C/1328

⁴⁴ ՕԿԱ DH.MUİ.108/10,18/C/1328

⁴⁵ Արդուլիսի Չելեբիի նամակը, *Veled Çelebi İzbudak*, Մետին Աքար, մեջբերում 46-րդ էջից:

⁴⁶ *Les Mémoires de Mgr Jean Naslian, Eveque de Trébizonde*, Ժան Նասլյան, հատոր 1, էջ 372, հատոր 2, էջ 191, 1955թ, Բեյրութ

հայերին:⁴⁷ Իր հուշերի առաջին հատորում Նապյանը առանց նրա անունը տալու անդրադառնում է Չելեբիին անվանելով՝ «Շեյխ Մոլլահի մեծ որդի»: Այնուհետև, երկրորդ հատորում նա խառնում է Չելեբիի անունը և Սադեթին Չելեբիին է հիշատակում որպես Կոնիայի Մեվլեվի միաբանության շեյխ: Սադեթին Չելեբին այն մարդն էր, ով որոշ ժամանակ Հալեպի շեյխն էր, այնուհետև նրա գործերը բարելավվեցին և նա դարձավ գործակալ Կոնիայում: Նապյանի հուշերում մենք բավականին հաճախ անունների շփոթություններ ենք հանդիպում:⁴⁸ Այն, որ այստեղ նշված անձը ավելի շուտ Աբդուլհալիմ Չելեբին է, հասկացվում է «Մոլլահի որդի, ով իր թուրք նոր փառիշահին հանձնեց» արտահայտությունից: Կոնիայի Մեվլեվի միաբանության շեյխերը Փառիշահին խնդրում էին գահակալության արարողության ժամանակ ընդունել իրենց թուրք և կոչվում էին «Մոլլահ Հունկարոլլու»: Այս արարողությունը վերջին անգամ կատարվել է սուլթան Մեհմեդ Ռեշադի՝ Աբդուլհալիմ Չելեբիի կողմից գահադրման ժամանակ:⁴⁹

Վերոնշյալ նամակում, որտեղ Աբդուլհալիմ Չելեբին պատմում է իր հուշերը, ցավոք, նա չի մանրամասնում 1915թ իր վերաբերմունքի մասին: Նա միայն շարադրում է հետևյալ տողերը ասես համաձայնություն տալով Նապյանի հուշերին. «Բոլոր իմ նախնիները լիովին ենթարկվել են մարդկությանը ծառայելու մեր միաբանության սկզբունքին և միշտ պաշտպանել ենք քրիստոնյաներին, այդպիսով նրանց փրկելով վայրագություններից: Մեր դարի քրիստոնյաները դա հստակ կփաստեն, որ իմ եպիսկոպոսը, ինչպես նաև ես, նույնիսկ մի մագաչափ անգամ չենք հեռացել մեր նախնիների այս ճանապարհից»:

Աբդուլհալիմ Չելեբին հայտնի էր որպես մի «Մեվլեվի, ով հասել է Ալավիզմի ամենաբարձր կետին»: Նա միացել էր Բեքթաշիզմին և նման եղանակով մտերմություն ձևավորել Բեքթաշիզմի և Մեվլեվի միաբանության միջև:⁵⁰ Պատերազմից հետո Միության կառավարման ավարտից հետո նրան ևս մեկ անգամ տրվեց շեյխի պաշտոն: Միաժամանակ նա հանդես եկավ որպես Կոնիայի պատգամավոր Պառլամենտում: Չնայած դրան, նրա երկրորդ շեյխությունը կարճ տևեց: 1921թ նա ազատվեց իր պաշտոնից՝ մեղադրվելով Կոնիայի ապստամբությանը աջակցելու համար և նշանակվեց Զինվորական դատարան: Ապստամբությունը ճնշելու համար ուղարկված ուժերը հայ հայտնիներին կախեցին քաղաքի մուտքի մոտ: Աբդուլհալիմ Չելեբին, ով պաշտպանում էր հայերին 1915թ ըստ մեղադրանքի կանգնած էր այդ ապստամբության ետևում: Որոշ ժամանակ անց Աբդուլհալիմ Չելեբին արդարացվեց, այնուհետև նա վերադարձվեց շեյխության:

Չնայած դրան, մեծարման այս շրջանը կարճ տևեց: 1925թ առաջ եկավ մենաստանների և միաբանությունների արգելման հարցը: Աբդուլհալիմ Չելեբին հանդիպեց Մուստաֆա Քեմալին, որպեսզի կանխի Մեվլեվի միաբանության ներառումը այս հարկադրման մեջ, սակայն նրա ջանքերը որևէ արդյունք չտվեցին: Մեվլեվի միաբանությունը ստիպված էր դադարեցնել իր գործունեությունը: Այս զարգացումներից կարճ ժամանակ անց նրա կյանքը ողբերգական կերպով ընդհատվեց: Ըստ որոշ աղբյուրների նա վայր է ընկել այն հյուրանոցի պատշգամբից, որտեղ նա մնում էր, ըստ մյուս աղբյուրների՝ նա ինքնասպանություն է գործել Մեվլեվի միաբանության արգելումից հետո⁵¹:

⁴⁷ 1918թ նոյեմբերի 18-ին պառլամենտում իր ունեցած ելույթի ժամանակ Հալեպի պատգամավոր Արթին Բոզգեզենյանը Կոնյայի մուսուլմաններին դասեց նրանց շարքում, ովքեր «հակառակվեցին կառավարության հրամանին և փրկեցին տեղահանության գրկանքներից»:

⁴⁸ Նա նաև Քյուլթահիայի փոխնահանգապետ Ֆաիք Ալի բեյին հիշատակում է որպես Ֆուադ փաշա: *Les Mémoires de Mgr Naslian*, մեջբերում 1 հատոր, 350-րդ էջից:

⁴⁹ Աբդուլբաքի Գոլպինարլին գտնում է, որ նա Օսմանյան պատմության ընթացքում միակ Մեվլեվի շեյխն է, ով իր թուրք տվել է սուլթանին: Mevlânâ'dan sonar Mevlevîlik., Աբդուլբաքի Գոլպինարլի, էջ 255-256, İnkılâp kitabevi, 2006թ, Ստամբուլ:

⁵⁰ *Dünyada ve Türkiye'de Alevi-Bektaşî dergâhları*, Բաքի Օզ, էջ 409, Ջան Յախնլարի, 2001թ, Ստամբուլ

⁵¹ Մեվլեվիի որդի Շեյխերիդեն Աբդուլհալիմ Չելեբի, Մեհմեդ Դեմիրջի, Յենի Ասիր Գազեթեսի, 20.12.2013 Դերվիշների միաբանությունը փակելու վճիռը հանրությանը հայտնի էր դրա ի կատար ածման հարցը կոնգրեսում քննարկելուց շատ առաջ և ի կատար է ածվել 1925թ նոյեմբերի 30-ին: Այս առումով ուժի մեջ մտնելը պետության կողմից հայտարարվել է 1925թ սեպտեմբերի 2-ին: Չելեբիի Անկարա գնալը պետք է, որ համընկած լինի այս ամսաթվի հետ:

III Դիարբեքիի նահանգ

Դիարբեքիի նահանգը Մամուրեթ-ուլ-Ազիզի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի հետ այն շրջաններն են, որտեղ 1915թ Առաքինիները ավելի շատ էին, կամ այն շրջաններից են, որոնց պատմությունները ավելի շատ են հասել մեր օրերը: “Մենք բախվեցինք 1938թ աղետին, քանի որ ի վիճակի չեղանք բավարար կերպով պաշտպանել հայերին”⁵², -ասել է Դունյա Անան Դերսիմից: Այն զգացողությունը, որ “1915թ անդառնալի կոտորում տեղի ունեցավ իրենց սեփական ճակատագրում” թերևս ամենանշանակալից գործոններից է, որ այդ ժամանակաշրջանի մասին հիշողությունները այսքան վառ ձևով են պահպանվել այս շրջանում:

“Ճերմանա Ֆիլան” քրդերեն՝ “ոչ մուսուլմանների մասին հրաման”, թիրախի տակ առավ ոչ միայն հայերին, այլ բոլոր քրիստոնյաներին, այդ թվում՝ ասորիներին: Հյուսիսում Երկան-Մադենից մինչ Մարդինը հարավում և Ջիզրեն արևելքում, Դիարբեքիի նահանգը հայերի, ասորիների, նեստորականների, իսաղերի, արաբների և քրդերի բնակավայրն էր: Մինչ 1915թ ելնելով որոշ տոհմերի շրջաններից, կարելի է ասել, որ այս հանրությունները “իրար կարիքը զգալու և միմյանց պաշտպանելու” վիճակում էին: Ինչևէ, ընդհանուր մթնոլորտը նահանգում լարված էր, “միասին ապրելը” դանակի ծայրին էր: “Քրիստոնյաների հավասարությունը”, որը ի հայտ եկավ Սահմանադրական միապետության հետ և այն հավանականությունը, որ իրենք հնարավոր է ստիպված լինեն վերադարձնել այն գույքը, որ ձեռք են բերել անօրինական ճանապարհով, անհանգստացրել էր շատ ցեղերի առաջնորդներին: Ուստի, այդ ժամանակաշրջանի քրդական շարժումը, որը առաջնորդում էր Բեդիքիսան ընտանիքը այնպիսի ուղղություն էր բռնել, որը մեղադրում էր Միություն և առաջադիմություն կուսակցությանը անհարգանքի և դավաճանության մեջ, շեշտված իսլամական բնույթի էր և հակահայկական: Չնայած դրան, ակնհայտ էր, որ այն արդարությունը, որից իրենք վախենում էին, հիմնականում մնալու էր որպես հավանականություն և ավելի առաջ չէր կարող գնալ: Կառավարությունը մտադրություն չունեի վերադարձնել հափշտակված ունեցվածքը: Որպեսզի մյուս ցեղերին կանխի քրդական շարժմանը աջակցելուց, կարճ ժամանակում կառավարությունը շատ խմբերի գրավեց դեպի իր կողմը նմանատիպ իսլամական և հակահայկական քարոզչությամբ:⁵³

Չնայած դրան, Մարդինի շրջանի տարբեր մասերում պահպանվել էր “միմյանց կարիքը” զգալու վիճակը: Այս իրավիճակը հատկապես ճշմարիտ է այն շրջանների համար, որտեղ գերիշխում էին ոչ միայն քրդական այլ նաև՝ հայ և ասորի ցեղերը, որոնք իրենց ապրուստը վաստակում էին անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական համակարգում հողն էր, որ իշխանություն էր տալիս ցեղերին: Չնայած դրան, որոշ կալվածատերեր, ովքեր իրենց ապրուստը վաստակում էին անասնապահությամբ Միդյատի լեռնային տարածքներում, չէին կարող գոյատևել առանց հայ և ասորի գյուղացիների:⁵⁴ Քաղաքներում դրա օրինակները կարելի է տեսնել 1895թ ջարդերի ժամանակ. Մարդին քաղաքի կենտրոնի մուսուլման ցեղերի առաջնորդները պաշտպանում էին հայերին և ասորիներին 1895թ:⁵⁵ Դժբախտաբար 1915թ այս ցեղերից ոչ բոլորն էին նույն վերաբերմունքը ցուցաբերում, նրանցից շատերը միացան ջարդերին:⁵⁶

⁵² Դունյա Անան, ով վկա է եղել Դերսիմի ջարդերին 1938թ և շատ հայտնի է եղել Դերսիմի մարդկանց շրջանում իր իմաստությամբ, խնդրել է, որ հետևյալ բառերը փորագրվեն իր շիրմաքարին. “Երբ այս հիանալի մարդիկ, ում մարգարեն տարբերվում է մերից, լքեցին մեզ (...), մեզ համար սկսվեց դժոխքի շրջանը” 2005թ հոկտեմբերին Ստամբուլում Մետին Քահրամանի հետ կայացած հարցազրույց:

⁵³ Քրդական ցեղերի և Միություն ու առաջադիմություն կուսակցության միջև հարաբերությունների վերաբերյալ տես Հայերի բնաջնջումը Դիարբեքիի նահանգում, Հիլմար Կախեր, Բիլգի Յունիվերսիտետի Յայիկարի, 2014թ Ստամբուլ:

⁵⁴ Հարցազրույց Միդյատ Էրդե և Բինկելբե գյուղերում իշխող Թեմիր աղայի թոռ Ա.Դ.-ի հետ:

⁵⁵ Գուստավ Մեյրիեր *Les Massacres de Diarbekir, L'Inventaire*, Փարիզ, 2000թ, էջ 158

⁵⁶ Մենք համեմատել ենք Գուստավ Մեյրիերի տված այն մարդկանց անունները, ովքեր պաշտպանում էին հայերին և ասորիներին 1895թ Պատրիարքության կողմից տրամադրված եղեռնի պատասխանատուների ցանկի հետ և դա

Չնայած այն ցեղերի առկայությանը, ովքեր օժանդակում էին կառավարությանը և միացան նախորդ հարձակումներին, այն կարծիքը, որ քաղաքի հայտնիները և կալվածատերերը լուռ չեն մնա տեղահանությունների վերաբերյալ, Միություն և առաջադիմություն կուսակցության համար լուրջ անհանգստության աղբյուր էր: Այսպիսով առաջացավ Դիարբեքիի պատգամավոր Փիրինչիզադե Ֆելվրի առաջնորդությամբ շրջաններում այցելություններ կազմակերպելու գաղափարը: 1915թ ապրիլի կեսերից Մարդինում, մայիսից Ջիզրեում իսկ հունիսին՝ Դիարբեքիում նա այցելեց ամեն մի գյուղ մի խոջայի հետ և կալվածատերերին կոչ արեց կատարել իրենց “կրոնական պարտականությունը”⁵⁷: Չնայած տարբեր վայրերում դա տարբեր բնույթ ստացավ, նրա կոչը հիմնված էր նրա վրա, որ հայերը և ասորիները դավեր են նյութում կառավարության դեմ, որ նրանք պատերազմի ժամանակ օժանդակել են Ֆրանսիային, որ տեղահանությունները և ջարդերը կրոնի տեսակետից ընդունելի են, որ նրանց ունեցվածքը հալալ է մուսուլմաններին:

Ինչևէ, այս բառերը բավարար չէին հատկապես Մերդինի մուսուլմաններին իրենց հայ և ասորի հարևանների դեմ հրարելու համար, քանի որ նրանք վստահ էին հայերի և ասորիների՝ Օսմանյան պետությանը հավատարմության մեջ:⁵⁸ Ուստի, իշխանությունները կանգ առան այնպիսի մտացածին մեղադրանքների վրա, ինչպիսին է ասորիների կաթոլիկ եկեղեցու մոտ զենքեր թաղելը և այնուհետև պնդելը, որ դրանք “Մերդինի հայերի գաղտնի զենքերն են”:⁵⁹ Նրանք վկայակոչում էին, որ “Ազիզ Ֆրանսուա Ֆրատերնիթի” ցանկը, որ գտնվել էր Կապուչին եկեղեցում, ապացույց է առ այն, որ նրանք համագործակցում են Ֆրանսիայի հետ, կամ էլ ներկայացնում էին Հիսուսի սուրբ արյան մասին տեքստերը որպես “երդում հեղել մուսուլմանների արյունը”:⁶⁰

Կազմակերպված ամենամեծ դավադրություններից մեկը Դիարբեքիի շուկայի հրդեհն էր, որը սկսվեց 1914թ օգոստոսի 18-19-ին: Հարյուրավոր խանութներ, հրուշակարաններ, պանդոկներ և աշխատատեղեր, որոնց մեծ մասը պատկանում էին հայ առևտրականներին, մոխրակույտերի վերածվեցին: Սա այն մեծ հրդեհն էր, որի պատճառով Բալիկչիլարբաշի թաղամասի շուկան սկսեցին անվանել “*Çarşıya Şewit*” (քրդերեն “Այրված շուկա”) և այն հրդեհվել էր Ոստիկանապետ Գեվրանլիզադե Մեմդուհի կողմից Փիրինչիզադե Ֆելվրի գիտությամբ:⁶¹ Նպատակն էր այսպես ասած “մի կրակոցով երկու նապաստակ սպանել”: Նրանք ցանկանում էին հայերին պատասխանատվության ենթարկել հրդեհի համար և դրանով նրանց թիրախ դարձնել, ինչպես նաև թուլացնել ոչ մուսուլմաններին առևտրում, ինչը հարվածում էր Միություն և առաջադիմություն կուսակցության տնտեսական քաղաքականության ազգայնացմանը: Սակայն, թերևս պլաններում առկա թերությունների պատճառով ամբողջ քաղաքում շատ արագ հայտնի դարձավ, որ Մեմդուհին է հրկիզել: 1915թ առաջին բարեխիղճ պետական գործիչներից մեկը՝ Դիարբեքիի փոխնահանգապետ Համիդ բեյը իր պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո պաշտոնազուրկ արեց Մեմդուհին: Այնուհետև նա դիմակայեց կառավարությանը և ընդանրապես ազատ արձակվեց 1915թ մարտի 25-ին:

Դիարբեքիի փոխնահանգապետ Համիդ բեյ. “Ես չեմ ուզում ներգրավված լինել այս անօրինական գործողության մեջ”

համեմատել Մերդինում մեր ունեցած հարցազրույցներից մեր ստացած կարծիքների հետ: Հարցազրույցներ են կատարվել Ս. Ու-ի, Ի.Դ.ի և Ա. Գ.-ի հետ Մերդինում, 2014թ հունվարին:

⁵⁷ *Le génocide des Arméniens* Ռեյմոնդ Գևորգյան, Օդիլե Ջեյկոբ հրատարակություններ, Փարիզ 2006թ, էջ 440

⁵⁸ Ժակ Ռետորե *Les Chrétiens aux bêtes*, Փարիզ 2005թ, էջ 56-58

⁵⁹ Արա Մարաֆյան, Մարդինի աղետները քրիստոնյաներին՝ հատկապես հայերին հետապնդելու ժամանակ, 1915թ Հայկազյան հայաբանական ուսումնասիրություն, 1998թ, էջ 263

⁶⁰ Ռեյմոնդ Գևորգյան *Le génocide des Arméniens*, մեջբերում 455 էջից, ԻշաքԱրմալտո “*Les Calamités des Crétiens*”

⁶¹ Նույն աղբյուրը, էջ 437

Համիդ բեյը նշանակվել էր Դիարբեքիրի փոխնահանգապետ 1914թ սեպտեմբերի 7-ին: Նա իր նախկին պաշտոններից հայտնի էր իր ազնվությամբ *“ամուր հարաբերություններ էր հաստատել մուսուլմանների և երկրի փոքրամասնությունների միջև,(...) իր պահվածքում հավասարություն էր ցուցաբերում (...) մարդիկ օգտվում էին Սահմանադրական միապետության առավելություններից շնորհիվ նրա ամուր փորձառու կառավարման”*⁶²

Իր վեցամյա ծառայության շրջանում նա փորձեց կանխել Փիրինյիզադե Ֆեվզիի ծայրահեղ միջոցները՝ ենթարկվելով հետևյալ դիտողությունների նման դիտողությունների վտանգին, որոնք նրան էին ուղղվելու հետագայում *“Չափազանց բարի մի եղեք հայերի նկատմամբ”* կամ անգամ *“Համիդ բեյը չի ծառայել որպես նահանգապետ, անձնական հաճույքներ փնտրելով՝ նա բարդացրել է պետության գործերը՝ դառնալով անգոր (....) Բոլոր նշանակալից գործերը հայկական դիմադրության անդամների ձեռքում էին մնացել”*⁶³ Այն հանգամանքը, որ նա պաշտոնից ազատեց Ոստիկանապետ Մեմդուհին շուկայի հրդեհի հետաքննության պատճառով, նշան էր, որ ինքը չի մասնակցելու տեղահանություններին և ջարդերին: Նա իր պաշտոնից ազատվեց 1915թ մարտի 25-ին, իսկ Դոկտոր Ռեշիդը, ով հետագայում դարձավ հայերի ցեղասպանության գլխավոր դերակատարներից մեկը, փոխարինեց նրան:

Համիդ բեյը հետագայում նշանակվեց “Ներքին գործերի նախարարության Գլխավոր վարչության հանձնաժողովում:” Նա շարադրել է, թե ինչի ակնհայտ է դարձել այս պաշտոնում եղած ժամանակ, հատկապես տեղահանությանը ընդդիմացած երկու կայմականների (թաղամասի ղեկավարներ) սպանության մասին⁶⁴1919թ Ստամբուլում Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդների դատավարության ժամանակ իր տված վկայությունում:⁶⁵ Համիդ բեյը պաշտոնից ազատվել է մինչև տեղահանությունների սկսվելը: Սակայն, այն նամակները⁶⁶ և հուշերը⁶⁷, որ հայ հայտնիները գրել են նրա մասին, ցույց են տալիս, որ նա զգում էր մոտեցող փոթորիկը և պաշտպանում էր հայերին այդ ժամանակաշրջանում: Նա փորձում էր կանխել Դիարբեքիրի շուկայի հրդեհի նման հարձակումների նորից տեղի ունենալը:

Չնայած նրան, որ այս տվյալները կարելի է գտնել շատ աղբյուրներում, Համիդ բեյը այս ժամանակաշրջանի մասին շատ քիչ է խոսում իր հուշերում: Համիդ բեյը, ով որոշ ժամանակ տարաձայնություն ուներ Սուստաֆա Քեմալի հետ, թերևս զերծ մնալով ևս մեկ անգամ որպես “հայերի մտերիմ” երևալու հնարավոր հետևանքներից, կարծես թե դիտմամբ զերծ է մնում 1915թ իր վերաբերմունքի մասին արտահայտվելուց: Այս թեմայով նրա հազվադեպ արտաբերած նախադասություններն են. *“Ես ոչ բարեկամաբար, ոչ էլ թշնամաբար էի տրամադրված հայերի նկատմամբ”*⁶⁸ իսկ գույքի միջնորդավճարների վերաբերյալ՝ *“Ես չեմ ուզում միջամտել այս վերաբերմունքին, որի ամեն փուլը դեմ է վարքի օրինական ձևերին”*⁶⁹

⁶² Ալի Չանկայա *Yeni Mülkiye târihi ve mülkiyeliler*, Ankara Üniversitesi, SBF, 1971թ, հատոր III, էջ 995, "Berâet-i Zimmet Mazbatası" Համիդ Բեյի կառավարման շրջանի վերաբերյալ, որը վերագրվում էր Թոկատի շրջանի Կառավարման խորհրդին:

⁶³Այդպես է արտահայտվել Դոկտոր Ռեշիդը, ով նրան փոխարինել էր Դիարբեքիրի նահանգապետի պաշտոնում (պարզեցված մեջբերում) *Sürgünden intihara Dr. Reşid Bey'in hatıraları*, Tükelmat, 1992թ, էջ 32

⁶⁴Համիդ բեյը փորձել է հետաքննել Բեշիրիի պատգամավոր կայմական Ալի Սաբիդ Էս Սուվեյդիի և Լիչեի կայմական Հուսեյն Նեսիմիի սպանությունները 1915թ: Սակայն, նրան հաջողվել է ավարտել աշխատանքը միայն 1918թ: *Հայերի բնաջնջումը Դիարբեքիրի շրջանում*, Հիլմար Կախեր, Bilgi Üniversitesi Yayınları, էջ 407-408

⁶⁵Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ *Tehcir ve Taktik, Divan-ı Harbi Örfi Zabıtları*, Istanbul Bilgi Üniversitesi Yay, 2008թ, էջ 242

⁶⁶Lettre du Catholicos de Sis le 29 Novembre 1921 in *Le Kémalisme devant les alliés*, Միշել Պաիլարես, Edition du Bosphore, էջ 385

⁶⁷Դիարբեքիրի ջարդերը և քրդերի վայրագությունները, Թոմաս Կ. Մուզերդիջյան, Կոմիտասի ինստիտուտ, 2013թ (գեկույզի առաջին տպագրությունը հրատարակվել է Կահիրեում 1919թ) էջեր 15-16-17-18

⁶⁸Bir Milli Mücadele Valisi ve Anıları: Kapancızade Hamit bey, Halit Eken, Yeditepe Yayınları, էջ 476-477

⁶⁹Նույն աղբյուրը, էջ 479-480 Համիդ բեյը նշել է, որ ինքը ստիպված էր ընդունել այս առաքելությունը, որը ինքը չէր ուզում, պարտադրմամբ և *“մտադիր լինելով կանխել չարաշահումները”*: Այս աշխատանքի պատճառով, որը նա անում էր *“դժկամությամբ”* նա համարում էր , որ հեռացել է պաշտոնական պարտականությունից:

Մենք շատ հստակ տեսնում ենք, որ Համիդ բեյը իր հուշերը ենթարկել է “պաշտոնական քաղաքական գծին” համապատասխան գտման և իր գրվածքներում շրջանցում է իր կողմից 1918թ անցկացվող երկու հետաքննությունների մասին անհարմար հուշերը, որոնք վերաբերում էին այն երկու կայմականներին, ովքեր դեմ դուրս եկան տեղահանություններին և 1915թ սպանվեցին Դիարբեքիի նահանգապետ Դոկտոր Ռեշիդի կողմից: “Տասվիր-ի էֆկար թերթի լրագրողի որոշ հարցերից Ռեշիդ բեյը եզրահանգման է եկել, որ ես հետաքննություն եմ վարել նրա մասին: Մա ճիշտ չէ: Ես ոչ կապի մեջ եմ եղել հետաքննող հանձնաժողովի հետ, ոչ էլ կապ ունեմ բուն հետաքննության հետ”, - ասել է նա և թաքցրել ճշմարտությունը: Իրականում Օսմանյան արխիվներում տասնյակ հեռագրեր կան, որոնք կրում են նրա ստորագրությունը և ցույց են տալիս, որ նա անձամբ է իրականացրել կայմականների սպանության վերաբերյալ հետաքննությունը:⁷⁰

Թերևս Համիդ բեյի նման վերաբերմունքի ամենասրտաճմլիկ դեպքերից մեկը այն է, թե ինչպես է նա իր հուշերում պատմում երիտասարդ հայ քաղծառայողի մասին, որի անունն էր Աստիկ Էֆենդի: Նախկինում Համիդ բեյը Աստիկ Էֆենդիի հետ միասին աշխատել էր տարբեր քաղաքներում Հետաքննության հանձնաժողովում: Նա Աստիկ Էֆենդիի մասին խոսում է որպես “բավականին հավատարիմ, ջանասիրաբար աշխատող և Մուլքիյեի (Օսմանյան կառավարման դպրոց) գերազանց շրջանավարտ”: 1914թ Աստիկ Էֆենդիին “խղճուկ վիճակում” գալիս է Դիարբեքիի` Համիդ բեյի հետ հանդիպելու: Համիդ բեյը խնդրում է նրան մնալ Դիարբեքիում և նրան նշանակում հավաքագրման գրանցող: Սակայն, այս նախաձեռնությունը Դոկտոր Ռեշիդի կողմից ներկայացվում է որպես. “Համիդ բեյը նշանակեց Հայ հեղափոխական կոմիտեի անդամներից մեկին”: Համիդ բեյը իր հուշերում խուսափում է բացահայտ կերպով գրել, որ ինքը պաշտպանել է Աստիկ Էֆենդիին: Նրա գլխում նորից աշխատում է “պաշտոնական քաղաքական գծի գտիչը”: Նա ընդգծում է Աստիկ Էֆենդիի հավատարմությունը և նշում, որ վերջինս “որոշ ժամանակով պաշտպանվեց տեղահանությունից”, սակայն պաշտպանությունը տրամադրող անձի անունը թողնում է չբացահայտված: Հասկանալի է, որ Համիդ բեյը փորձել է պաշտպանել Աստիկ Էֆենդիին անգամ Դիարբեքիից իր մեկնումից հետո: Աստիկ Էֆենդիի հետքերը մենք գտել ենք Մուլքիյեի շրջանավարտների մատյանում: Համիդ բեյի` Դիարբեքիից հեռացումից հետո Աստիկ Ասադորը նշանակվում է Վան և մահանում 26 տարեկանում 1915թ:⁷¹ Չնայած Մուլքիյեի շրջանավարտների մատյանում չի նշվում, թե ինչպես է նա նման երիտասարդ տարիքում մահացել, նրա մահվան ամսաթիվը կարևոր է:

Սպանվեցին իրենց Առաքինի վերաբերմունքի համար

Համիդ բեյի հեռացումից հետո Դոկտոր Ռեշիդը նշանակվեց Դիարբեքիի նահանգապետ: Առաջին բաներից մեկը որ նոր նահանգապետը արեց, դա ոստիկանապետ Մեմդուհին իր պաշտոնին ետ կանչելն էր և շրջանի տիրահոչակ բանդիտներից, որոշ տոհմերի առաջնորդներից բաղկացած հրոսակախմբերի ստեղծումն էր:

Ռեշիդի մեթոդները (Դիարբեքիում հայ հայտնիների ձերբակալությունը և չարչարանքը, տարբեր կտտանքներից հետո քահանա Մկրտիչ Չիլգադյանին այրելը, այն հրոսակախմբերի անսովոր դաժանությունը, որոնց հանձնարարվել էին տեղահանումները) և նրա բացահայտ հայտարարությունն

⁷⁰Չիլմար Կախսերը մեծ տեղ է տալիս այս թղթակցությանը իր աշխատության մեջ. *Հայերի բնաջնջումը Դիարբեքիի շրջանում*, մեջբերում 408-րդ էջից: Համիդ բեյի գրած հուշերի ժամանակաշրջանի որոշիչ դերի մասին համեմատության համար տես վերոնշյալ 18-րդ ծանոթագրությունը

⁷¹Ալի Չանկայա *Yeni Mülkiye târihi ve mülliyeliler*, մեջբերում 1395-րդ էջից: Չանկայան որպես Աստիկ Ասադորի մահվան ամսաթիվ նշում է 1915թ հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, քանի որ Համիդ բեյը նշում է, որ Աստիկը “որոշ ժամանակ” պաշտպանված էր արտաքսումից, նրա մահվան ամսաթիվը պետք է որ ավելի ուշ եղած լինի: Հնարավոր է, որ Չանկայան այդ ամսաթիվը վերցրել է անձանց ռեզիստից: Առկա են նաև այլ օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ քաղաքացիական ակտերի գրանցման բաժինը հունվարի 1-ը նշում էր որպես մահվան ամսաթիվ այն դեպքերում, երբ կոնկրետ ամսաթիվը առկա չէր: Օրինակ` Աբդուլհալիմ Չելեբին մահացել է 1925թ նոյեմբերի 12-ին, սակայն նրա մասին գրառման մեջ նշված է 1925թ հունվարի 1-ը, TBMM Albümü, հատոր 1, էջ` 43

այն մասին, որ նպատակ ունի արմատախիլ անել հայերին, քաղաքի թաղամասերում և հարակից գյուղերում աշխատող որոշ քաղճառայողների մոտ ընկճվածություն առաջացրեց:

Այն հանգամանքը, որ այլ քաղաքների համեմատ Դիարբեքիում այդքան շատ քաղճառայողներ կային, ովքեր ընդդիմանում էին հրամաններին, պայմանավորված էր նրանով, որ այդքան ակնհայտ էր, որ ահավոր ճակատագիր է սպասում տեղահանվածներին: Մյուս վայրերում քաղճառայողների պարտականությունը կարող էր լինել միայն տեղահանության կազմակերպումը և խմբի ճանապարհումը: Անգամ, եթե նրանք ավելի շատ էին կամ գլխի էին ընկնում, թե ինչ է կատարվելու տեղահանվածների հետ, կամ որոշ դեպքերում հստակ գիտեին, նրանց համար ավելի հեշտ էր իրենք իրենց համոզել, որ իրենց մեղավորությունը սահմանափակ է: Հակառակ դրան, Դիարբեքիի փոխգավառապետերին և կայմակամներին բանավոր կերպով կամ ոչ պաշտոնական հաղորդագրությունների միջոցով հրամայվել էր արմատախիլ անել հայերին:⁷² Լիչեի կայմակամ Հուսեյն Նասիմին և Սաբիթ Էս Սուվեյդին՝ Բեշիրիի կայմակամը, իրենց կյանքով վճարեցին իրենց դիմադրության համար:⁷³

Լիչեի շրջանի կայմակամ Հուսեյն Նեսիմի՝ «Խղճի հարց»⁷⁴

Հուսեյն Նեսիմին նշանակվել էր Լիչեի կայմակամ 1915թ հունվարի 13-ին: Նա Մուլքիյեի շրջանավարտ էր և Բեքթաշի/Սուֆի անվանդությունների հետևորդ, որոնք նրան փոխանցել էր իր ընտանիքը: Սուֆիզմը այնքան կենտրոնական տեղ էր գրավում նրա կյանքում, որ իր աշխատությունում, որտեղ նա վերլուծում է Օսմանյան պետության անկումը, նա առաջարկում է Սուֆիզմի տարածումը որպես լուծում:⁷⁵

Նրա որդի Աբդիին Նեսիմիի հուշերից հասկացվում է, որ կայմակամի մարդասիրական մոտեցումը նրան շատ արագ ստիպեց տարածայնության մեջ մտնել Դոկտոր Ռեշիդի հետ: Նեսիմին պնդում էր, որ նրանք, ովքեր հավատարիմ չեն պետությանը, պետք է պատժվեն, սակայն անմեղ մարդիկ չպետք է տուժեն: Երբ նա նկատեց, որ ստացվող հրամանները վերաբերում են զանգվածային տեղահանություններին և ջարդերին, նա նախ մտածեց, որ ինքը կարող է ինչ-որ բան անել իրադրությանը միջամտելով: Նա փորձեց պաշտպանել հնարավորինս շատ հայերի՝ հետաձգելով խմբերի ճանապարհումը: Նա նաև փորձել է կանխել հրոսակախմբերի հարձակումները՝ անձամբ ուղեկցելով տեղահանվածների առաջին խմբին: Նա համոզում էր Լիչեի ծեր տղամարդկանց «կեղծ ամուսնություններ» գրանցել հայ կանանց հետ՝ նրանց փրկելու համար:⁷⁶ Նման ձևով նա փրկեց շատ կանանց՝ նրանց ներկայացնելով որպես մուսուլմաններ:

Սակայն, Նեսիմիի անհնազանդության լուրերը շուտով հասան Դոկտոր Ռեշիդին: Խիստ ոճի

⁷²Այդ ժամանակվա շատ պետական գործիչներ նշել են, որ բացի տեղահանության գրավոր հրամաններից, որոնք գալիս էին կենտրոնական կառավարությունից, որոշ շրջաններում և քաղաքներում Կատիբ-ի Մեսուլերները (Կուսակցության քարտուղարներ) փոխանցում էին բանավոր հրամաններ: Կոնիայի նահանգապետ Ջելալ բեյը Իտալիայի հյուպատոսի հետ կիսվել է, որ Հալեպի նահանգապետ լինելու ժամանակ նա ստացել է նմանատիպ «գաղտնի հրամաններ» (Ռեյմոնդ Գևորգյան, Լևոն Նորդիգյան, Վահե Թաշչյան *Les Arméniens 1917-1939, la quête d'un refuge*, Presses de l'Université Saint Joseph, 2007 içinde Քրիստինե Բաբիկյան Ասսաֆ, *Տիրան Բաբիկյան (1887-1973): Itinéraire d'un Arménien de Cilicie réfugié au Liban* էջ 310-311)

⁷³Չնայած որոշ աղբյուրներ այս ցանկին ավելացնում են նաև Միդյատի կայմակամ Նուրիի անունը, որևէ այլ վկայություն չկա, որ նա նման կերպ է հետացել կյանքից: Միություն և առաջադիմություն կուսակցության հիմնական մեղադրանքում նշված է, որ սպանվել են միայն երկու կայմակամ: Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, *Tehcir ve Taktik*, մեջբերում 242-րդ էջից:

⁷⁴Ալի Էմիրին իր *Osmanlı Vilâyet-i Şarkıyyesi* աշխատանքում նկարագրում է Նեսիմիի դիմադրությունը վերոնշյալ բառերով: *Հայերի բնաջնջումը Դիարբեքիի շրջանում*, մեջբերում 407-րդ էջից

⁷⁵*Tanzimat'ın 150. Yildönümü Uluslararası Sempozyumu. bildiriler*, 25-27 Արալիկ, 1989թ, Միլլի Քուրթուֆանե, Անկարա, էջ 306

⁷⁶*Հայերի բնաջնջումը Դիարբեքիի շրջանում*, մեջբերում 392-րդ էջից

թղթակցություն սկսվեց Լիչեի կայմակամի և Դիարբեքիի նահանգապետի միջև: Հուսեյն Նեսիմին մեղադրում էր Դոկտոր Ռեշիդի Չինգիզ խանի պես դաժան լինելու մեջ:⁷⁷ Նրան կանչեցին Դիարբեքի տեղահանություններին վերաբերող իր մտքերը քննարկելու համար:

Այն, ինչ տեղի ունեցավ Նեսիմիի հետ Դիարբեքիի ճանապարհին, Դոկտոր Ռեշիդի սովորական մեթոդներից էր: Նա սպանվեց չերքեզ Հարունի և վերջինիս հրոսակախմբի կողմից՝ ծուղակն ընկնելով 1915թ հունիսի 29 Լիչեի Կարաս գյուղի մոտ: Սպանության մեղքը բարդվեց “հայ ապստամբների վրա”, իսկ աճյունը չհանձնվեց նրա ընտանիքին:

Լքված և առանց գերեզմանի, ինչը հիշեցնում է անհայտ թշնամիների սպանությունները 1990թ, նրան սպանողները նրան թաղեցին ճամփեզրին:⁷⁸ Նրա մահը պաշտոնական մատյաններում գրանցվեց այսպես. “Նա նահատակվեց թշնամի հրոսակախմբերի ձեռքով ավազակների գործի հետաքննության ժամանակ”:⁷⁹ Այնուամենայնիվ, նրա ընտանիքը և Լիչեի ժողովուրդը չհավատացին այս պատմությանը: Այլ Չանկայաին 1966թ ուղարկած իր նամակում նրա որդի Աբիդին Նեսիմին նշել է, որ իր հայրը սպանվել է “քանի որ չէր ենթարկվում Միություն և առաջադիմություն կուսակցության քաղաքականությանը”:

Լիչեի հայտնիները Սելիմ և Մահֆուզ բեյը Նեսիմիի թաղված տեղում գերեզման սարքեցին: Մա դարձավ մի վայր, որը կոչվեց “*Tirba kaymekam*”(կայմակամի գերեզման):⁸⁰ 1915թ Նամամ էֆենդին, ով Լիչեի հանրային պարտքերի կառավարիչն էր, կայթույլի խաղերի քահանա Ջոզեֆ Նաայեմին պատմել է, թե ինչպես է սպանվել կայմակամը և ինչպես է ինքը իր ընտանիքով այցելել վերջինիս գերեզմանին:⁸¹

Իր հուշերում Դոկտոր Ռեշիդը հերքում է, որ Հուսեյն Նեսիմին սպանվել է, քանի որ չէր համաձայնում արտաքսել հայերին “*Հակառակը, Նեսիմի բեյն էր իրականացնում հայերի ճանապարհումը, ինչպես և քաղծառայության մյուս հանձնարարությունների դեպքում այս դեպքում նույնպես նա գործում էր որոշակի ուշացումով*” գրել է Ռեշիդը:⁸² Սակայն, նա մոռանում է, որ պաշտոնական գրառումներում նա նշել է, որ Նեսիմի ճամփորդության նպատակն էր ավազակներին հետաքննելը: Այսպիսով նա չի խուսափում գրել, որ ինքն անձամբ է Նեսիմիին կանչել Դիարբեքի:

Դոկտոր Ռեշիդը իր հուշերում փորձել է նաև վատ հեղինակություն ձևավորել Նեսիմիի համար: Նա գրել է, որ Նեսիմիի դեմ որոշ մեղադրանքներ կան, ինչպես օրինակ՝ “*որոշ հայերից գումար վերցնելով*” նա թույլ է տվել չարտաքսել նրանց: Չնայած դրան հայ և ասորի վերապրածների ցուցմունքներում նման մեղադրանքներ չեն եղել:

Եթե հաշվի առնենք, այն հանգամանքը, որ Դոկտոր Ռեշիդը չափազանց բծախնդիր էր տեղահանությունները կարգ ու կանոնով և ոգևորությամբ իրականացնելու և հայերի ունեցվածքը պետական գանձապետարան տեղափոխելու հարցերում, ապա նման մեղադրանքի առկայության պայմաններում, ակնհայտ էր, որ նա չէր բավարարվի Նասիմիին սուսկ Դիարբեքի կանչելով, այլ կփորձեր նրան պաշտոնանկ անել և այդ մասին կհիշատակեր իր հուշերում:⁸³

Նեսիմիի սպանության հարցը մտցվեց Միություն և առաջընթաց կուսակցության առաջնորդների

⁷⁷Նույն աղբյուրը, տես էջ 393

⁷⁸Ջոզեֆ Նաայեմի, *Turkarnas folkmord på assyrier-kaldéer och armenier*, 2003թ, Nsibin (*Les Assyro-Chaldéens et les Arméniens massacres par les Turcs*, Փարիզ, 1920թ., աշխատության շվեդերեն թարգմանություն), էջ 70

⁷⁹ Այլ Չանկայա, Yeni Müllkiye târihi ve müllkiyeliler, մեջբերում 304-րդ էջից

⁸⁰Աբիդին Նեսիմի, Yilların İçinden, Ստամբուլ, 1977թ, Gözlem yayınları, էջ 31: Հարցազրույց Սելիմ բեյի թոռ Նիհատ Իշիկի հետ, 2011թ մարտ, Դիարբեքի: Նիհատ բեյը մեզ պատմեց, որ Հուսեյն Նեսիմին Սելիմ բեյի մոտ վարձով էր մնում:

⁸¹Ջոզեֆ Նաայեմի, *Turkarnas folkmord på assyrier-kaldéer och armenie*, մեջբերում 70-րդ էջից

⁸²*Sürgünder intihara Dr. Resid Bey'in hatıraları*, մեջբերում 86-րդ էջից

⁸³Դոկտոր Ռեշիդի՝ երկիրը նրա իսկ բառերով ասած “*միկորոններից*” փրկելու համար տեղահանությունների անհրաժեշտության վերաբերյալ հաստատուն կարծիքի և նրա կողմից մեծ կարգապահությամբ տեղահանությունների իրականացման ու անձնական հարստության ձեռքբերմանը առարկելու վերաբերյալ տես Դոկտոր Մեհմեդ Ռաշիդ (1873–1919), *Քաղաքական դոկտոր*, էջեր՝ 268-269 (Հանս-Լուկաս Կիեսեր, Դոմինիկ Ջեյ Շոլլեր, *Der Völkermord an den Armeniern und die Shoah*, Յյուրիխ, Խրոնոս, 2002թ)

վերաբերյալ դատավարության օրակարգ: Դիարբեքիրի նախկին նահանգապետ Համիդ բեյը իր ցուցմունքն է տվել, այն *“երկու կայմակամների մասին, ովքեր բնաջնջվեցին տեղահանություններին հակառակվելու համար”*:⁸⁴

Ներկայումս Լիչեի ժողովուրդը շարունակում է Կարաս գյուղի մոտ գտնվող գերեզմանը անվանել *“կայմակամի գերեզման”*: Մակայն Լիչեի հայտնիների կողմից կառուցված գերեզմանը արդեն չկա: 2013թ նոյեմբերին մեր Լիչե կատարած այցելության ժամանակ մենք տեսանք, որ Հուսեյն Նեսիմիի մասին հուշերը լավ պահպանվել են: Հատկապես ծեր մարդիկ պատմում էին, որ կայմակամի ճակատագրի մասին իրենք լսել են իրենց պապիկներից:⁸⁵ Նորից Նիհատ Իշիկը՝ Հուսեյն Նեսիմիի գերեզմանը կառուցած Սելիմ բեյի թոռը, մեզ պատմեց 1950 ական թթ մի ծեր զինվորի հետ ունեցած իր զրույցի մասին: Այդ զինվորը այն հրոսակախմբի մեջ էր եղել, որը սպանել էր կայմակամին: Նա պատմել էր Իշիկին, որ Դոկտոր Ռեշիդն էր հրամայել սպանել կայմակամին և ասել, որ ինքը մեծ խղճի խայթ է զգում այդ սպանության մեջ ներգրավված լինելու համար:

1915թ սեպտեմբերին 3-րդ բանակի շրջանում աշխատող հանձնաժողովը *“զինվորական տրիբունալ ուղարկելով մեղադրանք ներկայացրեց նրանց, ովքեր չէին ենթարկվել հայերին տեղահան անելու մասին օրենքին”*:⁸⁶ Ինչ վերաբերում է Նեսիմիի սպանությանը, ապա հանձնաժողովի նախագահ Մազհար բեյը 1916թ փետրվարին հարցաքննել է զինվորագրման բյուրոյի պետ Սուլեյման բեյին: Սուլեյման բեյը պատմել է որ Հարունը Լիչե է եկել չեքոսլովակացի ժանդարմներից բաղկացած խմբով, ձեռք բերել է կայմակամին և նրան ուղարկել Դիարբեքիր նրա հետ որպես ուղեկցորդ ուղարկելով երկու ժանդարմների: Նրանց ճանապարհ ընկնելուց կարճ ժամանակ անց լսվել է Հուսեյն Նեսիմիի սպանության լուրը: Սուլեյման բեյը, հերքելով Դոկտոր Ռեշիդի ասածը, հատկապես շեշտում է, որ այդ ժամանակներում շրջանում հրոսակախմբերի հայ անդամներ չկային:⁸⁷

Կարո՞ղ էր արդյոք այն նախկին զինվորը, ով խղճի խայթի մասին իր խնդիրները 1950 ական թթ պատմել էր Նիհատ Իշիկին, լինել հենց Սուլեյման բեյը, ով 1916թ ցուցմունք էր տվել Մազհար բեյին: Մենք բավարար տեղեկություն չունենք այս հարցի շուրջ խորհելու համար: Եթե երկուսն էլ նույն մարդիկ են, կարող ենք ենթադրել, որ 1916թ Սուլեյման բեյը վախեցել էր ասել, որ ինքը մասնակցել էր Նեսիմիի սպանությանը, սակայն նրան իր ամբողջ կյանքի ընթացքում տանջել է խղճի խայթը:

Ինչ վերաբերում է Հուսեյն Նեսիմիի գերեզմանին, որը գտնվում է Կարաս շրջանից անմիջապես հեռու, բլուրի կողքին՝ Դիարբեքիրի հին ճանապարհին, նրա վրա առկա են նշաններ, որոնք հուշում են, որ այն հատկապես նախատեսված է եղել հիշելու համար: Այսօր գերեզմանի վրա ոչ գերեզմանաքար կա, ոչ էլ որևէ այլ նշան: Չնայած դրան բոլոր չորս կողմերից դաշտերով շրջապատված այս հողակտորի վրա Հուսեյն Նեսիմիի գերեզմանի տարածքը աչքի է ընկնում որպես միակ տեղ, որի վրա գյուղատնտեսությամբ չեն զբաղվում և որի վրա առկա է միայն մեկ ծառ: Նրա որդին, ում հետ մենք հանդիպեցինք Ստամբուլում, հայտնեց, որ ինքը շատ քիչ բան գիտի իր պապիկի մասին, քանի որ վերջինս սպանվել է, երբ իր հայրը դեռ շատ երիտասարդ էր, որ իրենց ընտանիքը շատ մեծ դժվարությունների միջով է անցել և որ իրենք ցանկանում են, որ իրենց պապիկի հիշատակը ապրի:

⁸⁴Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, *Tehcir ve Taktıl, Divan-ı Harbi Örfi Zabıtları*, մեջբերում 242-րդ էջից:

⁸⁵Կարաս շրջանին մոտ գտնվող Թեփեսիկ գյուղի բնակիչները մեկ այլ վարկած պատմեցին Նեսիմիի սպանության մասին. “Երբ կայմակամը իմացավ, որ Լիչեի հայերին սպանում են, նրանց նետելով Ֆիսի հորերը նա ճանապարհ ընկավ, որպեսզի գնա այնտեղ և կանխի սպանությունները: Այնուհետև, հավանաբար նա մարդասպաններին ասել է “Մի սպանեք հայերին և հետևեք, որ նրանք անվնաս հասնեն Դիարբեքիր” Նրան սպանել են հենց տեղում ջարդերը կանխել փորձելու համար”: Հարցազրույցներ Թեփեսիկ գյուղում, 2013թ նոյեմբեր

⁸⁶ՕԿԱ, DH.ŞFR56/179,17/Za/1333.

⁸⁷Հիլմար Կախերը գտել է 1916թ փետրվարի 8-ով թվագրված հեռագիրը, որում կարելի է գտնել Սուլեյմանի այս ցուցմունքը, որը Մազհարի կողմից ուղարկվել էր Թալեաթին Գրիգոր Կերկերյանի կազմած փաստաթղթերի հետ միասին: Ակնհայտ է, որ այս թղթակցության բովանդակությունը, որի հետքերը չեն պահպանվել Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվներում և որի ուսումնասիրությունը մինչ օրս չի կատարվել, շատ արժեքավոր տեղեկատվություն է պարունակում: *Հայերի բնաջնջումը Դիարբեքիրի շրջանում*, մեջբերում 406-րդ էջից:

Ընտանիքի մտադրությունը Հուսեյն Նեսիմիի սպանության վայրում կառուցել հուշարձան դեռ պետք է իրականացվի:

Ալի Սաբիդ Էս Մուվեդդի, Բեշիրիի կայմակամի տեղակալ

Ալի Սաբիդ Էս-Մուվեդդին ծնվել է 1890թ Բաղդադում: 1911թ ուսումը ավարտելուց անմիջապես հետո նշանակվել է ընթերակա պաշտոնյա Դիարբեքիի նահանգում: Քանի որ նա հրաժարվել էր իր պաշտոնավարման շրջանում մասնակցել 1915թ տարհանումներին որպես Բեշիրիի կայմակամի տեղակալ, Դոկտոր Ռեշիդի հրամանով նա սպանվել է չերքեզ հրոսակախմբի անդամ Ազիզի կողմից: Երբ նա սպանվեց նա ընդամենը 25 տարեկան էր:⁸⁸

Երիտասարդ կայմակամի սպանության մեղավորներին գտնելու համար նրա եղբայր Նասի բեյը հետաքննություն անցկացրեց: Այն, ինչ Նասի բեյը պարզեց, տանում էր դեպի Դիարբեքիի նահանգապետ Ռեշիդը:⁸⁹ Սաբիդ բեյի սպանության հարցը առաջ քաշվեց 1919թ Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդների դատավարության ժամանակ:⁹⁰ Չնայած իր հուշերում այդ մասին չնշելուն Ալի Սաբիդի սպանության հետաքննությունը Դիարբեքիի փոխնահանգապետ Համիդ բեյը վարել է անձամբ 1918թ:

Մարդինի փոխգավառապետ Հիլմի բեյ. “ Ես այնքան անխիղճ չեմ, որպեսզի մասնակցեմ ջարդերին”

Մարդինի փոխգավառապետ Հիլմի բեյի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես Միության անդամները կարող էին անգամ տարիներ անց ստիպել նրանց, ովքեր հայերի ցեղասպանության ժամանակ ընդդիմացել էին հրամաններին, վճարելու իրենց այդ վերաբերմունքի համար: Ինչպես և Հալեպի նահանգապետ Ջելալ բեյն էր արել, Հիլմի բեյը փորձել է կանգնեցնել վայրագությունները՝ ահազանգելով գերմանացի դիվանագետներին:

Ցեղասպանության հիմնական դերակատարներից մեկը՝ նահանգապետ Դոկտոր Ռեշիդը որոշել էր, որ Հելիմ բեյը չի ենթարկվի իր իշխանությանը: 1915թ Մոսուլից Դիարբեքի գնալիս Ռեշիդը ձերբակալել էր շատ ասորի հայտնիների, որոնց նա տարբեր հանցանքներ էր վերագրում: Սակայն, Հիլմի բեյը հրաժարվում է հանդես գալ անհիմն մեղադրանքներից ելնելով և բաց է թողնում ձերբակալված ասորիներին: Ռեշիդը հասկանում է, որ չի կարողանա Հիլմի բեյին ստիպել ենթարկվել իր բոլոր հրամաններին: Հաջորդ ամիսների ընթացքում նա գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի պաշտոնից ազատի Հիլմի բեյին:

Դոկտոր Ռեշիդը նախ պահանջում է, որ Մարդինի փոխգավառապետը հեռացվի իր պաշտոնից և ներկայացնում է որոշ թալանների և հարձակումների դեպքեր, որոնք նա վերագրում է Ալի Բատտեին, իսկ եզդիները, որպես արդարացում այդ մեղադրանքին ասում են, որ գավառապետը “բավարար կանխարգելիչ միջոցներ չի ձեռնարկել”: Միաժամանակ Հիլմի բեյը Մարդինի քրիստոնյաներին հասկացնում է, որ իրենց կաջակցի սպասվող փոթորիկի ժամանակ: Նա մասնակցում է Զատիկի տոնակատարություններին եկեղեցիներում: Երբ նա լսում է, որ Մարդինում ձևավորվել է մուսուլմանական ազգային ընդդիմություն, նա այցելում է քաղաքի մոտ գտնվող վանք և հրամայում ձերբակալել այն անձին, ով քրիստոնյաների դեմ ելույթներ էր ունենում:

Երբ Ռեշիդը 1915թ մայիսին հրամայեց ձերբակալել և սպանել քաղաքի հայտնի հայերին, Հիլմին հակառակվեց այդ հրամանին: Ըստ դոմինիկացի հոգևորական Ժակ Ռետորեի նա Ռեշիդին խղճով

⁸⁸ Ալի Չանկայա, *Yeni Mülkiye târihi ve mülkiyeliler*, մեջբերում 1442-րդ էջից

⁸⁹ Հայերի բնաջնջումը Դիարբեքիի շրջանում, մեջբերում 395-408 էջերից

⁹⁰ Նույն աղբյուրը տես 409-413 էջեր

մարդու պատասխան տվեց. “Ես այնքան անսիրտ չեմ, որ մասնակցեմ Օսմանյան քաղաքացիների ջարդերին, ովքեր ես շատ լավ գիտեմ, որ հավատարիմ են պետությանը և անմեղ:”⁹¹

Այս պատասխանը խզեց նրանց կապերը Ռեշիդի հետ, ով պահանջում էր Ստամբուլից պաշտոնից ազատել Հիլմիին: Նա Հիլմի բեյին մեղադրեց “թույլ, ծույլ, հին ռեժիմի հետ համագործակցող, կուսակցության հետ աշխատելուց հրաժարվող, համառ լինելու մեջ, ով օր ու գիշեր հանդիպում է այնպիսի “չար” մարդկանց հետ ինչպիսին են օրինակ՝ հայ կաթոլիկ եպիսկոպոս Մալոյանը, ով այն աստիճանի ազգույշ է գտնվել, որ հայերին տեղյակ է պահել պետության մտադրությունների մասին”: Ռեշիդը ուզում էր իր մարդուն՝ Բեդրեթինին նշանակել Հիլմի բեյի փոխարեն Մարդինի փոխգավառապետ:⁹²

Երբ նա անհապաղ պատասխան չստացավ Ստամբուլից իր պահանջների վերաբերյալ, Ռեշիդը անցավ իր սեփական մեթոդներին: Նա Դիարբեքի Ռստիկանապետ Մեմդուհին հանձնարարում է կեղծ վկայություն տալ, որում Մարդինի հայ կաթոլիկ եպիսկոպոս Մալոյանը մեղադրվում է զենք թաքցնելու մեջ: 1915թ հունիսի 3-ին, օգտվելով Հիլմի բեյի քաղաքից բացակայությունից, նա այդ կեղծ վկայության հիման վրա ձերբակալել է տալիս Մալոյանին և հայտնի քրիստոնյաների: Երբ Հիլմի բեյը վերադառնում է քաղաք հունիսի 7-ին, նա արձագանքում է այդ ձերբակալություններին: Սակայն, նա ոչինչ չէր կարող անել: Հունիսի 8-ին նա հեռացվում է իր պաշտոնից և նշանակվում Հաքյարիի փոխնահանգապետ:⁹³ 1915թ հունիսի 10-ին Մալոյանին և 410 ձերբակալված հայերին ու ասորիներին ստիպեցին ճանապարհ ընկնել նրանց Դիարբեքի ուղարկելու անվան տակ: Երբ ուղեկցվող շարասյունը հասավ Կարա Քոփրու, Մալոյանը սպանվեց:

Հիլմի բեյը Մարդինից հեռացավ հունիսի վերջին: Ինչևէ, նա տեղափոխվեց Մոսուլ, այլ ոչ թե իր պաշտոնավարման վայրը՝ Հաքյարի: Մոսուլում նա Գերմանիայի հյուպատոս Վալտեր Հոլթեյնին պատմեց Ռեշիդի գործողությունների և Մալոյանի սպանության մասին: Նա Հոլթեյնին պատմեց, որ Դոկտոր Ռեշիդը “հարձակվում էր քաղաքի քրիստոնյաների վրա կատաղած շան նման”, և որ մեկ գիշերում նա մոտ 700 մարդու այդ թվում հայ եպիսկոպոսին “քաղաքից դուրս կոտորեց ոչխարների նման”: Հոլթեյնը իրադարձությունների մասին հայտնեց Ստամբուլի հյուպատոսարանին՝ մեջբերելով Հիլմի բեյին և նշեց, որ մինչև Ռեշիդը պաշտոնազուրկ չարվի, քաղաքի մուսուլմանները նրա օրինակով կարող են սպանել քրիստոնյաներին:⁹⁴

Այս տեղեկությունը դեպքան հետագայում մղեց գործողությունների և 1915թ հունիսի 12-ին նա Ստամբուլի Ներքին գործերի նախարար Թալեաթին նոտա ուղարկեց: Այդ նոտան պարունակում էր Հիլմի բեյի բառերը, ինչպես նաև դրանք հիշատակվում են այն հեռագրում, որով Թալեաթը Ռեշիդին ասում է. “վատ տպավորություն չթողնել միջազգային հասարակության կարծիքի վրա” Թալեաթը Ռեշիդին գրել է. “Հայերի նկատմամբ կիրառվող նախազգուշական զինվորական միջոցառումները և քաղաքականությունը ոչ մի կերպ չպետք է տարածվեն մյուս քրիստոնյաների վրա:”⁹⁵ Հիլմի բեյի ջանքերը

⁹¹ Ժակ Ռետորե, Les Chrétiens aux bêtes, մեջբերում 62-րդ էջից: Իվ Տերնոնի նշած վկան մեջբերում է այս պատասխանի մեկ այլ տարբերակ. “Մարդինի հայերը հայկական կաթոլիկ եկեղեցուց են և նրանք խոսում են միայն արաբերեն: Նրանք կապ չունեն Գրիգորյան հայերի հետ: Ազատագրական մտածելակերպը նրանց չի հասել և նրանք զինված չեն: Նրանք հայտնի են իրենց անկեղծ և քաղաքակիրթ պահվածքով: Նրանք անմեղ են և ոչ մի հանցանք չի կարող նրանց վերագրվել: Մյուս համայնքներից ևս չկան մարդիկ, որոնց անհրաժեշտ է ձերբակալել” Մարդին, 1915թ, Իվ Տերնոն, մեջբերում 119-րդ էջից:

⁹² Հայերի բնաջնջումը Դիարբեքի շրջանում, մեջբերում 312-316 էջերից

⁹³ Հունիսի 8-ը, որը Հիլմար Կախսերը նշում է որպես նշանակման ամսաթիվ, այն ամսաթիվին է, երբ Ներքին գործերի նախարարությունը Ռեշիդին տեղեկացրեց իրավիճակի մասին: ՕԿԱ. DH.ՖՐ.53/291, 25/B/1333 Ըստ Օսմանյան վարչապետի գրասենյակի արխիվների՝ “Մարդինի գավառապետ Հիլմիի և Հաքյարիի նահանգապետ Շեֆիկ բեյի պաշտոնների փոխանակումը” որոշվել է 1915թ մայիսի 31-ին, ՕԿԱ. Ի. DH.1514/1333 17/B/1333

⁹⁴ Մոսուլի փոխհյուպատոս Հոլթեյնից Կոստանդնուպոլիսի դեսպանատանը, Մոսուլ 10.07.1915, DE/PA-AA/BoKon/169 Հայերի ցեղասպանությունը, վկայություններ Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության արխիվներից, Վոլֆգանգ Գուստ, մեջբերում 245-րդ էջից:

⁹⁵ Երիտթուրքերի մարդկության դեմ գործած հանցագործությունները՝ Հայերի ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Թաներ Աքչամ, 208-209 էջեր, Փրինսթենի համալսարանի մամուլ, Նյու

գոնե որոշ չափով տվեցին իրենց արդյունքը: Սակայն, ինչպես հայտնի է Ներքին գործերի նախարարությունից եկած հրամանը չկանգնեցրեց Ռեշիդին, նա շարունակում էր թիրախի տակ պահել ասորիներին և մյուս համայնքներին, ինչպես և հայերին: Թալեաթի հետ նրանց ունեցած գրագրությունից մի քանի օր հետո՝ 1919թ հուլիսի 19-ին նա հրամայեց հարձակումներ կատարել Միդյատի քրիստոնեկան թաղամասերի վրա:⁹⁶

Այդ օրվանից հետո Հիլմի բեյը նշանակվեց Հաքյարիի, Նաբլուսի, Մալաթիայի, Դեր Ջորի և Բայազետի փոխնահանգապետ:⁹⁷ 1919թ օգոստոսին նա նշանակվեց փոխնահանգապետ Էսքիշեխիում, որը վերահսկում էր անգլիական բանակը: Պաշտոնավարման այդ կարճ ընթացքում, որը տևեց մինչև նրա սպանությունը 1919թ հոկտեմբերի 4-ին, նա կոնֆլիկտի մեջ էր Մուստաֆա Քեմալի և նրա շրջապատի հետ: Հայտնի քեմալականներից գրեթե բոլոր նրանք, ովքեր ըստ ականատեսների Էսքիշեխիում էին, Միություն և առաջադիմություն կուսակցության նախկին անդամներ էին՝ Ալի Ֆուատը (Ջեբեսոյ), Կուչուկ Թալաթ (Մուշկարա) և Խալիլ փաշան (Կուտ)այդ մարդկանցից մի քանիսն էին: Ինչպես նշել ենք մյուս օրինակներում, Հիլմի բեյը չցանկացավ լինել այն մարդկանց խմբի մի մասը, ովքեր մասնակցել էին հայերի ցեղասպանությանը: Ուստի, նա հեռու էր մնում Մուստաֆա Քեմալի ձեռնարկած պայքարից: 1919թ սեպտեմբերի 17-ին Մուստաֆա Քեմալը հեռագիր ուղարկեց Հիլմի բեյին՝ խնդրելով խզել Ստամբուլի կառավարության հետ կապերը՝ *“ազգային ցանկությանը ենթարկվելու համար”*, նա նաև ավելացրեց, - *“հակառակ դեպքում նա չի կարողանա դիմադրել ազգային ցանկությանը անգամ կարճ ժամանակով”*: 1919թ սեպտեմբերի 24-ին Մուստաֆա Քեմալը ծանուցում ուղարկեց *“Էսքիշեխիի փոխնահանգապետի մասին, ով գործողություններ է ձեռնարկում Պայքարի դեմ”*:⁹⁸

1919թ հոկտեմբերի 3-ին քեմալական ուժերը, չնայած անգլիական բանակի շարունակական ներկայությանը քաղաքում, Էսքիշեխիում իշխանությունը վերցրեցին իրենց ձեռքը: Նրանք հայտարարեցին, որ Հիլմի բեյը արձակվել է իր պաշտոնից և նրան փոխարինել է Մաքրի բեյը: Ուստի, Հիլմի բեյը նրանց համար այլևս ոչ խոչընդոտ էր, ոչ էլ սպառնալիք: Սակայն, վերջինիս չհաջողվեց խուսափել թիրախ դառնալուց: Ճաշելու համար տուն գնալու ճանապարհին անհայտ անձը գնդակահարեց նրան: Ալի Ֆուատ Ջեբեսոյը այս զարգացումների մասին հայտնեց 15-րդ Կորպուսի հրամանատարությանը՝ *“Հիլմի բեյը, ով համառորեն խանգարում էր Պայքարին, սպանվել է ազգայնականների կողմից”*:⁹⁹ Նրան սպանողը երբեք էլ չբռնվեց և չպատժվեց: Ըստ սպանությունը հետաքննելու համար նշանակված տեսուչների, ժանդարմ զինվորը, ով սպանության ժամանակ Հիլմի բեյի մոտ էր *“գիտեր մարդասպանի անունը, սակայն անհայտ պատճառներով հրաժարվեց ասել այն”*:¹⁰⁰ Մուստաֆա Քեմալը 1919թ հոկտեմբերի 12-ին հետևյալ հեռագիրն է ուղարկել Սուլեյման Նազիֆին, ով հարցրել էր նրա կարծիքը այդ թեմայի մասին.

“Մենք չենք ճանաչում մահացած Հիլմի բեյին: Մենք առնչություն չունենք և չենք էլ կարող ունենալ այն մարդկանց հետ, ովքեր սպանել են նրան, ովքեր էլ որ եղած լինեն: Սպանության միջադեպի առնչությամբ մեր ստացած տվյալներից կարող ենք միայն նշել, որ նա սպանվել է ազգային պայքարի նախաձեռնությունների դիմադրելու համար ազգայնականի կողմից: Վստահ ենք, որ Ազգային ուժերը պետությանը կտրամադրեն ցանկացած աջակցություն, որ կարող են՝ կիրառելու համար հանցագործ և մարդասպան անձանց հետապնդելու վերաբերյալ օրենքները: Թույլ տվեք նաև ավելացնել, որ ինչպես և Դուք, մենք նույնպես ցնցված ենք և ցավում ենք կատարվածի համար”:¹⁰¹

Մուստաֆա Քեմալի պատասխանը Սուլեյման Նազիֆին այն տեղեկության կրկնությունն էր, որ նրան

Ջերսի

⁹⁶ Տես ստորև էջ 34

⁹⁷ Ալի Չանկայա, *Yeni Mülkiye tarihi ve mülkiyeliler*, մեջբերում 435-րդ էջից

⁹⁸ *Kurtuluş Savaşı Günlüğü:Erzurum Kongresi’nden TBMM’ye*, Ջեկի Սարիհան, էջ 122, 1982թ, Ստամբուլ

⁹⁹ *Milli Mücadelede Eskişehir*, Ալի Սանկոյունջու, էջ 41, *Osmangazi Üniv. Yay.*, 2002, Էսքիշեխի.

¹⁰⁰ *Eskişehir Mutasarrıfı Hilmi Bey’in öldürülmesi*, Ջաֆեր Քոյլու, ,Türk İnkılâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi

Sayı 46, էջ 445, 2010թ, Անկարա

¹⁰¹ Նույն աղբյուրը՝ 446-447 էջեր

փոխանցել էր Ալի Ֆուատ Ջեֆեսոյը: Չնայած դրան, միջադեպից անմիջապես հետո շուտով հրապարակված իր հուշերում Ալի Ֆուատ Ջեֆեսոյը, ով ցանկանում էր Հիլմի բեյի սպանությունը կապել միայն Ազգային պայքարին ընդդիմանալու հետ, բաց է թողում մի կետ: Հիլմի բեյը ցուցմունք էր տվել Խալիլ Կուտի՝ ցեղասպանության մեջ պատասխանատու լինելու մասին Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունից առաջ Ստամբուլի կողմից նշանակված հետաքննությունների հանձնաժողովին: 1919թ օգոստոսին Խալիլ Կուտը փախավ բանտից և գնաց Անատոլիա՝ միանալու Ազգային պայքարին: Ըստ Անգլիայի Արտաքին գործերի նախարարության և Ստամբուլում հայկական պատրիարքության այն անձը, ով պատվիրել էր Հիլմի բեյի սպանությունը, Խալիլ Կուտն էր:¹⁰²

Սպանությունը հապշտապ վերագրվեց “ազգայնականի” և “*նստիկանության և զինվորականների միջադեպի նկատմամբ անտարբեր գործողությունների*”¹⁰³ արդյունքում գործը կարճվեց: Այն ցուցմունքը, որը Հիլմի բեյի համար արժեցավ իր կյանքը և որը նա տվել էր Ստամբուլի դատավարություններից առաջ հետաքննությունների հանձնաժողովին, ուսումնասիրողների համար արխիվներում հասանելի չէ, ինչպես և հասանելի չեն այս դատավարությունների հետաքննությունների գործի մյուս մասերը:

Ստամբուլի կառավարությունը Հիլմի բեյի կնոջ՝ Շեմիա Հանիմի և որդու՝ Քերամետ Էֆենդիի համար, ով սովորում էր Գերմանիայում նշանակել է թոշակ:¹⁰⁴ Մեր ուսումնասիրության ժամանակ մենք չկարողացանք գտնել Հիլմի Բեյի ընտանիքի հետքերը հետագա տարիներին:

Հետևյալ բառերը, որոնք արտասանվել են Հիլմի բեյի կողմից, ով հայտնի էր որպես “*Ազնիվ, ազատամիտ և մարդասեր*” մարդ ներկայացնում են մի մարդու կերպար, ով իր մտածելակերպով առաջ էր իր ժամանակներից. “*Իմ կառավարման ներքո գտնվող մարդկանց ես դիտարկում եմ որպես սոսկ Օսմանյան քաղաքացիներ: Ես ուշադրություն չեմ դարձնում նրանց կրոնին, հավատքին կամ իրենց անձնական գործերին*”:¹⁰⁵

Դերիկ՝ «Ցավոք սրտի մենք կարողացանք փրկել միայն նրանցից քչերին...»

“*Սա միակ մնացած վայրն է, և այս մեկը մենք պահպանում ենք մեր աչքի լույսի պես*”, - Նաիֆ Դեմիրջին, ով իր կնոջ հետ Դերիկում ապրող վերջին հայերից է, զգուշորեն բացում է Սուրբ Գևորգ եկեղեցու դուռը, որը հազարավոր փորձությունների միջով է անցել մինչ օրս: Հայ համայնքը կարողացել է միայն ետ ստանալ եկեղեցին, որը կառավարության կողմից հափշտակվել էր 1915թ հետո և որը օգտագործվում էր որպես ախոռ, դրա դիմաց վճարելով 1957թ:¹⁰⁶ “Հորեդրայր Նաիֆ” անունով Դերիկում հայտնի այս մարդը ասում է, որ դրա համար պարտական են Նեջիֆօղլուլարիների ընտանիքին, որ պաշտպանել է հայերին 1915թ. “*Պետությունը աճուրդ էր ձեռնարկել այս տեղը վաճառելու համար: Ահմեդ Նեջիֆօղլուն այդ լուրը հայտնեց բոլոր հայտնի մարդկանց՝ նշելով, որ “բացի հայերից, մյուսները չեն կարող մասնակցել աճուրդին, որպեսզի հայերը ետ ստանան իրենց եկեղեցին*”: Եթե նրա

¹⁰² Հայերի բնաջնջումը Դիարբեքիի շրջանում, մեջբերում 319-րդ էջից, մինչդեռ 18-րդ նոտան հղում է կատարում Ռեյմոնդ Գևորգյանի Պատրիարքության գեկույցին, այն Հիլմի բեյին սխալմամբ անվանում է “Միլիտարի Նահանգապետ Սերֆիչելի Հիլմի”: Սերֆիչելի Հիլմին մասնակցել է ցեղասպանությանը, որևէ առնչություն չունի Մարդիկ գավառապետ Հիլմի բեյի հետ, բացի անվան նմանությունից: *Le Génocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 431-րդ էջից:

¹⁰³ Էսքիշեիի ժանդարմների գումարտակի հրամանատար Համդի բեյի վկայությունը *Eskişehir Mutasarrıfı Hilmi Bey'in öldürülmesi*, Չաֆեր Քոյլու, մեջբերում 444-րդ էջից:

¹⁰⁴ Ալի Չանկայան նրա կնոջ անունը նշում է որպես Շեհիմե, իսկ տղայի անունը, ով սովորում էր Գերմանիայում՝ որպես Հուսեյն Բահիր, *Yeni Mülkiye târihi ve mülkiyeliler*, մեջբերում 435-րդ էջից: Սակայն, Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվներում նրա կինը նշվում է որպես Շեմիա, իսկ նրա ուսանող որդին որպես Կերամետ, Հուսեյն Բահիրի թերևս Հիլմիի մյուս որդին է, ով հոր սպանության ժամանակ մեկ տարեկան էր: ՕԿՄ. Ի. DUİT.97/25.16/Ş/1338

¹⁰⁵ Ժակ Ռետորե, *Les Chrétiens aux bêtes*, մեջբերում 56-րդ էջից

¹⁰⁶ Հարցազրույց Նաիֆ Դեմիրջինի հետ

միջամտությունը չլիներ, մենք այս տեղը ետ չէինք ստանա”: Չնայած դրան, եկեղեցու կարգավիճակի հարցը, որտեղ նրանք կարող են եկեղեցական ծեսերը կատարել տարին մեկ անգամ Ստամբուլից եկող հոգևորականի միջոցով, դեռ լուծված չէ: Այն հանգամանքը, որ կառույցը վկայականի մեջ նշված է որպես “տուն” դեռևս դամոկլյան սրի պես կախված է Սուրբ Գևորգ եկեղեցու գլխին:

Հորեղբայր Նախիբի պապիկը և ամբողջ ընտանիքը 1915թ խուսափել է տեղահանությունից և ջարդերից՝ թաքնվելով Նեջիֆօղլույարիների առանձնատանը, ովքեր ռուսան ցեղի անդամներ էին՝ շրջանի հարուստ ընտանիքներից մեկը:

“Կառավարությունը խիստ սպառնում էր նրանց, ովքեր օգնություն էին առաջարկում”, - նշում է Դեմիրջին՝ ելնելով իր հոր և պապիկի ասածներից: *“Նրանք Նեջիֆօղլույարիների տանը մնացին մինչև հրամանի ավարտը”*: Նախիբ Դեյր դեռ շարունակում է զբաղվել իր պապիկի արհեստով՝ երկաթագործությամբ: Ցեղասպանությունից փրկված Դեմիրիկի հայերը արտագաղթել են Ստամբուլ կամ Եվրոպա: *“Շատ առիթների ժամանակ նրանք այցելում են այն ընտանիքներին, ովքեր փրկել են մեզ”*, - ավելացնում է նա: Ո՞վ է ինսամելու Սուրբ Գևորգ եկեղեցու այգին իրենից հետո, անհայտ է:

Սալկանները (Գոկալպ ընտանիք) Դեմիրիկի հայտնի տոհմներից են: Մի ժամանակ նեղ փողոցներում և ծայրամասերում, որտեղ գտնվում են Դեմիրիկի քարե տները, ապրում էին Ռուստան, Աբբասան և Մահմուդան տոհմերը: Անկախ նրանից իրենք հայ են, թե քուրդ, Դեմիրիկի բոլոր մարդիկ պատկանում էին այս տոհմներից մեկին: Երբ եկավ տեղահանության հրամանը, Սալկան տոհմը և ավելի փոքր մասշտաբով Ռուստան տոհմը, որոշեցին փրկել այն հայերին, ովքեր պատկանում էին իրենց ցեղին: *“Դեմիրիկի բոլոր արհեստավորները և արհեստագործները վառարան սարքողներից մինչև կոշկակարները, այգեգործները, բոլորը հայեր էին: Ցեղերի առաջնորդների՝ հայերին պաշտպանելու այս որոշումը որոշ առումով պայմանավորված էր նրանով, որ այլ արհեստագործներ չկային: Հատկապես Ռուստան տոհմի կողմից տրամադրվող պաշտպանությունը հիմնված էր այս հանգամանքի վրա”*, -ասում է տեղի պատմաբան Էյուպ Գյուլվենը Դեմիրիկից:¹⁰⁷ Ինչ վերաբերում է Սալկաններին, ապա նրանք պաշտպանում էին նաև նրանց, ովքեր որևէ բնագավառում վարպետություն չէին ցուցաբերում:

1915թ հետքերը Դեմիրիկի Կալե ծայրամասում թաքնված են ոչ միայն քարե տներում կամ Սալկանների առանձնատանը: Ամեն անկյունում ծեր կանանցից մինչև փոքր երեխաները Դեմիրիկի ժողովուրդը կատարված իրադարձությունների վերաբերյալ պահպանել է զարմանալիորեն վառ հավաքական հիշողություն: Ովքեր էին մասնակցում ջարդերին, ովքեր ընդդիմացան դրանց, ում տունը անսպասելի հարձակման ենթարկվեց, որտեղ կոտորեցին հայերին, ամբողջ տեղեկությունը մանրամասն կերպով փոխանցվել է ներկա սերունդներին: 95 և 70 ամյա երկու կանայք, ովքեր Սալկանների տոհմից էին, սկսեցին պատմել իրենց ընտանիքների պատմությունը առանց մեր հարցնելու:¹⁰⁸ *“Սալկանների երեք ընտանիքներից յուրաքանչյուրը տասից տասնհինգ հայ ընտանիքների վերցրեցին իրենց տներ: Չնայած պակասություններին ուտելիքը, հագուստը, տանը եղած ամեն ինչը կիսում էին միմյանց հետ: Մեր տանը նրանց թաքցրել էին ախտոռում: Ամեն անգամ, երբ ժանդարմ էր գալիս, նրանք դուրս էին փախչում ախտոռի ետևի դռնով: Երբ նրանք չէին կարողանում գտնել հայերին, արդյունքում ժանդարմը ծեծում էր ցեղի առաջնորդի մարդկանց”*, - պատմեցին նրանք:

2,5 մետր հաստություն ունեցող իր հաստ պատերով և քաղաքում իր ունեցած հարմար դիրքով Սալկանների առանձնատունը հայերի համար ամենակարևոր ապաստարաններից էր 1915թ: *“Տունը կառուցվել էր ամրոցի ոճով, անգամ եթե նրանք թնդանոթներով գնդակոծեին այդ վայրը, ժանդարմներին չէր հաջողվի ներս մտնել, դրա համար էլ այն թաքնվելու համար ամենահարմար տեղն էր”*, -բացատրում է Աբդուլկադիր Գոկալպը՝ Սալկան տոհմի հայտնի անդամը:¹⁰⁹ Նա հատկապես շեշտեց, որ Դեմիրիկի մյուս ցեղերը՝ Աբբասանները և Մահմուդանները, չպաշտպանեցին հայերին: *“Օսմանյան մատյաններում մեր ցեղը նշված է որպես “անվստահելի”, քանի որ մեր մարդիկ երբեք չէին*

¹⁰⁷ Հարցազրույց Էյուպ Գյուլվենի հետ 27.11.2010 Դեմիրիկում

¹⁰⁸ Հարցազրույց Պ. և Ն. -ի հետ 27.11.2010 Դեմիրիկում

¹⁰⁹ Հարցազրույց Աբդուլկադիր Գոկալպի հետ 28.11.2010 Դեմիրիկում

օժանդակում պետական քաղաքականությանը”:

Գոկլալպի՝ տարիքով ավելի մեծ հորեղբայրները՝ **Մեհմեդ Թահիր բեյը** և **Օմեր բեյը**, իրենց տների դռները բացել էին մոտ տասն ընտանիքների համար: Նրանք հայերին պահել էին պատի ետևում, որի մի մասը հասնում էր մինչև փողոց՝ ծածկելով Կալե փողոցի գրեթե կեսը: Տեղահանությունների ավարտից հետո հայերը վերադարձան Դերիկի իրենց տները: Արդուկադիր Գոկլալպը հաշվում է այն բոլոր ընտանիքներին, որոնց իրենք թաքցրել էին, իրենց անուններով: *“Սալկանները այս ձևով փրկեցին երեք հարյուր մարդու”:* Դա ասելուց հետո նրա դեմքին արտահայտված հպարտությունը մթազնում է, - *“Սալայն կրկին մեզ հաջողվեց փրկել Դերիկի հայերից քչերին”:* Միաժամանակ Արդուկադիր բեյը շարունակում է զանգել Ստամբուլում ապրող հայերին: *“Նրանց բոլորի հետ մեր ընկերությունը դեռ շարունակվում է, նրանք անշուշտ այցելում են մեզ, երբ գալիս են այստեղ”:* Մեհմեդ Տահիր բեյից և Օմեր բեյից մինչ օրս մնացած ամենակարևոր հետքը այս ընկերությունն է: Ասում են, այն փողոցը, որտեղ գտնվում է Սալկանների առանձնատունը, նրանց ընտանիքի անունն է կրում, սակայն այդ մասին ոչ մի տեսանելի ցուցանակ չկա:

Սուլա Իսկենդեր Քազիմի վերաբերմունքը այն ամենակարևոր պատճառներից մեկն է, թե ինչու Փիրինչիզադեի Ֆեվզիի կողմից մուսուլմաններին կրոնական հողի վրա հայերի դեմ հրահրելը արդյունավետ չէր Դերիկում:

Մելե Իսկենդերը հոգևոր սպասավոր էր, ով խիստ հետաքրքրված էր այդ ժամանակաշրջանի քաղաքական հարցերով և ընդդիմադիր պոեմներ էր գրում քրդերենով: 1915թ նա շրջանի մուֆտին էր և ծնվել է 1874թ Սազիդադի Դերա Մետինա գյուղում: Երբ նա ստացավ տեղահանումների և ջարդերի մասին լուրը, նա Դերիկի մուսուլմաններին կոչ արեց պաշտպանել հայերին՝ մզկիթի մինարեթից կանչելով՝ *“Հայերը նույնպես հավատում են Ալլահին, սա կոտորած է, դա դաժանություն է:”*¹¹⁰ Քուրդ բանաստեղծ Սենեքերիմը, ով Դերիկում հաստատվել է 1922թ հետո, հետագայում դարձավ նրա մտերիմ ընկերը: 1927թ նա ձերբակալվեց, քանի որ ընդդիմադիր էր, և մահացավ դրանից մեկ տարի հետո:¹¹¹

Դերիկի կայմական Ռեշիդ բեյ. Խառը պատմություն

Դերիկի կայմականը, ով սպանվեց հրամաններին չենթարկվելու համար, հիշատակվում է 1915թ Մարդիմում գտնվող դոմենիկացի հոգևոր սպասավոր Ժակ Ռետորեի հուշերում: Ըստ Ռետորեի այն բանից հետո, երբ կայմականը իմացավ Դերիկի մոտ 1700 հայերի տեղահանությունների մասին որոշումը և այն մասին, որ հրոսակախմբերը սպասում էին հայերին անմիջապես քաղաքից դուրս, նա, ով իր վարչության շրջանի հայերի պահվածքում որևէ տեսակի անօրինական գործողություններ չէր տեսնում, նամակ է գրում Դոկտոր Ռեշիդին՝ հայտնելով, որ ինքը չի իրագործելու այդ որոշումը. *“Դերիկի քրիստոնյաների մեջ ես տեսնում եմ միայն հավատարիմ մարդկանց, ովքեր գործում են ի շահ պետությանը: Ես չեմ կարող նրանց մահապատժի ենթարկել՝ ելնելով սոսկ Ձեր հրամանից: Ես կարող եմ վերանայել իմ գործողությունները այդ հարցի շուրջ, միայն եթե Ստամբուլից գա գրավոր հրաման”*, այսպիսին էր նրա պատասխանը:¹¹² Դոկտոր Ռեշիդը նրան կանչեց Դիարբեքիր գրավոր հրամանները ցույց տալու համար: Սակայն, կայմականը այդպես էլ չհասավ քաղաք: Նրան ծուղակի մեջ գցեցին ճանապարհին այնպիսի եղանակով, որը հիշեցնում է Լիչեի կայմական Հուսեյն Նեսիմի հետ կատարվածը: Նրան սպանել են Դոկտոր Ռեշիդի չերքեզ հրոսակախմբի ձեռքով:

Կայմականի սպանությունից հետո Դոկտոր Ռեշիդը զեկույց ուղարկեց Ստամբուլ՝ տեղեկացնելով, որ

¹¹⁰ Հարցազրույց Էյուպ Գյուվենի հետ 27.11.2010 Դերիկում

¹¹¹ Էյուպ Գուվեն, *Derik Tarihi*, 2008թ, 78-80 էջ, ve *Ali Sarıkoyuncu, Milli mücadelede din adamları, Diyanet İşleri Başkanlığı*, 1995թ, էջ 220

¹¹² Ժակ Ռետորե, *Les Chrétiens aux bêtes*, մեջբերում 46-47-րդ էջերից

սպանությունը կատարել են Դերիկի հայերը և որ պետք է նրանց պատժել: Հունիսի կեսերին նա հանձնարարեց Դիարբեքիի զինվորական հանցագործությունների դատարանի նախագահ Թեվֆիկին, ով կազմակերպել էր տեղահանությունները Վիրանշեհիում, աշխատել Դերիկում:

Դերիկի հայերի ճակատագիրը գրվեց տաս օրում: Մյուս շրջանների նման նախ տղամարդիկ ձերբակալվեցին և խմբերով սպանվեցին: Կանանց և երեխաներին կոտորեցին գյուղի անմիջական հարևանությամբ գտնվող խաղողի այգիներում, որոնք հայտնի են “*Rezike Korta*” անունով:

Այսօր Դերիկում ասում են, որ անգամ որոշ մեծահասակներ հրաժարվում են ուտել այդ այգիների խաղողը միայն նրա համար, որ դրանք աճել են այն վայրում, որտեղ իրականացվել են ջարդերը:¹¹³ Այնուամենայնիվ, շրջանում անհնար է գտնել կայմակամ Ռեշիդ բեյի հետքերը: Դերիկի ժողովուրդը, ովքեր մանրամասն հիշում են 1915թ դեպքերը, ասես դրանք երեկ են եղել, և ակնառու ընտանիքների նախաձեռնությամբ ովքեր թաքցրել ու փրկել են շատ հայերի, կարծես թե ինչ-որ պատճառով իրենց հիշողություններից ջնջել են Ռեշիդ բեյի հետքերը:

Անհնար է նաև գտնել Դերիկի կայմակամ Ռեշիդ բեյի հետքերը Օսմանյան արխիվներում և Մուլքիեյի պատվո գրքում: Մա թույլ է տալիս մտածել, որ Ռեստորեն կարող էր խառնել Հուսեյն Նեսիմիի պատմությունը և այն վերագրել նաև Ռեշիդ բեյին: Այն փաստը, որ Դերիկի ժողովուրդը նրա մասին հուշեր չի պահպանել, ավելի է ամրապնդում շփոթելու հավանականությունը:

Միդյատ. “Ինչպե՞ս կարող էինք մենք դրժել քրիստոնյաներին տված խոստումը”

“Մենք միշտ դա ասել ենք: Մեր մուսուլմանները շատ ավելի լավն են քան Տիգրիսի հյուսիսի մուսուլմանները, նրանք պաշտպանել են մեզ”: Միդյատի ասորի եկեղեցու դպիր Այիան Գուրկանը չի կարողանում չնշել այս նախադասությունը, երբ խոսում էր պապերի մասին:¹¹⁴ Նրա ընտանիքի պատմությունը միաժամանակ նաև 1915թ պատմության այն կողմն է, որը հաճախ չի հիշատակվում՝ Մեյֆոի պատմությունը, շրջանի ասորիներին, խալդերին և նեստորականներին հայերի նույն ճակատագրին դատապարտելու պատմությունը: Այն նաև “քիրվե”¹¹⁵ ավանդույթն է, որ մերժում էր այս ճակատագիրը:

Երբ տեղահանությունների ու ջարդերի մասին լուրերը հասան շրջան, Այիան Գուրկանի մեծ պապ Միրկո Միդյատը ապաստան գտավ Խալահ (Նարլի) գյուղում ապրող իր մուսուլման քիրվեների մոտ **Մալա Մինոյում** (քրդերեն՝ Մինոյի ընտանիք): Նրանք որոշ ժամանակ թաքնվեցին նրանց տանը: Մակայն, նրանք, ովքեր օգնում էին ասորիներին, նույնպես վտանգի մեջ էին: “*Մալա Մինոն իմ պապիկին ասաց. “Նրանք կպանեն մեզ բոլորիս, եթե դուք մնաք այստեղ: Եթե ցանկանում եք, կարող եմ ձեզ տանել Այն Վարդո”¹¹⁶, սակայն ճանապարհին կարող ենք հարձակման ենթարկվել”:* Այդ բանից հետո իմ պապիկը մուսուլման դարձավ”:

Միրկոյի կրոնափոխությունը սուկ իր ընտանիքի և Մալա Մինոյի կյանքերը չվտանգելու համար էր: Նա թույլ չի տալիս իր կնոջն ու երեխաներին կրոնափոխ լինել: Նման ձևով նա մնում է Մալա Մինոյի ընտանիքում մինչ տեղահանությունների ավարտը, այնուհետև նրանք վերադարձնում են իրենց գյուղ: Մակայն, այս անգամ առկա էր նրանց ունեցվածքի՝ պետության կողմից բռնագանձման վտանգը: Այնուամենայնիվ, սա միակ բանը չէր, որ վախեցնում էր Միրկոին: Նրա երեխաներից մեկը սպանվել էր մինչ Մալա Մինոյի տանը ապաստան գտնելը: Վախենալով նորից անցնել

¹¹³ Հարցազրույց Բ. Յ.-ի և իր ընտանիքի հետ Դերիկում 28.11.2010.

¹¹⁴ Հարցազրույց Այիան Գուրկանի հետ 30.11.2010 Միդյատում

¹¹⁵ Ինչպես և մկրտության արարողակարգի ժամանակ կնքահոր դեպքում, մուսուլմանների թլպատման արարողության ժամանակ երեխայի ընտանիքին մոտ կանգնած անձը դառնում է “քիրվե”:

Մուսուլման երեխայի քիրվեն այդ ժամանակաշրջանում քրդական շրջաններում հաճախ ընտրվում էր քրիստոնյաներից:

¹¹⁶ Միդյատի Այն Վարդո (Այն Վերտ– Գյուլգոզե) գյուղը 1915թ համարվում էր համեմատաբար ավելի ապահով ասորի բնակչության դեմ նրանց դիմադրության և ասորիների տեղահանման պատճառով:

այդ նույն ցավի միջով՝ Միլկոն շարունակեց մուսուլման մնալ մինչև 1945թ, երբ հիվանդացավ և հասկացավ, որ մոտենում է իր մահվան ժամը; Հետո նա կանչեց գյուղացիներին և ասաց, որ ուզում է թաղվել ասորական գերեզմանում: Նրանց մտերմությունը Մալա Միտյի հետ շարունակվեց մինչ նրա մահը:

Հեվերկիները (կամ ըստ մականունի՝ Հավերկան), ովքեր ամենահայտնի ցեղախումբն էին շրջանում, չնայած ներքին տարաձայնություններին և ժամանակ առ ժամանակ մի կողմից մյուսին անցնելուն, այն ուժերից մեկն էին, ովքեր պաշտպանում էին Միդյատի, Նուսայբիի և Իդիլի ասորիներին և հայերին:¹¹⁷ Նրանց այս մոտեցումը կառավարությանը հայտնի էր նաև 1915թ առաջ: Հեվերկիների հայտնիներ Չելեբի աղան և Ալի Բատտեն բանտ էին նետվել մինչ տեղահանությունների սկսվելը: Այնուամենայնիվ, Ալի Բատտենին կարճ ժամանակ անց հաջողվել էր փախչել բանտից և պաշտպանել իր տիրույթում ապրող ասորիներին:¹¹⁸ Չելեբին և Սարոխանը, ովքեր ղեկավարում էին ցեղախմբի մյուս ճյուղերը, չնայած ժամանակ առ ժամանակ նրանց ցուցաբերած երկմտությանը, միացան պաշտպաններին:¹¹⁹

Ալի Բատտե՝ “Պետությունը այդպես էլ չմոռացավ մեր վերաբերմունքի մասին”

Հեվերկի ցեղը, որ վերահսկում էր Միդյատը և նրա շրջակայքը, հայտնի էր Օսմանյան ղեկավարությանը երբեք չենթարկվելով: Հեվերկի տոհմը կազմավորված էր այնպես, որ շրջանի առաջնորդից բացի այն որևէ մեկ այլ իշխանություն չէր ճանաչում: Տոհմը ուներ նաև ասորի և եզդի անդամներ, և նրանց դերը, ի տարբերություն այլ ցեղերի, չէր սահմանափակվում “ենթակա” լինելով: Երբ Հեվերկիների առաջնորդ Հաջո II-ը 1870-ական թթ սպանվեց, ցեղի ղեկավարությունը ստանձնեց ասորի Շաբոյե Միրյեդը:¹²⁰ Ալի Բատտեն, երբեք չէր բաժանվում իր զինակից ասորի առաջնորդ Շեմունից և յուրաքանչյուր որոշում կայացնում էր նրա հետ խորհրդակցելով:¹²¹

Երբ սկսվեց I Համաշխարհային պատերազմը Ալի Բատտեի անունը այն անունների շարքում էր, որը տալիս էին շրջանի վարչական իշխանությունները ծանր ժամանակներում: Նա հրաժարվեց ենթարկվել

¹¹⁷Հեվերկիների վերաբերյալ մանրամասն ուսումնասիրության համար տես Նեզիրե Միլկո *Haverkan Sultanları 1*, Կոմալ Բասիմ Յային, Ստամբուլ, 2010թ: Թուրքիայի շրջանում ասորի բնակչությունն ավելի շատ էր քան հայերը: Հայերը ապաստան էին գտել Այն Վարդոի նման գյուղերում, որտեղ պաշտպանվում էին ասորիները:

¹¹⁸Ասորի հետազոտող Իսկենդեր Դեբբասոն նշում է, որ Ալի Բատտեն բանտում էր, երբ տեղահանությունը սկսվեց, որ Բատտեի մայրը՝ Ֆախլեն ջանքեր էր գործադրում փրկելու իրենց տարածքի ասորիներին: Մյուս աղբյուրները որպես Ալի Բատտեի բանտից փախուստի տարեթիվ նշում են 1917թ: Ալի Բատտեի թոռան հետ ունեցած մեր հարցազրույցի ժամանակ, ում անվանել էին իր պապիկի անունով, նա մեզ պատմեց, որ իր պապիկը բանտից փախել է, երբ տեղահանությունները դեռ շարունակվում էին:

¹¹⁹Առաջին աղբյուրը, որը պատմում է այն մասին, թե ինչպես էին Հեվերկիի առաջնորդները պաշտպանում ասորիներին և հայերին, Մելֆոնտ Ա. Մեսիի Քարաբաշի օրագիրն է, որը գտնվել է Մարդինի ասորական Դեյրուլ Չարաֆան վանքում 1915թ (Աբեդ Նաման Քարաբաշ, *Vergossenes Blut: Geschichten der Greuel, die an den Christen in der Türkei verübt* անունով այն հրատարակվել է 1999թ գերմաներեն): Մեզ մոտ առկա է օրագրի թուրքերեն թարգմանությունը, որ սերիական հրատարակություն է ունեցել 2000թ Կոլո Սուրյոյոյ ամսագրում “*Քրիստոնեությունը ջարդերի ժամանակ*” վերանգրի ներքո, Կոլո Սուրյոյոյ թիվ 127,128,129,2000, Գլեյն, Նիդեռլանդներ: Սույն ուսումնասիրությունում հղումները անելիս մենք օգտվել ենք այդ թարգմանությունից:

Երկրորդ աղբյուրն այն օրագիրն է, որ պարունակում է ասորի ուղղափառ քահանա Սուլեյման Հիննոի կողմից իր Ասորեստանում եղած ժամանակ ասորի գաղթականներից հավաքած տեղեկությունները: Ինչ վերաբերում է այս օրագրին, մենք օգտվել ենք դրա թուրքերեն թարգմանությունից, որը հրատարակվել է Կոլո Սուրյոյոյ ամսագրում “*Թուր Արդին շրջանը 1915թ*” վերնագրի ներքո 1993թ: Երկու աղբյուրների մանրամասն համակցման համար օգտվել ենք Դավիթ Գոնթի՝ *Ջարդերը, դիմադրությունը, պաշտպանները գրքից*, Գորգիասի մամուլ, 2006թ Նյու Ջերսի, էջեր՝ 197-270

¹²⁰Turabidin'den Baltık'a, Neziré Cibo, Kovarabir, 3 Ağustos 2011

¹²¹Որոշ աղբյուրներ վկայում են, որ իրենց եզդիական ծագման պատճառով և քանի որ բազմաթիվ ճնշումների էին ենթարկվել, Հեվերկիները ամուր կապեր էին հաստատել ասորիների հետ, “*Հասարակական հարաբերությունները Օսմանյան Դիարբեքիրում*”, Ջոնգերդեն, Վերհեիջ, էջ 248, Բրիլ, 2012թ, Լեյդեն

զինվորագրման հրամանին և նաև մարդկանց արգելեց հարկ վճարել կառավարությանը: Նա նաև հրաժարվեց թույլ տալ զինվորական առգրավումներ կատարել իր ենթակայության տակ գտնվող հողերում: Նրա գործողությունները զերծ չէին քաղաքական հայացքներից: Նա կապի մեջ էր Բիթլիսի քուրդ ապստամբների և Աբդուրեզակ Բեդիրխանի հետ: Այնուամենայնիվ, քրդերի անկախության մեջ նրա շահագրգռվածությունը, գոնե այդ փուլում, բավարար ուժեղ չէր, որ ստիպեր մոռանալ իշխանական հարաբերությունները և ցեղերի միջև տարաձայնությունները:¹²²

Ըստ Դիարբեքիի նահանգապետ Շեֆիկ բեյի 1914թ Միդյասը դարձել էր “կառավարության դեմ գործողությունների կենտրոն”: Այս իրավիճակին վերջ տալու համար նա Ներքին գործերի նախարարին առաջարկում է սպանել Հեվերկիների առաջնորդներին և աքսորել նրանց ընտանիքներին: Չնայած մասամբ, բայց Շեֆիկ բեյը հասնում է իր նպատակին 1914թ սեպտեմբերին. Ալի Բատտեն և Հեվերկի առաջնորդները բռնվում են և բանտ նետվում:

1915թ գարնանը Ալի Բատտեն և նրա աջ ձեռք Շեմունը դեռ Խարբերդի բանտում էին: Ըստ որոշ աղբյուրների Հեվերկի տոհմը փորձում է շրջանի ասորիներին և հայերին զերծ պահել տեղահանություններից և ջարդերից Բատտեի մայր **Տասիլեի**¹²³ նախաձեռնությամբ: Մյուսները հստակեցնում են, որ Բատտեն անձամբ էր ղեկավարում փրկողական գործողությունները՝ հրահանգներ ուղարկելով բանտից:

1915թ հունիսին Միդյասի հայտնի հայերը և ասորի բողոքականները ձերբակալվեցին և այնուհետև սպանվեցին: Այս իրադարձությունները քաղաքի ասորիների մոտ վախի ալիք բարձրացրեցին, և նրանք արգելապատնեշներ կառուցեցին իրենց թաղամասերում՝ իրենց պաշտպանելու համար: 1915թ հուլիսի 2-ին Հաջի Բաշար բեյը իրար գլխի հավաքեց Միդյասի քուրդ ու արաբ ցեղերի ղեկավարներին և խնդրեց նրանց աջակցությունը քրիստոնյաների վրա իր պլանավորած հարձակման ժամանակ:

Ըստ Ալի Բատտեի 82 ամյա թոռանը, ում անունը նույնպես Ալի Բատտե է, իր պապիկը այդ ժամանակ Շեմունի հետ արդեն փախել էր բանտից: Երբ նա իմացավ քաղաքում տեղի ունենալիք հանդիպման մասին, նա Շեմունին առաջարկեց միասին մասնակցել այդ հանդիպմանը: Շեմունը հրաժարվեց և ասաց, որ դրա նպատակն է ստիպել ամեն մի ցեղի կոտորել իրենց “սեփական քրիստոնյաներին”; *“Չնայած դրան Ալիկե Բատտեն այնուամենայնիվ գնաց այդ հանդիպմանը”,* -ասում է Բատտեի թոռը, - *“Երբ նրան խնդրեցին իր օգնությունը կոտորածների հարցում նա գոռաց. “Եթե որևէ մեկը սպանի քրիստոնյաներին ինձ հետ գործ կունենա: Մենք, Չելեբիները և Մալա Իամայիլը, այսինքն՝ բոլոր Հեվերկիները պաշտպանել ենք նրանց: Հետագայում մենք ներքին ընդհարում ունեցանք մեր միջև առաջնորդության հարցում, սակայն այդ ժամանակ մենք միասին էինք գործում:”*¹²⁴

Արդյո՞ք հնարավոր է, որ Ալի Բատտեն ի վիճակի էր անձամբ կանխել ջարդերը բանտից փախչելուց հետո այնպես, ինչպես պատմում է նրա թոռը: Ըստ Օսմանյան արխիվների Ալի Բատտեն պետք է որ բանտում եղած լիներ ամենաքիչը մինչև 1915թ ապրիլը: Ըստ ասորի հետազոտող Իսկենդեր Դեբբասի Ալի Բատտեն այդ ժամանակ բանտից դուրս չէր եկել, իսկ նրան աջակցողները՝ նրա մայրը և ցեղի կենտրոնական քաղաք Մզիզեի մարդիկ, ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում քրիստոնյաների պաշտպանության մեջ:¹²⁵ 1915թ հուլիսի 19-ին Օսերյան ցեղը և անվտանգության ուժերը հարձակվեցին Միդյասի քրիստոնեական թաղամասերի վրա: Տեղի ունեցավ կոտորած, իսկ դիմադրող խումբը ետ քաշվեց դեպի Այն Վարդո գյուղը: Հեվերկիները օգնեցին մյուս բնակիչներին հասնել Այն Վարդո առանց

¹²² Ըստ Ջիգար Խվինի, Դեքշուրի առաջնորդ Իզեդին Ալին Բատտեին առաջարկում է միավորել իրենց ուժերը և հաստատել իրենց պետությունը՝ օգնություն ստանալով անգլիացիներից: Այս համաձայնությունը չկայացավ, քանի որ Ալի Բատտեն երաշխիք պահանջեց այն մասին, որ ինքը կլինի այդ պետության ղեկավարը *Hayat Hikayem*, Ջիգար Խվինի, էջ՝ 38-40, Evrensel Basım Yayın, 2003թ, Ստամբուլ

¹²³ Հարցազրույց Իսկենդեր Դեբբասի հետ, 2013թ նոյեմբերին, Միդյաս

¹²⁴ Հարցազրույց Ալի Բատտեի թոռ Ալի Բատտեի հետ, 2013թ նոյեմբեր, Նուսայբին

¹²⁵ Մալա Մինի ընտանիքը, որ պաշտպանել էր վերոնշյալ Միրկոին նույնպես կապված էր Ալի Բատտեի հետ: Հարցազրույց Ն. Բ.-ի հետ, 2013թ, Միդյաս

հարձակման ենթարկվելու: Նրանք նաև մի փոքր խմբի թաքցրեցին իրենց սեփական գյուղերում:¹²⁶ 1915թ Այն Վարդոն դարձել էր պաշտպանական բազա և ասորիների ու հայերի ապաստարան:

Ջարդերի մասին նորությունները հասան նաև Խարբերդի բանտ: Ալի Բատտեն ամեն օր կաշառում էր պաշտոնյաներին, որպեսզի նրանք չսպանեն իր ընկեր Շեմունին: Բանտարկված հայտնի ասորիներին և հայերին բերում էին Խարբերդի բանտ: Աշիր Յուսուֆը՝ Խարբերդում լրագրի սեփականատերը, նրանցից մեկն էր: *“Մի օր գումարը նույնպես կվերջանա և նրանք կտանեն ինձ ու քեզ”*, ասում էր նա Շեմունին: Յուսուֆին մահապատժի ենթարկեցին, Ալի Բատտեն և Շեմունը այլևս ուժ չունեին դրան միջամտելու համար: Նրանք չկարողացան փրկել Յուսուֆին, բայց նրանց հաջողվեց փախչել բանտից: Հեվերկի մյուս առաջնորդները՝ Չելեբին և Հաջոն չկարողացան փախչել: **Չելեբիի** բացակայության ժամանակ նրա կինը՝ **Նազելին** էր կազմակերպում ասորիներին և հայերին փրկելու գործը: Նա տոհմի անդամներին հանձնարարում է վերջիններիս տանել Ռայիսե Թոր Իզլո (Միդյաստի հարավում գտնվող շրջան), որը համարվում էր ավելի ապահով վայր: Ցեղի մեկ այլ առաջնորդ Սարոխանը պաշտպանում էր Ռայիսեի բնակիչներին:¹²⁷ 1917թ, երբ Բասիրբին գյուղի ասորիները հարձակման ենթարկվեցին, Ալի Բատտեն նրանց տարավ իր քաղաք՝ պաշտպանելու համար:¹²⁸

Պատերազմից հետո Ալի Բատտեն հայտարարեց, որ չի ճանաչում պետական իշխանությունը՝ ավելի մեծ դիմադրություն ցույց տալով: 1919թ մայիսի 11-ին նա իր ուժերով հարձակվեց Նուսայբին քաղաքի վրա *“Աղաները (մեծավորները) անարդարացիորեն փող էին վերցնում բոլորից: Ալի Բատտեն նրանց բոլորին պատժեց. “Նուսայբինի ժողովուրդ այդ գումարը ձերն է”, -ասաց նա”*, -պատմում է նրա թոռ Ալի Բատտեն, - *“Եկավ մի կին և բողոքեց. “Պետությունը վերջին չորս տարիներին բանտարկել է որդուս, ինչ աղա էս դու”:* Այդ ժամանակ Ալի Բատտեն ճանփա ընկավ ուղիղ դեպի բանտ: Նա թուրքերեն չգիտեր, նա անգամ անձր հաստատող փաստաթուղթ չուներ, դրա համար էլ մենք նրա լուսանկարը չունենք: Նրա համար Շեմունն էր թարգմանում, ով ասաց. *“Թույլ տուր մեզ խոսել դատախազի հետ, որ ազատի տղային, այդ կերպ մի վարվիր” սակայն չկարողացավ ետ պահել Ալի Բատտենին: Ալի Բատտեն ազատ արձակեց բանտարկյալներին: Այնուհետև, նա պատանդ վերցրեց դատախազին և կայմակամին ու փախավ լեռները”:* Հետապնդման վերջում, որ ամիսներ տևեց, Ալի Բատտեի գտնվելու տեղը հայտնաբերվեց 1919թ օգոստոսի 18-ին: Նա սպանվեց անվտանգության ուժերի և կառավարությանը օժանդակող տոհմի որոշ անդամների հետ բախման ժամանակ:

Ալի Բատտեի սպանությունից հետո նրա ընտանիքը փախավ Սիրիա: Նրանք այնտեղ մնացին մինչ դեմոկրատական կուսակցությունը համաներում հայտարարեց 1950թ: Դրանից հետո նրանք հաստատվեցին Նուսայբինում, Թուրքիայում: *“Ալի Բատտեի մահվանից հետո քրիստոնյաները անպաշտպան էին, նրանց գլուխները կախ էր: Նրանք ստիպված էին մեկնել երկրից”*, - ասում է Բատտեի թոռը, - *“նրա հեռանալուց հետո անվտանգության ուժերը մեր գյուղում՝ Սզիզեխում ոչնչացրին ամեն ինչ: Նրանք վառեցին մեր տները երեք օր ու զիշեր, ծուխը երևում էր անգամ Սիրիայից: Պետությունը երբեք չմոռացավ Հեվերկիների մոտեցումը այդ օրերին: Այս շրջանում բանտարկյալներին դեռ հարցնում են. “Դուք Հեվերկի տոհմի անդամ ե՞ք, մենք ձեզ հետ ըստ այդմ կվերաբերվենք”, քանի որ մենք դեռ նույն դիրքորոշումն ունենք, ինչ այն ժամանակ. մենք կառավարության դեմ ենք”:*

Միդյաստի մյուս Առաքինի կերպարները

Միդյաստի Ասորական մշակույթի կենտրոնի հիմնադիր Յուհաննա Աքտաշի նախնիներին փրկել է

¹²⁶ Ջարդերը, դիմադրությունը, պաշտպանները, Դավիթ Գոնթ, մեջբերում 186, 192-195-րդ էջերից

¹²⁷ Հարցազրույց Իսկենդեր Դեբբաստի հետ, մեջբերում՝ սակայն հետագայում Չելեբին և Սարոխանը մտերմացան Դեկշուրիի և կառավարության հետ: Չելեբին, Սարոխանը և նրա որդի Սերհան աղան հարձակումներ գործեցին ասորիների գյուղերի վրա 1907-1910թթ նույնպես՝ համաշտակելով նրանց հողերը և ունեցվածքը: Ուստի դժվար է ցեղի այս թևի ղեկավարներին դասել “Առաքինիների” շարքին: *Tanzimat'tan sonra Tur Abdin'de Aşiretler ve Hristiyanlar*, Սուավի Այդին, Մարդին Թերբիլլերի, էջ՝ 148-153, Հրանտ Դինք Vakfi yayınları, Ekim, 2013թ Ստամբուլ

¹²⁸ Բասիրբինը Շեմունի եղբոր գյուղն է: Իվ Տերնոնը պատմում է Արմալտոի պատմածից, Մարդին 1915թ, էջ 355, Belge yay, 2013

Զահրանի Հաջոն:¹²⁹ Նա տեղի մեծավոր էր, ով վերահսկում էր շրջանը, այդ թվում նաև՝ Բախշիյան գյուղը: Երբ 1915թ սկսվեցին տեղահանություններն ու ջարդերը, Հաջոն վերցրեց Բախշիյանի և Դեր Քուբեի գյուղացիներին և ապահով հասցրեց Խահ գյուղ, որը առավել ապահով էր համարվում: Բախշիյանի մարդիկ պատերազմի ժամանակ մնացին Խահում և կարողացան վերադառնալ իրենց գյուղ չեվերկի Չելեբի աղայի օգնությամբ:¹³⁰

Զահրանի Հաջոի թոռ Սուլեյման Դողանը նշում է, որ իրենց ընտանիքը միշտ կառավարության կողմից համարվել է կասկածելի, քանի որ իրենք 1915թ պաշտպանել են ասորիներին: 90-ական թթ ընտանիքի անդամների անունները պառլամենտական ուժերի կողմից սահմանված այն մարդկանց ցուցակում էին, ովքեր պետք է սպանվեն:¹³¹

Միդյատի Հեբսինաս գյուղը հավաքական դիմադրություն ցուցաբերեց: Այս գյուղում, որտեղ ապրում էին ասորիներ և արաբախոս մուսուլման միհեյլեմիներ, բնակիչները որոշեցին միասին դիմադրել:¹³² Երբ Ռաման ցեղի անդամները շրջապատեցին նրանց գյուղը, նրանք միասին կռվեցին: Չնայած նրան, որ նրանց հաջողվեց ետ մղել հարձակումը, Հեբսինասը այլևս ապահով չէր: Գյուղի հայտնիներ **Համմետկոի, Հաջի Հասսանի, Հաջի Հալիլի և Ալի Քելեշի** ղեկավարության ներքո նրանք ասորիներին թաքցրեցին շրջակայքում գտնվող քարանձավներում ու ջրհորներում և գիշերները նրանց ուտելիք էին տանում: Հետագա օրերին նրանք իրենց ասորի հարևաններին տարան Այն Վարդո և Էնհել, որոնք, նրանց կարծիքով, ավելի ապահով վայրեր էին: Պատերազմից հետո Հեբսինասի գյուղացիները վերադարձան իրենց տները: Գյուղացիների միջև համերաշխությունը շարունակվեց շատ տարիներ, նրանք միասին էին հանդես գալիս հարևան գյուղերի հետ ունեցած տարաձայնությունների ժամանակ: Սակայն 90-ական թթ անապահով մթնոլորտը ստիպեց Հեբսինասի ասորիներին արտագաղթել Ստամբուլ և Եվրոպա: Ներկայումս, երբ գյուղում ապրում է ընդամենը մեկ ասորի ընտանիք, դեռ շարունակում են պատմել Համմետկոի պատմությունները:

Շեյխ Ֆեթուլլայի անունը Միդյատի մուսուլմանների և ասորիների շրջանում ամենաշատ արտասանվող անուններից է, երբ խոսքը գնում է 1915թ ցեղասպանության մասին: Թե ինչպես նա կանգնեցրեց բախումները Այն Վարդո գյուղում, որը դիմադրում էր տեղահանություններին ու հրոսակախմբերի հարձակումներին, պատմում են սերունդից սերունդ մինչև մեր օրերը: Անվտանգության ուժերը շրջապատեցին Այն Վարդոն 1915թ և շրջափակման մեջ պահեցին վաթսուն օր, սակայն չկարողացան հաղթել դիմադրողներին: Շեյխ Ֆեթուլլային դիմեցին որպես հոգևոր առաջնորդ, որին վստահում էին երկու կողմերն էլ: Երբ նա մտավ Այն Վարդո և հասկացավ, թե ինչ ջարդեր են այնտեղ փորձում անել, նա կշտամբեց գյուղը շրջապատած ցեղերի առաջնորդներին ասելով՝ *“Ինչպե՞ս կարող էիք ուրանալ այն խոստումը, որ Մուհամեդը տվել է քրիստոնյաներին: Դուք փչացրեցիք այն վտահությունը, որ մենք կառուցել էինք շատ տարիների ընթացքում:”*¹³³ Նա խոստում վերցրեց, որ գյուղի վրա այլևս հարձակումներ չեն լինի, և հաշտություն հաստատեց: Նա նաև կանգնեցրեց Գերկուշում ասորի երեխաների ջարդերը: *“Եթե դուք չդադարեցնեք ջարդերը, ես այս գյուղ չեմ մտնի: Այս վայրը մեղքի վայր է”*,- հայտարարեց նա: Երբ Շեյխ Ֆեթուլլան մահացավ 1947թ, մեծ թվով ասորիներ մասնակցեցին նրա հուղարկավորությանը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ քաղաքի շատ թաղամասերում հայտնի մարդիկ դեմ էին ջարդերին, անգամ եթե նրանց ազդեցությունը սահմանափակ էր: Քաղաքի մյուս բարեխիղճ մարդկանցից էին Մալա Ադայա Սորը Շիրնակից, Ռեշկոտան առաջնորդ Հեջի Միհեմեդե Միստեն Բեշիրիից, Մելե Հեսենե Թավիկին Դերիկից, Մելե Աբդուլլան Սիլվանից:

¹²⁹ Փրկիչ Հաջոն, ում մասին հիշատակվում է շատ աղբյուրներում, Հաջո III-ը չէ, ով չեվերկի առաջնորդներից մեկն էր: Խնդրո առարկա անձը Զահրանի Հաջոն է: Նա հայտնի էր որպես Մալա Իսմայիլ, ում ընտանիքը չեվերկիներից էր սերում:

¹³⁰ Հարցազրույց Յուհաննա Աքտաշի հետ 30.11.2010 Միդյատում, Սուլեյման Հիննո *“1915 Turabdin bölgesi”*, Kolo Suryoyo dergisi, 1993, Գլեյն, Նիդեռլանդներ, Ջարդեր, Դավիթ Գոնթ, մեջբերում 218-րդ էջից

¹³¹ Հարցազրույց Սուլեյման Դողանի հետ, 2013թ նոյեմբեր, Նուսայբին:

¹³² Հարցազրույց Համմետկոի ավագ թոռ Մեհմեդ Ալի Ասլանի հետ 30.11.2010 Միդյատում:

¹³³ Հարցազրույց Մեհմեդ Ալի Ասլանի և Շեյխ Ֆեթուլլայի ավագ թոռ Շեյխ Աբդուլկադիրի հետ 01.12.2010թ Միդյատում, Սուլեյման Հիննո *“1915 Turabdin bölgesi”*, մեջբերում

Վեհրի էֆենդիի Սավուրից. “Քրիստոնիաների նկատմամբ անարդարացի գտնվելը մեղք է:”

1915թ Մարդինի շրջանի մասին շատ աղբյուրներում Վահագնի էֆենդիի անունը նշվում է, որպես մի մարդու, ով փրկել է մոտ երկու հարյուր մարդու, որոնցից շատերը երեխաներ էին:¹³⁴ Տվյալ անձը Վեհրի էֆենդին է՝ Դիարբեքիի և Ստամբուլի փոստի և հեռագրատան նախկին տնօրենը: Վեհրի էֆենդին տասնյակ մարդկանց թաքցրել է Սավուրի առանձնատանը և մոտակա քարանձավներում: Մենք կարողացանք Անկարայում գտնել նրա 94 ամյա թոռ Նուսրեթ Օզբեկին: Վեհրի էֆենդին Նուսրեթ բեյի հոր հորեղբայրն էր միաժամանակ նաև նրա կնոջ պապիկը: Նա հնարավորություն էր ունեցել Վեհրի էֆենդիի մասին լսել իր հորից, աներոջից և շրջանում ապրող ասորիներից ու հանդիպելու այն մարդկանց, ում նա պաշտպանել էր: Չնայած իր գառավյալ տարիքին, նա բարյացկամորեն ժամանակ տրամադրեց մեզ և խոսեց Վեհրի էֆենդիի մասին:

1915թ քիչ հայեր էին ապրում Սավուրում, 1000 հոգանոց բնակչությունը հավաքվել էր քաղաքի կենտրոնում:¹³⁵ Ինչպես և հարևան մյուս բնակավայրերում, ասորի բնակչությունը ավելի խիտ էր: Քելեթը (Դերեխի) կարևոր ասորական բնակավայր է, որ գոյություն ունի նաև մեր օրերում: Վեհրի էֆենդին երկար ժամանակ է թոշակի էր անցել Փոստի և հեռագրերի նախարարությունից: Նա քաղաքագիտություն էր սովորել Փարիզում, նա Աբդուլհամիդ II-ի պալատական կառավարիչն էր եղել, իսկ թոշակի անցնելուց հետո վերադարձել էր Սավուր:

Սավուրում տեղահանություններն ու ջարդերը սկսվեցին 1915թ հունիսին: Քելեթը շատ մոտ էր Վեհրի էֆենդիի առանձնատանը, նա շատ արագ տեղեկացավ գյուղացիների տեղահանությունների մասին: Նա անմիջապես գնաց գյուղ և վերցրեց 87 տղամարդ ու 8 կին տեղահանության շարասյուններից:¹³⁶ Տեղահանությունից փրկված 95 ասորիները մնում էին նրա ընդարձակ առանձնատանը, որը մինչև փոշով պատվելը ընտանիքը անվանում էր “ամբոց”: Այս մարդկանց ավելացան նորերը և տասնյակ այլ տեղահանված հայեր և ասորիներ ապաստան գտան Վեհրի էֆենդիի առանձնատանը:

Առանձնատան գտնվելու վայրը՝ Ռաս էլ Հարֆը, Մասունի և Սդերդի տեղահանությունների ճանապարհին էր: Սդերդի դոմինիկացի միանձնուհիներին և սեմինարի ուսանողներին նույնպես ավելացրեցին շարասյանը: Երբ նրանք ճանապարհի կեսին էին և անցնում էին Մարդինով, հրոսակախմբերը հարձակվեցին շարասյան վրա՝ քարկոծելով կանանց և երեխաներին և վերցնելով նրանց հագուստը: Վեհրի էֆենդին փրկեց մոտ 20 վիրավոր կանանց: Նա նրանց տարավ իր տուն, ամիսներով հոգ տարավ նրանց մասին: Դոմինիկացի քահանա Ժակ Ռետորեի խոսքերով՝ “*Նա նրանց շատ հարգանքով էր վերաբերվում և երբեք չառաջարկեց մուսուլման դառնալ*”: Տեղահանությունների ավարտից հետո նա նրանց հանձնեց քրիստոնյա ընտանիքների, իսկ դոմինիկացի մարդկանց հոգևորականներին, ում մոտ նա կարծում էր, նրանք ապահով կլինեն:¹³⁷

¹³⁴ Ռաչո Դոնեֆը սխալմամբ նրա պաշտոնը նշում է որպես “կայմակամ”՝ հենվելով Վեհրի էֆենդիի կողմից փրկված մի վկայի ասածների վրա: Այս արտահայտությունը կրկնվում է մյուս աղբյուրներում ևս: Թերևս սխալի պատճառը այն է, որ Վեհրի էֆենդիի որդին՝ Աբդուլլադիֆ բեյը, քաղաքապետ էր: *Առաքինի մուսուլմանները 1915թ ճեղասպանության ժամանակ*, Ռաչո Դոնեֆ, 2010թ, Սիդնեյ

¹³⁵ *Le genocides Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 460-461 էջերից:

¹³⁶ Հարցազրույց Վեհրի էֆենդիի թոռ Նուսրեթ Օզբեկի, ընտանիքի անդամներ՝ Աթիլլայի, Շուկրանի և Թաջի Օզբեկի հետ 2014թ օգոստոսին, Անկարայում; Ըստ Նուսրեթ բեյի Վեհրի էֆենդին շատ կտրուկ արձագանքեց, երբ կայմակամը նրան հարցրեց “*Ի՞նչ էք անում*” և այլևս չկարողանալով վերահսկել իր բարկությունը՝ իր ձեռնափայտով խփեց կայմակամին:

¹³⁷ Քույր Իսսա Վարինան, ով տեղահանվել էր Սդերդի շարասյան հետ և որին փրկել էր Վեհրի էֆենդին, Մարդին հասնելուց հետո նրա պատմությունը պատմել էր դոմինիկացի քահանաներին՝ Մարի Դոմինիկ Բերրեին, Ժակ Ռետորեին և Հիասինթ Սիմոնին: Բոլոր երեքն էլ անդրադարձել են նրա վկայության տարբեր ասպեկտներին իրենց հուշերում: Բերրեն հիշատակում է Վեհրի էֆենդիին առանց տալու նրա անունը՝ նրան անվանելով “մոտակա քաղաքի քուրդ առաջնորդ”, Ռետորեն նրան հիշատակում է որպես “Սորի (Սավուրի) էֆենդի”: Վարինան հետագայում՝ 1930թ իր սեփական վկայությունում նշում է, որ այդ մարդը Վեհրի էֆենդին էր: *Les Chrétiens aux*

Վեհբի Էֆենդիի առանձնատունը ապաստան դարձավ նաև Մասունի հայերի համար, ովքեր փախչում էին տեղահանություններից: Նրա անունը Մասունի հայերի մեջ հայտնի էր որպես «փրկիչ»: 1916-1917թթ, երբ Վեհբի Էֆենդիի ազգականներից մեկը փորձում էր փախչել այն շրջանից, որը ռուսների վերահսկողության տակ էր, նա կարողացավ վերադառնալ իր շրջան շնորհիվ ռուսական բանակում աշխատող մի հայի:

Վեհբի Էֆենդին գտավ և իր սեփական տուն բերեց ասորի երեխաների, ովքեր փրկվել էին իրենց ընտանիքների անդամների մահվանից հետո: Նա իր պաշտպանության տակ առավ 75 որբ երեխաների:¹³⁸ Նա հնարավոր դարձրեց առևանգված և գերեվարված ասորի և հայ կանանց վերադարձը իրենց ընտանիքներ: «Նրանք առևանգել էին Մ.Տ.-ի մորը և տարել Մավուր, չնայած նրան, որ նա ամուսնացած էր: Նա իր ամուսնուն գտավ ցեղասպանությունից հետո: Նրա ամուսնու ընկերը խնդրել էր Վեհբի Էֆենդիին օգնել նրան: Վեհբի Էֆենդին գտավ կնոջը, համոզվեց, որ նա ուզում է վերադառնալ իր ամուսնու մոտ, և իր մարդկանցից երկուսին ուղարկեց, որ կնոջը վերադարձնեն իր տուն» ասում է Իսկենդեր Դեբբասոն՝ Սիդյատի ասորական պատմության հետազոտողը:

Վեհբի Էֆենդիի առանձնատանը սնունդը այդ ժամանակ եփում էին մեծ կաթսաներում, որոնք կարող էին տանել 2-3 անագե տարրայով ցորեն և իննը թոնիի չափով հաց էին պատրաստում, որպեսզի բավարար քանակի սնունդ ապահովեին ավելի քան հարյուր մարդու համար: Այդ թոնիներն օգտագործում էին նաև ստուգայցերի ժամանակ՝ երեխաներին թաքցնելու համար: Երեխաներին թաքցնում էին սառը թոնիներում կամ ցորենի ամբարներում: Սակայն Վեհբի Էֆենդիի կողմից քրիստոնյաներին պաշտպանելը և հավաստիացնելը, որ նրանք կվերադառնան իրենց տները, անհանգստացնում էր այն մարդկանց, ովքեր հափշտակել էին քրիստոնյաների ունեցվածքը: Նրանք իշխանությունների առաջ մեղադրեցին Վեհբի Էֆենդիին: Այդ պատճառով նա որոշ ժամանակ ստիպված էր հայերին և ասորիներին թաքցնել քարանձավներում և ջրհորներում:

Իր առաքինի վերաբերմունքի համար ասորիները Վեհբի Էֆենդիին տվեցին «Էբունա» տիտղոսը, որը ասորերենով նշանակում է «մեր հայր», և որով սովորաբար դիմում են քահանաներին: 1924թ Վեհբի Էֆենդիի մահից հետո շրջանի ասորիները նույն հարգանքն էին ցուցաբերում նրա երեխաների և թոռների նկատմամբ: Երբ Նուսրեթ բեյը աշխատում էր Սիդյատ-Իդիլ ճանապարհի շինարարության վրա 1976թ նա անցնում էր Իդիլի գյուղերից մեկով: Մի ծեր ասորի մոտեցավ նրան, հարցրեց, թե որտեղից և ինչ ընտանիքից է նա: Երբ ասորին իմացավ, որ նա Վեհբի Էֆենդիի թոռն է, ասաց. «Աստվածային հոտ է տարածված քո շուրջը» և գրկեց նրա ձեռքերը:

Ինչպես տեսնում ենք շատ Առաքինիների պատմություններից 1915թ նրանց ցուցաբերած վերաբերմունքը վճռորոշ դեր է խաղացել Հանրապետական ժամանակահատվածում նրանց նկատմամբ վերաբերմունքի հարցում: Նույն կանոնները գործում էին նաև Վեհբի Էֆենդիի ընտանիքի համար: 1925թ Շեյխ Սաիդի ապստամբությունից հետո Վեհբի Էֆենդիի ընտանիքի անդամներին աքսորեցին Մանիսա այն պատրվակով, որ նրանք Մավուրի հայտնի մարդկանցից էին: Նրանք աքսորում մնացին 8 տարի: Այդ ընթացքում նրանց ընտանիքի ունեցվածքը վաճառվեց գրոշներով:

Այն ինչ մնացել է Վեհբի Էֆենդիից մինչ մեր օրերը, դա հիշողությունն է այն մարդու մասին, ով իր երեխաներին խորհուրդ էր տալիս դաժան չլինել քրիստոնյաների նկատմամբ, քանի որ նա կարծում էր, որ դա մեղք է, ով սիրում էր կարդալ Ղուրանը, ճիշտ այնքան, որքան, ասում էին, նա կարդում է Աստվածաշունչը, և ով չէր հանդուրժում անգամ ամենափոքր վատ վերաբերմունքը կենդանիների

bêtes, Ժակ Ռետորե, էջ 183, Cerf, 2005, Փարիզ *Mardine, la ville héroïque*, Հիասիմթ Սիմոն, էջեր՝ 170-171, Նամասն, 1991թ Ջունիա, *Massacres de Mardin*, Մարի Դոմինիք Բերրե

Հայկազյան հայաբանական ուսումնասիրություն, հատոր 17, էջեր՝ 81-106, 1997թ, Բեյրութ *Les Catherinettes de Mésopotamie, Missions Dominicaines*, էջ 19, 1930թ, Փարիզ: Ի տարբերություն Բերրեի մտածածի Վեհբի Էֆենդին արար ընտանիքից էր սերում:

¹³⁸ Հարցազրույց Իսկենդեր Դեբբասոնի հետ, մեջբերում

նկատմամբ: “Նա շագանակագույն արարական նժույգ ուներ”, - հիշում է Նուսրեթ բեյը,- “Նա երբեք չէր մտրակում նժույգին. “Ես չեմ կարող ձեռք բարձրացնել նրա վրա, եթե ես մտրակեմ նրան, այն կանհանգստանա, իսկ դա մեղք կլինի: Թող այն ինձ տանի այնպես, ինչպես որ ինքն է ուզում քայլել”,- ասում էր նա :” Նժույգը գնում էր ինքն իրեն՝ նրան տանելով տանից Սավուր և Սավուրից տուն:”

V. Կաստամոնու նահանգ

Հակասական կերպար. Կաստամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշա

1915թ Կաստամոնուն հիմնականում բաղկացած էր մուսուլմաններից, 13 հազար հայեր ապրում էին ցրված և մեկուսացված բնակավայրերում:¹³⁹ Ավելին, շրջանը հեռու էր մարտի վայրերից: Այս շրջանում Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից օգտագործվող պատրվակները համոզել բնակչությանը, որ տեղահանությունները անհրաժեշտ էին, անօգուտ էին: Այնուամենայնիվ, նահանգը հանդիսացավ այն վայրը, որտեղ կատարվեցին Ստամբուլից Անկարա տեղափոխված հայերի մեծ մասի վայրագ սպանությունները և տեղի բնակչության տեղահանությունները: Որոշ բաձրաստիճան քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներ, հոգևոր առաջնորդներ և քաղաքի հայտնիներ փորձեցին կանխել վայրագությունները, սակայն նրանց չհաջողվեց:

Նահանգապետ Ռեշիդ փաշան դարձավ այն անձը, ում անունը ամենաշատն էր տրվում շրջանում ցեղասպանության դիմադրության առնչությամբ՝ կապված այն վկայության հետ, որ նա տվեց Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարության ժամանակ: Ցեղասպանությունը վերապրած հայերի վկայությունները, հատկապես Գրիգոր Պալաքյանի հուշերը, ով Անկարա արտաքսվածներից մեկն էր, հաստատում են, որ Ռեշիդ փաշան դեմ էր տեղահանությունները իրականացնելուն, ուստի, կարճ ժամանակ անց նրան ազատեցին իր պաշտոնից: Սակայն, այն թե ինչպես է նա իր հուշերում և հետագա կարիերայի ընթացքում արտահայտվում, հարցեր են առաջացնում այն մասին, թե որքանով էր նրա վերաբերմունքը ընդդիմադիր:

Ըստ նրա վկայության, որը կարդացվել է 1919թ Միությունն և առաջադիմություն պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ, Ռեշիդ փաշան Կաստամոնուի տեղահանությունների հրաման արձակող պաշտոնական հաղորդագրությունը ստացել է Բահաեդին Շաքիրից: Քանի որ նա հրաժարվում էր ենթարկվել այս հրամանին, նրան անվանում էին “Ոչ թե թուրքերի նահանգապետ, այլ՝ հայերի” և կարճ ժամանակ անց նրան ազատեցին իր պաշտոնից:¹⁴⁰ Նրան փոխարինեց Աթիֆը, ով պատասխանատու էր Անկարայի հայերի ջարդերի համար: Հայ մտավորականները, ովքեր գտնվում էին արքայում Անկարայում, անհանգստացան այս լուրը լսելով: Տիրան Քելեկյանը, ով երկար տարիներ քաղաքական պատմության դասեր է տվել Օսմանյան կառավարման դպրոցում և ով միաժամանակ գրող և լրագրող էր, քահանա Գրիգոր Պալաքյանին ասել է, որ այդ նշանակումը կրերի իրենց կործանմանը: “Աթիֆը նշանակվել է Կաստամոնուի նահանգապետ... Մի քանի օրից նա կսկսի իր պաշտոնավարումը: Մեր օրերը հաշված են(...)*Մենք պետք է արդեն պատրաստվենք մեռնելու*”, - այսպիսին էին նրա բառերը:¹⁴¹

Հենց որ Աթիֆը անցավ իր պարտականությունների կատարմանը, հաստատվեց, որ Տիրան Քելեկյանի մտահոգությունները ճիշտ էին: Նա Քելեկյանին երկու ժանդարմների ուղեկցությամբ ուղարկեց “դատելու Դիարբեքիրի զինվորական դատարանում”: Սակայն, նրանց ճանապարհ ընկնելուց երկու շաբաթ հետո Քելեկյանին սպանեցին Կիզիլիրմակ կամրջի վրա, Միվասի մոտ:¹⁴² Պալաքյանը կարծում

¹³⁹ *Le genocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 661-րդ էջից

¹⁴⁰ *Tehcir ve Taktil, Divan-I Harbi Örfi Zabıtları*, Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, մեջբերում 153-154 էջերից

¹⁴¹ *Ermeniler in Golgothasi*, Գրիգոր Պալաքյան, էջեր՝ 158-159, Belge Yayınları, 2014թ, Ստամբուլ

¹⁴² Տիրան Քելեկյանի կենսագրությունը ներառված է Մուլքիեյի պատվո գրքում, որը պարունակում է տեղեկություն և շրջանավարտների, և ուսուցիչների մասին: Ինչ վերաբերվում է նրա մահվանը, ապա գրանցված է “նա մահացել է 1918 սեպտեմբերին”: Մուլքիեյում, որտեղ Քելեկյանը ծառայել է երկար տարիներ, Մուամերը, ով

էր, որ Ռեշիդ փաշան “անձամբ դեմ էր Միության անդամների նման դաժան գործողություններին”:
Սակայն, երբ նա դեռ իր պաշտոնում էր երկու շաբաթանների դրամատիկական ավարտը, երբ ընդամենը
7 մարդ փրկվեց 82 հոգուց, ցույց տվեցին, որ նա չի կարող ազդել պատասխանատու քարտուղարի վրա և
կանխել տեղահանություններն ու ջարդերը:

Ըստ Պալաքյանի Ռեշիդ փաշան հստակ էր արտահայտվել որ “Հայերը Օսմանցիների հենասյունն են,
առանց նրանց երկիրը աղքատության կմատնվի: Միություն և առաջադիմություն կուսակցության
ցանկությունը վերացնել հայերին նեղ մտածելակերպի քաղաքականություն է, որը դեմ է հայրենիքի
շահերին”:¹⁴³ Մենք տեսնում ենք, որ Ռեշիդ փաշան իր հուշերում նմանատիպ մտքեր է արտահայտել ոչ
այնքան բացահայտ կերպով, որքան անուղղակի ձևով: Սակայն իր հուշերում նա որևէ հիշատակում չի
արել Կաստամունուի հայերի ճակատագրի վերաբերյալ: Նա նաև չի հիշատակում այն մանրամասները,
որ տվել էր Միության անդամների դատավարության ժամանակ: Նա միայն արտաբերում է հետևյալ
նախադասությունները.

“Ես չեմ ուզում վերհիշել, թե ինչ ենք մենք արել Համաշխարհային պատերազմի ժամանակ, և ինչ են մեզ
հետ արել թե դրսից, թե ներսից (...): Թուրքերը այդ չորս տարիների ամբողջ բեռը կրում են իրենց
ուսերին: Երազելով վերակենդանացնել այն երկիրը, որը անկման եզրին էր՝ նրանք կենտրոնացրեցին
իրենց ունեցվածքը և կյանքը անհավատալի համառությամբ և յուրատեսակ մեծահոգությամբ: Նրանք
կիսով չափ սոված ու մերկ կռվեցին տաս մարտական ճակատներում: Նրանց դավաճանեցին, ծուղակը
և թակարդը գցեցին այն ազգերը, որոնց հետ նրանք որպես եղբայրներ ապրել էին վեց հարյուր տարի:(...)
Ես այդ ժամանակ Կաստամունուի նահանգապետն էի, երբ այս արյունոտ աղետի առաջին
գործողությունները, որոնք լի են այնպիսի տեսարաններով, որոնք կփոխեն պատմության ընթացքը,
կատարվեցին: Այնտեղ ես իմ սեփական աչքերով տեսա, թե ինչպես է ազգը հալչում, ինչպես է
հասարակական հավասարակշռությունը աստիճանաբար խաթարվում, ես հիվանդանում էի
տխրությունից և հնարավորինս փորձում քաղաքը պաշտպանել աղետաբեր ֆինանսական փակուղիներից:
(...)Քանի որ Բարձր դուռը լի էր մարդկանցով, ովքեր գուրկ են պետական պաշտոնյայի հմտություններից,
մինչև վերջին օրը նրանք անգամ դրա կարիքը չէին զգում, էլ չասած հնարավորություն տեսնելու մասին:
Այնուամենայնիվ, նույն այդ Բարձր դուռը զերծ չմնաց արժանավոր և մաքուր մարդկանց պաշտոնից
ազատելուց: Չնայած դեպի սահմանադրական միապետություն անցման ժամանակ իմ կառուցողական
ծառայություններին, նրանք ինձ նույնպես ազատեցին պաշտոնից՝ իմ գործողություններին վերագրելով
անհնազանդություն:

Չնայած դրան, Միություն և առաջադիմություն կուսակցությունը առավել տարբեր էր:
Կառավարությունը զերծ չէր մնում կուսակցության անդամ հանդիսացող քաղաքացիներին
հեշտությամբ զոհաբերելուց: Սակայն, կուսակցությունը չէր ձախողում հաշտեցնել իր եղբայրներին,
ովքեր նման ձևով ճնշվում էին: Չնայած Ներքին գործերի արդեն մահացած նախարար Թալեաթ փաշան
ինձ ազատեց պաշտոնից նա չնոռացավ ինձ հետ հաշտվել որպես կուսակցության անդամ: Նա ինձ
դարձրեց Երկանի շրջանի պատգամավոր և հետևեց, որ ինձ ընտրեն նոր հիմնադրված բանկերից մեկի
խորհրդի անդամ:¹⁴⁴

Ինչպես իր հուշերի մնացած մասը այս բառերը լի են Միություն և առաջադիմություն կուսակցության
գովեստով: Ռեշիդ փաշան արդեն իսկ կուսակցության անդամ էր սահմանադրական միապետության
ժամանակներից ի վեր: Կուսակցությունը նաև նրան նշանակել էր Երկանի պատգամավոր: Կարճ ասած,
նա կուսակցության “եղբայրներից” մեկն էր: “Արյունոտ աղետը”, որի մասին նա խոսում էր (եթե ի
նկատի ունենանք նախորդ նախադասությունները) հայերի ցեղասպանությունը չէ, այլ 1-ին
համաշխարհային պատերազմը: Երբ նա ասում էր. “Այնտեղ ես իմ սեփական աչքերով տեսա, թե ինչպես է

Միվասի նահանգապետն էր նրա մահվան ժամանակ, եղել է Քելեքյանի ուսանողներից մեկը, սակայն,
դժբախտաբար, չի կարողացել ճիշտ գրանցել նրա մահը:

¹⁴³ *Ermenilerin Golgothası*, Գրիգոր Պալաքյան, մեջբերում՝ 154-155 էջերից

¹⁴⁴ *Reşit Pasha'nın hatıraları*, Ռեշիդ փաշա, Cevdet RYularkıran, էջեր՝ 5-7, Տան, 1939թ, Ստամբուլ

ազգր հալչում, ինչպես է հասարակական հավասարակշռությունը աստիճանաբար խաթարվում, ես հիվանդանում էի տխրությունից և հնարավորինս փորձում քաղաքը պաշտպանել աղետաբեր ֆինանսական փակուղիներից”, նա կարծես անդրադառնում է տեղահանությունների ու ջարդերի տնտեսական և սոցիալական հետևանքներին: Այնուամենայնիվ, անգամ եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա, անշուշտ, նա դա անում է շատ թաքուն եղանակով: Միակ արտահայտությունը , որ նա օգտագործում է նահանգապետի իր պաշտոնից ազատելու մասին դա “անհնազանդություն վերագրելովն” է: Հնարավոր է, որ նա նկատի է ունեցել տեղահանությունների հրամաններին իր չենթարկվելը, սակայն անգամ եթե դա այդպես է, այն հսկայական գովասանքը, որ տեքստի մնացած մասը պարունակում է Միություն և առաջադիմություն կուսակցություն հասցեին և տեղահանությունների մասին խոսելը որպես “մոտեցում, որը իրականացվեց պատերազմի տարիներին առաջացած զինվորական անհրաժեշտությունից ելնելով”¹⁴⁵ ընթերցողին ստիպում են հարցականի տակ դնել թե կոնկրետ ինչ “անհնազանդություն” էր Ռեշիդ փաշան ցուցաբերում:

Հնարավոր է, որ Ռեշիդ Փաշան գտնում էր, որ տեղահանությունները “անհրաժեշտ” են, սակայն դեմ էր սպանություններին: Մեկ այլ տարբերակ է, որ ինչպես և նահանգապետ Համիդ բեյը, նա իր հուշերը համապատասխանեցրել է “պաշտոնական տարբերակին”, որովհետև պատասխանատու քարտուղարների դատավարության դատավճռից վերցված մեջբերումները ամբողջովին հակասում են նրա հուշերին. “Հաստատվել է, որ նահանգապետ Ռեշիդ փաշան, ով կտրականապես դեմ էր տեղահանություններին՝ ելնելով նրանից, որ Կաստամոնուի հայերը համամասնության առումով շատ քիչ քանակ էին կազմում ընդհանուր բնակչության թվում, ինչպես նաև այն հանգամանքից, որ նա սպանության գործողություններ չձեռնարկեց տեղահանության օրենքին ենթարկվելու համար՝ ասելով “Ես իմ ձեռքերը չեմ արյունոտի”, փաստորեն մի քանի փորձերից հետո ազատվել է իր պաշտոնից Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմիի կողմից”: Ավելին, ըստ դատավճռում բերված վկայությունների Ռեշիդ փաշան ցանկանում էր, որ Հասան Ֆեհմին ազատվի պաշտոնից՝ նրան մեղադրելով մարդկանց հայերի դեմ հրահրելու և կառավարության գործերին անհնազանդություն ցուցաբերելու մեջ:¹⁴⁶

Ներկայումս այն տեղեկությունները, որ մենք ունենք Ռեշիդ փաշայի մասին, լի են հակասություններով: Սակայն, կխոսենք այն Առաքինի անձանց մասին, ում մասին կարողացել ենք ավելի հստակ տեղեկություն ստանալ Կաստամոնուի նահանգում:

Կաստամոնուի ժանդարմերիայի հրամանատար Իզզեթ բեյ. “Դուք պատասխանատվություն կկրեք ձեր գործողությունների համար ապագայում”

Կար մի մարդ, ով չնայած կարճ ժամանակ, բայց հույսի փարոս էր Գրիգոր Պալաքյանի և մյուս մտավորականների համար Անկարայում իրենց աքսորի օրերին, դա Կաստամոնուի ժանդարմների հրամանատար Իզզեթ բեյն էր, ով ծառայում էր որպես Անկարայի փոխնահանգապետի տեղակալ:¹⁴⁷ Փոխնահանգապետի տեղակալը, ում նրանք բնութագրում էին որպես “զգայուն և բարի չերքեզ”, կարեկցանք էր ցուցաբերում հայ աքսորյալների նկատմամբ: Աքսորված մտավորականներին ի վերջո թույլ տրվեց գնալ ցանկացած վայր, բացի Ստամբուլից: Սակայն, քանի որ նրանք չգիտեին, թե որ վայրն է վստահելի, նրանք ցանկացան հարցնել Իզզեթ բեյին, ում ընկերությանը նրանք վստահում էին: Պալաքյանը մտադիր էր գնալ Արմաշի վանք և այնտեղ մնալ մինչ պատերազմի ավարտը: Իզզեթ բեյը խորհուրդ տվեց Պալաքյանին և Քելեքյանին չհեռանալ Անկարայից: 1915թ օգոստոսին նրանց համար վտանգավոր կլինեի լինել մի վայրում, որտեղ Իզզեթ բեյը չէր կարող միջամտել: Ցանկացած տեսակի

¹⁴⁵Նույն աղբյուրը, տես 39 էջ:

¹⁴⁶Tehcir ve Takiil, Divan-I Harbi Örfi Zabıtları, Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, մեջբերում 658-րդ էջից

¹⁴⁷Չնայած Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվները հաստատում են, որ Իզզեթ բեյը Կաստամոնուի ժանդարմների հրամանատարն էր, ում հետ զրույցի մասին հիշատակում էր Պալաքյանը 1915թ օգոստոսին, դրանցում չկա տեղեկություն այն մասին, որ նա հանդիսանում էր Անկարայի փոխնահանգապետը:

ճամփորդություն կհեշտացնէր հրոսակախմբերի գործը, քանի որ նրանք հնարավորություն էին փնտրում հարձակվելու հայերի վրա: Պալաքյանը և նրա 18 ընկերները հետևեցին Իզմեր քեյի խորհրդին, սակայն 11 հոգուց բաղկացած խումբը, որոնց թվում էր նաև բժիշկ Սևակ Չիլինգարյանը և բանաստեղծ Դանիել Վարուժանը որոշեց ամեն գնով մեկնել Անկարայից: Չնայած իր բոլոր ջանքերին Պալաքյանը չկարողացավ ետ կանգնեցնել նրանց: Նրանց ճանապարհ ընկնելուց վեց ժամ անց Խալի հրոսակախումբը Միություն և առաջադիմություն ակումբի պատվերով ծուղակը գցեց նրանց շարայանը, և նրանց բոլորին դաժանաբար սպանեցին: Շարայանը ուղեկցող ոստիկանները և ժանդարմները մատների արանքով էին նայում այդ սպանություններին: Կառապանը Պալաքյանին այս իրադարձությունների մասին պատմել է արցունքն աչքերին: Երիտասարդ կառապանը խիստ ազդվել էր իր տեսածից: *“Այս սպանությունների վերջը դժոխքն է: Այդպես չի կարելի ապրուստ վաստակել: Վաղը ես կվաճառեմ իմ ձիերը և կհեռանամ այս քաղաքից”*, - ասել է նա:

Իզմեր քեյը, ով փրկել էր Պալաքյանին և մյուսներին զգուշացնելով նրանց, գնաց հանցանքի վայրը՝ իրադարձությունները հետաքննելու համար և բռնեց հրոսակախմբի անդամներին: Հարձակվողները խոստովանեցին, որ գործել են Միություն և առաջադիմության ակումբի պատվերով:

Երբ Աթիֆը նշանակվեց Կաստամունուի նահանգապետ Իզմեր, քեյի համար առավել դժվար դարձավ քաղաքում պաշտպանել հայերին: Թաշքոփրուի 150 ընտանիքներ, ովքեր զբաղվում էին պարան պատրաստելով, արտաքսվեցին Դեր Զոր: Պալաքյանի խոսքերով Իզմեր քեյը, ով *“բացահայտորեն ընդդիմանում էր տեղահանություններին”* այդ միջադեպի մասին իմանում է, երբ շարայանները արդեն ճանապարհ էին ընկել, և բարկանում, քանի որ այդ գործողությանը մասնակցում էին իր ենթակայության տակ գտնվող ժանդարմները առանց իրեն տեղյակ պահելու: Այդ ընթացքում, շարայանը, որը բաղկացած էր 850 հոգուց, այդ թվում նաև կանանցից ու երեխաներից, արդեն մոտ չորս ժամ էր առաջ էր շարժվել: Իզմեր քեյը ստիպեց շարայանը ետ վերադառնալ: Նա նաև հետևեց, որ 400 հոգուց բաղկացած խումբը, որ ուղարկվել էր Անկարայով Դեր Զոր, վերադառնա իրենց տները:¹⁴⁸ Այս միջամտություններով Իզմեր քեյը Միության անդամների բարկությունը հրավիրեց իր վրա: Կաստամունուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին Իզմեր քեյին հեղինակագրվելու գործողություններ իրականացրեց: Նա բոլոր տեղերում ասում էր, - *“պատմությունը և ապագան կանխեն Իզմեր քեյին հայերի տեղահանությունները կանխելու համար”*:¹⁴⁹ Ինչ վերաբերում է նահանգապետ Աթիֆին, նա սկսել էր ուղիներ փնտրել Իզմեր քեյին քաղաքից դուրս հանելու համար:¹⁵⁰ Որոշ ժամանակ անց նրան հաջողվում է Իզմեր քեյին նշանակել Մամուրեթ-ուլ-Ազիզի ժանդարմների գլխավոր շրջանային տեսուչ:¹⁵¹

Աթիֆը կարծում էր, որ կազատվի Իզմեր քեյից՝ նրան ուղարկելով Մամուրեթ-ուլ-Ազիզ: Սակայն, նա անտեղյակ էր, որ ինքը փաստացի արել է մի տեղափոխություն, որը կանանհացնի Իզմեր քեյին: Ակնհայտ էր, որ Իզմեր քեյի նման մարդը, ով չէր հանդուրժում այն ինչ կատարվում էր մի քաղաքում, որտեղ տեղահանությունները անդրադառնում էին քիչ քանակի մարդկանց վրա, անշուշտ լուր չէր մնա

¹⁴⁸ *Ermenilerin Golgothasi*, Գրիգոր Պալաքյան, մեջբերում 164-րդ էջից
Դեղագետ Գրիգոր Էֆենդին, ով ցուցմունք է տվել Պատասխանատու քարտուղարների դատավարության յոթերորդ նիստի ժամանակ, նշում է որ Անկարայի բոլոր 100 ընտանիքները արտաքսվեցին, Ստամբուլից տեղահանված 180 մարդկանցից փրկվել է միայն երեսունը: Նա պատմում է, որ Իզմեր քեյը շատ տխրել էր հատուկ կազմակերպության այս հրոսակախմբերի գործողություններից, որոնց առաջնորդում էր Ջեմալ Օղուզը, և որ նա վշտից լալիս էր այն հայերի մոտ, ովքեր գալիս էին իրեն այցելելու: 1920թ Ջեմալ Օղուզի և Նուրբեյին քեյի դատավարության ժամանակ տեղահանությունները վերապրած Միխայիլ Օհանեսը բացատրեց, որ Իզմեր քեյը հետաքննում էր Այաս ուղարկված հինգ հայերի սպանությունը, *Tehcir ve Taktil*, մեջբերում 154-րդ էջից:
¹⁴⁹ Մայր Մուստաֆա Շերեֆ քեյի ցուցմունքը, որին հղում է արվում Քաթիբ-ի Մետուլլերի դատավճռում, *Tehcir ve Taktil*, մեջբերում 659-րդ էջից: 1920թ հունվարի 8-ին կայացված դատավճռում առկա հղումներից մենք տեղեկանում ենք, որ այդ ամսաթվի դրությամբ Իզմեր քեյը արդեն մահացել էր: Ըստ Մուստաֆա Շերեֆ քեյի Իզմեր քեյը և նահանգապետ Աթիֆը հակամարտության մեջ էին, որովհետև Իզմեր քեյը կարծում էր, որ տեղահանությունները լավ արդյունքների չեն բերի:
¹⁵⁰ ԿԿՄԿ.ՏԲՐ 506/47,09/Ks/1331
¹⁵¹ ԿԿՄԿ.ԵՄ.ԵՄ.6.Ֆ, 6/1,02/R/1334 Պալաքյանի հուշերում սխալմամբ գրված է, որ Աթիֆը Իզմեր քեյին նշանակել է Դիարբեքիրում, *Ermenilerin Golgothasi*, մեջբերում 165-րդ էջից:

մեծ չափերի ջարդերի ժամանակ, որոնք կատարվում էին Մամուրեթ-ուլ-Ազիզում: Նա չէր դադարում ամեն տեղ ասելուց, որ *“այն պաշտոնյաները, ովքեր տեղահանում են հայերին, կեղտոտ ու ստոր են, և որ նրանք իրենց գործողությունների համար ապագայում խիստ պատասխանատվության կենթարկվեն իրենց վերադասների կողմից”*: Նահանգապետ Մաբիթի հեռագրից, որում նա պահանջում էր պաշտոնից ազատել Իզզեթ բեյին, հասկացվում է, որ Իզզեթ բեյի բառերը բավականին մեծ ազդուկ էին բարձրացրել քաղաքում: Այս հեռագիրը, որը թերևս մոռացվել էր արխիվներից մաքրված մեծ քանակի թղթակցությունից, բավականին արժեքավոր է: Այն յուրատեսակ փաստաթուղթ է ցեղասպանությանը դիմադրելու մասին և այն մասին, որ պաշտոնյան ազատվում էր պաշտոնից, որպես հատուցում նման մոտեցման համար:¹⁵²

DH.ŞFR.535/58 ՀԵՌԱԳՐԻ ՎԱՅՐԸ՝ Էլազիզ Ամսաթիվ՝ 5/8/332

**Ներքին գործերի նախարարությանը
Ծածկագրված**

Ժանդարմերիայի շրջանային տեսուչ Իզզեթ բեյը չունի պարտականության և հայրենիքի զգացողություն: Նա ասում է, որ իրեն ինչպես և Ռեշիդ փաշային պաշտոնագրուրկ են արել, հայերի արտաքսմանը դիմադրելու համար, երբ նա Կաստամոնուի վաշտի հրամանատարն էր: Նա նաև ասում է, ասես հայերի փաստաբանը լինի, որ այն պաշտոնյաները, ովքեր տեղահանում են հայերին կեղտոտ ու ստոր են, և որ նրանք իրենց գործողությունների համար ապագայում խիստ պատասխանատվության կենթարկվեն իրենց վերադասների կողմից: Առաջարկում եմ, որ այս անձնավորությունը, ով ցանկանում է բավարարել իր սեփական վիրավորվածությունը կառավարությունից, թռչակի ուղարկվի՝ ելնելով իր ընդդիմադիր վերաբերմունքից և կառավարության կողմից հայրենիքը փրկելու համար պարտադիր կերպով իրականացվող քաղաքականությանը չենթարկվելու հիման վրա:

5 հոկտեմբերի, 1332թ (18 հոկտեմբերի, 1916թ ըստ Գրիգորյան օրացույցի):

Նահանգապետ Մաբիթ¹⁵³

Նահանգապետի խնդրանքի համաձայն Իզզեթ բեյին ստիպեցին թռչակի անցնել 1917թ սեպտեմբերի 3-ին:¹⁵⁴ Այդ օրվանից հետո մենք կորցնում ենք Իզզեթ բեյի հետքը: Հնարավոր է, որ նա մահացել է մինչև Միության անդամների դատավարությունը, ինչպես վկայում է Մուստաֆա Շերեֆ բեյը Պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ իր տված ցուցմունքներում: Իզզեթ Բեյը, ով ծնվել էր 1854թ Հալեպում, պետք է որ չերթեգներից լիներ, ում բնակեցումը Միրիայում սկսել էր այդ ժամանակներում և ում երիտասարդ սերունդը հետագայում աշխատանքի էր անցել ժանդարմների վաշտում: Մեզ չհաջողվեց գտնել նրա ընտանիքի հետքը, պարզեցինք միայն այն, որ նա ուներ Մեհմեդ Ջեմիլ էֆենդի անունով որդի:¹⁵⁵ Չնայած դրան, կարող ենք հաստատել, որ ի տարբերություն Հասան Ֆեհմիի կանխատեսմանը “պատմությունը և ապագան հիշում են Իզզեթ բեյին բարի համբավով”:

Կաստամոնուի մուսուլմաններ. “Մեր կրոնում նման բան չկա”

Միություն և առաջադիմություն կուսակցության հիմնական դատավարողության մեջ շեշտվում է, որ Կաստամոնուի մուսուլմանները և հայտնիները նույնպես ոտքի են կանգնել տեղահանությունների և ջարդերի դեմ: “Պետության մուֆտին և մարդկանց ամբոխը, որ բաղկացած էր շեյխերից ու հայտնիներից” հետևյալ բառերով դիմեցին Ռեշիդ փաշային. *“հավանաբար նրանք կոտորում են*

¹⁵²Առաջին հերթին Ջելալ բեյը, անհնար է գտնել այն պաշտոնյաների թղթակցության հետքերը, ովքեր պնդում են, որ Ներքին գործերի նախարարությանը ուղարկել են տեղահանությանը ընդդիմացող հեռագրեր:

¹⁵³ՕԿԱ DH.ŞFR.535/58,05/Ts/1332 Տառադարձությունը՝ Օմեր Թուրքօղլուի

¹⁵⁴ՕԿԱ.İ.DUİT.166/7,16/Za/1335

¹⁵⁵ՕԿԱDH.SAİDd,116/203,29/Z/1291

հայերին նրանց երեխաների հետ՝ տանելով բլուրների կողմը: Մենք նման բան չենք ուզում մեր երկրում: Մենք վախենում ենք Ալլահի բարկությունից: Աստվածաստյաց պետությունը կարող է գոյատևել, սակայն բռնապետականը՝ ոչ: Մենք խնդրում ենք, որ մեր քաղաքում նման վերաբերմունք չկիրառվի»: “Երբ նահանգապետը նրանց հայտարարեց, որ նման իրավիճակ ոչ մի դեպքում թույլ չի տա “ասում են պատվիրակության անդամների աչքերին ուրախության արցունքներ հայտնվեցին”:¹⁵⁶

Ըստ պաշտոնական մեղադրանքի, այս միջադեպը հաստատվում է գրավոր հայտարարություններով: Ելնելով այն ցուցմունքից, որը տվել է դատարանին այս ելույթի մասին պատմած անձանցից մեկը, հավանական է, որ դա Ռեշիդ փաշան էր: Քանի որ պաշտոնական մեղադրանքի մեջ նշվում է “հայտարարություններ”, մենք կարող ենք ենթադրել, որ մեկից ավելի անձ՝ թերևս վերոնշյալ մուֆտին, շեյխերը և հայտնիներն են ցուցմունք տվել այս մասին: Այնուամենայնիվ, այս առնչությամբ հստակ տեղեկություն ստանալու փորձի ժամանակ մենք նորից բախվեցինք այն խոչընդոտներին, որ Ստամբուլի դատավարությունների հետաքննությունների թղթապանակները հասանելի չեն արխիվներում: Նույն պատճառով մենք կարող ենք միայն ենթադրություններ կատարել այդ շեյխերի և հայտնիների ինքնության վերաբերյալ, սակայն չենք կարող ստանալ կոնկրետ տեղեկություն:

Հաֆիզ Օսման Նուրին, ով **Կաստամոնուի մուֆտին** էր այդ ժամանակ և ում ինքնությունը մենք կարող ենք սահմանել առանց որևէ կասկածի: Մենք Կաստամոնուում հարցազրույցներ անցկացրեցինք՝ գտնելու համար Հաֆիզ Օսման Նուրիի հետքը, ում հայրը նույնպես մուֆտի է եղել: Սակայն մենք նկատեցինք, որ նրա ընդդիմադիր վերաբերմունքը տեղահանությունների հանդեպ ջնջվել է քաղաքի հավաքական հիշողությունից: Միակ հիշողությունը, որ մնացել էր Հաֆիզ Օսման Նուրիի մասին դա այն զրույցն էր, որ նա ունեցել էր Մուստաֆա Քեմալի հետ Գլխարկների մասին ակտի ժամանակ:¹⁵⁷ Մեզ հաջողվեց գտնել նրա լուսանկարը Կաստամոնուի մուֆտիի գրասենյակում, սակայն հնարավոր չէրավ գտնել նրա ընտանիքի հետքերը:

Արդյո՞ք Հաջի Թեվֆիկը Կաստամոնույից, Ջեվդետ և Սալիմ էֆենդիները, Հին վարչական խորհրդի գլխավոր գարծակալ Բեսիմը, Խոջա Մեհմեդ էֆենդին, առևտրական Ահմեդը և փաստաբան Իզզեթը, ովքեր վկայություններ էին տվել միության անդամների դեմ 1919թ դատավարության ժամանակ, նրանց թվում էին, ովքեր ասացին. “*Մենք նման բան չենք ուզում մեր երկրում*”: Մենք գիտենք, որ Հաջի Թեվֆիկը և Մուֆտու Հաֆիզ Օսման Նուրիի հայրը Հաֆիզ Մեհմեդ Էմինն ու Խոջա Մեհմեդ էֆենդին դեմ էին Միություն և առաջադիմություն կուսակցությանը, և որ նրանք ստեղծել էին հիմնադրամ, որը առարկում էր այն հանգամանքին, որ Կաստամոնուի հոգևոր առաջնորդների մի մասը աջակցում է Միության անդամներին:¹⁵⁸ Սակայն, մենք որևէ այլ կոնկրետ տեղեկություն չունենք 1915թ նրանց ցուցաբերած վերաբերմունքի մասին: Մենք ստիպված ենք համարել, որ Կաստամոնուի մուսուլմանները, ովքեր ընդդիմացան տեղահանություններին ու ջարդերին, անհայտ են, բացի Հաֆիզ Օսման Նուրիից:

V. Միվասի նահանգ

1915թ տեղահանությունների ու ջարդերի դեմ ամենաարմատական դիմադրություններից մեկը տեղի է ունեցել Միվասի նահանգում: Ինչպես և Դերսիմի շրջանում Միվաս նահանգի Առաքինիները չբավարարվեցին հայերին միայն ապաստան և սնունդ տրամադրելով, այլ երբեմն համարձակվեցին դիմակայել պետական ուժերին՝ շարունակելով փրկել հայերին:

Էմիր փաշա. “Ես պետք է նվազագույնը օգնեմ դիմադրողներին”

Ադադմադենի շրջանի գյուղացիները լսել էին, որ Յոզգաթ Թերզիլի մոտի հայկական քաղաքները

¹⁵⁶ *Tehcir ve Taktik*, մեջբերում 237-238-րդ էջերից

¹⁵⁷ Հարցազրույցներ Աթաբեյ մզկիթում, որտեղ Հաֆիզ Օսման Նուրին է ծառայել, և Կաստամոնուի Մուֆտիի գրասենյակում, ապրիլ 2011թ

¹⁵⁸ *Bellekten*, հատոր 70, թիվ 258, էջ 638, *Türk Tarih Kurumu*, 2006թ, Անկարա

այրվում էին: Աղդաղմադենիի որոշ հայ երիտասարդներ ապաստան էին գտել Աղդաղ լեռան լանջերին՝ նույն ճակատագրից խուսափելու համար: Օրերի ընթացքում նրանց քանակը ավելացավ. նրանք, ովքեր փախել էին տեղահանություններից ու ջարդերից, ովքեր փախել էին աշխատանքային վաշտերից, ում պայմանները մոտ էին համակենտրոնացման ճամբարների պայմաններին կամ նրանք, ովքեր որոշել էին կազմակերպել դիմադրություն, ապաստան էին գտնում Աղդաղ լեռան վրա: Նրանք ստեղծեցին ամբոխից բաղկացած խումբ, որում կային նաև կանայք և երեխաներ: Պետական ուժերը ընկել էին նրանց ետևից, և նրանք կարծում էին, որ պետք է զենք վերցնեն, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց ապաստանը: Այդ պայքարում նրանց ամենամեծ օժանդակողը չերքեզ Էմիր փաշան էր Սիվասից:

Էմիր փաշան ծնվել էր Աբխազիայում: Նա 3-4 տարեկան էր չերքեզների աքսորի ժամանակ: Նա կորցրել էր իր հորն ու մորը և ապաստան գտել Ալի Աղայի տանը Սիվասում՝ իր ծննդավայրից շատ հեռու: Սիվասի ամենահարուստ մարդկանցից մեկը Ալի աղան Էմիր փաշային մեծացրել էր իր որդու նման և ուղարկել Ստամբուլի իրավաբանական ֆակուլտետ սովորելու:¹⁵⁹ Վերադառնալով Սիվաս՝ Էմիր փաշան որոշ ժամանակ ծառայել է որպես բնակչության գրանցող: Նա ընտրվել է Սիվասի նահանգի Վարչական խորհրդի անդամ: Այս պաշտոնավարման ընթացքում նա նախ ստանում է “rütbe-i salise” տիտղոսը (Օսմանյան պաշտոնյաների աստիճան) այնուհետև՝ “փաշա” տիտղոսը:¹⁶⁰

1915թ Էմիր փաշան մոտ 50 տարեկան էր: Հայերի տեղահանությունները նրան հիշեցնում էին չերքեզների աքսորը, որի ժամանակ նա կորցրել էր իր ընտանիքը: Նա կարծում էր, որ Օսմանները հայերի հանդեպ մտադիր էին անել այն, ինչ ռուսներն էին արել չերքեզների նկատմամբ:¹⁶¹ Նա ոտքի ելավ այդ անարդարության դեմ և որոշեց գործի անցնել: Նա Կիզիլիրմակ դաշտավայրում աշխատող հայերին ներկայացրեց որպես իր ազարակի աշխատողներ՝ նրանց փրկելու համար: 150 երիտասարդների թաքցրեց Գեմերեկի իր մեծ ազարակում: Երբ նա լսեց Աղդաղ լեռան լանջերին դիմադրող հայերի գոյության մասին, որոշեց օգնել նրանց: “*Քանի որ ես ի վիճակի չեմ կանգնեցնելու այս աղետը, ես պետք է նվազագույնը օգնեմ դիմադրողներին*”, մտածում էր նա: Նա կապվեց Աղդաղ լեռան ֆիդայիների հետ և ասաց, որ կարող է նրանց հրացաններ և մարդիկ տրամադրել:

Մի երեկո ֆիդայիների մի խումբ այցելեց Էմիր փաշային իր տանը: Էմիր փաշան նրանց տվեց նոր հրացաններ: Նա զգացումնաբային և քաջարեղող խոսք ասաց նրանց, ինչպես նաև մի բան, որը անսպասելի էր՝ հաշվի առնելով 1915թ հանգամանքները. “*Հիմա խոստացեք ինձ իմ զավակներ, որ դուք*

¹⁵⁹ Էմիր փաշայի կյանքի մասին. հայկական աղբյուրներ, TBMM տարեգրություններ, նրա ընտանիքից և Օսմանյան արխիվների գրառումներից ստացված տեղեկությունները տարբեր են: Նազար Գաբիկյանը և Գյուլբենկ Գալուստյանը պատմում են, թե ինչպես է Էմիր փաշան օժանդակել իրենց դիմադրությանը և որ նա աքսորվել էր, երբ դեռ երեխա էր: Նա եկել էր Սիվաս, կորցնելով իր ամբողջ ընտանիքին և մնացած ամեն ինչը, և որ Ալի աղան նրան իր թևի տակ էր առել: *La résistance héroïque d'Akdagh*, Նազար Գաբիկյան, Գյուլբենկ Գալուստյան, Մարսել, 1932թ (հայկական տպագրություն)

TBMM տարեգրությունը պատմում է, որ կացարանների գործադիր Մեհմեդ Ալի բեյը որդեգրել է նրան: Ըստ Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվների Էմիր փաշան Ալի Մահիր բեյի որդին է: Քանի որ նրա ծնունդը չի գրանցվել արխիվում, հնարավոր է, որ Ալի Մահիր բեյը նրան որդեգրել է: 1861թ մայիսի 20-ին չերքեզ ներգաղթյալների ղեկավարներից մեկի՝ Կուլասսի աստիճանին (Օսմանյան բանակի պաշտոնյա, որը բարձր է կապիտանից և ցածր մայորից) և Մեջիդիեյե ժապավենին արժանացած հանգուցյալ Իբրահիմ բեյի “տիտղոսը և ժապավենը” տրվեցին նրա որդուն՝ Ալի Մահիր բեյին: Այնուհետև, մենք տեսնում ենք, որ 1895թ Էմիր փաշան որոշ ժամանակ մեղադրվեց “բանդիտիզմի” մեջ և աքսորվեց Խարբերդ: BOA.A.)MKT.MHM.219/86,10/Za/1277, OYUBEO.499/37380,20/R/1312

¹⁶⁰ Ըստ Մելջուկ Դումանի “Էմիր փաշայի համար, ով ամուր կապեր էր հաստատել Սադեթին փաշայի հետ, հեշտ էր ռեժիմի համակարգում ստանալ փաշայի տիտղոսը:” *1.Dönem Sivas Milletvekilleri ve siyasi hayattaki yerleri*, Cumhuriyet Dönemi Sivas Semp. 2008թ: Գաբիկյանը և Գալուստյանը պատմում են, որ այս տիտղոսը նրան տրվել էր պատերազմի ժամանակ բանակին օգնելու համար: *La résistance héroïque*, մեջբերում 68-րդ էջից: Մենք տեսնում ենք, որ Օսմանյան արխիվներում նա հիշատակվում է որպես փաշա 1909թ սկսած: OYU, BEO.3545/265818,19/R/1327

¹⁶¹ Գաբիկյանը և Գալուստյանը Էմիր փաշայի զգացումները և մտքերը նկարագրում էին մեջբերումներով, մեջբերումները ավելի երկար էին քան նա էր ասել: Հասկացվում է, որ երկու տարվա ընթացքում նրանք շատ մտերիմ ընկերներ էին դարձել Էմիր փաշայի հետ:

կձգտեք փրկել ձեր անբախտ եղբայրներին ու քույրերին: Դուք քաջաբար կկռվեք: Նրանք, ովքեր հրաժարվում են զենք վերցնել և եսասիրաբար են իրենց պահում, երբ իրենց ժողովուրդը դժվար ժամանակների միջով է անցնում և կյանքի ու մահվան կռիվ է տալիս, նրանք, ովքեր իրենց ժողովրդին լքում են տառապանքների ու դաժանության մեջ, արժանի չեն հարգանքի: Իմ զավակներ, դուք հայ եք, իսկ ես մուսուլման: Անիծված լինեք, եթե չպաշտպանեք ձեր ժողովրդին”՝Նա ստացավ բոլոր ֆիդայիների խոստումները, որ նրանք հավատարիմ կմնան իրենց պայքարին և այնուհետև ճանապարհեց նրանց համբուրելով նրանց ճակատները:¹⁶²

4000 մարդ, ովքեր թաքնվել էին Ադդաղ լեռան քարանձավներում իրենց ընտանիքների հետ, Էմիր փաշայի օգնությամբ դիմադրեցին մինչև 1917թ: Նրանք շրջանում մնացին մինչև 1922թ, իսկ հետո քեմալական ուժերի գալու հետ գնացին Մասուն, այնուհետև՝ Ստամբուլ:

Ադդաղ լեռան դիմադրողներից երկուսը՝ Նազար Գաբիկյանը և Գյուլբենկ Գալուստյանը 1930-ական թթ հաստատվեցին Ֆրանսիայում և հրապարակեցին իրենց հուշերը, որտեղ պատմեցին Էմիր փաշայի պատմությունը: Մյուս վկաները հաստատում են, որ Էմիր փաշան մեծ դիպիկ էր դիմում՝ փորձելով օգնել հայերին: 1919թ Ադանայից գրած նամակում Ս. Մ. Մակարյանը պատմում է, թե ինչպես են կոտորվել Գեմերեկի հայերը, և ինչպես է իր ընտանիքը կարողացել փրկվել երկու տարի հանդես գալով որպես մուսուլման: Սակայն, որոշ ժամանակ անց սկսվեցին նաև մահմեդականացած հայերի վրա հարձակումները: “Երրորդ տարում նրանք ինձ նույնպես տարան սպանելու: Ես փրկվեցի սպանվելուց շնորհիվ Միվասի չերքեզ Էմիր փաշայի” ասում է նա:¹⁶³ Նա մանրամասներ չի հաղորդում, թե ինչպես է փրկվել, սակայն նրա վկայությունից հասկացվում է, որ Էմիր փաշան իր ենթակայության շրջանի հայերին պաշտպանել է նաև 1917թ հետո: Օնիկ Մելիքյանը, ով Միվասի Բրաբերդ գյուղից էր, իր վկայությունում անմիջականորեն խոսում է Էմիր փաշայի մասին՝ նրան անվանելով “Չերքեզ նահանգապետ”, առանց տալու նրա անունը:¹⁶⁴ Շատ անհաջողությունների միջով անցնելուց հետո Մելիքյանը մի քանի ուրիշ մարդկանց հետ կարողացավ փախչել տեղահանությունների շարասյունից: Էմիր փաշան նրանց տրամադրեց զենք, սնունդ ու հագուստ և պատմեց հարևան գյուղերում իրավիճակի մասին, այն մասին, որ ճանապարհները Միվասից մինչև Բրաբերդ լի են դիակներով: Ջարդերն իրականացնողների մասին խոսելիս նա օգտագործում էր “կատաղած շներ” արտահայտությունը: Նա հանգստացրեց հուսահատված Մելիքյանին և նրա ընկերներին: Խոստացավ օգնել նրանց ցանկացած ձևով, որ կարող էր, քանի դեռ ինքը ողջ է: Հետագայում նա իր մարդկանց ուղարկեց օգնելու նրանց, քանի դեռ Մելիքյանը և նրա ընկերները թաքնվում էին Հաֆիկ ամրոցում:

Մինչ Էմիր փաշան մոբիլիզացնում էր իր բոլոր միջոցները հայերին պաշտպանելու համար, նրա որդի Համիդը մասնակցում էր ջարդերին:¹⁶⁵ Անհնար է չցնցվել, երբ կարդում ես հայր և որդու հակամարտության մասին, որ նկարագրել են Գաբիկյանը և Գալուստյանը.

“Էմիր փաշան հրաժարվել էր իր որդուց, ով բառացիորեն մսագործ էր: Մի անգամ նա կանչեց որդուն,

¹⁶² *La résistance héroïque*, մեջբերում 68-71 էջերից

¹⁶³ *Չայն Տառապելոց* (Acı Çekenlerin Sesi), Բ. Տոնապետեան, էջ 331, Հակոբ Թուրաբյան Բասիմեվի, 1922թ, Փարիզ

¹⁶⁴ *Մարդկություն՝ անմարդկութեան մէջ* Շաքէ Եայլայեան-Մէթեան, էջ 42-62, Xlibris, 2011թ: Պետական գործիչների պաշտոնները շփոթելը հաճախ է հանդիպում ցեղասպանությունից փրկվածների վկայություններում: Ջարմանալի չէ, որ մարդիկ հատկապես գյուղական շրջանների բնակիչները, անձանոթ են պետական հիերարխիային: “Փաշա” կոչվող անձը, ով իր հրամանատարության տակ ունի հարյուր հոգի, կարող է իրենց աչքին ամենաբարձրագույն պաշտոնյան թվալ: Հստակ է, որ այստեղ չի հիշատակվում Միվասի նահանգապետ Մուամմերը, ով խստորեն ենթարկվում էր ջարդերի վերաբերյալ հրամաններին: Մելիքյանի պատմության որոշ մանրամասներ, օգնության տեսակը (մարդկանց և զենք տրամադրելը) և այն հանգամանքը, որ շրջանում ուրիշ այդպիսի մարդ չկար, ով հայերին նման օգնություն էր տրամադրում, մեզ ստիպում է մտածել, որ նշված “Չերքեզ նահանգապետը” Էմիր փաշան էր:

¹⁶⁵ “Էմիր փաշայի որդի Համիդը” Ուզունյայլա հրոսակախմբերի առաջնորդն էր, ովքեր թալանում էին տեղահանության շարասյունները և նրանց մահվան դատապարտում: *Le génocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 535, 544, 550-րդ էջերից *Le livre souvenir de Sebastia*, էջ142

ապտակեց դեմքին և ասաց. “*Դու մահաբեր ստահակ, կգա մի օր, երբ քեզ կկախեն քո արարքների համար: Քեզ կախադանի կղատապարտեն և ես կլինեմ այն մարդը, ով կձգի քո պարանր: Հետո ես կնստեմ քո դիակի մոտ և մի բաժակ ռակի կխմեմ: Միայն այն ժամանակ իմ սիրտը կհանգստանա*”:

Արդյո՞ք այս խոսակցությունը իսկապես տեղի է ունեցել, թե դա մի պատմություն է, որ Գաբրիկյաննու Գալուստյանը ցանկանում են վերագրել Էմիր փաշային, ում նկատմամբ նրանք մեծ հարգանք էին տածում, հնարավոր չէ որոշակի պատասխան տալ: Չնայած դրան, կարող ենք գուշակել, որ լինելով մարդ, ով ասում է Միության անդամներին, ով իրեն չի զսպում իր մտքինը բացահայտ ասելիս՝ հաճախ կոպիտ ձևով, Էմիր փաշան լուրջ ընդհարում ուներ իր որդի Համիդի հետ, ով մասնակցում էր ջարդերին:

Երբ մենք փորձում էինք կապվել Էմիր փաշայի ընտանիքի հետ՝ ավելի շատ տեղեկություն ստանալու համար, մենք որոշակի կասկածներ ունեինք: Սուլմազ Մարսանը, ում հետքը մենք գտանք, Էմիր փաշայի որդի Համիդի թոռնուհին էր, և ոչ նա, ոչ էլ ընտանիքի մյուս անդամները որևէ բան չգիտեին բոլոր այս իրադարձությունների մասին: Այս ժամանակահատվածի մասին ընտանիքում երբեք չեն պատմել: Ինչպե՞ս կարող էինք մենք Սուլմազ Մարսանին ասել, որ իր նախապապը պաշտպանել է հարյուրավոր հայերի, իսկ իր պապը մասնակցել է ջարդերին: Մեր հարցազրույցի ժամանակ նա մեզ լսում էր մեծ հասունությամբ, ապշած և մեծապես ազդված: Ցեղասպանությունը վերապրածների ցուցմունքները ցույց էին տալիս նրա նախապապի այնպիսի հատկանիշներ, որոնց մասին նա երբևէ տեղյակ չի եղել: Սուլմազը տեղյակ չէր նրա՝ իր որդի Համիդի հետ ունեցած այն զրույցի մասին, որը հիշատակեցինք վերևում: Նա ասաց, որ իրենք այլևս չունեն այն մեծ ազարակներն ու տները, որոնցում հարյուրավոր մարդիկ էին թաքնվել: Նա մեզ պատմեց, որ փաստաթղթերը, այդ թվում նաև հավանաբար իր նախապապի հուշերը, որոնք պատկանում էին Էմիր փաշային, տարիներ առաջ տրվել են պատմաբան Ջեմալ Քութային, սակայն վերջինս դրանց վերաբերյալ հետազոտություն չի կատարել, ոչ էլ փաստաթղթերը վերադարձրել է ընտանիքին: Ընտանիքը փորձեր է կատարել ետ ստանալ փաստաթղթերը, սակայն դա նրանց չի հաջողվել:¹⁶⁶ Վերոնշյալ այդ փաստաթղթերի վերհանումը պետք է որ պարզաբանի Էմիր փաշայի պատմության շատ կողմերը:

Էմիր փաշայի ետպատերազմյան կյանքը համապատասխանում է այն ժամանակաշրջանին, որն ավելի հայտնի էր հանրությանը: Մինչ Մուստաֆա Քեմալը զբաղված էր 1919թ Միվասի կոնգրեսի կազմակերպմամբ Էմիր փաշան իր են հեռու էր պահում նրանից և նրա վարած պայքարից: Նրան դուր չէր գալիս, այն փաստը, որ Միություն և առաջադիմություն կուսակցության անդամները Մուստաֆա Քեմալի շուրջն էին հավաքվել: Ուստի, նա սկզբում ցանկանում էր խանգարել Միվասում կոնգրեսի կազմակերպմանը: Սակայն նրան համոզելու համար Մուստաֆա Քեմալը գտավ այն թեման, որի նկատմամբ Էմիր փաշան զգայուն էր՝ չերքեզ լինելու հանգամանքը: Չերքեզական ծագումով մարդկանց, ինչպիսիք էին Ռաուֆ Օրբեյը և Բեքիր Սեմին, ուղեկցությամբ նա Էմիր փաշային համոզեց, որ չերքեզների իրավունքները պաշտպանված կլինեն: Դրանից հետո Էմիր փաշան Մուստաֆա Քեմալի համար մոբիլիզացրեց իր բոլոր միջոցները: Նա պառլամենտի առաջին նստաշրջանում ընտրվեց Միվասի պատգամավոր: Սակայն, հակառակ խոստացվածին, նրան անհանգստացնում էր այն հանգամանքը, որ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում չերքեզների իրավունքների պաշտպանությանը և որ “թուրք” բառը գերիշխող էր: Այն ելույթը, որ նա ունեցավ պառլամենտում, որում ասաց. “*Ես խնդրում եմ, որ մենք չօգտագործենք միայն թուրք լինելը: Մենք պառլամենտում ենք ոչ միայն թուրքերի անունից: Աղերսում եմ ձեզ չխոսել միայն թուրքերի մասին, այլ մուսուլմանների, կամ անգամ՝ օսմանցիների*”, այդ անհանգստության նշանն էր: Որոշ ժամանակ անց, Գլխարկների մասին ակտի դեմ հայտարարության պատճառով, չնայած նրան, որ նա կապ չունեի այդ հայտարարության հետ, և ցույց տալով նրա որդու անդամությունը Առաջադիմական հանրապետական կուսակցությանը, նա հայտնվեց մեղադրյալների աթոռին և դատապարտվեց երեք տարվա աքսորի Իսպարտայում: Նրա ամբողջ ունեցվածքը, այդ թվում՝ մեծ ազարակները, որտեղ նա թաքցնում էր հայերին, հափշտակվեցին: Նա մահացավ 1940թ Միվասում: Էմիր փաշան հայտնի էր որպես իմաստուն և դիվանագետ մարդ, ով սիրում էր հյուրեր ընդունել, որսորդության գնալ: Նա երկար տարիներ կիիշվի իր բանաստեղծություններով, որոնք նա ընդունում էր

¹⁶⁶ Հարցազրույց Սուլմազ Մարշանի հետ, հուլիս 2014թ, Ստամբուլ

որպես կյանքի փիլիսոփայություն և որոնք նրա ընկերները հաճախ լսում էին նրանից.

“Կուզենայի, որ ոչ ոք չկարողանար քեզ վնասել, ոչ էլ դու ուրիշին վնասելիք, Կուզենայի երբեք չտխրելիք, ոչ էլ ուրիշին տխրեցնելիք, Երբեք չվնասելիք որևէ մեկին, ոչ էլ ուրիշը քեզ վնասելիք Երբեք չհարվածելիք ուրիշին, ոչ էլ ուրիշը քեզ հարվածելիք:”¹⁶⁷

Միվաս նահանգի մյուս Առաքինի կերպարները

Մերզիֆոնի երկու թուրքերը

պատժի ենթարկվեցին վախեցնելու համար այն անձանց, ովքեր կարող էին օգնել իրենց հայ հարևաններին: Երկու եղբայրներին, ովքեր բռնվել էին հայերին իրենց տներում թաքցնելիս, ձեռքալվեցին և այնուհետև ձեռքները կապած ման տվեցին մուսուլմանական թաղամասերի փողոցներով: Այս միջադեպը նպատակ ուներ սաստել այն անձանց, ովքեր հնարավոր է պաշտպանեին **Մերզիֆոնի հայերին:**¹⁶⁸ Սակայն, ցավոք սրտի, **Մերզիֆոնի մասին ցուցմունքներում այս երկու թուրքերի անունները չեն նշվում:**

Մեսուդիյեի հայտնիները

փորձեցին փրկել Օրդուի հայերին, ովքեր քաղաք էին հասել խճուկ վիճակում և ում հրամայվել էր տեղահանել, չնայած նրանք մահմեդականացել էին: Նրանք հեռագիր ուղարկեցին Շեյխ Ալ-Իսլամին՝ ասելով. “*Կասկած չկա, որ այս մարդիկ անցել են իսլամի*”, “*Իրենք թույլ չեն տա, որ այս Օսմանյան քաղաքացիներին վերաբերվեն շարիաթի օրենքներին հակառակ*” և պահանջեցին, որ “*նրանց բնակեցնեն պատշաճ վայրում:*”¹⁶⁹

Հեռագրի վրա առկա են **Ալի Չավուշզադե Իսմայիլի, Մերդարզադե Մուստաֆայի, Մուֆտու Իբրահիմի, քաղաքի իմամ Արիֆի և Մերիյեի գլխավոր գործակալ Ռահիֆի ստորագրությունները:** Այս անուններից միայն Մերդարզադե Մուստաֆայի մասին մեզ հաջողվեց ավելի շատ տեղեկություն գտնել: Մերդարզադե Մուստաֆան, ով հանրապետական շրջանում վերցրել էր Աթայ ազգանունը, որպես Շապին Գարահիսարի պատգամավոր, պառլամենտի անդամ էր: Այնուհետև նա միացավ Էրզրումի կոնգրեսին և դարձավ պատգամավոր առաջին պառլամենտում: Չնայած նրան, որ որոշ աղբյուրներ նշում են, որ նա անկախ պատգամավոր էր, նա հայտնի էր Միություն և առաջադիմություն կուսակցության հետ իր մտերմությամբ:¹⁷⁰ Որոշ թերթերի զեկույցներ նշում են, որ Շապին Գարահիսարի հայերը Մերդարզադե Մուստաֆային համարում էին 1896թ ջարդերի պատասխանատուներից մեկը:¹⁷¹ Քանի որ հստակ տեղեկություն չկա 1915թ նրա վերաբերմունքի մասին, մենք նրա անունը չենք թվարկում “Առաքինիների” շարքում: Չնայած դրան, ելնելով նրա ուղարկած հեռագրից, կարելի է ասել, որ նա դեմ էր մահմեդականացած հայերի տեղահանություններին:

Կադիր Չավուշը Օդեկ գյուղից

անունը էր տրամադրում Հարություն Շիզիցյանին և նրա ընկերներին, ովքեր թաքնվում էին Դիվրիզի լեռներում: Նա նրանց մեկ տարի ու կես օգնություն էր առաջարկում՝ մեծ վտանգների դիմելով:¹⁷² Մեկ

¹⁶⁷Գաբրիլյան և Գալուստյանը մեջբերում են այս բանաստեղծությունը հայերեն տառերով գրված թուրքերենով: Բանաստեղծությունները շատ նման են Մուվակիզադե Մուհամեդ Պերտևի պոեմին, ով հայտնի է, որ մոտ էր Մեվլեվի միաբանությանը:

¹⁶⁸ *Les Mémoires de Mgr Jean Naslian*, մեջբերում II. Հատոր, էջ 71, նշում 26

¹⁶⁹ Հեռագրին առաջին անգամ հրապարակվել է հետազոտող Սաիդ Չեթինօզլուի կողմից *1915'te Mesudiye'den yükselen vicdanın sesi*, Թարաֆ թերթ, 18.11.2010

¹⁷⁰ *Milli Mücadelede Kongreler Dönemi ve İttihatçılık Sorunu*, Դերվիշ Կիլիսչկայա, Modern Türklük Araştırmaları Dergisi, էջ 103-133, մարտ 2011, Անկարա

¹⁷¹ *1908 հեղափոխությունը Թուրքիայում*, Այկուտ Կանսու, էջ 277, նշում 201, Բրիլլ, 1997թ

¹⁷² Չայն Տառապեղոց (Acı Çekenlerin Sesi), Բ. Տոնապետեան, մեջբերում 243-րդ էջից

այլ վկա Դիվրիզից՝ Արթին Շիգյանը, պատմում է, թե ինչպես էին Գարահիսարի և Օդեկի գյուղացիները իրենց այդքան օգնություն ցույց տալիս, և ինչպես էր Կադիր Չավուշը իրենց ուտելիք բերում 21 մարդու համար:¹⁷³ Դրա պատճառով վերջինս մեծ ճնշումների էր ենթարկվում պետական պաշտոնյաների կողմից, և նրա վրա միշտ ճնշում էին գործադրում, որպեսզի իրենց ասեք թաքնվող հայերի գտնվելու վայրը: Նա ստիպված էր մի քանի ամիս որպես փախստական ապրել լեռներում: Սակայն, երբ զինվորները սպառնացին այրել նրա տունը, նա ստիպված էր հանձնվել և նրանց ասել հայերի գտնվելու վայրը: Դիվրիզի հայերի մի մասը, ովքեր թաքնվում էին լեռներում, հասան Երզնկա քաղաք, որը վերահսկում էր ռուսական բանակը, և կարողացան փրկվել: Կադիր Չավուշի թոռ Մեհմեդ Ռիզա Յուկսելը մեզ պատմեց, որ իրենց ընտանիքում հաճախ պատմում էին, թե ինչպես էր իր պապիկը ուտելիք տարել թաքնվող հայերին: Նա նաև ավելացրեց, որ այդ մարդիկ ցանկանում էին իրենց ոսկին իր պապիկին վստահել՝ ասելով. *“Ղու պահիր դրանք, էթե կարողանանք վերադառնալ, կարող ենք վերցնել դրանք քեզանից”*, սակայն իր պապիկը հրաժարվել է:

Զարայից Ալի էֆենդիի

պատմությունը հազվադեպ պատմություն է 1915թ ընկերությանը հավատարիմ մնալու մասին: Լինելով Զարայի քաղաքապետ Ալի էֆենդին միաժամանակ նաև ձեռնարկատեր էր: Քաղաքի վաշտի կարիքները հոգալու համար նա հիմնադրեց Զարայի առաջին այլուրի գործարանը:¹⁷⁴ Նա շրջանում ընդարձակ հողեր և ագարակներ ունեցող Միհրան Վարդանյանի ընկերը և բիզնեսի գործընկերն էր: Միհրան էֆենդիի եղբայրներ բժիշկ Բաղդասար Վարդանյանը և դեղագործ Վահան Վարդանյանը Սարիխամիշի ճակատի զինվորներ էին: 1915թ հունվարին Միհրան էֆենդին իմանում է, որ իր եղբայրը հիվանդացել է տիֆի տենդով: Նա գնում է ռազմաճակատ, գտնում իր եղբորը և բերում տուն՝ բուժելու համար: Նրան հաջողվում է փրկել իր եղբորը, սակայն ինքն է հիվանդանում նույն հիվանդությունով: Նա մահացավ 1915թ փետրվարին: 1915թ մարտի վերջին Բաղդասարը և Վահանը միասին ձերբակալվեցին քաղաքի մյուս հայտնիների հետ միասին և սպանվեցին: Միհրան էֆենդիի կինը՝ Ռեբեկան, մնաց մենակ յոթ երեխաների հետ: Ալի էֆենդին խոսք էր տվել Միհրան էֆենդիին մինչ նրա մահանալը, որ եթե նրա հետ ինչ-որ վատ բան պատահի, Ալի էֆենդին հոգ կտանի նրա ընտանիքի մասին: Երբ նա տեղեկացավ, որ Զարայում սկսվելու են տեղահանությունները, նա Ռեբեկային ասաց, որ վերցնի երեխաներին և գնա իր հետ առանց ժամանակ կորցնելու: Շտապելով Ռեբեկան իր հետ վերցրեց չորս բան՝ Միհրան էֆենդիի հաստ մուշտակը, որը նա կրում էր ձյան ժամանակ, թանգիֆ, ծանր պղնձե մոմակալ և շաքար:

Ալի էֆենդին նրանց տարավ այլուրի գործարանին մոտ գտնվող ագարակատուն՝ քաղաքից դուրս:¹⁷⁵ Ցերեկվա ընթացքում նրանք թաքնվում էին տանը առանց որևէ ձայն հանելու, միայն գիշերը կարող էին բարձրանալ տանիք՝ մաքուր օդ շնչելու: Այն իրերը, որ Ռեբեկան ընտրել էր իր հետ բերելու համար, պարզվեց շատ օգտակար եղան նրա համար: Նա մուշտակը օգտագործում էր որպես ծածկոց, նա շաքարը փոքր կտորների բաժանեց պղնձե մոմակալով և փաթաթեց թանգիֆի մեջ, այնուհետև դրանք տվեց փոքրիկներին որպես ծծակներ, որպեսզի նրանք լաց չլինեն և չմատնեն իրենց գտնվելու վայրը: Ալի էֆենդին ամեն օր ուտելիք էր բերում նրանց համար:

Ռեբեկայի մայրը, ով ապրում էր Միվասում, ավագ երեխաներից երկուսին՝ Մուշեղին և Արմենուհուն, վերցրեց իր մոտ՝ համարելով, որ Միվասում ավելի ապահով էր: Սակայն, Միվասը ապահով չէր: Երբ Ալի էֆենդին իմացավ, որ երեխաները Միվասում են, նա իր վստահելի կառապաններից մեկին ուղարկեց՝ երեխաներին ետ Զարա վերադարձնելու համար: Զարայի ճանապարհին զինվորները կանգնեցրին մեքենան: Երբ կառապանը հաստատապես հայտարարեց. *“Ալի էֆենդին ինձ հրամայել է այս երեխաներին տանել Զարա առանց մի մագ անգամ վնասելու նրանց գլխից, և դա այն է ինչ ես պատրաստվում եմ անել: Եթե ուզում եք դիպչել նրանց, նախ պետք է ինձ ոչնչացնեք”*, նրանց թույլ տվեցին անցնել: Ալի էֆենդին, երեխաներին Զարա բերելով, փրկեց նրանց կյանքը: Միվասում գտնվող ընտանիքի բոլոր անդամները տեղահանվեցին, նրանցից փրկվեց միայն մեկը:

¹⁷³Նույն աղբյուրը, տես էջ 276

¹⁷⁴*Dünden bugüne Zara*, Ադնան Մահիրօղուլարի, 1999թ, Միվաս

¹⁷⁵Հարցազրույց Ալի էֆենդիի թոռ Քենան Քուրդի հետ, դեկտեմբեր, 2014թ, Ստամբուլ

Երբ հայտարարվեց, որ նրանք, ովքեր թաքցնում են հայերին նույնպես կպատժվեն, Ալի Էֆենդին առաջարկեց Ռեբեկային միայն արտաքննապես մահմեդական դառնալ: Երբ Ռեբեկան տատանվում էր, նա նրան հավաստիացրեց. “Իմ մտադրությունը մուսուլման բնակչությանը ավելացնելը չէ: Նրանց քանակը բավարար է: Դուք կարող եք արտաքննապես մահմեդական լինել մինչև այս բարդ ժամանակները անցնեն, սակայն կարող եք սրտով և մտքով քրիստոնյա մնալ”: Ընտանիքը արտաքննապես մահմեդական դարձավ, նրանք մուսուլմանական անուններ վերցրեցին: Նման ձևով նրանք կարողացան մնալ Ջարայում մինչև 1919թ՝ խոսելով միայն թուրքերեն:

Նրանց կրոնափոխությունից հետո Վարդանյաններից Համագասպը տեսավ, թե ինչպես են հարձակվում մի մահմեդականացած հայ երեխայի վրա: Նա օգնեց տղային և փրկեց նրան:

Սակայն հաջորդ օրը նույն տղաները փորձեցին դանակներով հարձակվել Համագասպի վրա: Ալի Էֆենդին տեղեկացրեցին միջադեպի մասին, և նա խոսեց այդ տղաների ընտանիքների հետ: Նա նրանց ասաց, որ Վարդանյանները իր պաշտպանության տակ են, և ով փորձի վնասել նրանց, շատ թանկ կվճարի դրա համար: Այս իրադարձությունից հետո, ոչ ոք այլևս նրանց չձաղրեց՝ անվանելով “կրոնափոխներ”:

Այն ժամանակահատվածում, երբ նրանք ապրում էին Ջարայում, Ալի Էֆենդին շարունակում էր պաշտպանել նրանց: 1919թ մարտին ընտանիքը բնակություն հաստատեց Ստամբուլում, այնուհետև՝ 1921թ ԱՄՆ-ում: Համագասպի որդի Ռիչարդ Վարդանյանը, ով մեզ պատմել է այս պատմությունը, ասաց, որ Ալի Էֆենդիի անունը հարգանքով և երախտիքով են հիշում իրենց ընտանիքում: Նա ասաց, որ նրա պատմությունը գիտեր անգամ, երբ շատ երիտասարդ էր:¹⁷⁶

Ռիչարդ Վարդանյանը գնացել է Ջարա 1986թ, հանդիպել Ալի Էֆենդիի թոռներին, սակայն հետագայում կորցրել է նրանց հետքը: Մենք գտանք Ալի Էֆենդիի թոռ Այդին Քուրդի հետքը, ով իր պապիկի նման որոշ ժամանակ Ջարայում քաղաքապետ է եղել: Ըստ Այդին բեյի երեխաներ Քենանից և Յուսուֆ Ջիա Քուրդից ստացած մեր տեղեկությունների, թե ինչպես է Ալի Էֆենդին պաշտպանել Վարդանյաններին, իրենց ընտանիքում փոխանցվել է սերնդե սերունդ: Նրանք նշեցին, որ Ալի Էֆենդին կապված էր կյանքի բազմամշակույթային ձևին, ինչը հատկանշական էր Ջարայի համար: Թե այս պատճառով, և թե Միհրան Էֆենդիին իր տված խոստումը պահելու համար նա պաշտպանում էր Վարդանյանների ընտանիքին:

Օնիկ Մելիքյանը և **Քրաբերդ** (Գունյամաչ) գյուղից իր ծանոթները, ում պաշտպանում էր Էմիր փաշան, փրկվեցին շատ մարդկանց օգնությամբ: **Վեսֆի բեյը**, մի զինվոր, ով ապրում էր մոտակա գյուղում, նրանց տեղեկացրեց, որ գյուղի տղամարդիկ տեղահանվելու են, և նրանք կարողացան ժամանակին փախչել: Գյուղի ամենահարուստ մարդը, Նազարեթ աղան, նախ փրկվեց տեղահանություններից դառնալով մահմեդական, սակայն, երբ սկսեցին տեղահանել նաև մահմեդականներին, նա թաքնվեց իր հարևան Կարագիլօղլուի տանը: Որոշ ժամանակ Քոչիսարի գլխավոր գործակալն օգնում էր Մելիքյանին, այնուհետև, հրամանատար չերքեզ Ռիզա բեյը հետևեց, որ նրանք Կեսարիայով առանց խնդիրների հասնեն Ադանա:¹⁷⁷ Հնարավոր չեղավ պարզել նշված մարդկանց ինքնությունը, ոչ էլ նրանց այսօր կենդանի բարեկամներին գտնել:

VI. Էրզրումի նահանգ

Էրզրումի նահանգը վայրագ ջարդերի թատերաբեմ դարձավ 1915թ, սակայն, այն նաև ականատես եղավ շատ դիմադրությունների, չնայած դրանց մի մասի ազդեցությունը սահմանափակ էր:

¹⁷⁶ Ռիչարդ Վարդանյանի նամակը Թաներ Աքչամին, օգոստոս, 2014թ

¹⁷⁷ *Մարդկություն՝ անմարդկութեան մէջ Շաքէ Եայլայեան-Սէթեան*, մեջբերում 4-րդ էջից և 58-59 էջերից

Բայազետի փոխգավառապետ Բաղ էֆենդի

Մենք սակավ տեղեկություն ունենք Բաղ էֆենդիի մասին, ով փրկեց Բայազետի (Արևելյան Բայազետ) հայերին՝ նրանց տեղյակ պահելով վերահաս ջարդերի մասին, երկու աղբյուրներից: Ըստ Գևորգ Բուռնագյանի, ում ընտանիքը փրկվել էր Բայազետում, Երզնկայում կազմակերպվել էր հանդիպում, որին մասնակցում էին շրջանի վարչական պաշտոնյաները և Միություն և առաջադիմություն կուսակցության անդամները: Որոշվեց, որ տեղահանություններն ու ջարդերը կիրականացվեն Միություն կուսակցության պատասխանատու քարտուղարի վերահսկողության ներքո: Բայազետի փոխգավառապետ Բաղ էֆենդին ասաց, որ ինքը կձեռնարկի անհրաժեշտ նախազգուշական միջոցառումները և հրաժարվեց, որ կուսակցությունը վերահսկիչ ուղարկի: Հենց որ նա վերադարձավ Բայազետ, նա հավաքեց քաղաքի հայտնի հայերին, նրանց տեղեկացրեց մոտեցող վտանգի մասին և խորհուրդ տվեց փախչել ռուսական սահմանին մոտ գտնվող վայրեր: Ըստ Բուռնագյանի, եթե Բաղ էֆենդին նրանց տեղյակ չպահեր, հաջորդ օրը Բայազետի ողջ հայությունը կկոտորվեր:¹⁷⁸

Նմանատիպ վկայություն է տվել մեզ նաև Միշել Մարյանը, ում մենք հանդիպեցինք Փարիզում: Բաղ էֆենդին փրկել էր նրա ընտանիքը և Բայազետի մնացած հայերին՝ նրանց տեղեկացնելով ջարդերի մասին նախապես և նրանց հնարավորություն տալով փախչել:¹⁷⁹ Երկու զեկույցում էլ Բաղ էֆենդիի պաշտոնը նշվում է որպես «փոխգավառապետ»: Մակայն, այդ ժամանակ Բաղ էֆենդի անունով վարչական ծառայող չկար: Հաշվի առնելով, որ նրա անունը կարող է սխալ արտասանված լինել որպես Բաղ, Բահ, Բահի, Բահր կամ անգամ Բահրի, մենք շրջանում այս անունով գավառապետ չգտանք:

Մեկ այլ ինդրահարույց հարց էր այն հանգամանքը, որ 1914-1918թթ ընթացքում Բայազետը վերահսկվում էր Ռուսաստանի կողմից: Հաշվի առնելով այդ իրադրությունը՝ վերոնշյալ պաշտպանությունը կարող էր տեղի ունեցած լինել 1914թ կամ 1918թ հետո: 1918 Մարդիկին փոխնահանգապետ Հիլմի բեյը, ով ինչպես վերը տեսանք, դեմ էր ջարդերին, կարճ ժամանակով նշանակվեց Բայազետի փոխգավառապետ:¹⁸⁰ Եթե նշված փոխգավառապետը Հիլմի բեյն էր, ապա դժվար է հասկանալ, թե ինչու են երկու վկաներն էլ նրա անունը հիշում որպես Բաղ էֆենդի: Մենք գիտենք, որ Հիլմի բեյը Բահրի անունով որդի ուներ, և որ հատկապես քրդերի մոտ տարածված էր որոշ մարդկանց անվանել նրանց որդիների կամ դստրերի անուններով, օրինակ՝ «Bavê Mistefe» (Մուստաֆայի հայր): Մակայն, մեզ չհաջողվեց որևէ տեղեկություն ձեռք բերել այն մասին, որ Բայազետի հայերը նույն ձևով անվանել են Հիլմի բեյին՝ օգտագործելով նրա որդի Բահրիի անունը:

Մեկ այլ հնարավոր տարբերակ է այն, որ Բաղ էֆենդիին սխալմամբ էին անվանում փոխգավառապետ: Հնարավոր է, որ նա հայտնի մարդկանցից էր կամ հոգևորական: Մենք գտել ենք մի Նախաբանդի Շեյխի, ում անունն էր Աբդուլբարի (այլ կերպ ասած՝ Բարի), ով շրջանում այդ ժամանակ մեծ ազդեցություն ուներ: Արդյոք Բարի էֆենդին էր, որ հայերին տեղեկացրեց ջարդերի մասին: Մենք բավարար տեղեկություն չունենք դա ասելու համար: Ուստի, Բաղ էֆենդիի ինքնությունը, ով պաշտպանել էր Բայազետի հայերին թերևս 1920թ, երբ քեմալական ուժերը ժամանեցին շրջան, ներկայումս անհայտ կմնա:

Գումեկի գյուղացիները և Իսմայիլ աղայի կինը

Հերդիֆի որոշ հայեր փախսան դեպի Գումեկ՝ ալեվիների գյուղ, երբ նրանց գյուղի վրա անսպասելի հարձակում կազմակերպվեց: Շատ վկայություններ կան այն մասին, որ Գումեկի որոշ մարդիկ, հատկապես Իսմայիլ աղայի կինը, պաշտպանել են նրանց: Հերդիֆից Մանուկ Մեծիկյանը պատմում է, որ գյուղացիները 3-4 ժամ դիմադրել են հարձակումներին, այնուհետև նրանց մի մասը փախել է դեպի

¹⁷⁸Les pratiques de sauvetage durant le génocide des Arméniens, Հասմիկ Թևոսյան, *La résistance aux génocides*, էջ 195, *Presses de la Fondation nationale des sciences politiques*, 2008թ, Փարիզ

¹⁷⁹Հարցազրույց Միշել Մարյանի հետ, դեկտեմբեր, 2014թ, Փարիզ

¹⁸⁰ՕԿՄ Ա.Ս.ԴՄԻՏ, 42/82, 15/В/1336

Գումեկ, իսկ մյուսները Մասկան: Նրանք, ովքեր փախան դեպի Մասկան, սպանվեցին: Ինչ վերաբերում է Գումեկի մարդկանց, վկայությունը ցույց է տալիս, որ Գումեկի բնակչության մի մասը մասնակցում էր ջարդերին, մի մասը պաշտպանում էր Հերդիֆի մարդկանց: **Իսմայիլ աղայի կինը** յոթ օր իր տանը թաքցրեց չորս մարդու, այդ թվում նաև Մանուկ Մեծիկյանին: Այնուհետև, մի ծեր մարդ, ով վկայության մեջ անվանվում է “*Kalışekh*”, ինչը քրդերեն նշանակում է “ծեր շեյխ”, եկավ և հայերին տարավ իր տուն: Նա գտավ Մեծիկյանի հարսին և երկու որդիներին և նրանց բերեց մյուսների մոտ: Նա նրանց իր տանը թաքցրեց 18 ամիս: Հետագայում Մեծիկյանը հասավ ռուսների կողմից վերահսկվող շրջան:¹⁸¹ Մեծիկյանի պատմածից հասկացվում է, որ “*Եթե ես չգնայի Դերսիս, նրանք ինձ մի օր էլ թույլ չէին տա ապրել: Գումեկի կամ Մասկանի մարդիկ հաստատ կկրակեին ինձ*”, որ իրենց համար անհնար էր երկար ժամանակ մնալ Իսմայիլ աղայի տանը և որ նշված “Ծեր շեյխը” Դերսիսից էր:

Մեկ այլ վկայություն պատմում է Հերդիֆի 150 ընտանիքից բաղկացած բնակչության մեծ մասի կոտորածի մասին, թե ինչպես քիչ քանակի հայեր ապաստան գտան Գումեկում, որը մի ժամվա ճանապարհ էր: Նրանց մի մասը փրկվելով հասան Էրզրում, որը ռուսական վերահսկողության տակ էր 1917թ ապրիլին՝ այն ժամանակ, երբ գրվել է վկայությունը: Մյուսները դեռ թաքնվում էին Իսմայիլ աղայի տանը:¹⁸²

Գումեկից (ներկայիս անվանումն է Բինգյուլի Չատակլայա գյուղ) Ալի Հայդար Սելբուզը պատմեց, որ այդ ժամանակաշրջանում հայերին պաշտպանած մարդկանց մասին հիշողությունը շատ վառ է: Ըստ Ալի Հայդար բեյի անօրինական զինված խմբերը հարձակում գործեցին Հերդիֆի վրա: Գյուղացիները Գումեկի կողմ փախած Հերդիֆի հայերին թաքցրեցին անտառի տարածքում 7-8 օր: Գումեկի որոշ մարդիկ այդ թվում՝ **Յուսուֆ աղան, նրա դուստր Ադիլը և բալ ընտանիքից Հասան Դեդեն** ուտելիք էին տանում հայերին: Ըստ Ալի Հայդար բեյի պաշտպանները Գումեկի գյուղացիներ էին, միայն Իսմայիլ աղան էր անտարբեր մնացել:¹⁸³ Հերդիֆից Մարգիս Արսիգյանը նշում է, որ Իսմայիլ աղան կանչում էր իրենց գյուղ՝ խոստանալով պաշտպանություն, սակայն հանձնում էր հրոսակախմբերին:¹⁸⁴ Չնայած դրան մյուս հայերի վկայությունները Իսմայիլ աղայի մասին խոսում են, որպես փրկչի, նրանք անգամ նրա պաշտպանողական վերաբերմունքը կապում են վերջինիս հայկական արմատների հետ: Միգուցե այն տարբերությունը, որով Իսմայիլ աղան պատկերված է տարբեր պատմություններում, թաքնված է առաջին վկայությունում շեշտվող հանգամանքի մեջ: Ըստ Մանուկ Մեծիկյանի յոթ օր իրենց տանը թաքցնում էր ոչ թե Իսմայիլ աղան, այլ նրա կինը: Մեր ուսումնասիրության ժամանակ մենք հանդիպել ենք այլ օրինակների, թե ինչպես որոշ անհատներ որոշում էին պաշտպանել հայերին, չնայած նրանց ամենամտերիմները մասնակցում էին ջարդերին: Ստացվում է, որ Գումեկում Իսմայիլ աղայի կինը, ում անունը չի հիշատակվում, անկախ բարեգութ վերաբերմունք է ցուցաբերում: Հերդիֆ գյուղի հողերը ջարդերից հետո բաժանվեցին Գումեկի և Մասկանի որոշ ընտանիքների միջև: Այս օրինակը նշան է, թե ինչպես որոշ ալեվի գյուղեր, որոնք լիովին ընդդիմանում էին 1915թ ջարդերին, ներգրավվեցին ջարդերի գործընթացին՝ ստանալով որոշակի խոստումներ:

Երզնկայի Երկան գյուղի բնակիչները

փորձեցին փրկել իրենց հարևաններին տեղահանություններից: Երբ 1915թ մայիսի 22-ին նրանք լսեցին, որ սկսվել են անսպասելի հարձակումները մյուս գյուղերի վրա, կանայք և երեխաները թաքնվեցին իրենց ծանոթների տներում, մինչդեռ տղամարդիկ փախան դեպի խաղողի այգիները: Սակայն գյուղը շրջապատած խմբերը մտան նաև խաղողի այգիներ, բոլորը ցրվեցին տարբեր ուղղություններով: Քահանա Արսեն Արշակունին իր որդու հետ վերադարձավ գյուղի իրենց տունը և 32 օր թաքնվեց գաղտնի մուտքով սենյակում, որտեղ նրանք պահում էին մթերքները: Գյուղացի մի կին՝ **Շեհրիբանը**, գտավ նրանց և լաց լինելով պատմեց, որ գյուղի բոլոր հայերը տեղահանվել են, իսկ նրանք, ովքեր ապաստան էին գտել լեռներում՝ սպանվել: **Յուսուֆը**, ով վկայությունում նշվում է որպես նրա ամուսին,

¹⁸¹ *Şayın Sumruyeli*ng (Acı Çekenlerin Sesi), F. Soñuպետեան, մեջբերում 19-րդ էջից

¹⁸² *Kedername*, էջ 358, 372, Բելգե Յահնլարի, 2014թ, Ստամբուլ: Նշվում է, որ Հերդիֆից փրկվեց 193 մարդ, էջ 375

¹⁸³ Հարցազրույց Ալի Հայդար Սելբուզի հետ, 2014թ, Ստամբուլ

¹⁸⁴ *Le genocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում

գիշերները սնունդ էր տանում հայերին: Քահանա Արշակունին խնդրեց Շեհրիբանին տեղեկացնել Յուսուֆին և իրենց հասնել այդտեղից: Յուսուֆը եկավ գիշերով և նրանց տարավ իր տուն, երկու օր պահեց և այնուհետև թողեց, որ նրանք շարժվեն դեպի Դերսիմ:¹⁸⁵

Վկայության Դերսիմի հատվածը Արշակունին ավարտում է հետևյալ կերպ. “*Այնտեղի քրդերը շատ հարգում էին ինձ*”, մեկ այլ պատմաձուլ՝ Պողոս Վարդանյանի պատմության մեջ, Վարդանյանին հաջողվում է հասնել Դերսիմ և 1915թ օգոստոսի 20-ին հանդիպել քահանա Արշակունու հետ:¹⁸⁶ Մենք փորձեցինք գտնել Յուսուֆի և Շեհրիբանի հետքերը, ովքեր հնարավոր դարձրին, որ Արշակունին հասնի Դերսիմ՝ օգնելով նրան: Նրանց թոռ Վեյսել Այդեմիրից, ով ապրում է Երզնկայում, մենք իմացանք, որ Յուսուֆը և Շեհրիբանը քույր ու եղբայր են: Սակայն, այն հայերի մասին հիշողությունները, ում նրանք պաշտպանել են 1915թ, ջնջվել են գյուղից արտագաղթերից հետո:¹⁸⁷

Էրզրումի մյուս Առաքինի կերպարները

Մկրտիչ Մուրադյանը, ով հունիսին Բայբուրթից ուղարկված շարայան մեջ էր, բացատրում է, որ քաղաքի մուսուլմանները դեմ էին տեղահանություններին: Ըստ Մուրադյանի բոլոր նրանց վախեցնելու համար, ովքեր մտադիր էին հայերին թաքցնել իրենց տներում, կայմակամը Բայբուրթի երեք թուրքերի էր կախել տվել:¹⁸⁸ Մեզ չհաջողվեց տեղեկություն ստանալ այդ երեք անձանց ինքնության մասին: Դժվար է ասել, արդյոք այս միջադեպը, որի մասին չի նշվում Բայբուրթի տեղահանությունների վերաբերյալ դատավարության մեջ, իսկապես տեղի է ունեցել:

Էրզրումի հայտնիները ցանկանում էին դադարեցնել տեղահանությունները և ըստ մոնսենյոր Նասլյանի հուշերի դիմեցին նահանգապետ Թահսիին: Թահսիին նրանց պատասխանեց, որ ինքը ստիպված է “*դժկամորեն*” հնազանդվել հրամաններին:¹⁸⁹ Ցավոք, Նասլյանը իր հուշերում չի նշում Էրզրումի այն անձանց անունները, ովքեր խնդրել էին դադարեցնել տեղահանությունները:

Խալիլը Կամախի Հովիտ գյուղից օգնել է Էրզրումից փախչող մի խմբի, նրանց ուսելիք էր բերել և ցույց տվել, թե ինչպես պետք է հասնեն Դերսիմ: Երբ հայերը հասնեին Մունգուրի լեռների գագաթների գտնվող գյուղ, նրանք Խալիլի խոսքերով “այլևս ազատ” կլինեին:¹⁹⁰

Արշակ Տերտերյանը, ով Աշկալեից էր, իր կնոջ և երկու երեխաների հետ նախ թաքնվում է Յենիկենտ գյուղում այնուհետև՝ **Աթունջուղ գյուղից Մոլլահ** անունով իր ծանոթի տանը: Նա այնտեղ մնում է չորս ամիս՝ շարունակելով իր մասնագիտությունը՝ կոշկակարությունը: Մոլլահն նրան առաջարկում է արտաքննապես մուսուլման դառնալ: Տերտերյանը ընդունում է առաջարկը, սակայն որոշ ժամանակ անց հրամայում են տեղահանել մահմեդականացած հայերին: Մոլլահն նախ նրան թաքցնում է մոտակա բարձրավանդակում, այնուհետև, երբ նրանք վերադառնում են Աթունջուղ, որոշ ժամանակ նա նրանց թաքցնում է ամբարում: Սակայն, մի օր ժանդարմները ներխուժում են տուն և ձերբակալում Տերտերյանին: Մոլլահը մեծ ջանքեր է գործադրում և կարողանում ազատել իր ընկերոջը: Նա նրա համար խանութ է բացում Աշկալեում և համոզվում, որ նա կմնա այնտեղ: Տերտերյանը հետագայում **Մարիբաբալի Ահմեդ աղայի** օգնությամբ գնում է ռուսական վերահսկողության տակ գտնվող շրջան՝ իր հետ տանելով ընտանիքը:¹⁹¹

Թերջան Ջալիի (Մուջուալի) գյուղացիները, **Թումոյի որդի Հասան Չավուշը** Քիլիսե Կոմո գյուղում, **Մերգո**

¹⁸⁵ *Չայն Տառապեդնգ* (Acı Çekenlerin Sesi), Բ. Տոնապետեան, մեջբերում 59-րդ էջից

¹⁸⁶ Պողոս Վարդանյանի վկայությունը, Անտոնյան փաստաթղթեր, P.J.1/3, փաթեթ 59, Էրզրում, Նուբարյան գրադարան

¹⁸⁷ Հարցազրույց Վեյսել Այդեմիրի հետ, հունվար, 2015թ

¹⁸⁸ Մկրտիչ Մուրադյանի վկայությունը, Անտոնյան փաստաթղթեր, P.J.1/3, փաթեթ 11, Բայբուրթ, Նուբարյան գրադարան

¹⁸⁹ *Les Mémoires de Mgr Jean Naslian*, մեջբերում, I. հատոր, էջ 152

¹⁹⁰ *Kedername*, մեջբերում 313-րդ էջից:

¹⁹¹ Նույն աղբյուրը, տես 318-319 էջեր

Իսմայիլը Ջեր գյուղում, **Քուչուկ աղան** Քրի Քարեր շրջանից, **Մեհմեդ Ալին (Դավուդի որդի)** Երզնկայի Քիշթիմ գյուղից, Ակն գյուղից Լյուբլի էֆենդի անունով մի զինվոր, այն բարեխիղճ անձանցից են, ովքեր փորձեցին փրկել հայերին տեղահանություններից և որոնց անունները թվարկված են Էրզրումի վկաների ցուցմունքներում:¹⁹²

VII. Անկարայի նահանգ

Անկարայի նահանգապետ Մազհար բեյ. “Ես նահանգապետ եմ, այլ ոչ թե բանդիտ ”

Անկարայի հայերի մեծամասնությունը կաթոլիկ էին, առօրյա կյանքում խոսում էին թուրքերեն և հեռու էին քաղաքականությունից, ուստի նրանք Օսմանյան իշխանությունների կողմից որպես սպառնալիք չէին դիտարկվում:¹⁹³ Քաղաքը նաև հեռու էր մարտի դաշտից: Չնայած դրան, նաև Անկարայի հայերի տեղահանության հրաման ստացվեց: Կարճ ժամանակ անց հասկացվեց, որ տեղահանությունը դա “նոր վայր տեղափոխում” չէր, այլ ջարդ, ինչպես հստակեցվել էր բանավոր հրամաններում:

Մազհար բեյը, ով Անկարայի նահանգապետն էր 1914թ հունիսից, նախ ձևացրեց, որ չի հասկանում տեղահանության հրամանները: Բայց դա երկար չտևեց մինչև Միություն և առաջադիմություն կուսակցությունը փորձեց նրան ստիպել ենթարկվել: Նա այս ժամանակաշրջանից հետո կատարվածի մասին պատմել է Անկարայի քաղաքային խորհրդի անդամ Ռադի բեյին, ով նրան հարցրել էր, թե ինչու են նրան ազատել իր պաշտոնից. *“Ինչպես գիտես չնայած տեղահանությունների գործընթացը սկսվել էր որոշ մյուս նահանգներում, ես այն չէի սկսել”*: Աթիֆ բեյը եկավ, նա հայտարարեց Ներքին գործերի նախարարության բանավոր հրամանները, որոնք վերաբերում էին տեղահանությունների ժամանակ հայերի բնաջնջմանն ու ջարդերին, ես մտածեցի. *“Ոչ, Աթիֆ բեյ, ես նահանգապետ եմ, ոչ թե՝ բանդիտ: Ես չեմ կարող դա անել, ես կարող եմ վեր կենալ այս աթոռից, դու կարող ես գալ և ինքդ անել դա”* *ասացի ես*¹⁹⁴

Այս խոսակցությունից կարճ ժամանակ անց Մազհար բեյին պաշտոնից ազատելու վերաբերյալ շտկումներ կատարվեցին: 1915թ մայիսի 17-ին, նա նորից նշանակվեց Հալեպի նահանգապետ, որտեղ նա նախկինում ծառայել էր և որտեղ նա նշել էր, որ կցանկանար վերադառնալ: Այս նշանակումը Ներքին գործերի նախարարության համար ասես մեկ կրակոցով միաժամանակ երկու նապաստակ սպանել լինեք: Որոշում կայացվեց փոխանակել Մազհար բեյի և Հալեպի նահանգապետ Ջելալ բեյի պաշտոնները:¹⁹⁵ Նման ձևով Ջելալ բեյը, ով դիմադրում էր հրամաններին Հալեպում, կհեռացվեր Հալեպից, իսկ տեղահանությունները արդեն կավարտվեին մինչ նրանք երկուսն էլ հասնեին իրենց նոր պաշտոնավարման վայրերը: Սակայն, Մազհար բեյը չընդունեց այս պաշտոնը: Նա հասկացավ, որ Հալեպում ինքը բախվելու է *“հայերի տեղափոխության և բնակեցման”* արդեն կայացած փաստին: 1915թ հունիսի 22-ին Թալեաթը Մազհար բեյին հեռագիր ուղարկեց՝ փորձելով համոզել նրան ընդունել պաշտոնը և գրելով, որ *“Ջելալ բեյը արդեն պատրաստվում է ճանապարհ ընկնել Հալեպից”*, այսպիսով հարկադրումը դարձնելով իր մեթոդներից մեկը: Հեռագիրը¹⁹⁶, որը մենք գտանք Վարչապետի

¹⁹²Նույն աղբյուրը, տես 328,333-334, 363-364, 395-396 էջեր, *Մարդկություն՝ անմարդկութեան մեջ*, մեջբերում 115-116-րդ էջերից

¹⁹³*Le génocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 619-620 էջերից. *Հայերի ցեղասպանությունը հետաքննող թուրքական զինվորական տրիբունալի առաջադրած պաշտոնական մեղադրանքի տեքստային վերլուծություն*, Վահագն Ն. Տատրյան, Քաղաքական և զինվորական սոցիոլոգիական ամսագիր 22, էջեր 133-172, 1994թ

¹⁹⁴Ռադի բեյի վկայությունը լատիներեն տառերով տառադարձված թուրքերեն՝ վերցված Ստամբուլի դատավարությունների հետաքննությունների արխիվի հատվածներից, որոնք մենք գտանք Նուբարյան գրադարանում: Երուսաղեմի հայկական Պատրիարքության արխիվների պատճենների ընտրանի, գլանակ 3: Օսմանյան լեզվով վկայության բնօրինակը փաստաթղթերում առկա չէ: Տեղեկություն չկա, թե երբ և ում կողմից է կատարվել տառադարձությունը, սակայն գրանցված փաստաթղթերի վրա նշված է՝ “Հայ կաթոլիկ համայնք, Նյու Յորք”

¹⁹⁵ՕԿՄ MV.240/56, 03/B/1333, ՕԿՄ İ..DH..1515/1333, 04/Ş/1333, ՕԿՄ BEO.4360/326983, 06/Ş/1333

¹⁹⁶ՕԿՄ DH.ŞFR.54/94, 09/Ş/1333, տառադարձությունը՝ Օմեր Թուրքոզլուի

գրասենյակի օսմանյան արխիվներում ձախ կողմը փտած և մգացած, որոշ բառեր ջնջված վիճակում, Թալեաթի կողմից ուղարկվել էր Մազհար բեյին հետևյալ բովանդակությամբ.

DH.ŞFR. 54/94

***** Հալեայի նահանգապետ Մազհարին Անկարայում**

9 հունիսի, 331

Հաշվի առնելով Հալեայի նահանգի կարևորությունը հայերի տեղափոխման և բնակեցման առումով, ինչպես նաև այս նահանգի մասին Ձեր ունեցած գիտելիքներն ու փորձը և Ձեր համաձայնությունը վերոնշյալ հարցում, որոշում է կայացվել Հալեայում Ձեր նշանակման մասին: Համոզված լինելով, որ Դուք չեք հրաժարվի այդ պաշտոնից նման վճռորոշ թեմայով կարևոր պահին՝ նախարարությունը Ձեր հետ նախապես չի համաձայնեցրել այն:

հունիսի 9 , 331

Նախարար Թալեաթ

Ծանուցում՝ Ձեզի փաշան արդեն պատրաստվում է ճանապարհ ընկնել:

Ի՞նչ ի նկատի ունեք Թալեաթ բեյը գրելով *“Ձեր համաձայնությունը վերոնշյալ հարցում”*: Մազհար բեյը ամեն տեղ բացահայտ հայտարարում էր, որ ինքը հրաժարվել է կատարել տեղահանման մասին հրամանները: Նրա վերաբերմունքը և Աթիֆի հետ ունեցած բախումը հայտնի էին դարձել Անկարայի հայությանը: Վկաների մի հաշվետվություն, որը կրում է Անկարայի կրոնական սպասավորների և քաղճառայողների ստորագրությունները, հաստատում է, որ այլ տեղերի հայությունը նույնպես ապաստան էր գտել Անկարայում:

“1915թ սկզբում, երբ Մազհար բեյը Անկարայի նահանգապետն էր իսկ հարյուրավոր կանայք և երեխաներ փախչում էին մոտակա քաղաքների սպանություններից, նահանգապետը Անկարայի Միություն և առաջադիմություն կուսակցության միջոցով ջարդերի հրաման ստացավ: Սակայն ի նկատի ունենալով իր քաղաքի քրիստոնյաների անհերքելի անմեղությունը, այս օրինապաշտ և իսկապես բարեխիղճ կառավարական պաշտոնյան մայրաքաղաքում իր վերադասների շատ հստակ մերժողական պատասխան տվեց՝ վտանգելով իր պաշտոնը: Նրան անմիջապես պաշտոնազուրկ արեցին: Ներքին գործերի նախարարությունը 27-ամյա Աթիֆ անունով մարդասպանին և շատ երիտասարդ 25 ամյա ոստիկանապետի նշանակեց, ով ամենաքիչը ուժգին ատում էր քրիստոնյաներին և նույն չափով էլ ազահորեն ձգտում էր նրանց ունեցվածքին:”¹⁹⁷

Մենք ծանոթ չենք Թալեաթ փաշային գրած Մազհար բեյի պատասխանի մանրամասներին, քանի որ նշված հեռագիրը առկա չէ Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվներում: Սակայն, արխիվի գրառումները մեզ ստիպում են մտածել, որ Մազհար բեյը հաստատական է գտնվել այդ պաշտոնը մերժելու հարցում: Թալեաթի հետ իր ունեցած թղթակցությունից երկու օր հետո, նրա նշանակումը Հալեայ չեղարկվեց, 1915թ հուլիսի 18-ին անսպասելի որոշմամբ նա թոշակի անցավ: ¹⁹⁸

Ձեզի բեյի նշանակումը Մազհար բեյի տեղում նույնպես չեղարկվեց: Սա մոտավորապես այն ժամանակն էր, երբ Ձեզի բեյը գնաց Ստամբուլ և տեղահանություններին իր առարկությունը անձամբ հայտնեց Թալեաթին: Այնուհետև Աթիֆը, ով կարող էր իրագործել պլանավորված *“ջարդերը և բնաջնջումը”* առանց երկմտանքի նշանակվեց նրա փոխարեն: Հենց որ Աթիֆը անցավ պաշտոնավարման, նա ձեռնարկեց բնաջնջման պլանը՝ ձեռքակալելով և սպանելով Անկարայի

¹⁹⁷Կրոնական սպասավորներ Գ. Քասսաբյանի, Պ. Մերզեմեկյանի, Ա. Այդենյանի, Լ. Թոթբաջյանի և քաղճառայողներ Ժերոմ Բարսեղյանի, Ջոզեֆ Կանբուրյանի, Փոլ Հաջենյանի, Հակոբ Մեհտերյանի վկայությունները, 1919թ փետրվարի 17, Հալեայ *Angora, récit du massacre et de la déportation des Arméniens*, BNU Անտոնյանփաստաթղթեր, P.J.1/3 փաթեթ I, Անգորա

¹⁹⁸ՕԿԱ DH.ŞFR.54/131, 11/Ş/1333, ՕԿԱ MV.241/12, 17/Ş/1333, ՕԿԱ MV.241/39,05/N/1333, ՕԿԱ.İ.MMP 198/1333,06/N/1333, ՕԿԱ DH.ŞFR.54/62, 09/N/1333

հայտնի հայերին:

Մագհար բեյը պատմել է, թե ինչի է ականատես եղել Անկարայում և իր պաշտոնագուրկ արվելու գործընթացի մասին 1918թ Միություն և առաջադիմության դեմ դատավարության համար կազմավորված հետաքննությունների հանձնաժողովին իր տված ցուցմունքում: Հիմնական դատավարության պաշտոնական մեղադրանքում հղում է կատարվել հետևյալ նախադասությանը. *“Նրան պաշտոնից ազատել են, քանի որ հրաժարվել է կատարել տեղահանությունների և ջարդերի վերաբերյալ հրամանները”*¹⁹⁹

Որոշ աղբյուրներ վկայում են, որ Անկարայի նահանգապետ Մագհար բեյը նույն անձն է, ով 1915թ աշնանը *“նշանակվել էր Ջինվորական դատարանում հետաքննելու և դատավճիռ կայացնելու այն անձանց վերաբերյալ, ովքեր խախտել էին օրենքը հայերի տեղափոխությունների ժամանակ”* և երրորդ լեզիոնի շրջանի հանձնաժողովի նախագահը և անգամ այն նույն անձը, ով հետաքննել է Միություն և առաջադիմության հանցանքները 1918թ: Որոշ այլ աղբյուրներ էլ Անկարայի նահանգապետի անունը նշում են որպես “Հասան Մագհար”: Այս սխալ տեղեկությունների պատճառը հիմնականում այն է որ կային մեկից ավելի անձինք, որոնց անունն էր Մագհար բեյ (և նրանցից ամենաքիչը երկուսը մակեդոնացիներ էին), ովքեր այդ ժամանակաշրջանում նմանատիպ պաշտոններ ունեին: Մտամբուլի թերթերում մինչ Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունը հրապարակված սխալ լուրերը նպաստել են այս հանգամանքին: Մենք կարողացանք մեր ուսումնասիրությունների ժամանակ հաղթահարել այս դժվարությունը՝ ուշադիր ուսումնասիրելով Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվները և կարողանալով կապվել Մագհար բեյի ընտանիքի հետ:

Հայոց ցեղասպանության ժամանակ հրամաններին ընդդիմացած Անկարայի նահանգապետի լրիվ անունն է **Ալի Մագհար բեյ**: Նա ծնվել է 1868թ Նիսում: Հալեպի Հեռագրատան և փոստի տնօրեն Բեդրի բեյի որդին էր: Նա Մուլքիեի շրջանավարտ չէր (ուստի, նրա անունը ներառված չէ Մուլքիեի տարեգրություններում, ինչը մինչ օրս շփոթության առիթ է տալիս): Սակայն, նա իր Իլմիյեի դիպլոմը փոխանցել է Մուլքիե և սկսել աշխատել Գլխավոր վարչության Հալեպի Փոստի և հեռագրատան գրասենյակում: Հետագայում նա նշանակվեց Կոստվոյի վարչական խորհրդի գլխավոր գործակալ և սկսեց իր վարչական կարիերան: Նա աստիճանաբար առաջ գնաց իր պաշտոններում՝ դառնալով Կոստվո քաղաքի նամակատար, Պրիշտինայի փոխկառավարիչ, Սիրոզի և Բեյոզլուի փոխկառավարիչ, Կոստվոյի, Էդիրնեյի և Հալեպի նահանգապետ: Անկարայի նահանգապետի պաշտոնը նրա վերջին պաշտոնն էր: Նա չընդունեց Բիթլիսի նահանգապետի պաշտոնը, որը նրան առաջարկվեց, երբ նա դեռ Հալեպի նահանգապետն էր:²⁰⁰

Այն անձը, ով երրորդ լեզիոնի տարածքում հետաքննություն իրականացրեց 1915թ հատկապես Դոկտոր Ռեշիդի հանցանքների մասով, **Հուսեյն Մագհար բեյն** է Օխրիից: Մինչ հանձնաժողովի նախագահ դառնալը նա ծառայել էր Կոստվոյի և Բիթլիսի (1913-1914թթ ընթացքում) նահանգապետի պաշտոններում:²⁰¹ Ի տարբերություն մյուս տեսուչների, ովքեր անտեսում էին տեղահանությունները վրայով և հետապնդում միայն յուրացումների հետաքննությունները, նա հետաքննել է Դոկտոր Ռեշիդի կատարած սպանությունները: Նա այս առնչությամբ շատ զեկույցներ է ուղարկել Ներքին գործերի նախարարություն, սակայն նրանցից ոչ մեկը լուրջ չի ընդունվել:²⁰² Հնարավոր է այս մտեցման պատճառով մինչ 1920թ նրան ուրիշ պաշտոն չտրվեց: Արդյոք ք Հուսեյն Մագհար բեյը նույն մարդն է, ով 1918թ հայտնի “Մագհարի հանձնաժողովի” ղեկավարն էր, որն հետաքննում էր Միություն և

¹⁹⁹ *Tehcir ve Taktıl, Divan-I Harbi Örfi Zabıtları*, Վահագն Ն, Տատրյան, Թաներ Աքչամ, մեջբերում 242-րդ էջից:

²⁰⁰ ՕԿՄ. DH.SAİDd, 72/341,29/Z/1284, ՕԿՄ. DH.MKT.1683/13, 24/R/1307, ՕԿՄ.DH.MKT.1701/63,02/B/1307, ՕԿՄ. DH.MKT.288/39, 26/Ra/1312, ՕԿՄ.BEO1343/100668, 14/Ra/1317, ՕԿՄ. BEO2949/221130, 09/L/1324, ՕԿՄ.BEO 3381/253550, 27/B/1326, ՕԿՄ.ZB.25/8308/Ke/1324, ՕԿՄ.DH.MKT.2911/40,09/Ş/1327, ՕԿՄ.DH.MTV.1/18, 30/Za/1328, ՕԿՄ.BEO3925/294325, 12/Ş/1329, ՕԿՄ.MV.233/105,19/Ra/1332

²⁰¹ ՕԿՄ DH.SAİDd,180/275, 29/Z/1281, ՕԿՄ BEO,4163/312176, 21/R/1331, ՕԿՄ.MV.234/53,27/R/1332, ՕԿՄ DH.ŞFR.56/179, 17/Za/1333

²⁰² *Հայերի բնաջնջումը Դիարբեքի շրջանում*, Հիլմար Կայզեր, մեջբերում 403-407 էջերից

առաջադիմություն կուսակցության գործած սպանությունները: Չնայած մենք բավարար տեղեկություն չունենք այս առնչությամբ, կարծում ենք, շատ հավանական է, որ նա այդ հետաքննության պատասխանատու անձն է: Այդ ժամանակ Ստամբուլում հրապարակվող որոշ լրատվական զեկույցների պատճառով կարծիք կար, որ Մազհարի հանձնաժողովի ղեկավար անձը Մազհարն էր (Մուֆիտ Քանսու), ով Իզմիթի և Քարեսի կառավարիչն էր տեղահանությունների ժամանակ և Բիթլիսի նահանգապետը՝ 1918թ: Ուստի, Ստամբուլում ֆրանսերեն լեզվով հրապարակվող La Renaissance թերթը շատ կոպիտ հողված էր գրել՝ հիշեցնելով, որ Մազհար Մուֆիտը պատասխանատու էր Իզմիթի և Բալըքեսիրի տեղահանությունների համար: Սակայն հաջորդ օրը թերթը նկատեց սխալը և ուղղեց այն:²⁰³

Ինչ վերաբերում է Ալի Մազհար բեյին, նա Անկարայի նահանգապետի պաշտոնից թոշակի անցնելուց հետո սկսեց զբաղվել առևտրով: Նա Հանրապետական շրջանում վերցրեց “Փայզին” ազգանունը: Մենք կարողացանք միայն հեռախոսով խոսել Մազհար բեյի թոռնուհու Մունիրե Ասուման Չելիկի հետ, քանի որ նա այդպես նախընտրեց: Նա ասաց, որ ընտանիքից ոչ ոք որևէ տեղեկություն չունի Մազհար բեյի մասին, ով նրա մայրական կողմի նախապապն էր, և 1915թ նրա վերաբերմունքի մասին: Դժվար է ասել, թե որքանով է այս “տեղեկությունների բացակայությունը” կապված 1915թ վերաբերող թեմայով խոսելուց խուսափելով: Մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դա որոշակի առումով դեր է խաղում:

Մեհմեդ Ալի Այնի հուշերում մենք հանդիպեցինք մի փոքր դիտարկման Մազհար բեյի անձնավորության մասին: Այն ժամանակ, երբ Մազհար բեյը նոր էր ավարտել Ռուշտիյեն (Օսմանյան թերի միջնակարգ դպրոց), նրա հայրը՝ Բեդրի բեյը Մեհմեդ Ալի Այնիից օգնություն է խնդրում *“իր որդուն ուսուցչի թափուր պաշտոնում նշանակելու”* հարցում: Այնին օգնում է, որ Մազհարը անցնի քաղաքացիական ծառայության, սակայն չի մոռանում մի փոքր բացասական գրառում անել նրա մասին. *“Ջղային է, անհամբեր և հպարտ, ուստի անհաջողակ է իր գործերում”*:²⁰⁴ Սակայն Մեհմեդ Ալի Այնին սխալվում էր: Մազհար բեյի՝ բնաջնջման հրամաններին ենթարկվելու վերաբերյալ տված Աթիֆին *“ջղային և հպարտ”* պատասխանը նրա անունը ամրագրեց պատմության մեջ:

Անկարա նահանգի մյուս Առաքինի մարդիկ

Մեհմեդ Ռադի բեյ. Մշտական ընդդիմադիր

Անկարա քաղաքի խորհրդի անդամ Մեհմեդ Ռադի բեյը, ինչպես նշեցինք վերևում, Միություն և առաջադիմության դատավարության ժամանակ ցուցմունք է տվել: Մազհար բեյի վերաբերմունքի մասին մանրամասներով մենք պարտական ենք նրա տված ցուցմունքին, որը մեզ հաջողվեց ձեռք բերել: Ռադի բեյը նաև պատմում է Անկարայում տեղահանությունների վերաբերյալ իր սեփական վերաբերմունքի մասին: Հուլիսի կեսերից անցնելով իր պաշտոնին՝ Աթիֆը սկսեց ձեռք բերել տալ Անկարայի հայ հայտնիներին: Ռադի բեյը տեղեկացավ, որ Օսմանյան բանկի տնօրեն Շնորհոքյան էֆենդին որպես բանտարկյալ էր վերցվել Հուրիեթ հյուրանոցում: Որպեսզի խնդրեն, որ վերջինիս ներում շնորհվի, նրանք քաղաքի ավագանու անդամ Ահմեդ Մուֆիտ էֆենդիի հետ գնացին նահանգապետ Աթիֆին տեսնելու: Ի պատասխան նրանց խնդրանքի, Աթիֆը ասաց. *“Ես հրամաններ եմ ստացել իմ ղեկավարից, նրանք կգնան, հայերը չեն ապրի”*:²⁰⁵ Հաջորդ օրը Շնորհոքյան էֆենդիին տարան հեռու և այդ օրերին բանտարկված մոտ 1200 հայերի հետ քաղաքից դուրս սպանեցին:²⁰⁶

Իր ցուցմունքի մեջ Ռադի բեյը շատ մանրամասներ է պատմում, թե ինչպես էր տեղի ունենում տեղահանությունը, և թե ինչպես էին հետաքննության հանձնաժողովները իրենց ուշադրությունը

²⁰³La Renaissance, "Qui est Mazhar Bey?", 11 décembre 1918 ve "Ilya Mazharet Mazhar", 12 décembre 1918. Հերթող հողվածում հստակ նշված է որ հետաքննության հանձնաժողովի նախագահ Մազհար բեյը *“արդեն վեց տարի է թոշակի էր անցել”*, հետևաբար, չէր կարող մասնակցել տեղահանությունների ժամանակ կատարված հանցագործություններին: Նրա թոշակի անցնելու ամսաթիվը չի համապատասխանում Հուսեյն Մազհար բեյի թոշակի անցնելու ամսաթվի հետ: Սակայն, այստեղ հնարավոր է, գործ ունենք սխալ նշված տեղոկության հետ:

²⁰⁴Profesör Mehmed Ali Aynî, *Hayatı ve eserleri*, Ալի Քեմալի Ակսյուտ, էջ 38, 1944թ, Ստամբուլ

²⁰⁵Ռադի բեյի վկայությունը, համեմատության համար տես՝ վերոնշյալ 187-րդ ծանոթագրությունը

²⁰⁶*Le génocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում 621-րդ էջից

կենտրոնացնում միայն յուրացումների վրա: Մենք տեղյակ չենք արդյոք ջարդերի դեմ նրա դիմադրությունը սահմանափակվում էր Շնորհաքյան էֆենդիին փրկելու իր ջանքերով: Սակայն, կարող ենք եզրակացնել, որ ըստ նրա մասին Օսմանյան արխիվներում արված գրառումների նա կառավարության կողմից երկար ժամանակ դիտվում էր որպես ընդդիմախոս: Նա Չորում-Մեջիթոզուլի հայտնիներից էր: Սատվեթ Լյութվուլի հետ իր հարաբերությունների պատճառով Ռադի բեյի նամակագրությունը հետապնդվում էր, և նա բազմիցս ձերբակալվել է: Անգամ կարծում էին, որ նա կապ ուներ Չորումի Քոր Դեդե հրոսակախմբի հետ: Սակայն 1918թ հետո մենք կորցնում ենք Ռադի բեյի հետքը: Մենք չկարողացանք նրա մասին որևէ տեղեկություն ձեռք բերել բացի նրանից, որ նա Ալի Սուավի անունով որդի ուներ և մի մտերիմ ծանոթ, որին անվանում էին *“Դարույմուսլլիմաթի տնօրեն Շահիդե խանում”*:²⁰⁷

Հաջի Օմեր էֆենդիի Կեսկինից. “Տեղի ունեցած իրադարձությունները այնքան սարսափելի էին....”

Մինչև 1915թ Թադևոս Մինասյանը զբաղվում էր գործվածքների առևտրով: Նրա հաճախորդները նրան գործվածքների դիմաց վճարում էին իրենց արտադրած ցորենով և բրդով, իսկ նա իր ապրուստը վաստակում էր այդ ապրանքները վերավաճառելով: Նա իր ամբողջ ընտանիքը կորցրել էր Կյուրինում 1895թ ջարդերի ժամանակ, երբ 13 տարեկան էր, Կեսկինի նրա մորաքույրը նրան վերցրել էր իր պաշտպանության ներքո: 1915թ նա զգաց մոտեցող փոթորիկը, ուստի նա նախ պլանավորում էր գնալ Անկարա, հետո Ստամբուլ: Սակայն հանգամանքները այնպես չղասավորվեցին, ինչպես ինքն էր ուզում: Այն օրը, երբ նա եկավ Անկարա, սկսեցին տեղահանել ուղղափառ հայերին, այնուհետև՝ երեք շաբաթ անց՝ կաթոլիկ հայերին: Մինասյանը հայտնվեց տարհանման շարասյան մեջ: Կեսարիայով անցնելիս նա լուր ուղարկեց Օմեր էֆենդիին, ում ճանաչում էր Կեսկինից, և ով նրա հետ աշխատել էր խոշոր եղջերավորների առևտրի ժամանակ: Օմեր էֆենդին ձև գտավ իր ընկերոջը շարասյունից առանձնացնելու և փրկելու համար: Նա Մինասյանին թաքցրեց իր տանը: Այդ ընթացքում Մինասյանի կինը և երեխաները ապաստան գտան Կեսկինի տներից մեկում:

Օմեր էֆենդին հավատարիմ, շատ հավատացյալ մարդ էր: Նա հայտնի էր որպես ազնիվ անձնավորություն: Նա չէր կարող ընդունել ջարդերը և չէր կարողանում դրանք տեղավորել այն կրոնում, որին հավատում էր: *“Մի օր նա ինձ պատմեց մի միջադեպ, որը տեղի էր ունեցել Յոզգաթի շրջանում”*, -պատմում է Մինասյանը, - *“այն դաշտավայրը, որով նա անցնում էր լի էր մերկ կանանց ու երեխաների դիակներով: Նա խենթացավ, հասավ մոտակա գյուղի մարդկանց և բղավեց. Ինչպե՞ս կարող էիք անել դա, ինչպե՞ս կարող էիք սպանել կանանց ու երեխաների”*:

1916թ Օմեր էֆենդին Մինասյանին ներկայացնում էր որպես մուսուլման և իր հետ տանում էր եղջերավոր անասունների վաճառքի համար իր կատարած ճամփորդություններին: Մի օր նրանք անցնում էին Միվասի Ադդադի կողքով: Օմեր էֆենդին չէր ուզում անցնել այդ տեղով, քանի որ վախենում էր հայ ֆիդայիներից, ովքեր թաքնվում էին Ադդադում: Մինասյանը փորձեց նրան հանգստացնել և ասաց, որ ֆիդայիները նրան ոչինչ չեն անի, երբ նա իր հետ է: *“Իրավիճակը այնքան ահավոր է”*, -ասաց Օմեր էֆենդին, - *“նրանք կատաղած են, անգամ դու չես կարող փոխել դա”*:

Հոգնելով թաքնվելուց Մինասյանը որոշ ժամանակ անց ազատ լինելու համար դարձավ մահմեդական, նա իր անունը փոխեց Ահմեդ Հիլմի: Սակայն, այս անգամ նա ստիպված էր տուգանք վճարել զինվորական ծառայություն չանցնելու համար: Օմեր էֆենդին նորից առաջարկեց օգնել նրան: Միայն 1918թ Միության անդամների հեռացումից հետո Մինասյանը կարողացավ ապրելու տեղ գտնել առանց թաքնվելու: Նա միավորվեց իր ընտանիքի հետ: Մինչ 1922թ նա փորձում էր վերահաստատել իր բիզնեսը: Սակայն 1922թ Իզմիրի հրդեհից հետո, նա որոշեց, որ Թուրքիան հայերի համար ապահով վայր չէ: Նա 1924թ հաստատվեց Տրանսիայի Լիոն քաղաքում: 1957թ նա հայերեն լեզվով հրատարակեց իր հուշերը:²⁰⁸

²⁰⁷ՕԿՄ. DH.ŞFR.80/132, 24/Z/1335,ՕԿՄ DH.UMVM, 66/10, 25/S/1337,ՕԿՄ.DH.EUM.1.Şb10/46, 29/C/1336
²⁰⁸Սույն ուսումնասիրության մեջ մենք օգտվել ենք հուշերի հայերեն բնօրինակից: Արամի արխիվի և Մարսելի փաստաթղթերի կենտրոնի տնօրեն Վարուժան Արթինը որոշ հատվածներ թարգմանեց մեզ համար Golgothades 60

Հաջորդ տարիներին Օմեր էֆենդին կառավարում էր Կեսկինում նորաբաց մանկատունը: Նրա որդի Ռահմի Փեհլիվանլին 1950-ական թթ հետո դարձավ հայտնի նկարիչ: Կեսկինում գտնվող Օմեր էֆենդիի պատմական առանձնատունը, որտեղ ծնվել է Ռահմի Փեհլիվանլին, այսօր տրամադրվել է Մշակույթի նախարարությանը, որպեսզի վերածվի թանգարանի:

Մենք տեղյակ չենք, արդյոք Թադևոս Մինասյանը պահպանել է կապը Օմեր էֆենդիի հետ, ով երեք տարի շարունակ օգնել է իրեն, թաքցրել իր տանը: Նրա բարեկամ Փեհլիվանլի ընտանիքը, որի հետ մենք կապ հաստատեցինք Օմեր էֆենդիի մասին ավելի շատ բան իմանալու համար, հրաժարվեց հանդիպել մեզ հետ: Հենց որ մենք նշեցինք թեման, նրանք կախեցին լափողը: Կեսկինի նման խիստ ազգայնական և պահպանողական շրջանում շատ դժվար էր գրուցել հայերին վերաբերող ցանկացած թեմայով:

Նման հանգամանքներում խիստ լավատեսական կլինեք ակնկալել, որ Օմեր բեյի առաքինի վերաբերմունքի մասին հուշատախտակ փակցվել այն առանձնատանը, որտեղ Մինասյանը թաքնվել էր 1915թ և որը Մշակույթի նախարարությունը նախատեսում է վերածել թանգարանի:

Յոզգաթի փոխնահանգապետ Ջեմալ բեյ. “Ես չեմ կարող խղճիս դեմ գործել”

Երբ տեղահանությունները սկսվեցին Յոզգաթի փոխնահանգապետ **Ջեմալ բեյը** և **զինվորագրման շտաբի ղեկավար Սալիմ բեյը** մտածեցին, որ իրենք կարող են շարասյունները ապահով հասցնել իրենց նպատակակետերին՝ հրամաններին ենթարկվելով մասամբ: Մակայն, կարճ ժամանակ անց նրանք հասկացան, որ սխալվում էին: Միություն և առաջադիմության պատասխանատու քարտուղար Նեջաթի կողմից տրված բանավոր հրամանների միջոցով Ջեմալ բեյին և Սալիմ բեյին պատվիրեցին դառնալ ջարդերը իրագործողներ: Ջեմալ բեյը իր հստակ պատասխանով մերժեց այդ հրամանները և հեռացվեց իր պաշտոնից: Պողոսյանի կայմական Քեմալը նշանակվեց նրա փոխարեն: Սալիմ բեյին ստիպեցին հեռանալ պաշտոնից:

Ջեմալ բեյը և Սալիմ բեյը ցուցմունք են տվել Յոզգաթի տեղահանությունների վերաբերյալ դատավարության ժամանակ: Ջեմալ բեյի ցուցմունքը, որը այդ ժամանակ հաղորդվել է թերթերում, ցույց է տալիս, թե ինչպես ինքը և Սալիմ բեյը հրաժարվեցին ենթարկվել անմարդկային հրամաններին՝ իրենց վերաբերմունքի հիմքում ունենալով իրենց խիղճը:²⁰⁹

“Զինվորագրման շտաբի պետին տեղեկացրեցին: Նա պատվավոր մարդ էր; Նա ասում էր, որ չպետք է հեռանա Աստծո ցույց տված ուղուց: Իսկ ես հավաստիացրեցի, որ ինչ էլ Կուսակցությունը ասի, ես չեմ կարող գործել իմ խղճի դեմ: Եթե կառավարությունը գտնում էր, որ տեղափոխությունը պատերազմի համատեքստում անհրաժեշտ էր, ապա այն կարող էր լուծման՝ տեղահանությունից տարբեր այլ տարբերակներ փնտրել: Եթե որոշվել էր տեղահանություն կատարել, ապա պետությունը պետք պատշաճ փոխհատուցում կազմակերպեր: Մենք այդպես էինք մտածում (...)

Այդ մարդը (*նկատի ունի Նեջաթին*) եկավ, նա ասաց. ‘*Ձեզ համար նամակ կա նահանգապետից՝ ‘Տվեք ինձ խնդրում եմ ասացի ես: ‘Կարդացեք այն իմ ձեռքից՝ պատասխանեց նա “Գործեր ըստ Նեջաթի բեյի ասածների”*: Նա թուղթը ետ դրեց իր գրպանը: ‘*Հայ հրոսակախմբերը և դազախները մուսուլմաններին կոտորել են Ադրբեջանում: Եկեք ի պատասխան նույնն անենք*” ասաց նա: ‘*Ճիշտ չէ այստեղ պատասխան հարված հասցնել: Այս առումով Դուք պարտավորություն չեք կրում: Նահանգապետը ինձ չի գրել, դա նշանակում է նա չի վստահում ինձ, ուստի ես էլ չեմ կարող վստահել նրան: Բացի այդ, որպես քաղաքական գործիչ, Դուք եք պատասխանատու Ադրբեջանում կատարվածի համար*”, ասացի ես:

Arméniens d’Ankara et de Keskin, Թադևոս Մինասյան, 1957թ, Լիոն
²⁰⁹ Yozgat Ermeni Tehciri Davası, Նեջեթ Բիլգի էջ 236-239, Կիտաբեվի, 2006թ, Ստամբուլ

Ինձ ասացին Պողազյանի կայմական Քեմալ բեյը նշանակվել է իմ փոխարեն. *‘Ելնելով անհրաժեշտությունից, որը սահմանվել է վարչակազմի կողմից, Դուք ազատվել եք պաշտոնից’*, - ասացին ինձ: Սակայն, դա իրագործելու համար անվտանգությունը պետք է անբավարար լիներ: Նման բան չկար: Ուստի, պետական խորհուրդը պատրաստվում էր ուսումնասիրել իրավիճակը: Մեկ ամիս անց նրանք կամ պետք է ետ կանչեին ինձ կամ պետք է որոշում կայացնեին իմ դեմ: Ես մեկ ամիս մնացի Յոզգաթում՝ դրան սպասելու համար: Այնուհետև, տեղահանությունները այլ ընթացք ստացան: Դրանք ավելի դաժան դարձան: Սակայն ես չգիտեի, թե ինչ է կատարվել: Ես մարդկանց հետ կապ չունեի (...)Բոլոր նրանք, ում ես ճանաչում էի անձամբ կամ այլ կերպ, ասում էին, որ հայերին կոտորում են:(...)Այդ մասին մարդիկ էին խոսում: Ես անհանգստացած էի և անընդհատ մտածում էի, որ մենք սպանում ենք մեր իսկ երեխաներին: Ուստի, “ Ուրախ եմ, որ ետ կանգնեցի”, ասացի ես, քանի որ մեր խղճի առաջ մեր պատասխանատվությունը ամեն ինչից վեր է”:

Նույն դատավարության ժամանակ Ազնիվ Հանիմը, ով Յուզգաթի հայերից էր, ցուցմունք տվեց Ջեմալ բեյի բարեխիղճ վերաբերմունքի մասին: Նա պատմեց, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը որոշել էր քաղաքում խռովություն բարձրացնել, որպեսզի ստիպեն Ջեմալ բեյին պաշտոնանկ անել: Նրանք անգամ պլանավորել էին այդ ըմբոստության ժամանակ կրակել Ջեմալ բեյին:²¹⁰

Ջեմալ բեյին ոչ միայն պաշտոնանկ արեցին, այլ *“նրա ծառայության մեջ մնալը նպատակահարմար չհամարվեց”* և նրան ստիպեցին թոշակի անցնել:²¹¹ Սակայն, Միություն և առաջադիմություն կուսակցության անկումից հետո նրա ծառայության վերադառնալը հավանություն ստացավ 1919թ մարտին և նա նշանակվեց Անատոլիայի փոխնահանգապետ: Այս ծառայության ընթացքում նրան մեղադրեցին ազգային պայքարին չօժանդակելու մեջ, հետագայում Մուստաֆա Քեմալը նրան նկարագրեց որպես *“Կոնիահի ծեր դավաճան նահանգապետի մարդ”*: Սակայն մյուս աղբյուրները նշում են, որ նա Անթալիայի Ազգային ժողովրդական պաշտպանության կազմակերպությանը ասել է. *“Ես իմ ժողովրդի հետ եմ, ինչ էլ անհրաժեշտ լինի անել, եկեք դա անենք միասին մտածելով”* և օժանդակել է նրանց: ²¹² Պարզվում է Ջեմալ բեյը իրեն մի փոքր հեռու էր պահում Մուստաֆա Քեմալի կազմակերպած պայքարից, սակայն իր օժանդակություններ էր հայտնել մի խմբի, որ եկել էր իր մոտ: Շատ հավանական է, որ Ջեմալ բեյի երկմտումը առաջացել է, երբ Մուստաֆա Քեմալի շուրջը տեսել է Միություն և կուսակցության անդամներին: 1920թ հուլիսին նա նշանակվեց Իզմիրի կառավարիչ:

Հանրապետական ժամանակաշրջանում Ջեմալ բեյը վերցրեց Նազիկօղլու ազգանունը: Մենք նրա ընտանիքի հետքը գտանք Ստամբուլում: Նախ մենք կապվեցինք Շանար Յուրդաթափանի հետ, ով ամուսնական կապի միջոցով բարեկամացել էր ընտանիքի հետ: Նա մեզ ուղղորդեց երգիչ Ալփայի՝ Ջեմալ բեյի թոռան մոտ: Ալփայը մեզ պատմեց, որ ոչինչ չգիտի իր նախապապի մասին բացի նրանից, որ վերջինս Նազիկի շեյխի որդին է եղել: Ընտանիքում երբեք չեն խոսել 1915թ Յոզգաթի փոխնահանգապետ լինելու ժամանակ նրա պահվածքի մասին: Կարծում ենք, որ այն մշուշը, որով Ջեմալ բեյը ընտանիքում պատվել էր, կարող է պայմանավորված լինել նրանով, որ նա իրենից թիրախ էր ներկայացնում Մուստաֆա Քեմալի համար: Թերևս կանխատեսելով հիշողությունների նման վերացումը՝ Ջեմալ բեյը իր անունը դրել էր իր բոլոր երեխաների՝ տղա թե աղջիկ, վրա որպես երկրորդ անուն: Նրա անունը և նրա բարեխիղճ վերաբերմունքը արժանի են հիշատակման Յոզգաթում և նրա ծննդավայրում՝ Ստամբուլում:

Թալասի կառավարիչ Ֆաիք բեյ

Մինչ 1918թ Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդների դատավարությունը Ստամբուլի հայոց պատրիարքությունը ցանկեր և գրառումներ էր պատրաստել այն մարդկանց վերաբերյալ, ովքեր պատասխանատու են տեղահանությունների և ջարդերի համար: Այդ նշումներից մեկում մենք տեսնում ենք, որ Թալասի *müdür* (քաղաքի կառավարիչ) Ֆաիք բեյը սպանվել է Կեսարիա

²¹⁰Նույն աղբյուրը, տես էջ 166

²¹¹Ալի Չանկայա *Yeni Mülkiye târihi ve mülkiyeliler*, մեջբերում, հատոր III, էջ 365

²¹²*Bir zamanlar Antalya: tarih,gözlem ve anılar*, Չուսեյն Չիմրին, հատոր 1, էջ189, ATSO, 2007թ,Անթալիա

քաղաքի փոստատար Սաբրիի կողմից հայերի տեղահանություններին և ջարդերին դիմադրելու համար:²¹³

Ոչ Օսմանյան արխիվներում, ոչ էլ որևէ այլ աղբյուրում Ֆախք բեյի մասին տեղեկություն չկա: Մակայն կան երկու վկաների հաշվետվություններ, որոնցում խոսվում է կառավարչի մասին առանց նրա անունը տալու: Էդուարդո Էռնեկյանի պապիկ Բագրատունին պատմել է, որ իրեն փրկել է *“Թալասի քաղաքական կամ զինվորական կառավարիչը”*:²¹⁴

Ամերիկացի միսիոներները, ովքեր 1914-1919թթ ընթացքում Թալասում էին, նշում են, որ քաղաքի կառավարիչը մահմեդականացած հայերին դիմելով ասաց. *“Խոջաները շատ ուրախ են նոր կրոնափոխությունների հետ կապված, սակայն այս նոր մահմեդականները կարճ ժամանակ անց կարտաքսվեն”*:²¹⁵

Այն անձը, որին պատրիարքությունը պատասխանատու է համարում Ֆախք բեյի մահվան մեջ, պետք է, որ Կեսարիայի թղթակցության կառավարիչ Ալի Սաբրին կամ Անկարա քաղաքի փոստատար Սաբրին լինի: Մենք որևէ հետք չգտանք այն մասին, որ Ֆախք բեյի սպանությունը վեր է հանվել Ստամբուլի դատավարությունների ժամանակ: Այդ ժամանակ Թալասում միսիոներ աշխատող Հերբերտ և Ժենեվիլ Իրվինների հուշերում մենք որևէ հիշատակություն չգտանք քաղաքի կառավարչի սպանության վերաբերյալ: Կլարա Ռիչմոնդի հուշերում որևէ հիշատակություն չկա այս սպանության մասին: Արդյո՞ք Ֆախք բեյը, ով փրկել էր Էդուարդո Էռնեկյանի մեծ պապին, իսկապես սպանության գոհ էր դարձել, թե ոչ, դեռ պետք է պարզվի:

VIII. Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգ

Սեյիդ Ալի և Դերսիմի ցեղերի մյուս առաջնորդները. “Ով փախչի Դերսիմ կփրկվի”

Դերսիմը, որի ինքնավարությունը երկար ժամանակ երաշխավորում էին շրջակա “չորս լեռները”, բախումների մեջ էր բոլոր կառավարությունների հետ, ովքեր փորձում էին կառավարել շրջանը: Ըստ Սեյիդ Ռիզայի խոսքերի Դերսիմի ալեվի և հայ ժողովուրդների միջև տարբերությունը *“այնքան նուրբ էր, որքան սոխի կճեպը”*: Դերսիմում հայերը և ալեվիները ընդհանուր մշակույթ ունեին և սա միակ վայրն էր, որտեղ հայերը *“կարող էին ազատ լինել”* 1915թ²¹⁶:

Բացառությամբ որոշ ցեղերի առաջնորդների, որոնց կառավարությունը կարողացել էր համոզել, և Չարսանջակ ու Չեմիշգեզեկ քաղաքների նման քաղաքների, որտեղ տեղի էին ունեցել տեղահանություններ և ջարդեր, Դերսիմի լեռները հայերի համար կարևոր թաքնվելու վայրեր դարձան: Այս պատճառով հատկապես Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգի փրկված վկաների ցուցմունքներում Դերսիմ անվանումը հավասարազոր էր փրկվելուն: Այդ վկայություններից շատերում հղում է կատարվում Դերսիմի ցեղերի առաջնորդներին առանց անուն կամ տեղ նշելու: Էրզրումից Պողոս Վարդանյանի վկայությունը, որը մենք գտանք Նուբարյան գրադարանում, այն հազվադեպ վկայություններից է, որը պարունակում է անուններ և մանրամասն տեղեկություն:²¹⁷ Մենք տեսանք, որ Վարդանյանի կողմից նշված որոշ անուններ առկա են նաև մյուս վկայություններում: Մակայն բոլորովին էլ հեշտ չեղավ գտնել նրանց բոլորի հետքերը: Լրացուցիչ դժվարություն էր նաև այն

²¹³APC/PAJ, Bureau d'information du Patriarcat, P427, notice sur Sabribey, chef du bureau de correspondance de Kayseri, in *Le genocide des Arméniens*, Ռեյմոնդ Գևորգյան, մեջբերում

²¹⁴Էդուարդո Էռնեկյանի նամակը, օգոստոս, 2014թ

²¹⁵*Հայկական Մերաստիա/Միվաս և Փոքր Հայք*, Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, էջ 393, Մագդա հրատարակիչներ, 2004թ, Կալիֆորնիա

²¹⁶Համեմատության համար տես վերոնշյալ 57-րդ էջը՝ Հովիտ գյուղից Խալիլի վկայությունը

²¹⁷Ռեյմոնդ Գևորգյանը Պողոս Վարդանյանի վկայությունը հիշատակում է *Le Génocide des Arméniens*-ում: Մենք կարողացանք ձեռք բերել ամբողջ վկայությունը, որը գտնվում էր Նուբարյան գրադարանում և գրվել էր 1916թ հայերեն լեզվով: BNU/ Անտոնյան փաստաթղթեր P.J.1/3, փաթեթ 59, Էրզրում f68v, témoignagede Boghos Vartanian, donnée Erzerum, le 5 août 1916 Թարգմանությունը՝ Գրիգոր Դավիդյանի

հանգամանքը, որ շրջանի տեղանունները փոխվել էին, որոշ տեղեր ջնջվել քարտեզից և որ նույն անուններով շատ ցեղերի առաջնորդներ կային: Չնայած դրան մեզ հաջողվեց ձեռք բերել տեղեկություններ անունների մեծ մասի վերաբերյալ:

1915թ հունիսին Էրզրումից Պողոս Վարդանյանը հայտնվեց քաղաքի տեղահանությունների երկրորդ շարասյան մեջ: Երբ նրանք հասան Կամախի կիրճ, տղամարդկանց առանձնացրեցին շարասյունից և նրանց սկզբում փակեցին ախոռներում: Այնուհետև նրանց տարան Կամախի կամրջի վրա կոտորելու: Այդ ջարդերից փրկվեցին ընդամենը յոթ վիրավորներ՝ Պողոս Վարդանյանը, Պետրոս Բաղդասարյանը, Երվանդ Քոչյանը և Հարություն Մնացականյանը, ովքեր մնացել էին մյուսների դիակների տակ: Չորս օր քայլելուց հետո Վարդանյանը և նրա ընկերները հասան Դերսիմ: Դերսիմի քրդերը նրանց սնունդ տվեցին և ուղղորդեցին դեպի ավելի բարձրադիր վայրերը, որոնք նրանք ավելի ապահով էին համարում:

“Ալի Սեյիդ աղան²¹⁸ քրդերի հոգևոր առաջնորդն էր, նա ուսուցիչ էր (ավելիների հոգևոր առաջնորդ): Նա եկավ իր ձիով և մեզ գտավ մի տան մեջ: “*Այդտեղ մի մնացեք, որովհետև իմ եղբայր Մենլի աղան խոստացել է հայերին տալ կառավարությանը: Եկեք իմ տուն: Այնտեղ դուք կարող եք ուտել ինչ ուզում եք*”,-ասաց նա: Մենք շնորհակալություն հայտնեցինք նրան, հետո գնացինք Ալի Սեյիդ աղայի գյուղ՝ Ծառուկ²¹⁹: Այնտեղ նրանք մեզ հաց ու այրան առաջարկեցին և մենք մեր ճամփորդությունը շարունակեցինք դեպի Կոզան առանց ժամանակ կորցնելու(…)

Այնուհետև, մենք գնացինք Բալականի Միհո աղայի մոտ:²²⁰ Նա մեզ ջերմ դիմավորեց: Հաջորդ օրը նա մեզ ուղարկեց իր գյուղ: Այնտեղ մենք հանդիպեցինք Երզնկայից երկու հայ ընտանիքների: Գևորգ Մարյանի կինը մաքրեց իմ վերքերը: Մենք մի գիշեր հյուրընկալվեցինք նրանց մոտ: Նրանք մեզ համար հաց փնտրեցին, սակայն կարողացան միայն գարի գտնել: Նրանք գարու հաց պատրաստեցին:

Հաջորդ օրը մենք գնացինք Բաղիկան: Նրանք իմ ընկեր Պողոսին նոր գլխարկ նվիրեցին: Մենք գնացինք Բաղիկ:²²¹ Այնտեղ մենք մնացինք Փաշայի տանը: Երկու օր հետո մենք գնացինք Բահե աղայի վրանները: Այնտեղ մենք մի բժշկի հանդիպեցինք, ով բուժեց մեր վերքերը: Ցավոք, բժիշկն ասաց, որ տեղ չունի մեզ իր մոտ վերցնելու համար: Այնուհետև, մենք գնացինք մի ուրիշ գյուղի վրանները և Երզնկայից երկու հայեր բաց սրտով ընդունեցին մեզ: Օգոստոսի 20-ին մենք ճանապարհ ընկանք դեպի մյուս վրանները և այդ ժամանակ հանդիպեցինք Արսեն Արշակունուն (...)

Վերաց գյուղում²²² մենք գնացինք **Ալի աղայի** գյուղի վրանները: Նա մեզ կարագ ու հաց տվեց: “Դուք չեք կարող այստեղ մնալ, մենք այստեղ հաց չունենք: Գնացեք Աշկիրեկ²²³ դեպի Բայլան ցեղի հողերը”,- ասաց նա (...) Ի վերջո մենք գնացինք Սեյիդ Ալի աղայի գյուղ և ավելի քան տաս ամիս մնացինք այնտեղ: Այնտեղ էին Երզնկայի հայեր Բարսեղը և իր ընտանիքը և շատ այլ վայրերից մարդիկ նույնպես: Երբ ռուսները մտան Երզնկա, մենք շրջապատեցինք ռուսներին առանց ժամանակ կորցնելու: Նրանք մեզ փաստաթուղթ տվեցին, որպեսզի կարողանանք գնալ Կարին (Էրզրում): Երբ մենք տեսանք այնտեղ, որ մեր ընկերների տները ավերվել են”:

Պողոս Վարդանյանի վկայությունում մենք տեսնում ենք, որ Օվաջիկի և Բոլումորի Ծառուկ (Յաքաթարլա), Բաղիկ (Չամբուլակ), Վերաց (Էդիմլի), Աշկիրեկ (Քոջաթեփե) գյուղերը և բալ, կեչել և քոչան ցեղերը,

²¹⁸Բնօրինակ տեքստում նշվում է “Ալի Սայիդ աղա”:Եթե ի նկատի ունենանք “ուսուցիչ” կոչումը, կարծում ենք անունը պետք է լիներ Սեյիդ և ոչ թե Սայիդ

²¹⁹Ծառուկը (ներկայիս անվանումն է Յաքաթարլա գյուղ Օվաջիկի շրջանում) կեչել և բալ ցեղերի բնակավայրն էր:

²²⁰Բալ ցեղ

²²¹Բաղիկան և Բաղիկ գյուղերը այսօր հնձվող դաշտեր են Օվաջիկի շրջանի Չամբուլակ գյուղում: Այն կեչել և բալ ցեղերի բնակավայրն է:

²²²Վերաց/Մերաշ (այսօր այն կոչվում է Օվաջիկի շրջանի Էդիմլի գյուղ), այն կեչել ցեղի բնակավայր է

²²³Աշկիրեկ (այսօր այն կոչվում է Պուլումուր շրջանի Քոջաթեփե գյուղ), բալ ցեղի բնակավայր է

որոնք ապրում էին Կոզանի շրջանում, այն վայրերն էին, որոնք որպես ապաստան էին ծառայում այն հայերի համար, ում հաջողվել էր հասնել Դերսիմ: Անգամ սովը, որը մենք տեսնում ենք Վարդանյանի վկայությունում և որը արդյունք էր հարյուրավոր մարդկանց շրջան գալուն, չէր փոխել այս ցեղերի վերաբերմունքը, նրանք շարունակում էին կիսել իրենց ունեցած քիչ սնունդը հայերի հետ: Քահանա Արսեն Արշակունին, ում Վարդանյանը հանդիպեց և ում պատմությունը մենք պատմել ենք վերևում, Դերսիմում իր մնալու վերաբերյալ ասել է. *“քրդերը մեծ հարգանքով էին վերաբերվում ինձ այնտեղ”*:²²⁴

Մեյիդ Ալի աղան, ով անհանգստանում էր, որ Վարդանյանը և նրա ընկերները կընկնեն իր եղբոր ձեռքը և կհանձնվեն պաշտոնյաներին, և ով նրանց իր գյուղում թաքցրել էր տաս ամիս, “ռայբեր” էր: Ալեվիների հավատքում այս կոչումը նշանակում է “ուղեկցող”: Մեյիդ Ալին հոգևոր առաջնորդ էր: Քանի որ նա ապրում էր Ծառուկում, մենք ենթադրում ենք, որ նա սերում էր բալ ցեղի Մեյիդ Քեմալ ճյուղից, ովքեր ապրում էին այդ գյուղում:²²⁵

Բաղիկ գյուղում հիշատակված փաշան պետք է որ բալ ցեղի **Թիմուր փաշան** լինի, **Բահե աղան**՝ կեչել ցեղի Բաքե աղան, ով վերահսկում էր Բաղիկանը: **Իդարե Իբրահիմ աղան** քոչանի առաջնորդն էր, որտեղ նրանք ապաստան գտան: 1918թ Դերսիմի ցեղերի մասին իր գրած զեկույցում Քազըմ Կարաբեքիրը հստակ նշում է, թե ինչու կառավարությունը բացասական վերաբերմունք ուներ Իդարե Իբրահիմ աղայի նկատմամբ: Պատճառը այն էր, որ վերջինս պաշտպանում էր հայերին: Իր զեկույցում Կարաբեքիրը Իդարե աղայի մասին խոսում էր հետևյալ կերպ. *“Նա միշտ պաշտպանում էր հայերին և թալանչիներին, նա անգամ պաշտպանել էր Նալբանդ Նասուհի անունով մի հայի, որը հիմա համարվում է լրտես: Նրա կախվածությունը և նվիրվածությունը պետությանը միշտ արտաքնապես են: Նա Դերսիմի ամենաչար և դաժան թալանչին է, ում կրոնը թույլ է տալիս առանց գթասրտության սպանել ցանկացած եղանակով*:²²⁶

Հայերին պաշտպանած բալ և կեչել ցեղերը համարվում են ազգակից ցեղեր, որոնք սերում են ընդհանուր նախնիներից: Նույն կերպ համարվում է, որ քոչան ցեղը ազգակից է քալան ցեղախմբի հետ: Ուստի, զարմանալի չէ, որ իրենց ճամփորդության ժամանակ Պողոս Վարդանյանը և իր ընկերները միշտ մնում էին բալ-կեչել-քոչան եռանկյան տարածքում, որի ընթացքում նրանք մշտապես մի տեղից մյուսն էին տեղափոխվում: Հայտնի է, որ մինչ օրս բալ և կեչել ցեղի անդամները պահպանել են ցանկացած տեսակի տարաձայնությունների դեպքում Քոչանի շրջանում ապաստան գտնելու սովորույթը:²²⁷

Այս շրջանում կային ալեվի հավատքի շատ հոգևոր կենտրոններ, ինչպիսիք են Սուլթան Բաբան և “Սրբերի երկիրը”: Սակայն այսօր այս ավանների տեղում ոչինչ չկա բացի փչող քամուց: Ծառուկ, Բաղիկ և Վերաց գյուղերը առաջին անգամ քանդվել են 1937-38թթ Դերսիմի ջարդերի ժամանակ և տաս տարով հայտարարվել “արգելված տարածք”: Բնակչության մեծ մասը ջարդերի զոհ է դարձել 1937-38թթ, իսկ նրանք, ովքեր ողջ էին մնացել, աքսորվել են: Այն գյուղերը, որոնք նորից կենդանացան նրանց շնորհիվ, ովքեր վերադարձան, կառավարության կողմից երկրորդ անգամ քանդվեցին 90-ական թթ և նորից արգելվեց դրանց բնակեցումը:²²⁸ Ներկայումս դրանք ուրվական հողեր են, “արգելված տարածք”, որտեղ անգամ ծառերը չորացել են: Բնակեցման արգելքը, կարծես թե, վերջին երկու տարիների

²²⁴ Համեմատության համար տես էջ 56-ը:

²²⁵ Հարցազրույց Ծառուկի, Բաղիկի, Վերացի և Աշկիրեկի գյուղերի ցեղերի Սուլթանբաբա քոյլերիիի (գյուղերի) ասոցիացիայից Իբրահիմ Կարակայայի հետ, նոյեմբեր, 2014թ, Ստամբուլ, *Dersim Raporu*, էջ 112-113, 118, İletişim Yayınları, 2011թ, Ստամբուլ, *Dersim Raporları*, Ֆաիք Բուլուր, էջ 140-142, Evrensel Basım Yayın, 2005թ, Ստամբուլ *Aşiretler Raporu*, էջ 289, 295, 296, Կոլեկտիվ, Կայնակ Յայինլարի, 2014թ, Ստամբուլ

²²⁶ *Dersim Raporları*, Ֆաիք Բուլուր, մեջբերում 215-216-րդ էջերից: Քազըմ Կարաբեքիրը պնդում է, որ Իդարե աղան օգնել է հայերին փախչել Երզնկա գումարի դիմաց: Չնայած փրկվածների վկայություններում բազմաթիվ մարդիկ են նշվում, ովքեր փրկել են մարդկանց գումարի դիմաց, նման տեսակի որևէ հաշվետվություն չկա, որ վերաբերում է Իդարե աղային:

²²⁷ Հարցազրույց Իբրահիմ Կարակայայի հետ, մեջբերում

²²⁸ *Paga Khalik: bir Dersim yaşar Dersim içinde*, Իբրահիմ Կարակայա, Չիլա թերթ, հուլիս, 2014թ

ընթացքում հանվել է, սակայն նրանց աշխատանքը, ովքեր կցանկանան վերադառնալ այս գյուղեր, շատ դժվար կլինի:

1915թ Դերսիմի ցեղերը հայերին ոչ միայն մնալու տեղ էին տրամադրում, նրանք նաև կազմակերպում էին շատ ուրիշ շրջաններից հայերի փախուստը, առաջին հերթին Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգից դեպի Դերսիմ: Կարաբալ ցեղից **Կանգոզադե Մեհմեդը** այս “փախուստի գործողությունների” ժամանակ ամենահայտնի անունն էր դարձել: Տարբեր վկայություններում նշվում է, որ նրանց, ովքեր կազմակերպում էին փախուստ դեպի Դերսիմ, որոշակի գումար էին վճարում:

Գումարի դիմաց մարդկանց փրկելը չի կարող ներառվել “Առաքինի վերաբերմունք” սահմանման մեջ: Սակայն այդ ժամանակահատվածում Կանգոզադե Մեհմեդի կատարած գործողությունների զարմացնող չափերը և նրա ողբերգական վախճանը ստիպում ենք նվազագույնը հիշատակել նրա անունը: Ըստ ցեղասպանությունը վերապրած հայերի վկայությունների Աղզունիկ գյուղում, որտեղ իշխում էր Կանգոզադե Մեհմեդ աղան, 1915թ և դրանից հետո ապաստան գտան հազարավոր մարդիկ: Միսակ Բաբաջանյանը Խարբերդից պատմում է, որ Մեհմեդ աղան թաքցրել էր 500 հայ երիտասարդի և 700-800 կանանց և երեխաների:²²⁹ Ըստ մեկ այլ վկայության Աղզունիկում այնքան հայեր կային, որ գյուղը անվանում էին “Փարիզ”:²³⁰ Ըստ Արաբկիրից Գալուստ Գալուստյանի վկայության անգամ 1915թ հետո հայերը շարունակում էին ապաստան գտնել Կանգոզադե Մեհմեդի մոտ: 1917թ հունվարին նա տեսել էր Աղզունիկ “փախած” մոտ 2000 հայերի: Գալուստյանը այնտեղ մնաց տաս օր: Այնուհետև, նա ճանապարհ ընկավ դեպի Երզնկա 54 հոգու հետ:²³¹

Այս բոլոր վկայություններում մենք տեսնում ենք, որ փախչելու համար վճարվում էր որոշակի գումար, սակայն Աղզունիկում մնալու համար նրանցից ոչինչ չէին պահանջում: Վկայություններից տեղեկանում ենք, որ որոշ շրջաններում փախուստը, հատկապես եթե ընտրված հեռավորությունը պետք է անցնեին փոստային կառքով, հնարավոր էր դառնում կառապանին կամ պաշտոնյաներին կաշառելու միջոցով: Այս պատճառները, որոշ չափով հասկանալի են դարձնում, թե փախուստի կազմակերպման դիմաց ինչու էին գումար պահանջում, չնայած որ դա արդարացված չէ: Պատմաբան Ռեյմոնդ Գևորգյանը ընդգծում է, որ պետք է նաև հաշվի առնել այն սովը, որում նրանք ապրում էին. *“Դերսիմը մի վայր էր, որ Օսմանյան պետությունը չէր կարողանում պատշաճ կերպով վերահսկել: Նրանք փրկել էին 15000 մարդ: Նրանք օգնեցին փրկվածներին ապաստան գտնել ռուսական բանակում: Այդ ժամանակահատվածում այնքան մարդ եկավ Դերսիմ, որ խնդիրներ առաջացան: Բոլորի համար բավարար սնունդ չկար: Որոշ մարդիկ հայերին օգնում էին գումարի դիմաց: Սակայն պետք չէ այդ մարդկանց մեղադրել դրա համար, ամեն դեպքում դա աղքատ շրջան է”*:²³² Չնայած նրան, որ այդ ժամանակահատվածի պայմանները որոշ պատճառներ հասկանալի են դարձնում, մենք չենք կարող Կանգոզադե Մեհմեդի գործողությունները կշեռքի նույն նժարին դնել այն գործողությունների հետ, որոնք լիարժեք էին: Միակ առաքինությունը, որ կարող ենք վերագրել նրան այն է, որ ի տարբերություն ցեղասպանության ժամանակ պատահած տասնյակ օրինակների նա գոնե “ազնիվ” հարաբերությունների մեջ էր հայերի հետ: Ի տարբերություն նրանց, ովքեր վերցնում էին վերջին մանրադրամը, խոստանալով փրկել նրանց, իսկ հետո կոտորում ամբողջ ընտանիքին, Կանգոզադե Մեհմեդ աղան, չնայած գումարի դիմաց, պահում էր իր խոստումը և հետևում, որ հազարավոր հայեր հասնեն մինչև Դերսիմ և փրկվեն: Չնայած նա չի միացել որևէ ապաստամբության, նա դարձավ 1938թ Դերսիմի ջարդերի գոհը և սպանվեց Լավո գետի մոտ իր ամբողջ ընտանիքի հետ միասին:

Հետազոտողները պատմում են **Մեյիդ Ռիզայի**՝ Դերսիմի հայերի հետ մտերմության և նրանց հետ դաշնություն ստեղծելու նրա ձգտման մասին: 1915թ նրա վերաբերմունքի մասին մենք մի վկայություն ենք գտել Մուշում մի հարցազրույցի ժամանակ. *“Մենք չէինք կարող փրկվել, եթե չլիներ Մեյիդ Ռիզան: Նա հայերին Երզնկայի և Էրզրումի միջով տեղափոխում էր Ռուսաստան”*, - Մուշից Արմեն Գալուստին պատմել էին նրա Հայաստանում ապրող բարեկամները: Գալուստի մեծ հորեղբայրները Հայաստան

²²⁹ Կեդերնամե, մեջբերում 405-րդ էջից

²³⁰Նույն աղբյուրը, տես էջ 421

²³¹Նույն աղբյուրը, տես էջ 454

²³² *Celal Bey ve diğerleri*, հարցազրույց Ռեյմոնդ Գևորգյանի հետ, Բուրչին Գերչեկ, ռադիկալ թերթ, 26.02.2006

էին հասել Դերսիմի միջով: Մեյիդ Ռիզան իր մարդկանց ուղարկել էր Բինգյուլի Սուլհան՝ նրանց հանդիպելու համար:²³³ Չնայած այս դիրքորոշմանը, մենք տեսնում ենք, որ հետագայում 1918թ Մեյիդ Ռեզան հարձակվել է հայ կոմիտեի վրա, ովքեր մնում էին Երզնկայում և Էրզրումում մինչ ռուսական բանակը ետ էր քաշվում:²³⁴ Այս փուլում առաջարկեցին, որ նրան խաբեն այնպիսի շահարկումներով ինչպիսիք են այն ,որ Երզնկայի մոտ ապրող քրդերի կյանքը վտանգի մեջ է:²³⁵

Ցեղասպանությունը վերապրած շատ հայերի վկայություններում նշվում է որ նրանքն փրկվել են “Դերսիմի քրդերի” շնորհիվ՝ առանց հիշատակելու անուններ:²³⁶ Ինչպես Մերիո գյուղից Հակոբ Գրիգորյանն է նշում “Նրանք, ովքեր փախչում էին դեպի Դերսիմ, փրկվում էին:²³⁷ Քազըմ Կարաբեքիրի հետևյալ տողերից կարելի է հասկանալ այն կատաղությունը, որ Դերսիմի մարդկանց առաքինի վերաբերմունքը պատճառում էր կառավարությանը.

“Չնայած նրան որ որևէ թուրք չի կարող ժամանակ անցկացնել ցեղերի մոտակայքում առանց հարձակման ենթարկվելու, ամենասովորական քրիստոնյաները կարող են այնտեղ մնալ և առևտրով զբաղվել այդ ցեղերի մեջ ամիսներով: Նրանց վրա երբեք չեն հարձակվում իրենց կրոնի շնորհիվ: Հակառակը, այս ցեղերը նրանց պաշտպանում և օգնում են: Փաստացի Խարբերդից, Արաբկիրից, Ակնից և այլ վայրերից շատ հայեր տեղահանությունների ժամանակ փախան Դերսիմ: Ցեղերի կողմից երկար ժամանակ պաշտպանված լինելուց հետո նրանք տեղափոխվեցին Ռուսաստան: Պատերազմի մնացած ժամանակահատվածում այս ցեղերը հայ կոմիտեներին թուրքերի դեմ օգնություն և ուղղություն էին ցույց տալիս”:²³⁸

Այս կատաղությունը որոշիչ դեր խաղաց այն վայրագությունների ուժգնության հարցում, որը պետությունը ուղղեց Դերսիմի ժողովրդի դեմ 1937-38թթ.²³⁹

Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգի մյուս Առաքինի մարդիկ Քարաչանից Մուստաֆա աղա

Քիդիի Չանախչի գյուղից Մկրտիչ Պողոսյանը կորցրեց իր ընտանիքը տեղահանությունների ժամանակ: Նա և “Պողոսի թոռ Սողոմոնը” վեց ամիս թաքնվեցին **Քարաչան գյուղից** Մուստաֆա աղայի տանը: Այնուհետև նրանք գնացին “**Քարաման Աֆղարայի**” գյուղը, այնտեղ 18 ամիս մնալուց հետո նրանք հասան Էրզրում, որը ռուսների վերահսկողության տակ էր:²⁴⁰ Մենք կապվեցինք Քարաչան գյուղի ժողովրդի հետ՝ Մուստաֆա աղայի մասին տեղեկություն իմանալու համար: Մենք իմացանք, որ 1915թ հետո Մուստաֆա աղան գնացել էր Ամերիկա: Սակայն, մեզ չհաջողվեց տեղեկություն ստանալ

²³³ Հարցազրույց Արմեն Գալուստի հետ, հունվար 2014թ, Մուշ

²³⁴ *Hatiratim*, Նուրի Դերսիմի, էջ 57-58, Դամ Յայիլարի, 2014թ, Ստամբուլ: 1918թ գրած իր զեկույցում Քազըմ Կարաբեքիրը Մեյիդ Ռիզայի մասին ասում է. “Այս մարդը հասկացել է ռուսների մեծությունը և նա Օսմանյան կառավարության դեմ մի խոզ է”, հետո նա ավելացնում է,- “չնայած նա ունի (...), թղթակցություն հայերի հետ, նա մատուցել է նաև այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ Խոզաթի պաշտպանությունը և հոգուտ կառավարության գործելը”: *Dersim Raporları*, Ֆաիք Բուլուբ, մեջբերում 218-րդ էջից:

²³⁵ 1915'in denek taşında Türk ve Kürt siyaseti, 2. Bölüm, Հովսեփ Հայրենի, Հայաստան ինֆո, 2013թ մարտի 27

²³⁶ Հայերին փրկած անանուն մարդկանցից մեկի մասին Կալե Շեյխի պատմությունը համեմատության համար տեսք վերևի 56-րդ էջում

²³⁷ Դերսիմ 1937-38 *Sözlü Tarih Proje Raporu*, Հակոբ Գրիգորյանի վկայությունը, Avrupa Dersim Dernekleri Federasyonu, 2015թ:

²³⁸ *Dersim Raporları*, Ֆաիք Բուլուբ, մեջբերում 222-րդ էջից

²³⁹ Ճանապարհին Դերսիմի ջարդերին մասնակցող զինվորներին հրահրում էին, ասելով “*Մրանք, այն մարդիկ են, ովքեր թաքցրել են հայերին*” “*Dersim araştırmacısı Cemal Taş: Dersim'deki toplu mezarları savcılara göstermeye hazırım*”, *T24*, 28.11.2011

²⁴⁰ *Quşun Sunuşu* (Acı Çekenlerin Sesi), Բ. Տոնապետեան, մեջբերում 109-րդ էջից

այն մասին, որ նա թաքցրել էր Պողոսյանին և նրա ընկերոջը: Մենք կարող ենք միայն գուշակել Պողոսյանի փրկիչների մասին, ում մասին նա ասում է. “Նրանք երկուսն էլ ինձ շատ օգնեցին”։ Քահրաման Աֆդարայի գյուղը և շրջանը չեն նշվում: Մենք կարող ենք ենթադրել, որ Քահրաման Աֆդարանը Դերսիմից էր, քանի որ նա նրանց օգնել էր հասնել Էրզրում, հնարավոր է, որ նա Քահրաման Աղազադե Մեհմեդն էր կեչել ցեղից:

Հուլեկոյի աղաները

Հունիսի սկզբում արտաքսված շարասյունը Երզնկա-Կամախի կամուրջ-Արաբկիր ճանապարհին հարձակման ենթարկվեց շատ հրոսակախմբերի կողմից: Մոտ 80 կանայք կարողացան ապաստան գտնել Հուլեկոյում:(Խարբերդի Շահինկայա գյուղի) աղաները նրանց տարան Դերսիմ:²⁴¹

Աշվան գյուղի դիմացի ափը

Երբ Աշվանում (Մուրադչիկ, Խարբերդ) սկսվեցին տեղահանությունները, հրոսակախմբերը շրջապատեցին գյուղը: Ջավեն Ղուկասյանի հորեղբորը հաջողվեց փախչել գյուղից և հասնել Դերսիմ: Նա Դերսիմի քրդերին մի քանի անգամ ուղարկեց իր ընտանիքի ետևից և ետ վերադարձրեց նրանց: Ի վերջո ընտանիքի ծանոթ քրդերից մեկը հասավ գյուղ և փրկեց նրանց: Նրանք ստիպված էին անցնել գետը, եթե ցանկանում էին գնալ Դերսիմ: Նրանք ջուրը մեծ դժվարությամբ անցան, սակայն նրանց մայրը չկարողացավ շարունակել ճանապարհը: Ղուկասյանի հորեղբայրը անցավ գետը, որպեսզի փրկի իր մորը, սակայն տեսավ, որ ամբողջ գյուղն է տեղահանվում: Նա Հավգակլի Ալի բեյին ուղարկեց շարասյան հետևից, սակայն նրան նույնպես չհաջողվեց հասնել նրանց:²⁴²

Ղուկասյանի գյուղը Աշվանը (Աշվան, Մուրադչիկ) գտնվում է այն տեղում, որտեղ Մուրադ գետը և Քարասու վտակը միանում են և խառնվում Եփրատին:²⁴³ Աշվանի դիմաց գտնվում է Կանգոզադե Մեհմեդ աղայի վերոնշյալ Աղզունիկ գյուղը: Կարող ենք ենթադրել, որ վկայությունում որպես “Դերսիմի քրդեր” նշված անձինք Կանգոզադե Մեհմեդի բարեկամներն էին: Ղուկասյանը պատմում է իրենց փախուստի մասին ասելով՝ “Մենք ճանապարհ ընկանք քրդերի մոտ, Սահմուդ աղայի մոտ”, ով պետք է որ Կանգոզադե Մեհմեդը լիներ:

Քեսրիկից Մեհմեդ աղան և մյուս անձինք

Խարբերդի մոտակա քաղաքներում տեղահանությունները սկսվեցին 1915թ հունիսին: Ագապիի ընտանիքը ապրում էր այս քաղաքներից մեկում (վկայությունում գյուղի անունը չի հիշատակվում): 12 տարեկանից բարձր տղամարդիկ հավաքվեցին գյուղի կենտրոնում: Ագապին և նրա մայրն ու հորեղբոր կինը փախան Չիֆուլիկ գյուղ: Նրանք լսել էին, որ կանայք և երեխաները նույնպես պետք է տեղահանվեն: Նրանք գնացին Գեզերեկից Մեհմեդ աղայի մոտ:²⁴⁴ “Նա սիրով դիմավորեց մեզ և թուրքերից թաքցրեց գրեթե մեկ տարի առանց գումար ուղելու: Նա մեր մասին հոր նման հոգ էր տանում մինչև Երզնկա տանելը: Մենք մինչև մեր կյանքի վերջ պարտական ենք այս մարդուն, նրա լավ արարքը չի կարող մոռացվել, առանց նրա մենք չէինք փրկվի”, - ասում է Ագապին իր վկայությունում: Գեզերեկ/Քեսրիկ գյուղը, որտեղ ապրում էր Մեհմեդ աղան 1915թ Խարբերդի գյուղերից մեկն էր: Մինչ 1915թ քաղաքում ապրում էին 2280 հայեր: Քեսրիկը հետագայում դարձավ Էլազիզ քաղաքի թաղամաս Կիզիլայ անունով: Մեզ չհաջողվեց գտնել Մեհմեդ աղայի հետքը:

Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգում ուրիշ Առաքինի մարդիկ ևս փրկեցին իրենց հարևաններին կամ անձանոթ մարդկանց: Նրանց անունները հիշատակվում են վկայություններում, սակայն նրանց մասին բավարար տեղեկություն չկա նրանց հետքը գտնելու համար: Դրանք են՝ **Խարբերդի Սադիկը,**

²⁴¹Մկրտիչ Մուրադյանի վկայությունը, Անտոնյան փաստաթղթեր, P.J.1/3, փաթեթ 11, Բայբուրթ, Նուբարյան գրադարան

²⁴²Չայն Տառապեղոց, մեջբերում 93-րդ էջից

²⁴³Գյուղը ներկայումս ամբարտակի ջրերի տակ է մնացել

²⁴⁴Չայն Տառապեղոց, մեջբերում 135-րդ էջից

Մուստաֆա և Մուսա էֆենդին, Գոշան (Ուզուն Հուսեյն) գյուղից՝ մի անանուն ձեր մարդ, Քեսրիկլի Բաբաջան փաշան, Թադեմ (Թադիմ) գյուղից՝ մի այրի՝ և նրա խորթ որդի Հաֆիզը, Մեզրեյի Բերբեր Շաքիրը:²⁴⁵

IX. Քյութահիայի փոխնահանգապետություն

Ֆաիք Ալի բեյ՝ Քյութահիայի փոխնահանգապետ

Քյութահիայում, որը 1915թ մայիսին դարձել էր անկախ փոխնահանգապետություն²⁴⁶ ամենահայտնի բարեգութ վերաբերմունքը ցուցաբերել էր **Ֆաիք Ալի բեյը**: 1915թ նրան հաջողվեց կանխել Քյութահիայի հայերի տեղահանությունները առանց հարձակման ենթարկվելու կամ իր կյանքը վտանգելու: Նա նաև հետևեց, որ նրանք, ովքեր գալիս էին մյուս նահանգներից, կարողանան մնալ Քյութահիայում:

Ֆաիք Ալին գերադասում էր ճանաչված լինել ավելի շատ որպես բանաստեղծ քան որպես կառավարող անձ:²⁴⁷ Օսմանյան արխիվներում շատ քիչ տեղեկություն կա այն մասին, թե ինչպես նա կարողացավ կազմակերպել այս բացառիկ դիմադրությունը: Սակայն, մենք տեսնում ենք, որ 1915թ օգոստոսին կառավարությունը սկսեց անհանգստանալ նրանից, որ այլ վայրերից տարհանված հայերը հավաքվում և երկար ժամանակ մնում էին Քյութահիայում: Նախ Ներքին գործերի նախարարությունը հիշեցրեց, որ *“Քյութահիա եկած հայերը պետք է ուղարկվեն Հալեպ”*:²⁴⁸ Այնուհետև, Ֆաիք Ալիից պահանջեցին բացատրել *“թե ինչն է պատճառը, որ Իզմիրից և այլ վայրերից բերված հայերը մնում էին Քյութահիայում և չէին ուղարկվում իրենց հասկացված վայրերը”*²⁴⁹ 1915թ օգոստոսի 28-ին Ֆաիք Ալիի ի պատասխան ուղարկած հեռագրից երևում է, որ փոխնահանգապետը փորձում էր ժամանակ շահել՝ առաջ քաշելով որոշ պատրվակներ, սակայն կառավարությունը հաստատուն էր հայերի բնակեցումը Քյութահիայում արգելելու մտադրության մեջ. *“Այնտեղ եկող հայերը, չպետք է մնան”*:²⁵⁰

Ինչպես և հրամաններին հակառակված մյուս պաշտոնյաների դեպքում՝ Օսմանյան արխիվներում հնարավոր չէ գտնել այս թեմայով Ֆաիք Ալիի՝ կառավարությանը ուղարկած հեռագրերի հետքերը:

Հիշեցումներով ու կշտամբանքներով նմանատիպ թղթակցությունը շարունակվեց մինչև 1915թ սեպտեմբերի 9-ը: Սակայն, այդ օրվանից հետո տեղի ունեցավ մի բան, որի միայն արդյունքները մենք կարող ենք տեսնել արխիվներում. Կառավարությունը ընդունեց, որ կարիք չկար գրառումներ կատարել հայերի վերաբերյալ *“քանի որ Քյութահիայի հայերը չէին արտաքսվել”*: 1915թ նոյեմբերին նախարարությունը պահանջեց տեղեկություն *“այն հայերի մասին, ովքեր, որոշվել էր, որ չպետք է արտաքսվեին և նրանց մասին, ովքեր բնակություն էին հաստատել մոտակայքում”*:²⁵¹ 1916թ փետրվարի 4-ին նախարարությունը *“թույլ տվեց այն հայերին, ովքեր ժամանակավորապես մնում էին մոտակայքում, չուղարկել այլ վայրեր, այլ բնակեցնել այնտեղ, որտեղ նրանք գտնվում են”*:²⁵² Այդ օրվանից հետո, նվազագույնը մինչև 1916թ նոյեմբեր, կառավարությունը դադարեց հետապնդել Քյութահիային և քաղաքում հաստատված հայերին:²⁵³

Ինչպե՞ս կարող էր Քյութահիան ապաստան դառնալ այնպիսի հեռու քաղաքներից եկած հայերի

²⁴⁵Նույն աղբյուրը, մեջբերում.244-254,270-273 էջերից, *Մարդկություն՝ անմարդկութեան մեջ Շաքե Եսլայեան-Մեթեան*, մեջբերում 89-89,95-105,168-169 էջերից

²⁴⁶ՕԿՄ, DH.İ.UM.EK.6/76,16/R/1333.

²⁴⁷Ֆաիք Ալիի գերեզմանի վրա, ով հանրապետական շրջանում վերցրել էր “Օզանայ” ազգանունը, առկա եզակի փորագրության վրա գրված է “Բանաստեղծ”

²⁴⁸ՕԿՄ DH.ŞFR.55/106,08/L/133

²⁴⁹ՕԿՄ DH.ŞFR.55/204,14/L/1333

²⁵⁰ՕԿՄ DH.ŞFR.55/278,17/L/1333

²⁵¹ՕԿՄ DH.ŞFR.58/53,09/M/1334

²⁵²ՕԿՄ .DH.ŞFR.60/196,26/Ra/1334

²⁵³1916թ նոյեմբերին *“քանի որ կրոնական տեսակետից նպատակահարմար չէր, որ հայերը բնակեցվեն շրջանում”*, նրանց տեղահանման հրաման ուղարկվեց ՕԿՄ .DH.ŞFR.70/92,29/M/1335

համար ինչպիսին էր Մերզիֆոնը²⁵⁴: Ո՞րն էր կառավարության՝ Քյութահիայի հայերին տեղահանելու որոշումից հետո կանգնելու պատճառը: Ժամանակ թերթի խմբագիր Մեպուհ Ակունին նույն հարցը տվել է Ֆաիք Ալին, երբ ինքը հանդիպել էր նրան Ստամբուլում պատերազմից հետո: Մեպուհ Ակունին այն մտավորականներից էր, որ տեղահանվել էին 1915թ ապրիլի 24-ին: Նա վերապրել էր տեղահանությունները և 1920թ գիրք գրել, որը կոչվում էր “Միլիոն մը հայերու ջարդի պատմություն”:
Ըստ Ակունիի՝ “*Չնայած Ֆաիք Ալին ինքը չգիտի, թե ինչպես է իրեն հաջողվել դա անել:*”²⁵⁵ Ֆաիք Ալին չի ցանկացել իրեն առաջ քաշել: Ի պատասխան Ակունիի հարցին նա ասել է, որ “*Քյութահիայի հայերը իրենց փրկության համար որևէ մեկին պարտական չեն, այլ միայն իրենց բախտին, ճակատագրին և միգրացե կառավարության վարկենական բարյացակամությանը*”: Ըստ Ֆաիք Ալիի այս դեպքում “*Քյութահիայի թուրքերը, ովքեր հաստատապես ընդհանացան հայերի տեղահանությանը*”, կարևոր դեր խաղացին:

Գերմիյանգադե ընտանիքը, Խոջագադե Ռաշիհ էֆենդին և քաղաքի մյուս հայտնիները, ում անունները չեն նշվում, այս առումով հատուկ հաստատական դիրքորոշում ցուցաբերեցին: Ակունին մեզ հիշեցրեց, որ կառավարությունը շարունակում էր սպառնալ նահանգապետին հեռացնել իր պաշտոնից և պատժել հայերին պաշտպանող թուրքերին, սակայն Ֆաիք Ալին “*կարողացավ թուլացնել կառավարության խիստ դիրքորոշումը իր խորամանկ ռազմավարությամբ*”, ասում է նա:

Մենք որևէ մանրամասներ չգիտենք Ֆաիք Ալիի “խորամանկ ռազմավարության” մասին, սակայն պարզ է, որ Գերմիյանգադե ընտանիքը և Խոջագադե Ռաշիհ էֆենդին բավականին հզոր ազդեցություն ունեին Միություն և առաջադիմություն կուսակցության վրա և նրանք այդ ուժը օգտագործում էին հայերին պաշտպանելու համար:

Գերմիյանգադե Ալի բեյը և Խոջագադե Ռաշիհ էֆենդի

Քյութահիան 1915թ դարձել էր Ադաբազարի, Բանդիրմայի, Թեքիրդաղի, Բուրսայի և շատ այլ քաղաքների հայերի ապաստարանը:²⁵⁶ Մենք փորձեցինք գտնել Առաքինի անձանց հետքերը Քյութահիայում: Սակայն մի քաղաքում, որտեղ հայերին վերաբերող ամեն ինչ ջնջվել է, կարծես թե այն մարդկանց հետքերը, ովքեր փորձել էին փրկել նրանց նույնպես ջնջվել են: Մենք տեսանք այն նահանգապետերի արձանները, ովքեր պաշտոնավարել են Ֆաիք Ալիից առաջ, սակայն չգտանք նրա անվան հետքը քաղաքում:²⁵⁷ Անգամ այն փաստը, որ քաղաքի հայտնի կերամիկան պատրաստվում էր հայ արհեստավորների, հատկապես Նաջի Մինասի կողմից, ջնջվել է քաղաքի հիշողությունից:²⁵⁸ Մինչ 1890-ական թթ կերամիկայի բոլոր արհեստավորները հայեր էին, սակայն հանրապետական շրջանում Քյութահիայի կերամիկան ներկայացվում էր որպես “թուրք-իսլամական արվեստ”: Միաժամանակ Քյութահիայի հայկական եկեղեցիները, բացառությամբ մեկի, քանդվեցին, նրանց փոխարեն կառուցվեցին մզկիթներ և փոստային գրասենյակներ:²⁵⁹ Քաղաքի հայկական գերեզմանատունը քանդվեց, իսկ մի քանի գերեզմանաքարեր նետվեցին Հնագիտական թանգարանի այգի:

Քյութահիայի Շեխրեքյուսթու, Մեյդան և Փիրլեր թաղամասերը, որտեղ 1915թ ապրում էին հայեր և մուսուլմաններ, այսօր լի են լքված պատմական փայտե տներով, որոնք իրենց քանակով գերազանցում են մյուս բոլոր քաղաքների տներին: Իրենց “ուրվականների քաղաքի” տեսքով այս տները Քյութահիայի հայերից և նրանց պաշտպանողներից մնացած միակ բաներն են: Ինչ վերաբերում է Մեյդան

²⁵⁴Խոսքը գնում է Ֆեներջյան Օհանեսի մասին, ով Մերզիֆոնի ժողովրդից էր և ով հայերի դեպի ներքին շրջաններ տեղահանության ժամանակ փախել էր Քյութահիա և շարունակեց այնտեղ մնալ ու օգնել հայերին իրենց վերադարձի հարցում” ՕԿԱ.ԴԻ.ԵՄ.2.Ֆ674/21, 13/L/1334

²⁵⁵Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Մեպուհ Ակունի, 251-253 էջեր, 1920թ, Ստամբուլ, կարևոր հատվածների հայերենից թարգմանությունը կատարել է Նուբարյան գրադարանից Մկրտիչ Բասման

²⁵⁶Նույն աղբյուրը, տես էջ 253

²⁵⁷Ֆաիք Ալիի անունով փողոցը և տարրական դպրոցը գտնվում են նրա հայրենի քաղաք Դիարբեքիրում:

²⁵⁸Հարցազրույց Քյութահիայի լրագրող և պատմաբան Ալի Քեհրիբարի հետ, 2013թ հոկտեմբեր, Քյութահիա

²⁵⁹2013թ հոկտեմբերին մեր կատարած այցելության ժամանակ վերջին հայկական եկեղեցին, որ կանգուն էր Քյութահիայում միայն կարճ ժամանակ առաջ էր դադարել որպես հարսանեկան սրահ օգտագործվելուց: “Դրա տերերը” նախատեսում էին քանդել կառույցը և դրա տեղում կառուցել բազմաբնակարան շենք:

թաղամասում Խոջազադե Ռաշիհ Էֆենդիի երեք հարկանի առանձնատանը, չնայած իր ավերված վիճակին, այն շատ բան է ասում այդ ժամանակ ընտանիքի հզորության մասին: Օսմանյան արխիվներից կարելի է տեղեկանալ, որ Խոջազադե Ռաշիհ Էֆենդին պատասխանատու էր հարկահանության համար:²⁶⁰ Խոջազադե Ռաշիհը պետք է որ ազդեցիկ լիներ կարողանալու համար “*շրջանից աքսորել հին և նոր նահանգապետերին*”²⁶¹ 1908թ ընտրությունների ժամանակ նա ընտրվել էր պատգամավոր “միապետական” խմբակցության կողմից:²⁶² 1920թ նա ընտրվել էր երկրորդ անգամ, սակայն այս անգամ Ազատություն և ըմբռնում կուսակցության անունից:²⁶³ Կարելի է ենթադրել, որ Խոջազադե Ռաշիհի և Միություն և առաջադիմություն կուսակցության միջև անջրպետը ազդեցիկ դեր էր խաղացել 1915թ նրա ցուցաբերած վերաբերմունքի հարցում:

Երբ մենք Մեյդան թաղամասում փնտրում էինք մարդկանց, ովքեր կարող էին ճանաչել Խոջազադե Ռաշիհի ընտանիքին, մենք հանդիպեցինք 80-ամյա Մեհմեդ Էմին Իլգաթին: Նա մեզ պատմեց, որ նրան և Խոջազադե ընտանիքին պատկանող ընդարձակ հողեր կային այն հատվածում, որտեղ հիմա շաքարի գործարան է: Այնուհետև մեզ հաջողվեց գտնել Խոջազադեի հետևորդ Ազմի Օզուբեմիզին: Մակայն չնայած նրան, որ մենք շատ անգամներ խոսել էինք հեռախոսով, Ազմի բեյը հրաժարվեց ընտանիքի պատմությունը պատմելուց և չցանկացավ հանդիպել մեզ հետ: Այս հրաժարման պատճառը, չնայած նա այն մեզ չբացատրեց, թերևս այն էր, որ հանրապետական շրջանում Խոջազադե Ռաշիհ Էֆենդիի որդի Ռաշիհզադե Իբրահիմը խարանվել էր որպես “դավաճան”: 1921-1922 թթ ընթացքում Ռաշիհզադե Իբրահիմը Քյութահիայի փոխնահանգապետն էր, երբ Քյութահիան վերահսկում էին հունական զորքերը: Նա չէր օժանդակում Սուստաֆա Քեմալի կազմակերպած պայքարին և դրա պատճառով նա մեղադրվեց դավաճանության մեջ: Այդ գործընթացում Խոջազադե Ռաշիհ Էֆենդիի ազդեցությունը, որը ժամանակին արդյունավետ էր անգամ Միություն և առաջադիմություն կուսակցության դեպքում, այլևս օգտակար չէր: Նրա որդի Իբրահիմը աքսորվեց և շարունակեց ապրել ծանր պայմաններում Լեսբոս կղզում:²⁶⁴

Արդյո՞ք Խոջազադե Ռաշիհին և նրա որդուն “դավաճան” պիտակավորելու ետևում թաքնված էր այն հանգամանքի ազդեցությունը, որ Միության անդամները հավաքվել էին Սուստաֆա Քեմալի շուրջ: Ինչպե՞ս Խոջազադե Ռաշիհին հաջողվեց այնպես անել, որ Քյութահիայի հայերը չտեղահանվեն: Քյութահիայում մեր ունեցած հարցազրույցների ժամանակ մենք չկարողացանք գտնել այդ հարցերի պատասխանները:

Գերմիյանզադե ընտանիքը սերում էր Գերմիյանօղուլարի դինաստիայից, ովքեր իշխանություն էին հիմնել մինչ Օսմանյան կայսրությունը: Նրանք պահպանել էին իրենց ազդեցությունը նաև Օսմանյան ժամանակաշրջանում: Ֆաիք Ալին նրանց համարում էր այն անձանցից, ովքեր “*հաստատապես դեմ էին հայերի տեղահանությանը*”: “Hanedan-ı belde” (նահանգի դինաստիա), անվամբ հայտնի ընտանիքի ակնառու անձնավորությունը Գերմիյանզադե Ալի բեյն էր, որ եղել է Քյութահիայի քաղաքապետը 1915, 1916-1919թթ և 1922-1929թթ.: Գերմիյանզադեների ընտանիքը միաժամանակ նաև Օսմանյան դինաստիայի բարեկամներն էին: Ընտանիքի անդամներից մեկը Աբդուրահման փաշաի որդի Արիֆ Հիքմեթ փաշան ամուսնացած էր Նաիլե Սուլթանի հետ:

Այսօր չնայած նրան, որ քաղաքում կա զբոսաշրջության վայր “Գերմիյան փողոց”, Ալի բեյի հիշատակին որևէ նշան չկա: Ալի բեյի Փիրլերի թաղամասերի առանձնատունը անմխիթար վիճակում է, իսկ նրա տերը վաղուց փոխվել է: Մենք տեղյակ չենք, թե Գերմիյանզադե Ալի բեյին ինչպես է հաջողվել 1915թ համոզել կառավարությանը չտարհանել հայերին: Մենք չկարողացանք ընտանիքի անդամներից որևէ տեղեկություն ստանալ այս թեմայով: Մակայն ըստ Ակունիի հետ ունեցած Ֆաիք Ալիի զրույցի կարող ենք հաստատել, որ ընտանիքը իր ազդեցությունը օգտագործել է Առաքինի վերաբերմունքի համար:

²⁶⁰ՕԿՍ 4285/32135817/C/1332

²⁶¹ՕԿՍ DH.MKT.2701/7614/Z/1326

²⁶²1908 *Devrimi, Aykut Kansu*, էջ 380, İletişim, 1995թ, Ստամբուլ

²⁶³*İlk Meclis'in vekilleri: Milli Mücadele döneminde seçimler*, Սհմեդ Դեմիրել, էջ 206, İletişim, 2010թ, Ստամբուլ

²⁶⁴150 *likler meselesi: bir ihanetinanatomisi*, Սեդաթ Բինգյոլ, էջ 278, Բենգի Յայինլարի, 2010թ, Ստամբուլ

X. Մյուս քաղաքների Առաքինները

Հայոց ցեղասպանության ժամանակ Իզմիրի, Տրապիզոնի, Ադանայի, Հալեպի Սիրիայի, Բիթլիսի և Վանի նահանգներում եղան մարդիկ, ովքեր դեմ դուրս եկան հրամաններին և փորձեցին կանխել տեղահանություններն ու ջարդերը կամ ապաստան սովեցին հայերին: Մենք քիչ տեղեկություն ունենք նրանց ինքնության կամ փրկելու ջանքերի չափերի մասին:

Իզմիրի նահանգ

Ֆրանսիական Ծովային արխիվները նկարագրում են, թե ինչպես էր **Մանիսայի փոխնահանգապետ Թեվֆիկը** հրամանները կատարում միայն մակերեսայնորեն և փրկեց Մանիսայի հայերի կյանքը:²⁶⁵Նույն կերպ նշվում էր, որ **Այդինի ժանդարմների հրամանատար Նուրին** փորձում էր խանգարել տեղահանություններին: ²⁶⁶Մենք չկարողացանք որևէ վկայություն կամ մանրամասն տեղեկություն ձեռք բերել նրանց վերաբերմունքի մասին:

Բրիջիթ Բալյանը, ում հետ մենք հանդիպեցինք Մարսելում, նշեց, որ Իզմիրում իրենց ընտանիքին պաշտպանել է Թաբբահ Դեդեն: Բրիջիթ Բալյանի պապիկը Իզմիրում դեղատուն ուներ: Թաբբահ Դեդեն նրանց ընտանիքի ծանոթն էր: Իրենց տան առաջ կանգնելով Թաբբահ Դեդեն հայտարարեց, որ եթե ինչ որ մեկը ցանկանում է դիպչել այդ ընտանիքին, ապա միայն իր դիակի վրայով: ²⁶⁷

Տրապիզոնի նահանգ

Օրդու գավառի հայտնիները դիմեցին նահանգապետին, որպեսզի նա թույլ տա, որ հայերը մնան իրենց բնակության վայրերում: Սակայն, նրանց ջանքերը ապարդյուն անցան: Նահանգապետը չլսեց նրանց և սպառնաց:²⁶⁸ Օրդուից Մկրտիչ Արթուն և նրա հետ միասին քսան մարդ փախան տեղահանության շարասյունից և թաքնվեցին քարանձավներում: **Մեսուդիյեից մի փոստատար, ում անունը հայտնի չէ**, պաշտպանեց Արթունի քրոջն ու մորը: Քարանձավներում վեց ամիս թաքնվելուց հետո Արթունը և նրա ընկերները **Հաքքի Գյուրսույի** օգնությամբ փախան Վրաստան:²⁶⁹

Երբ **Տրապիզոնում** հայտարարվեց տեղահանություններին մասին, **բարձր խավը** ընդհանուր առմամբ փորձեց դիմադրել, թեթևացնել հրամանները, բացառություններ ստանալ, խեղդել “տեղահանությունը”: Սակայն կենտրոնական կառավարությունը հաստատուն էր իր հրամաններում:²⁷⁰**Տրապիզոնի** ֆրանսիական հյուպատոսարանում աշխատող Ապիկ Նեսերյանին տեղահանությունից փրկելու համար շատ թուրքեր գործի դրեցին իրենց միջոցները, սակայն չկարողացան անել դա:²⁷¹ Անտուան Քոլլիյանը, ով աշխատում էր Messageries Maritimes գործակալությունում, թաքնվեց մի թուրք ծեր կնոջ տանը Ամասիայում: Հետագայում նրան բռնեցին և արտաքսեցին:²⁷² **Սամսունի մուսուլման հասարակության բարձր խավը** փորձեց ի նպաստ հայերի կանոնակարգ թողարկել, սակայն հրամանները անսասան էին:²⁷³

Ադանայի նահանգ

Հաճնի մուֆտին մերժեց գումարտակի հրամանատարին՝ նրանից պահանջելով մուֆտիի որոշում, որը

²⁶⁵Service historique de la marine, 1BB7245, փաստաթուղթ թիվ 109, Le Génocide des Arméniens, մեջբերում 709-րդ էջից

²⁶⁶Նույն աղբյուրը

²⁶⁷Հարցազրույց Բրիջիտ Բալյանի հետ, 2014թ հունիս, Մարսել

²⁶⁸ *Tehcir ve Taktik, Divan-I Harbi Örfi Zabıtları*, Վահագն Ն. Տատրյան, Թաներ Աքչամ, մեջբերում 35-րդ էջից

²⁶⁹ *Harut Usta'nın dilinden Ordu'nun gayri resmi tarihi*, Ֆերդա Բալանջար, Ակոս, 18.07.2014, Ստամբուլ

²⁷⁰Տրապիզոնի իտալական հյուպատոս Մ Գորինիի հարցազրույցը Մեսաջերո թերթին, *Les Mémoires de Mgr Jean Naslian*, մեջբերում I հատոր էջ 171

²⁷¹ *Les Mémoires de Mgr Jean Naslian*, մեջբերում I հատոր էջ 173

²⁷²Նույն աղբյուրը, տես էջ 184

²⁷³Նույն աղբյուրը, տես էջ 190

հավանություն է տալիս տեղահանությանը: Նա ասաց, որ “որևէ լավ բան չի տեսնում նրանում, ինչ հրամանատարը պատրաստվում էր անել”: Մուֆտին մի մտերիմ բողոքական հայ ընկեր ուներ: Նա իր բոլոր միջոցները գործի դրեց վերջինիս տեղահանություններից պաշտպանելու համար, սակայն դա նրան չհաջողվեց:²⁷⁴ Ֆեքեի և Յերեբականի մուսուլմանները նույնպես ընդդիմացան տեղահանություններին: Նրանք ասացին, որ իրենց քաղաքի հայերը երբեք որևէ հանցագործություն չեն կատարել, զենք չունեն և ապրում են խաղաղ, նրանք խանութպան և արհեստավոր ընկերներ ունեին: Նման ձևով նրանց հաջողվեց տեղահանությունները հետաձգել երեք ամսով:²⁷⁵

Հավելյալ նահանգ

Ջեմիլ Կոնեն Մեքթեբ-ի Բահրիյեի (նավավարական դպրոց) շրջանավարտ էր և մեխանիկա էր սովորել Անգլիայում: Նա Եփրատի հրամանատարությունում պատասխանատու էր ‘շահյուրի’ (նավի տեսակ) նավաշինարական գործարանի համար: Իր պաշտոնավարման ընթացքում նրան հաջողվեց փրկել Այնթապից տեղահանված շատ հայերի՝ նրանց գրանցելով, որպես նավաշինարարական ընկերության աշխատողներ կամ արհեստավորներ: ²⁷⁶ Նա հայ ընտանիքներին տրամադրում էր սնունդ, հագուստ և դեղորայք:

Առկա են շատ հայերի վկայություններ, որոնք վկայում են, որ Ջեմիլ Կոնեն շատ մարդկանց կյանք փրկեց՝ նրանց աշխատանքի վերցնելով նավաշինարարական գործարանում: Սակայն Վարչապետի գրասենյակի Օսմանյան արխիվներում մեր գտած տվյալները նշում են, որ Ջեմիլ Կոնեն, նվազագույնը սկզբում իր սեփական նախաձեռնությամբ չէր ձեռնարկում այդ փրկությունները: Մենք տեսնում ենք, որ Ներքին գործերի նախարարությունն էր 1917թ հուլիսին հրամայել հայերին աշխատացնել Բիրեջիկի նավաշինարարական գործարանում:²⁷⁷

Այն ժամանակահատվածը, երբ Ջեմիլ Կոնեն պաշտպանում էր Բիրեջիկի հայերին և չի նշվում վկայություններում, հավանաբար 1917թ հետո էր: Անգամ, եթե հայերին աշխատանքի վերցնելը նավաշինարարական գործարանում իր նախաձեռնությամբ չէր արվում, նա Նախարարությունից եկած հրամանը կիրառեց դրա ամենալայն իմաստով, և հնարավոր է, որ նա որպես արհեստավոր էր գրանցել շատ մարդկանց, անկախ նրանից նրանք “փորձառու արհեստավորներ էին”, թե՛ ոչ: Վկայություններում առկա նրա մասին երախտապարտ խոսքերը և այն փաստը, որ նա փրկել էր Այնթապի լուսանկարիչ Հակոբ Մուրադյանին, նրան գրանցելով որպես աստղծագործ, ավելի է ամրապնդում այդ հավանականությունը:²⁷⁸

Ֆիլոմեն Հեքիմյանը և նրա ընտանիքը, ովքեր տեղահանվել էին Սամսունից, հասան Մուրուչ՝ ականատես լինելով ջարդերին: Տեղահանությունից հետո առաջին անգամ նրանք **Մուրուչի մուսուլմաններից** հաց ստացան²⁷⁹ Սիրիային մոտեցած շարապյան մարդկանց, որոնց թվում էր նաև Եղիաբեթ Բերբերյանը, հագուստը գողացել էին և նրանք մնացել էին մերկ: **Մահմանին մոտ ապրող արաբ կանայք** կանխեցին այն մարդկանց, ովքեր եկել էին շարապյանից կանանց գողանալու, նրանք կանանց տարան իրենց տուն, կերակրեցին նրանց և նրանց մահմեդականների հագուստներ տվեցին: Բերբերյանի և նրա հետի կինը այս կերպ փրկվեցին:²⁸⁰

²⁷⁴ Վերաբերմունքը հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ, մեջբերում 497-րդ էջից: Չիմբագրված տարբերակում վկայությունը պատկանում է Հաճնին, Վերաբերմունքը հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում, էջ 507, Կոմիտասի ինստիտուտ, 2000թ, Լոնդոն

²⁷⁵ Նույն աղբյուրը, տես էջ 507

²⁷⁶ Կոնեի մասին ավելի մանրամասն տեղեկության համար տես՝ “*Birecik'te Ermeni sürgünlerini ölümünden kurtaran Cemil (Bahri) Köne*”, Ումիթ Քուրդ, Թոփլումսալ Թարիհ, հունվար, 2015, էջ 84-87, Ստամբուլ

²⁷⁷ ՕԿՄ. DH.ŞFR.78/4, 11/N/1335, ՕԿՄ. DH.ŞFR.558/80, 05/Te/1333. Օսմաներենից տառադարձությունը՝ Օմեր Թուրքոլլուի

²⁷⁸ *Birecik'te Ermeni sürgünlerini ölümünden kurtaran Cemil (Bahri) Köne* մեջբերում 86-րդ էջից

²⁷⁹ *Les Mémoires de Mgr Jean Naslian*, մեջբերում հատոր I., էջ 204

²⁸⁰ *Մարդկություն՝ անմարդկութեան սէջ* Շաքե Եայլայեան-Սէթեան, մեջբերում 73-74-րդ էջերից

Միրիայի նահանգ

Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյթվեդ Հարդեգը 1916թ մայիսի 30-ին գրել է, որ Ջեմալ փաշան հիմնել էր շրջանի արտաքսված հայերի օգնության կազմակերպություն, իսկ **Հուսեյն Կազիմ բեյը**, ով եղել էր Սալոնիկի և Հալեպի նահանգապետ, հայտնի էր որպես վստահելի, հավատարիմ ու ջանասիրաբար աշխատող անձ, նշանակվել էր որպես այդ կազմակերպության ղեկավար: Որոշ ժամանակ անց Հուսեյն Կազիմ բեյը Լոյթվեդ Հարդեգին ասել էր, որ ցանկանում է հրաժարվել իր պաշտոնից: Նա նշել է, որ իր կողմից առաջարկված կանխարգելիչ միջոցները չէին ձեռնարկվել, պաշտոնյաները գործում էին իր դեմ, իսկ կառավարությունը լուրջ չէր հայերին օգնելու իր պատրաստակամության մեջ, հակառակը՝ այն ցանկանում էր համակարգված ձևով բնաջնջել հայերին:²⁸¹ Նա կարծում էր, որ *“այս ահավոր բնաջնջման քաղաքականությունը մեծ ամոթ էր Թուրքիայի համար, և խաղաղության հաստատումից հետո կպարզվի որ այն շատ վնասակար էր Թուրքիայի համար”*:

Չնայած նրան, որ Հարդեգի նշած Հուսեյն Կազիմ Կադիրը նախկինում Միություն և առաջադիմություն կուսակցության անդամ էր, նա հրաժարվել էր կուսակցությունից և պետական ծառայությունից: Հուսեյն Կազիմ բեյը նաև Միություն և առաջադիմության կուսակցության կողմից հույն ժողովրդի դեմ 1913-1914 կիրառվելիք տնտեսական բոյկոտին աջակցող խիստ հողվածների հեղինակն էր:²⁸² Սակայն Հարդեգի հետ իր ունեցած զրույցից կարելի է հասկանալ, որ նա 1915թ հետո փոխել էր իր վերաբերմունքը և արձագանքել այն վայրագություններին, որոնց ենթարկվում էին հայերը: Այդ պատճառով նա փորձում էր օգնել այն հայերին, ովքեր կարողացել էին հասնել Հալեպ և Դամասկոս 1916թ, սակայն նրա ջանքերը ապարդյուն անցան պաշտոնյաների սադրանքների պատճառով:

Բիթլիսի նահանգ

Բիթլիսի Ամերիկացի աղջիկների քոլեջի ուսանողները փրկվել էին տեղահանություններից և ստիպողաբար ամուսնություններից **զինվորական հոսպիտալի ղեկավար Մուստաֆա բեյի** շնորհիվ: Նա նշել էր, որ այդ ուսանողները օգնում են իրեն և նրանց ներկայությունը բացարձակ անհրաժեշտություն էր հոսպիտալի նորմալ գործունեության համար:²⁸³ Բացի այն տեղեկությունից, որ նա սովորել էր Ֆրանսիայում և Գերմանիայում, Օսմանյան արխիվներում կամ մյուս աղբյուրներում Մուստաֆա բեյի որևէ այլ հետք չկա:

Մասունում մի գյուղում, որի անունը չի հիշատակվում, **Մելիմ աղան** կաշառում էր պաշտոնյաներին հայերին տեղահանություններից փրկելու համար: Նա նման ձևով շատ ընտանիքների գրանցում է որպես իր աշխատողներ: Սակայն կառավարիչը շուտով հասկանում է, որ նա պաշտպանում է հայերին, և Մելիմ աղային այդ պատճառով գլխատում են: Նրա կտրված գլուխ ուղարկվում է Մուշ՝ վախեցնելու համար մյուս աղաներին, ովքեր մտադրություն ունեին փրկել հայերին:²⁸⁴

Մղերդի Թանզե գյուղում Օսման աղան թաքցրել էր մոտ 500 ասորիների՝ նրանց տեղահանություններից փրկելու համար: Սակայն, երբ զինվորները անսպասելի հարձակվեցին, նա չկարողացավ ասորիներին փրկել: Նրա սեփական կյանքը վտանգի տակ էր, նա հազիվ կարողացավ փախչել Մոսուլ: 1926թ նա կարողացավ վերադառնալ իր գյուղ, սակայն նա նորից հայտնվեց պաշտոնյաների թիրախում և սպանվեց:²⁸⁵

²⁸¹Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսից (Լոյթվեդ Հարդեգ) Կոստանդնուպոլսի դեսպանատանը, Դամասկոս, 30 մայիս, 1916թ, DE/PA- AA/R14092, *Հայոց ցեղասպանությունը. Վկայություն Գերմանիայի արտաքին գործերի նախարարության նարխիվներից*, Վոլֆգանգ Գուստ, մեջբերում 589-րդ էջից

²⁸² *Երիտթուրքերը և բոյկոտի շարժումը՝ Ազգայնականությունը, բողոքը և աշխատավոր դասակարգի ժամանակակից Թուրքիայի ձևավորման մեջ*, Դոդան Չեթինկայա, էջ 174, I.B.Tauris & Co.,2013, Լոնդոն

²⁸³Գրեյս Ն. Նապի վկայությունը, *Le Génocide des Arméniens*, մեջբերում 418-րդ էջից

²⁸⁴ *Les pratiques de sauvetage durant le génocide des Arméniens*, Հասմիկ Թևոսյան, *La résistance aux génocides*, մեջբերում 194-րդ էջից

²⁸⁵ Հարցազրույց Իսկենդեր Դեբբաստի հետ, մեջբերում

Արձեշում Մուխթար Ալի Չավուշի կին Համայիլը իր հարևան Մկրտիչ Ասլանյանին թաքցրել է իր տանը:²⁹⁷**Աղասավ (Բայրամլի) գյուղում Ռաշիդ աղայի կին Ֆատեն** իր որդի Նուրի Մեհմեդի ձեռքն է տալիս մի հրացան և հանձնարարում փրկել երկու հայերին՝ օգնելով նրանց հասնել ռուսական բանակ: Նրանք, ովքեր մնացել էին գյուղում, Ֆատեի շնորհիվ նույնպես փրկվեցին կոտորածից:²⁹⁸

Գրած Քար(Քաղիրասքեր) գյուղում մոտ 40 հայեր ապաստան գտան Մուրադ աղայի տանը: Սակայն հրոսակախմբերը նրա տանից տարան տղամարդկանց: Որոշ ժամանակ անց նրանք Մուրադ աղայի վրա ճնշում գործադրեցին, որ հանձնի կանանց և երեխաներին: “Սպանեք ինձ, ես չեմ կարող ձեզ տալ այս ընտանիքներին”, - պատասխանեց նա: Մայիսի վերջին, երբ ռուսները մոտեցան, նրանք, ովքեր թաքնվում էին տանը, փրկվեցին:²⁹⁹

²⁹⁷Նույն աղբյուրը, էջ 72

²⁹⁸Նույն աղբյուրը, էջ 73

²⁹⁹Նույն աղբյուրը, էջ 77

Հավելված. Հայոց ցեղասպանության ժամանակ Առաքինի կառավարիչների, ցեղերի առաջնորդների, հոգևոր առաջնորդների, հայտնիների և սովորական մարդկանց ցանկը

Սույն զեկույցում մենք անդրադարձել ենք այն 80 Առաքինի անձանց պատմություններին, ում մասին մեզ հաջողվել է ավելի շատ տեղեկություն ստանալ: Սակայն մենք կարողացել ենք գտնել ընդահանուր առմամբ 200 անձանց պատմություն, այդ թվում՝ մարդկանց, ում անունները և մանրամասն տեղեկությունները առկա չեն:

Դիարբեքիի նահանգ

- 1) Դիարբեքիի փոխնահանգապետ Համիդ բեյ
- 2) Սալկան ընտանիքը Դերիկից
- 3) Մարդինի փոխգավառապետ Հիլմի բեյ
- 4) Լիչեի կայմական Հուսեյն Նեսիմի
- 5) Միդյատից Մալա Սինո ընտանիք
- 6) Բինկելբ և Էրդե գյուղերից Թեմիր ընտանիք
- 7) Հեվերկի ցեղի առաջնորդ Ալի Բատտե
- 8) Հեվերկի ցեղից Ջահրանի Հաջո
- 9) Շեյխ Ֆեթուլլա
- 10) Հերշինաս գյուղից Հիհեյլեմի հանրություն
- 11) Միդյատից քուրդ հովիվ Մալիմո
- 12) Հինդե խանում Այն Սարե գյուղից
- 13) Նուրի Ասլանի ընտանիքը, որը փրկեց Կարապետե Խաչոին
- 14) Քեֆրե գյուղից Նուրիյե Յուսուֆ (Թեմիր ընտանիքից)
- 15) Նուսայբինի Թել Արյաման գյուղից Սուլեյման Աբբաս
- 16) Հեվերկի ցեղից Սարոխան
- 17) Նուսայբինի Գրեբյա գյուղից Հասան աղա
- 18) Սելամիե գյուղի ղեկավար՝ Հասան Աբբաս (Հաջի Սուլեյման ցեղ),
- 19) Մարդինի քաղծառայող Ռիֆատ Էֆենդի
- 20) Միլվանից Մելե Աբդուլլա
- 21) Դերիկից Մելե Հասենե Թավիկի
- 22) Իդիլի Ազաք գյուղից Չեյխ Աբդի
- 23) Ազաքի Քեֆշին գյուղի մուսուլմաններ
- 24) Սիրնակից Օսման աղա
- 25) Ջիզրեյից Մարո Օրո, Ազար, Սուլեյման Բերիո աղաները
- 26) Սավուրից Վեհբի Էֆենդի
- 27) Բեշիրիի փոխկայմական Ալի Սաբիթ
- 28) Քեֆրե գյուղից Բեկոի կինը
- 29) Բեշիրման գյուղից Մալա Ջիբո
- 30) Միդյատի Նարի (Խալահ) գյուղից Մալա Շահբին, Մալա Հուսեյնե Իբրահիմ, Իմամ Մալա Խալիլ
- 31) Ռեշկոտան ցեղի առաջնորդ Մուհամեդ Ադայա Բոլինդե
- 32) Ջիզրեի Դերգուլ գյուղից Ահմեդ Քազիմ (Օսման աղայի որդին)
- 33) Ջիզրեյի կայմական Խալիլ Սամի
- 34) Երկանից հանքափոր Աբդուլլա Հյուսրեվ Գուլեման,

Անկարայի նահանգ

- 35) Անկարայի նահանգապետ Մազհար բեյ
- 36) Մթանոս գյուղի կառավարիչ Իբրահիմ Շահին
- 37) Մեհմեդ Ռադի բեյ
- 38) Կեսարիայի Թալաս գյուղի կառավարիչ Ֆաիք
- 39) Յոզգաթի փոխնահանգապետ Ջեմալ բեյ
- 40) Յոզգաթից իրավաբան Ռեֆիկ կամ Ռիֆաթ բեյ
- 41) Յոզգաթի Բողազլյանի Մուֆտի Աբդուլլա էֆենդի
- 42) Քեսքինից Մուֆտի Աբդուլա էֆենդի
- 43) Զինվորագրման ղեկավար Սալիմ բեյ
- 44) Կեսարիայի Ֆիրկա Կումադան Վեքիլի Շահաբեդդին բեյ
- 45) Յոզգաթի պատգամավոր Շաքիր բեյ
- 46) Ալի Մուհիդդին փաշա և նրա որդի Ռեֆի Ջեվադ Ուլունայ
- 47) Կեսարիայի Էֆքերե գյուղի աղա Մեվլութ
- 48) Կեսարիայի Հուռեչ (Կոնուկլար) գյուղից Շեվքեթ

Կաստամոնուի նահանգ

- 49) Կաստամոնուի նահանգապետ Ռեշիդ
- 50) Կաստամոնուի մուսուլման հայտնիներ
- 51) Կաստամոնուի մուֆտի Հաֆիզ Օսման Նուրի
- 52) Կաստամոնուի ժանդարմերիայի հրամանատար Իզգեթ բեյ
- 53) Կաստամոնուի հայտնիներ Հաջի Թեվֆիկ, Դուրսունգադե Հիլմի, Աթաբեյի հոգևոր դպրոցի ուսուցիչ Մեհմեդ էֆենդի, Սալիմ էֆենդիգադե Նամիկ, Ջեվդեթ վե Սալիմ էֆենդի, Բեսիմ, Խոջա Մեհմեդ էֆենդի, առևտրական Ահմեդ, իրավաբան Իզգեթ
- 54) Բոլուի քաղծառայող Ալի Իլմի
- 55) Չանքիրիի փոխնահանգապետ Ասաֆ
- 56) Չանքիրիի զինվոր Մեհմեդ Իզգեթ
- 57) Չանքիրիի թուրք ժողովուրդ
- 58) Երեք անհայտ մուսուլմաններ, ում կախեցին Բայբուրթում

Էրզրումի նահանգ

- 59) Սուրմենեից Ալի բեյ
- 60) Երզնկայի Երկան գյուղից Շեհրիբան և Յուսուֆ
- 61) Բայազետի փոխգավառապետ Բադ էֆենդի
- 62) Աշկալեից մի թուրք, ով Ռուբեն Թոռոյանին թաքցրեց իր տանը
- 63) Գումեկից Իսմայիլ աղայի կինը
- 64) Ժանդարմը, որ փրկեց քահանա Վահան Քիչուրյանին Երզնկայի լեռներում
- 65) Կամախի Հովիտ գյուղից Խալիլ
- 66) Աշկալեի Աթինջիդ (Խաթունջուկ) գյուղի մուլլան
- 67) Ջալի (Մուջուալի) գյուղացիներ
- 68) Թերջանի Քիլիսե Կոմո գյուղից Հասան Չավուշ
- 69) Չեր գյուղից Իսմայիլ
- 70) Քարերից Քուչուկ աղա (Ջեյնալ Աբիդին)
- 71) Քիշթիմ գյուղից Դավութ օղլու Մեհմեդ Ալի

Մամուրեթ-ուլ-Ազիզի նահանգ

- 72) Դերսիմի Օվաջիկի Ծառուկ գյուղից Սեյիդ Ալի
- 73) Փաշա Թիմուր

- 74) Բաքե աղա
- 75) Իդարե Իբրահիմ աղա
- 76) Վերաց գյուղից Ալի աղա
- 77) Կանգոզադե Մեհմեդ աղա
- 78) Սեյիդ Ռիզա
- 79) Հավրակլի Ալի բեյ
- 80) Քահրաման Աֆդարա (Աղա)
- 81) Փիլվենկ ցեղից Հաջի աղա
- 82) Դերսիմի Մերհո գյուղի փաշա, աղա
- 83) Քոչան ցեղից Զեյնալ և Սուլեյման աղաներ
- 84) Միզե աղա
- 85) Քուրեյշան ցեղից Ալի Չավուշ
- 86) Մեզրեից անհայտ մայր
- 87) Մեզրեից անհայտ հարևան
- 88) Հուսեյնիկից մի թուրք
- 89) Միզե գյուղից մի քուրդ
- 90) Մալաթիայի քաղաքապետ Մուստաֆա Աղա Ազիզօղլու
- 91) Աղջազադե Մեհմեդ էֆենդի
- 92) Չիլապուրի քուրդ ժողովուրդ
- 93) Մալաթիայի մի ոստիկան
- 94) Արաբ Օսման Մալաթիայից
- 95) Ադիյաման Բեզիկե ցեղի առաջնորդ Հաջի շեյխ աղա
- 96) Արաբկիրի մուֆտի
- 97) Խարբերդի Հուլեկոյի (Խուլեվանք/Շահինկայա) աղաներ
- 98) Խարբերդի Վերիկոյ Դայիօղլու Նուրի բեյ
- 99) Կարաչանից Մուստաֆա աղա
- 100) Քեսրիկից Մեհմեդ աղա
- 101) Խարբերդից Սադիկ, Մուստաֆա և Մուսա էֆենդիներ
- 102) Գոշան (Ուզուն Հուսեյն) գյուղից մի ծեր մարդ
- 103) Քեսրիկից Բաբաջան փաշա
- 104) Թադեմ (Թադիմ) գյուղից մի կին և նրա որդին
- 105) Մեզրեից Բարբեր Շաքիր
- 106) Ակն գյուղից զինվոր Լյութվի էֆենդի

Կոնիայի նահանգ

- 107) Կոնիայի և Հալեպի նահանգապետ Զելալ բեյ
- 108) Կոնիայի երկաթգծի ղեկավար Հարիրի բեյ
- 109) Մեվլեվի միաբանության նախկին շեյխ Աբդուլհալիմ Չելեբի
- 110) Ալբանացի մայր, ով սնունդ տվեց աշխատանքային գումարտակին և նրանց ընտանիքներին Սուլթանիյեում
- 111) Սուլթանիյեի կայմակամ

Քյութահիայի փոխնահանգապետություն

- 112) Քյութահիայի փոխնահանգապետ Ֆաիք Ալի բեյ
- 113) Գերմիանզադե Ալի բեյ
- 114) Խոջազադե Ռաշիհ էֆենդի

Իզմիրի նահանգ

- 115) Մանիսայի փոխնահանգապետ Թեվֆիկ բեյ
- 116) Այդինի ժանդարմերիայի հրամանատար Նուրի բեյ

117) Իզմիրից Տարակ (Թարա՞հ) Դեդե

Տրապիզոնի նահանգ

- 118) Օրդուի մուսուլման հայտնիները
- 119) Օրդուից Հաքքի Գուրսոյ
- 120) Տրապիզոնի Մուսուլման հայտնիներ
- 121) Սամսունի մուսուլման հայտնիներ

Միվասի նահանգ

- 122) չերկեզ էմիր փաշա
- 123) Մեսուդիյեի մուսուլմաններ
- 124) Թոկաթ Էրբասայի կայմակամ Աբդելսեթթար բեյ
- 125) Երկու թուրքեր, ովքեր Մերզիֆոնում թաքցրեցին հայերին
- 126) Գեմերեկ գյուղի կառավարիչ Մեյֆեթին բեյ
- 127) Ալուկրա Կոման թաղամասից մի թուրք
- 128) Միվասի Տերիկ Օդեկ գյուղից Կադիր Չավուշ
- 129) Ալուկրա Կոման շրջանից մի թուրք
- 130) Միվասի Զարայից Ալի Էֆենդի
- 131) Շապինգարահիսարի Մուշեհրիի վարորդներ
- 132) Միվասի Բրաբերդ (Գույունյամաչ) գյուղի մոտ ապրող հրամանատար
- 133) Կուկուլբաշ գյուղից Մահմուդ
- 134) Բրաբերդ գյուղից Նազարեթի հարևան Ղարաքիլիօղլու
- 135) Հրամանատար չերկեզ Ռիզա բեյ
- 136) Խորսանաք (Դիքմենջիկ) գյուղում Ավետիս Թայքենի քուրդ աշխատողները

Ադանայի նահանգ

- 137) Հաճնի մուֆտի
- 138) Ֆեքեի և Յերեբականի մուսուլմաններ

Հալեպի նահանգ

- 139) Բազարջիկից Մինեմիլ ցեղի առաջնորդ Թափո աղա
- 140) Բիրեջիկի զինվոր Ջեմիլ Կոնե
- 141) Ուրֆայից Հաջի Խալիլ
- 142) Ուրֆայում մայր Սիթթի բեյ
- 143) Սուրուչի մուսուլմաններ
- 144) Միրական սահմանի մոտի արաբ կանայք

Միրիայի նահանգ

- 145) Համա շրջանի Սելիմիյեի կայմակամ Նեսմեթթին բեյ
- 146) Համայի փոխգավառապետ Ալի Ֆիրուզան
- 147) Հուսեյն Քազիմ Կադրի

Բիթլիսի նահանգ

- 148) Սասունից Սելիմ աղա
- 149) Բիթլիսի զինվորական հոսպիտալի ղեկավար Մուստաֆա բեյ
- 150) Ազարակատերեր, ովքեր պաշտպանեցին Աննա Բարսեղյանի ընտանիքը Մուշում
- 151) Բուլաղչիբասի ընտանիքը Մուշում
- 152) Մելե Էզո

- 153) Դաշտադեմ գյուղից Ջուրո
- 154) Սղդեղի Թանգե գյուղից Օսման աղա
- 155) Մուշի Բուլանիկ Փիոնք (Յեմիշեն) գյուղից Հալաֆ Էֆենդի, աղա
- 156) Մուշի Դիրմերդ գյուղի աղա Սիֆո Միսթաֆի
- 157) Խիարթոնք գյուղի քրդերը
- 158) Բիթլիսի Մոտկանի գավառակի Միթսի գյուղի աղա Հաջի Ֆերիո
- 159) Բիթլիսի Մոտկան գավառակի Շեն (Քաշիկլի) գյուղից Սաֆար բեյ
- 160) Սղդեղի Նիվլա/Չիգմեղի գյուղից Ջանգիր աղա
- 161) Դորհամ/Բայրամլիից Դահր աղա
- 162) Մուշի Մանագկերտից Իբրահիմ բեյի որդիներ Ավդիլլա բեյ և Հուսեյն բեյ
- 163) Մուշի Մանագկերտի Մարմուս (Փաղնոս, Քոչաքլար) գյուղի շեյխ, աղա
- 164) Մուշի Բուլանըխի Սիմոն (Սիմո/Կուրգանլի) գյուղի չերկեզ ժողովուրդը և Մուսայ բեյը
- 165) Մուշի Կիրտակամ/Թափանլի գյուղից Խալիլ
- 166) Մուշի, Սասունի, Փիրշենք գյուղի Ջիփոթին ցեղից Ջիկան և Դերվիշ եղբայրներ

Վանի նահանգ

- 167) Բերկրիից (Մուրադիե) Թահար բեյ
- 168) Աթթիլ գյուղից աղա
- 169) Էրչեղ գյուղի կառավարիչ
- 170) Դարաբեկ (Դերեբեյ) գյուղից մի քուրդ
- 171) Մոսրաթ (Թափանլի) գյուղից Միհե
- 172) Սեյվան Կալեից Թահին աղայի որդի Նուրի և Քարավանլի Ալիի որդի Աբդուլ ազիզ
- 173) Քոշք (Յենիքոշք) գյուղում հայերի հարկադիր մահմեդականացման դեմ դուրս եկած

մոլլա

- 174) Սպայերթի (Իսպայերթ, Սուրուջուլեր գյուղ, Խիզան) ավագ Մալաբաթլի Խուրշիդ բեյ
- 175) Արճեշի Սուխթար Ալի Չավուշի կին Համայիլ
- 176) Արճեշի Աղսրաֆ/Բայրամլի գյուղի Ռաշիդ աղայի կին Ֆաթե
- 177) Արճեշի Գրած քար/Քադիրասքեր գյուղից Մուրադ աղա
- 178) Գեվաշի Հարբերդ գյուղից Բահրամ բեյ
- 179) Հաքքարիի Խոշաբ շրջանի Քիրելի գյուղացիներ
- 180) Հաքքարիի Աղբա շրջանի Խառատուն գյուղից Հիդիր

Դեր գործի նահանգապետություն

- 181) Ռաս-ալ Այնի կայմական Յուսուֆ Ջիյա բեյ
- 182) Դեր Ջորի փախնահանգապետ Ալի Սուադ բեյ
- 183) Դեր Ջորի հայտնիներից Հաջի Ֆերոզ և Այիալ

Բեյրութի նահանգ

- 184) Բեյրութի Փոստի և հեռագրատան տնօրեն Ղալիբ բեյ